



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳԱՌԵՒԿ ԱՆԱՆՅԱՆ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ԵՎ

ԳՐԱԿԱՆ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2002

ՀՏԴ 891.981.0
ԳՄԴ 83.37
Ա 476

Ասանյան Գ. Գ.

Ա 476 Նիկոլ Աղբալյան. Կյանքը և գրական-հրապարակախոսական գործունեությունը- Եր.: Երևանի պետ. համալս. հրատ., 2002, 313 էջ:

Ն. Աղբալյանը 20-րդ դարի առաջին կեսի հայ հասարակական-քաղաքական մտքի նշանավոր դեմքերից է, պետական-կուսակցական գործիչ, ճանաչված գրականագետ և հրապարակախոս:

Մենագրության մեջ արխիվային և մամուլում ցրված գրեթե անհայտ նյութերի օգտագործմամբ փորձ է արվում ներկայացնելու նրա կյանքի ու գործունեության պատկերը, գնահատել գրական-հրապարակախոսական գործունեությունը:

Ա $\frac{4603010000}{704(02)2002թ.}$ 2002թ. ԳՄԴ 83.37

ISBN 5-8084-0-369-0 © Համալսարանի հրատարակչություն 2002 թ.



Վերջին նկարներից

Ես սիրում եմ ժամանակը, երբ հասնում եմ իմ հասարակական գործունեության
առաջին հասարակական գործունեությանը, երբ հասնում եմ իմ հասարակական
գործունեությանը, երբ հասնում եմ իմ հասարակական գործունեությանը
Հասնել արվելու է հայտնի է լինում

XX դարի առաջին կեսը նշանավորվեց վիթխարի իրադարձություններով, որոնք հավակնում էին պատասխան տալ իրենց շրջապատույտի մեջ ներքաշված ժողովուրդների բախտի ու ճակատագրի խնդիրներին: «Հին» ու «Նոր» աշխարհների բախման հանգույցներում հայ ժողովուրդը նույնպես փորձում էր գտնել ազգային տեղի իրականացման ուղիներ: Բախտը, սակայն, չժպտաց մեզ ու ճակատագիրը երես թեքեց, հասարակական-քաղաքական իրարամերժ միտումները ավելի բարդացրին առանց այդ էլ ոչ պարզ մթնոլորտը, և հայ մտավորականը, մտածող անհատը հաճախ դեմառդեմ հանդիպեցին անլուծելի թվացող հակասությունների: Հեշտ չէր կողմնորոշվել, լուծման ուղիներ գտնելը, իսկ մոլորությունը թանկ էր նստում... ժողովրդին: Սթափ մտածողություն էր պետք, իրադարձությունների ընթացքը կռահելու կարողություն, անձնագոհություն էր հարկավոր, անմնացորդ նվիրում՝ ժողովրդի պատմական մաքառումը նոր փլուզումների վտանգից փրկելու համար: Պատմությունն աներեր վարում է իր ընթացքը, և, ավաղ, փրկության ուղիները երբեմն կարծես թե տանում են... փակուղի: Եվ, այնուամենայնիվ, հուսահատվել չի կարելի, միշտ պետք է որոնել, կռահել գալիքը և պատրաստ լինել նրան: Աշխարհի բախտը մեր ձեռին չէ, ցավով նշում էր Ն. Աղբալյանը,- բայց նրա անիվը մեզ համար էլ է պտույտ գալիս»- եզրափակում է ընդգծված հավատով¹:

Ծատ էր դրամատիկ դարասկիզբը մեզ համար, այն չնվազեց հետագա տասնամյակներում ևս: Սովետահայ պատմագրությունը, հասարակական միտքը ընդհանրա-

¹ԳԱԹ, Հովհ. Քումանյանի ֆոնդ, գ. 1654:

պես, միակողմանի է ներկայացրել մասնավորապես նախահեղափոխական տարիների և հետհեղափոխական շրջանի պատմությունը. սխալ են գնահատվել ազգայն-ազատագրական շարժումները, անտեսվել է Հայաստանի առաջին Հանրապետության գործունեությունը, ժողովրդի աշխատանքային սխրանքների ներկայացմամբ շրջանցվել են նույն ժողովրդին հասցված ողբերգությունները:

Անդրկովկասում հայկական տարրի ֆիզիկական ու քաղաքական նշանակությունը նվազեցնելու հետահար նպատակով բեղավոր դահիճը անվարան վերաձևեց երկրամասի քարտեզը՝ հետագա իր գործունեության ընթացքում երբեք հատուկ «ուշադրությունից» չզրկելով հայերին: Հասնելով իր արյունոտ հաղթարշավի գագաթնակետին՝ նա հանդգնեց այն, ինչ չէր անցել պորփյուրակիր ոչ մի արքայի մտքով, ինչը մնում է երիտթուրքերի սեփականությունը՝ հայ ժողովրդին քշել մի նոր Դեր-Չոր, որ այս անգամ կոչվելու էր... Ալթայի երկրամաս: Խորհրդային Միությունում թուրքերի բարեկամը կիրառում էր նրանց մեթոդները: Ստալինյան սոցիալիզմը հավասարապես ծանր էր Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների համար, բայց հայերի համար ծանր էր կրկնակի:

Խորհրդային իշխանության վերջին մեկ-երկու տասնամյակներում ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության գաղափարների շահարկումը նոր աստիճանի բարձրացավ: Ընդհատակից ելած պանթյուրքիզմը անցավ բացահայտ հարձակման: Բրեժնև- Սուլով - Ռաշիդով- Կունևա- Ալլև- Վեզիրով - ուրիշներ առանցքը վիթխարի իներցիա հաղորդեց մուսուլմանական մաֆիային, որը Մոսկվայի շուքի ներքո ծաղկում էր մասնավորապես Ադրբեջանում: Իրենց տեր ու տնօրեն զգալով ստալինյան «շոայլ» ձեռքով նվեր ստացած հայկական պատմական հողերում՝ մարքսիզմի

պատմունճանով քողարկված պանթյուրքիզմը զանազան չափսի բունիաթովների տեսքով ու բերանով բացահայտ անամոթությամբ մեր հոգևոր արժեքները կողոպտելու, մեր ավանդական հողերին տիրանալու գործին անցավ... Խորհրդային պատմագիտության դրոշի ներքո անսքող անամոթության հասավ հայ ժողովրդի պատմական հայրենիքի և հոգևոր արժեքների բացահայտ կողոպուտը մի օր հանկարծ ադրբեջանցի դարձած կովկասյան թաթարների կողմից... Աշխարհի որևէ ծայրում հազիվ թե նման ամոթալի և այսքան հովանավորված կողոպուտ է եղել:

Ահա այս մթնոլորտում մշակվել են «տեսակետներ», «գնահատականներ», որոնք աղավաղված են ներկայացրել դարասկզբի իրադարձությունները, տարբեր կուսակցությունների ու խմբավորումների դերն ու տեղը պատմական զարգացումների ընթացքի մեջ: Կայսրության փլուզումը և անկախության ուղի ընտրելը հնարավորություն տվեցին պսակազերծ անել սուտ աստվածներին, երևան հանել մեր պատմության բազմաթիվ «սև» և «սպիտակ» կետեր, շտապյունով տապալել «պատմագիտական» շատ «կոնցեպցիաներ»: Անկողմնակալ մտածողությունը փորձում է նորովի ընկալել պատմության ընթացքը, հրաժարվել առանձին երևույթների ու գործիչների՝ վերուստ պարտադրված գնահատումներից:

Ազնիվ գաղափարների անազնիվ սպասավորները վերջին տասնամյակների ընթացքում ստեղծել են գաղափարական հակառակորդի հակակրեյի մի տիպ: Բայց այդ հակակրանքն իսկույն հօդս է ցնդում անաչառ հայացքի առջև: Ավելին՝ մեր առջև հառնում է լուսավոր ու անձնուրաց մի սերունդ, որ վերջին երկու դարերի սահմանագլխում ժողովրդին վիճակված մաքառումների խաչմերուկներում անմնացորդ նվիրումով այրվեց փրկության ուղիների տենդագին որոնումներում, գտավ,

կորցրեց, սփռվեց աշխարհով մեկ՝ միշտ պահելով հավատը լավ ժամանակների վերաբերյալ:

Այս սերնդի ներկայացուցիչն է Նիկոլ Աղբալյանը:

Դժվարին եղավ նրա կյանքը: Հայաստանի առաջին հանրապետության բացառությամբ՝ մեր երկրի բոլոր իշխանությունները՝ և՛ ցարական, և՛ խորհրդային, հալածեցին նրան, սպառնացին բանտարկություններով կամ իրականացրին այդ սպառնալիքը՝ հասցնելով նրան սփյուռքահայի անդաստական վիճակին:

Առաջին հանրապետության օրոք էլ, ասենք, հանգիստ կյանք չունեցավ. ոչ միայն այն պատճառով, որ հանգիստ չէր իրականությունը, այլև այն, որ կրքոտ հրապարակախոս էր, մշտապես բուռն իրադարձությունների կենտրոնում, ուղղամիտ և ուղղախոս: Լինելով ընտանեւեր մարդ՝ խիստ հոգատար հայր ու ամուսին, մահ գավակ, ավելի մեծ նպատակների իրականացման համար պարտավորված եղավ, 1921-ից հետո՝ հարկադրված մահ, հետո լինել հարազատներից: Նա, որ կոչված էր հայ գրականության ու մշակույթի նվիրյալ լինելու, սիրած գործով զբաղվեց ամենօրյա հացի համար հոգնատանջ պայքարից փախցրած ժամերին միայն: «... Ազատ գրիչը չէր պահում մարդուն, որ աշխատանքը դառնար ապրուստ ու ներքին վայելք: Հացի աշխատանքը անուր էր վզիս ու շղթա ոտքիս, հոգուս աշխատանքը-տառապանք: Զարհուրելի է ներքին ուժ զգալ և կարողություն՝ և չկարենալ հասունցնել և իրագործել մի լայն մտածում, մի թոփիչ տենչանք, մի հմայիչ գեղեցկություն. ընդհատել, երբ կուզեիր աշխատել, գնալ անհրապույր մի աշխատանքի, երբ կարող էիր հորինել-ձևակերպել, վատնել ուժերն այդ անհավասար և անդադրում ոգորման մեջ՝ անկարող վերջնապես մոռանալու պայծառ բարձունքը, սակարկելով անսակարկելին... ինչ որ գրել եմ, խուլ արձագանքն եմ այս տևական և անվախճան ոգորման. դադարի և մոռացման պահեր, ըմբոստացում-

ներ բարոյական ինքնազգացումի, որ ճիգ է անում վեր պահելու գլուխը կյանքի տիրմեղից»¹, - այս ցավագին խոստովանությունը արվել է այն ժամանակ, երբ արդեն հանրահայտ գրականագետ էր, ճանաչված հրապարակախոս և հասարակական-պետական գործիչ:

Կար մի ուրիշ հանգամանք ևս. ժողովրդի ազատագրության համար պայքարը, որին զինվորագրվեց կամովին և ծառայեց անմնացորդ նվիրումով, պարտադրում էր գործունեության այլ ասպարեզ ու եղանակ՝ խլելով գրական աշխատանքին հատկացվող, առանց այդ էլ սուղ ժամանակի մեծ մասը:

Եվ, այնուամենայնիվ, նա որոշակի հետք թողեց դարի առաջին կեսի գրականության ու քննադատության, հասարակական-քաղաքական կյանքի ոլորտներում: Իր ժամանակի գրեթե բոլոր իրադարձություններին անդրադարձել է տաք, կրքոտ, համոզիչ խոսքով՝ հաճախ դառնալով սուր բախումների, բուռն վեճերի առիթ ու կենտրոն: Արծարծվող խնդիրներին, գրական-պատմական լինեին դրանք, թե հասարակական-քաղաքական, գիտական չափանիշներով, ազգի ներկայի ու վաղվա տեսանկյունից արդարությամբ մոտենալը նրա հավատամքն էր: Պատահական չէ, որ հետնորդների համար գրեթե լեգենդ դարձավ:

Բայց ավելի լավ է սկսենք սկզբից:

¹ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, 4-9, գ. 2644:

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ծնվել է Թիֆլիսում (Հավլաբար), 1875 թվի սա իր նշած թիվն է, (գերեզմանի հուշաքարին 1874 է գրված, ուրիշները հիշում են 1873-ը) ապրիլի 1 -ին: Հայկական նշանավոր այս թաղամասում էլ ստացել է նախնական կրթությունը: Ապագա գործչի մանկության տարիներին Թիֆլիսն ապրում էր ավանդական վարք ու բարքով: Ահա իր խոստովանությունը. «... Իմ մանկության շրջանին Թիֆլիսը դեռ պահում էր շատ հին հետքեր անցյալ շրջանից և իմ տեսած նիստ ու կացը շատ չէր հեռացած արքայական շրջանի Թիֆլիսի կյանքից: Ծիշտ է՝ չկար վրաց թագավորությունը, դրա փոխարեն իշխում էր ռուսը, չկար և գորավոր պարսկական ազդեցություն, բայց ժողովրդի կյանքը նոր միայն սկսած էր փոխվիլ և նիստ ու կացը դեռ շատ հնամենի էր¹»:

Ավանդական այս միջավայրում բարության ու աշխատասիրության օրենքներով էին ապրում նաև նրա ծնողները: Հայրը արհեստավոր էր, հրաշալի ձայնով օժտված մայրը՝ տնային տնտեսուհի: Տարիներ հետո պետք է հիշեր. «Մենք (ինքը և Իսահակ Տեր Ղազարյանը, հետագայում՝ Գյուտ եպիսկոպոս. - Գ. Ա.) ընկերական նույն խավից էինք: Մեր հայրերն արհեստավոր էին և բարեպաշտ մարդիկ. այդպես էին մեր մայրերը, որ ձեռքի վաստակով հասնում էին տան պակտորդին²: Հոր կերպարն ամբողջանում է ուրիշ մի վերհուշով. «Հայրս քեֆ սիրող արհեստավոր էր, սիրում էր լավ խմել ու խաղ կանչել, սովորաբար թաթար բայաթիներ, մանավանդ երբ իր ազգականները գալիս էին գյուղից:

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. II, Բեյրութ, 1966, էջ 17:

²Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. III, Բեյրութ, 1967, էջ 341:

Տունը դառնում էր մի հարսանքատուն, գինին հոսում էր, խորովածի շամփուրները լիքը գալիս, դատարկ դուրս էին գնում... Գինուց ու երգից աչքս փակվում էր և լուսադեմին աչքս բանալով՝ տեսնում էի դեռ սուփրան (սփողոցը) օգած և խմողների կատարը տաք¹: Կոլորիտային մանրամասներով է ներկայացնում նաև մորը. «Մայրս, որ մի բարեպաշտ կին էր, նույնպես սիրում էր երգել երբեմն վրացերեն, բայց ավելի բայաթիներ: Ծատ հանելի ձայն ուներ և կանանց հավաքույթների անհրաժեշտ անդամ էր»: Դպրոց չէր գնացել՝ «մի մազ էր մնում, որ կարդալ կարենամ»: Բայց զարմանալի գրասեր էր. «Լսելով, թե հեռավոր թաղերից մեկում - Ս. Սարգսի թաղում - մեկը «Վերք Հայաստանի» ունի, հիշում եմ՝ մի օր ձեռիցս բռնած գնաց այն թաղը և հազար աղանչանքով խնդրեց այդ գիրքը, որի մասին լսած էր թե շատ լավ գիրք է և տուն բերելով ու հարևան կանանց գլխիս հավաքելով ստիպեց որ կարդամ...»²: Այս ձևով մի օր գնել էր Սայաթ-Նովայի էժան հրատարակությունը», և «այնուհետև տուն ու դրկից դադար չէին տալիս» ինձ՝ խնդրելով որ կարդամ ու լսեմ»:

1892-ին «հույժ գովելի վարուք» ավարտում է Ներսիսյան դպրոցի «լիակատար ընթացս ուսման վեցերորդ դասարանի»:

Ավարտական դասարանի աշակերտը գրական առաջին փորձերն է անում: Պահպանվել է (կրտսեր որդու՝ Ռուբեն Աղբալյանի ջանքերով և, կարելի է կոսահել, ի՛նչ տազնապալից ապրումների գնով) քսան էջանոց մի տետր, ձեռքով պատրաստած, թուղթը դեղին, բարակ ու տողած, բայց որակով: Կողը կարված է ամուր սև թելով: Աշակերտական տետրակից չորս տողի չափ նեղ է, մեկ տողի չափ՝ բարձր: Առաջին ինն էջը դարչնագույն թա-

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. II, էջ 19-20:

²Նույն տեղում, էջ 20:

նաքով է գրված, տասնմեկից տասնչորսերորդ (վերջին էջի մեկ քառորդն է գրադեցված) էջերը՝ մատիտով, մատիտագիր առաջին էջը՝ դժվար ընթեռնելի:

Տասնչորս տարեկան էր այս տետրը պատրաստողը, Ներսիսյանի վերջին տարվա աշակերտ: Ո՞ր տասնչորս տարեկանը իրեն բանաստեղծ չի պատկերացրել, չի կազմել ապագա գործունեության ծրագրեր... Այս տետրի առաջին իսկ էջի վերևում մեծ տառերով գրված է՝ «Ծրագիրներ» (ծ-ն գրեթե թռչնատառ), որին հաջորդում են սովորական ձեռագրով գրված վերնագրերը՝ 1. Ծմբուլի, 2. Աղբյուր, 3. Որս, 4. Բանաստեղծ, 5. Ձուկ բռնել, 6. Խորհրդածություն, 7. Սափրիչը..., 8. Ռեհիմորը (վերջին երկուսը՝ մատիտով): Հերթական 9-րդ և 10-րդ համարների դիմաց ոչինչ չի գրված, փոխարենը երկու տողից կազմված այս շարքի ներքևում կարդում ենք՝ «Լեռնային իդիլիա», «Սպասում եմ»: Որոշակի երևում է, որ վերջին երկուսն ու մատիտով վերնագրերը հետո են ավելացվել:

Վերնագրերին անմիջաբար հաջորդում են երկու գեղարվեստական «ձևավորում», միակը «Հիշատակարանում» և Աղբալյանի՝ մեզ ծանոթ ձեռագրերում: Առաջինը մարդկային շատ փոքրիկ մի դեմք է, եղունգի չափ, անդուր արտահայտությամբ, և «շլապայով», երկրորդը՝ բավականին հաջող նկարված մեծավոր մի ծառ, մերկ սարերի լանջին, որ լեռնային հովվերգության տպավորություն է թողնում... Այս «ձևավորումներին» անմիջաբար հաջորդում է կրկին մեծ տառերով գրված, գրեթե ամբողջ տողը զբաղեցնող «Հիշատակարան» բառը, ներքևում, ավելի փոքր տառերով՝ «ճանապարհորդական»-ը, այսինքն՝

*Հիշատակարան
ճանապարհորդական:*

Վերնագրի տակ՝ ձախ անկյունում, տարեթիվն է՝ 1892., աջում՝ ստորագրությունը՝ Ն. Աղբալյան: Այս ամենը զբաղեցնում է էջի կեսից մի փոքր ավելին:

Երիտասարդ երագող հեղինակը որքանո՞վ է իրականացրել իր «ծրագիրներ»-ը:

Նկարագրվածին անմիջաբար, առանց մեկ տող անգամ ընդմիջելու, հետևում է հիշված շարքի առաջին վերնագիրը՝ «Ծմբուլի»: Ըստ հեղինակի մտահղացման՝ պատմվածք է: Հասցրել է գրել նաև «Բանաստեղծը», կրկին պատմվածք: Այս երկուսի մեջտեղում բանաստեղծական փորձեր են (ծրագրում չեն նախատեսվում): Անկեղծ լինենք՝ թույլ են այս գործերը, գեղարվեստական արժեքից զուրկ, բայց հստակ պատկերացում տալիս են գործունեության փշոտ ասպարեզ ընտրած պատանու ներաշխարհի ձևավորման մասին: Ահա մի նմուշ.

*Թող փչէ կատաղած քամին
Որքան կամենա,
Բարձր և ամուր ապառաժին
Ի՞նչ պիտ անէ նա:
Չարը խոսե, լուտանք թափե
Որքան կամենա,
Քո պայծառ, սիրուն անունեդ
Ի՞նչ կտանե նա:*

1892, ապրիլ 25

Ուրիշ փորձեր կատարե՞լ է: Մեկ-երկու գրախոսականում, ցույց տալու համար գրախոսվող բանաստեղծի անտաղանդությունը, ինքն էլ էքսպրոմտով չափածո տողեր է շարում՝ ավելի հաջող, ավելի բանաստեղծական, բայց միևնույն է՝ համոզելու համար, որ հանգավոր տողերը դեռևս պոեզիա չեն: Ուշագրավ է նման մի չափածո հորինվածքի կցած իր ծանոթագրությունը: «Այս ոտանավորը մենք գրեցինք կես ժամում, ցույց տալու համար, որ հանգերով գրելը դժվար չէ. թող ներողամիտ լինեն

ընթերցողները, որ պատանի օրերը միտներս ենք բերել»¹: «Պատանի օրերը միտներս ենք բերել» խոստովանությունը չի՞ վկայում, արդյոք, որ բանաստեղծություն գրելու ոգևորությունը կարճատև է եղել... Դա չէր խանգարում, որ ամբողջ կյանքում, հիմնականում Հովհ. Թումանյանի «հանգով», չափածո նամակներ գրեր բարեկամներիս, բանաստեղծական տողեր նվիրեր մտերիմներին...

Բանաստեղծ չդարձավ, բայց բանաստեղծը միշտ ապրեց նրա հոգում:

Նույն 1892 - ին ընդունվում է Գևորգյան ճեմարան, որն ավարտելու դեպքում, ինչպես գրում է դիմումի մեջ, «պարտավորիմ նվիրել զանձն իմ հոգևոր կոչման»²: Խնդրում էր ընդունել «ի շարս ձրիաթոշակ որդեգրաց ճեմարանի Մայր Աթոռոյ Էջմիածնի» (նույն տեղում): Ծեմարանում սովորել է ընդամենը երկու տարի: «Հոգևոր կոչման» հեռանկարն է հիասթափեցրել նրան, թե նյութական դժվարությունները, հայտնի չէ, սակայն երկու տարի սովորելուց հետո՝ 1894թ. ապրիլին, ստանալով վկայագիր՝ հեռանում է ճեմարանից: Առաջադիմությունը պատճառ լինել չէր կարող, որովհետև առարկաների բացարձակ մեծամասնությունից ստացել էր հույժ գովելի (հայոց լեզու, հայոց պատմություն, ռուսաց պատմություն և այլն) և գովելի գնահատականներ³: Մահվան կապակցությամբ գրված հուշերում ժամանակակիցները վկայություն էին տալու, թե ճեմարանից հեռացել է ուսանողական խոսվություններին մասնակցելու պատճառով՝ մի խումբ ուսանողների հետ միասին:

Ինչևէ:

¹Մուրճ, 1899, N 1, էջ 110:

²ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 312, ց. 2, գ. 87, ք. 3:

³Նույն տեղում, ք. 6:

Պատանի ճեմարանականին, ինչպես կարելի է կոսահել 1894-ի սկզբներին (ճեմարանը թողնելու շրջանում) գրած օրագրից («Հիշատակարան»), մեծ կյանքի հորձանուտ է բերել հանրությանը գործնականորեն օգտակար լինելու ցանկությունը: Ծեմարանի սանը սովորություն ուներ շրջել հայկական գյուղերը՝ ժողովրդի կյանքը մոտիկից ճանաչելու ակնկալությամբ: «Հենց որ ճանապարհորդությունից դարձա, վճռեցի գնալ մի ուրիշ կողմ ման գալու, բայց քանի որ հանգամանքներս շատ աննպաստ էին, Աբարան, Շորագալ և Դարաչիչագ սով է, իսկ մյուս տեղերում ես եղել եմ, մտածում էի անցնել մի անգամ ևս Ղամարլուի կողմի գյուղերը»¹, - այսպես է սկսվում «Հիշատակարանը»: Խավարի ու հետամնացության անհաշտ թշնամի ճեմարանականը փորձում է իր համեստ ուժերը ի սպաս դնել լուսավորության գործին: Կրկին դիմեմք «Հիշատակարանին». «Տեսա նորընծաներին: 14 հոգի եմ... Նոցանից մեկի հետ խոսեցի, բացատրեցի քահանայի կոչումը, հեղափոխական դարձրի և մինչդեռ շտապում էի մյուսներին ևս այդ անելու, անիծյալ սևանցի տգրուկներից մեկը (վանքի հոգևորական. - Գ. Ա.) եկավ և ավետարան հա ավետարան զահլա տարավ»...² Հեղափոխել շրջապատը, անհաշտ կոիվ հայտարարել հետամնացությանն ու խավարին, ծառայել ժողովրդին ինքնագիտակցության բերելու նվիրական գործին, - ահա, ըստ երևույթին, այն նպատակը, որը հարկադրել է նրան կիսատ թողնել «հոգևոր կոչման» համար ուսումը... Կենսագիրներից մեկի վկայությամբ՝ «ճեմարանի մեջ տիրող ոգին ու պայմաններեն դժգոհ՝ խումբ մը տղոց հետ պատճառաբանյալ նամակով մը թվելե և հեռանալու իրենց անդառնալի որոշումը նորընտիր կաթողիկոս Խրիմյան Հայրիկին հայտ-

¹Մշակույթ» (ամս.), 1989, N 2-3, էջ 112:

²Նույն տեղում, էջ 115:

Աելն հետո, կիւնդրեն Հայրիկեն, որ «օրհնէ և արձակե» զիրենք»¹: Հաղորդման հավաստի տոնը, չակերտների մեջ առնելը սկզբնադրքուրի օգտագործման վկայություն են (փաստաթղթի կամ հիշողության): Արխիվում մեր որոնումները արդյունք չտվեցին...

Հայաստանի շուրջ երկու տասնյակ գյուղերում դժվարին ուղևորություն կատարելուց հետո հայտնվում է Թիֆլիսում: Կարիքը նրան ստիպում է թողնել մայրաքաղաքը:

1895-1896 թթ. ուսուցչություն է անում Կաղզվանի և Ագուլիսի դպրոցներում: Նյութական կարիքը միշտ հետապնդել է նրան: «Մի տարի ես պահել եմ Ագուլիսում շերամ: Մինչև թիթեռների բռնելը», - Ա. Աթանասյանին հղած ամսակում հայտնում է Աղբալյանը: 1896-ի կեսերից կրկին Թիֆլիսում է. մասնավոր դասեր է տալիս և աշխատակցում «Մուրճին»: «Երեք տարի մասնավոր դասեր եմ տված Թիֆլիսի հարուստ ընտանիքներում, միաժամանակ սկսել եմ գրական գործունեություն բացառապես մշակելով գրական-քննադատական ճյուղը»², - խոստովանում է 1919-ին գրած ինքնակենսագրականում: «Մուրճի» 1896-ի թիվ. 9-ում տպագրվում է առաջին գրախոսությունը՝ նվիրված Օիրվանգադեի «Կրակը» պատմվածքին: Ապրուստը կրկին դժվար էր, և նա որոնում է ավելի շահավետ կամ լրացուցիչ աշխատանք: Այս ժամանակ էլ գրում է վերոհիշյալ ամսակը Ա. Աթանասյանին, որը հստակ պատկերացում է տալիս նրա նյութական վիճակի մասին. «Պ. Վ. Փափագյանից լսեցի, որ Ձեզ հարկավոր են շերամապահության ծանոթ մարդիկ (թե՞ մի մարդ միայն լավ չեմ հիշում): Ես կցանկանայի այդ մարդկանցից մեկը (կամ այդ մարդը) լինել: Մի տարի ես պահել եմ Ագուլիսում շերամ մինչև թիթեռ-

ների բռնելը, և թեև անձամբ չեմ մասնակցել, բայց ներկա եմ եղել սերմի քննության... Իմ անձնավորության մասին տեղեկություններ կարող եք հարցնել պ. Ա. Արասխանյանից, հետո եթե ուզեք, նաև Վ. Փափագյանից և պ. Ծանթից: Հասցես Մուրճի խմբագրություն»:

Պարզ է՝ ամսակը գրվել կարող էր «Մուրճի» հետ հիմնավորապես կապվելուց հետո միայն:

Երիտասարդ Աղբալյանը լրջորեն նախապատրաստվում էր ժողովրդի ազատագրության գործին նվիրվելուն: Այդ են վկայում կրտսեր որդու պահպանած թղթերը, որ հիմնականում ուսումնասիրած գրքերի ու մամուլի մշակումներ են, հազվադեպ՝ հուշեր ու ինքնակենսագրական նյութեր:

Դրանցից մեկը, թերևս ամենաարժեքավորը, հիշյալ անթվակիր «Հիշատակարանն» է, գրված, ինչպես կարելի է ճշտել շարադրանքի ընձեռած հնարավորությունից, 1894 - ին, «2 տարի առաջ, երբ նոր էի ավարտել Ներսիսյան դպրոցը» ... Ներսիսյանն ավարտել է 1892-ին: Տասնինամյա պատանին խոր սարսափով է խոստովանում այն անտարբերությունը հասարակական խնդիրների նկատմամբ, որ տիրում է շրջապատում. «...Մեր մեջ ահագին պակասություն կա «նվիրված մարտիկների»... որ կողմը նայում ես՝ շահ, շահ, շահ, որ կողմը նայում ես՝ անձնական օգուտներ, մասնավոր հաշիվներ գյուղացուց մինչև ամենամեծ ինտելիգենտը, մեկը չի մտածում ընդհանուրի մասին և վերջապես մեկով ի՞նչ կլինի, մեկը ոչինչ չի կարող անել ահագին հրոսակների դեմ, որոնք կարյեռիստներից են բաղկացած...»¹: Մեր տխուր կյանքը ազնիվ ու անվերապահորեն նվիրված մարդկանց կարիք ունի: Երիտասարդ ճեմարանականը գժում է նաև այդ տիպի գործչի նկարագիրը, որն այս դեպքում կրկնակի արժեք է ստանում, քանի որ ձեռք է

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I. Բեյրութ, 1959, էջ 5:

²ՀՀ ՊԿՊԱ, ֆ 207, ց. 1, գ. 18, ք. 28:

¹Մշակույթ, էջ 114:

քերում ինքնաբացահայտման արժեք. «Հարկավոր է, հարկավոր է ընդմիջտ հրաժարվել ամեն բանից: Ժողովուրդ, նորա շահն ու օգուտը, բարեկեցությունն ու լուսավոր – ուխտը. վեր դասի ամեն մի «փորից» ու «գրպանից», «շահից» ու «հաշիվներից» ...Հարկավոր է ցամաք հացի հուսով դուրս գալ, որ պանիր ու հացը նորա համար ճաշկերույթ լինի: Այս մարդը իսկապես մարդ է, սա կարող է ազատ, համարձակ, առանց վախենալու անել ամեն բան հանուն ժողովրդի ու նորա բարեկեցության, ահա վիճակ, որին հասնել ես ամենին ցանկանում եմ, այն ժամանակ կլինի միախառնական երևույթ աշխարհում¹»: Ահա թե ինչու համոզիչ է հնչում նրա երազանքը՝ տեսնել մի սերունդ («մեկով ի՞նչ կլինի»...), որ «–բահը ձեռին անդաստանի փուշերն է մաքրում, արմատով գետնից խլում և մի կողմը ձգում, ահա, այն ժամանակ թեկուզ մեռնում, բայց կիմանամ, որ այդ երկաթե համբերության տեր մարդոց գործը երկար կտևի, կունենա յուր հաջողները, որոնք արդեն կատարելագործած գործիքներով դուրս կգան թշնամու առաջ: Կոիվ, կոիվ և կոիվ,– ահա այս պիտի լինի ազնիվ երիտասարդի և քաղաքացու դեկզը, idee fixe – ը»²...:

Աղբայրանն իր երազած մարդկանցից եղավ: «Հաց ու պանիր»-ը ճոխ ճաշկերույթ համարելով, չընկրկելով ոչ մի տեսակի դժվարության առջև՝ ամբողջ կյանքում կովեց, կովեց խոսքով ու գեներով, գրչով ու գրքով՝ լուսավոր հետք թողնելով ժամանակակիցների ու հետնորդների հոգիներում:

Ջարմանալի շիտակությամբ ապրած այս մարդը երբեմն պանիրն էլ ավելորդ ճոխություն համարեց: Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Էջմիածնից վարչապետ Ս. Վրացյանին հղած մի նամա-

¹Նույն տեղում:

²Նույն տեղում:

կով փոխարինաբար տասնհինգ փութ գարի էր խնդրում՝ ցանելու, երեխաների մի կտոր հացը, զարեհացը ապահովելու համար. «Ստիպված եմ երեխաներիս հացի մասին հոգալ վաղօրոք»: Եվ սա ասում էր միշտ կուսակցության վերին էջերում պառլամենտի անդամ, մեկ տարի նախարար աշխատած Աղբայրանը: Մի կտոր հացի խնդիրը մշտապես ուղեկցել է նրան: «Ծերությունս շուտ հասավ,– կարդում եմք 1945-ին գրած նամակներից մեկում,– շունչս կտրվում է և դժվար է ինձ համար այսուհետև դաս տալ կամ դասախոսել (Բեյրութի համազգայինի ճեմարանում – Գ. Ա.): Բայց ապրել պետք է մինչև մահ, որ կարծեմ հեռու չէ... Այս հասակին վանք քաշվի և նոր պայմանների և մարդոց հարմարիլ դժվար է ինձ համար. վանքը ձրի հաց տալու չէ, իսկ ես չեմ կարող իմ աշխատանքով ապրուստ ապահովել: Եթե կարենամ ինչու՞ պիտի վանք մտնեմ, ճեմարանի մեջ կը մնամ»:

«Հիշատակարանից» ընդարձակ մեջբերումներում ընթերցողը կնկատի, անշուշտ, շարադրանքի անհարթություններ: Դա նկատում էր հեղինակը ևս. «Ես շատ հեռուն գնացի, ինձ թվում է, թե ավելի շատ բան ասացի, քան պիտի ասեի, բայց բոլորն էլ անկապ, սիստեմի տակ չդրած, նոքա բոլորն էլ մեծ մասամբ ավելի զգացմունքներ են, քան մտքեր... ժամանակով այս բոլորը մի անգամ ևս կարդացվելով ու կարգի ընկնելով, կանոնավոր տրամաբանական անալիզի միջից անցնելով կբարձրանան մտքի աստիճանին»¹:

Ավաղ, հեղինակն այդ բանն անելու հնարավորություն չունեցավ:

Նվիրումի հետ միասին անհրաժեշտ են նաև խոր ու կայուն գիտելիքներ: Ուսումը Գևորգյան ճեմարանում կիսատ թողեց, բարձրագույն կրթություն ստանալու հետագա փորձերը անհաջող ավարտվեցին՝ հիմնականում

¹Նույն տեղում:

կուսակցության հանձնարարությունները կատարելու պատճառով: Հետագայում ստիպված պետք է լիներ ոչ առանց ցավի ու ափսոսանքի խոստովանել. «...Համալսարան ավարտած չեմ, երբեմն «մոտեն անցած եմ»: Բայց դա չի խանգարել, որ անդով եռանդով, ինչպես ինքը կասեր՝ «ինքնաշխատությամբ», լրացներ համալսարանական կրթության պակասը: Պարզապես զարմանք է հարուցում այն վիթխարի աշխատասիրությունը, որով ձգտում էր լրացնել թերին: Առանց չափազանցության «ինքնաշխատությամբ» հասավ ավելիին, քան հասնում են ուրիշները համալսարան ավարտելով:

Ռուբեն որդու փրկած թղթերում պահպանվել են մշակումներ, սևագրեր, նշումներ, մեջբերումներ, որոնք վկայում են, իսկապես, աներևակայելի մի աշխատասիրություն, համակողմանի գիտելիքների յուրացման զարմանալի մի ծարավ: Այդ նյութերը հիմնականում վերաբերում են 1893-1899 թթ., որոշ մշակումներ թվագրված են՝ դրանց մի մասը 1893, 1895-1897 թթ. ամսագրեր են: Կա մշակումների ժամանակը կոահելու մի հնարավորություն ևս. սկսած 1899-1900 թվերից Աղբալյանին կլանում է ուրիշ մի մտահոգություն, որի մասին խոսք կլինի իր տեղում:

Որևէ բան կարդալիս նշումներ անում էր երկու տեսորում (սովորաբար ինքն էր պատրաստում դրանք). մեկում վերաշարադրում էր իրեն դուր եկած, իրեն հարկավոր մտքերը, փաստերը, մյուսում անում էր «քաղվածներ»: Սովորույթ ուներ լայն լուսանցք թողնել, ուր կատարում էր լրացուցիչ հավելումներ, նշում շարադրանքի հիմնական առարկան ու խնդիրները: Աբգ. Հովհաննիսյանի «Հայը և Հայաստանը օտարների աչքում» գրքույկի մշակումների լուսանցքներում կարդում ենք՝ «Կողմնակի՝ էջ 7 - 8. - զեյթունցոց մասին գովասանքով է խոսում, 17-18. - անհաստատ դատողություն և Մ Օ և ՇԵ - քավականաչափ ազատ գրվածք է»: Իր համար կար-

ևոր մտքերն ու տեսակետները վերաշարադրելուց կամ «քաղվածներ» անելուց հետո նաև որոշակի վերաբերմունք է դրսևորում գրքի ու հեղինակի նկատմամբ: «Մի քանի տեղեր,- գրում է նույն գրքի մասին,- գիտությամբ թե անգիտությամբ խույս է տալիս յուր կարծիքը հայտնելուց, օր 18»: Իբրև կանոն վերաբերմունք է դրսևորում կարդացածի նկատմամբ. ահա մի քանի օրինակ ևս՝ «վերին աստիճանի հետաքրքրական հոդված, լիքը բազմաթիվ փաստերով Անգլիայի պետական կարգի և տնտեսական կյանքի փոփոխության մասին XVIII ու XIX դ. ա կեսում», «հոդվածը դժվար մարսական է», «շատ լավ հոդված է», «հետաքրքրական և տեղեկալի հոդված», «կրկին անգամ կարդալու հոդված և մարսելու», «հոդվածը անկարգ է գրված», «փոքր ինչ միակողմանի է հոդվածը», «հոդվածը քիչ խառն է գրած»: Գրում էր շատ մանր, խիտ, թեև ընթերցելի ձեռագրով: Մեծադիր էջերը օգտագործում էր ծայրեծայր, առանց ազատ տեղ թողնելու:

Նույնը տեսնում ենք ռուս ու եվրոպական գրականության ներկայացուցիչների ստեղծագործությունների ուսումնասիրության բնագավառում: Զարմանալ կարելի է, թե ինչպիսի համբերատարությամբ ու մանրամասնորեն է ուսումնասիրել Հ. Հայնեի երեք հատորները, 15, 5, Լոմոնոսովի հիմները՝ 17 էջ (վերևում նկարագրված մեծադիր էջերով կամ գրեթե դրանց նման):

Պատկերացում տալու համար՝ մի օրինակ.

Երկու մեծ էջի վրա ներկայացնում է բանաստեղծությունը: (ГИМН БОРОДЕ), նրա արձագանքների պատմությունը, եկեղեցականների և Լոմոնոսովի մյուս հակառակորդների ռեակցիան հիմնի հանդեպ, ցարական տան վերաբերմունքը և այլն, առանձին բառեր ու արտահայտություններ թարգմանում է գրաբարով: Այնուհետև, գրեթե մեկ էջի չափով, ծանոթագրություններ են,

թվով տասը: Այստեղ ոռուերենով արտագրված է կրկներգը, մի շարք մտքեր, տողեր թարգմանված են:

Նույնպիսի մանրամասնությամբ բնութագրվում է Լոմոնոսովի օդաների բացարձակ մեծամասնությունը: Գրեթե բոլոր գործերի ծանոթագրություններում գնահատումներ կան: «Հաջող էպիգրամ, թեթև» «սուր բանաստեղծություն է»: «Ծարտասանություն կա այս տոնում, բացականություններ, կոչեր և այլն»: 58-րդ ձոնի մասին, որ հայտնի «Գովքն է ցարական ընտանիքի», գրում է. Այս գովքի «ամենամեծ զարդարանքը Եկ. 2 նկարագրությունն է»: Ահա մի գնահատական ևս. «Լոմոնոսովը (Աղբալյանը գրում է՝ Լ.- Գ. Ա.) նմանություններով Անակրեոնին նոր հոսանք մտցրեց ուս գրականության մեջ: Ֆրանսիայում էլ այդպես Անակրեոնին նմանելն ազատեց գրականությունը պինդարիզմի ճնշող ազդեցությունից: Լոմոնոսովին հետևեց Դերժավինը, ոչ միայն նմանելու ձևի, այլև ձոների ընտրության մեջ: Լոմոնոսովի առաջին անգամ գործածած չափը յուրացրին այսպես կոչված թեթև բանաստ. համար. Սում. Խերասկ. -Կնյաժնին. Ժուկովսկի. Բատյուշկով և Պուշկին»:

Մի ուրիշ գնահատական՝ «Անակրեոնի ձոնին Լոմ. հակադրում է իրանը, սրանով լավ բնորոշելով իրան:

Անակ. ուզում էի <...> մասին երգեմ, բայց տավիղն ինձ սիրո մասին է երգում ակամա. Լոմ. Անակրեոն, ես ուզում էի սիրո մասին երգել, բայց լարերն ակամա հեռուական աղմուկ են հնչում»...

Եվ այլն:

Կարելի է չկասկածել, որ նման մանրամասնությամբ մշակել է մյուս հեղինակներին ևս: Այսպիսի նյութերի ծանոթանալուց հետո անվերապահորեն հավատում ես իր խոստովանությանը. «Բարեբաստիկ առիթով ես ընկա Մոսկվա և Պետրոգրադ: Անկշիռ ենթադրությամբ կարծելով, թե կյանքն ինձ կարող է և ուրիշ ուտաններ տանել՝ ես մտածեցի ամեն երկիր ինքն իր մեջ ուսում-

նասիրել և մոլեկան եռանդով անձնատուր եղա ուսաց գրականության, պատմության և արվեստին...»¹: Այն անձնուրաց նվիրումը, որով անձնատուր էր լինում իրեն հետաքրքրող խնդրի ուսումնասիրությունը, իրենից լավ չես բնութագրի՝ «մոլեկան եռանդ»:

Երիտասարդ Աղբալյանի ուսումնատության պատկերը թերի կլինի, եթե չնշենք այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբերում էր կյանքի տնտեսական կողմի, տնտեսական գիտության հանդեպ: Ահա թե ինչու մշակել է նյութեր կաթնատնտեսության, հողագործության, ձկնորսության, անասնապահության և այլ բնագավառների վերաբերյալ ևս: Կարդացել է, հիմնականում ոռուերենով, գրքեր, հոդվածներ, շատ է հետաքրքրվել մասնավորապես Կովկասի տնտեսա-աշխարհագրական իրավիճակով և բողոքում էր. «Կովկասի գյուղատնտեսության մասին տեղեկություններ շատ քիչ կան գրականության մեջ»: Ոչ միայն կարդում էր, այլև աշխատում էր սովորածը կիրառել կյանքում, հասկանալ տեղական տնտեսության յուրահատկությունները: Պահպանվել է մի տետրակ, կրկին սեփական ձեռքով պատրաստված, «Քաղվածներ «Մուրճից» խորագրով, որտեղ հատուկ բաժին է հատկացված «տնտեսական կյանքին»: Նրան հետաքրքրում էին Երևանի նահանգի տնտեսության մասին ակնարկները, կաթնատնտեսության մասին գրույցները, «առևտրական և գործարանական գործերը մեզանում», «բանվորական հարցը», «գյուղատնտեսական ուսումն և հայ գյուղատնտեսը», աղի և Կողբի մասին նյութերը...

Թե ինչի հասցրեց նրան այս ամենը, պերճախոս վկայում է 1896թ. օգոստոսին տետրերից մեկում կատարած այս գրառումը. «Անկասկած է, որ մի ժողովրդի կյանքում մյուս պայմանների հետ տնտեսական պայ-

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. IV, Բեյրութ, 1970, էջ 9:

մանները մեծ ներգործուն դեր են կատարում և նոցա փոփոխվելու հետ շատ բան է փոխվում: Որևէ հասարակություն առաջ մղելու համար պետք է ստեղծել պայմաններ և այն՝ ըստ կարելույն բազմակողմանի: Բավականանալ ժողովրդի մտավոր մակերևույթը միայն բարձրացնելով և կարծել, թե դրանով նրան դրել ենք հառաջդիմական ճանապարհի վերա, կնշանակե մի մեծ սխալ գործել: Մեզ մոտ, մեծ մասամբ, ուշադրություն դարձրել են ժողովրդին մտավորապես առաջ մղելու վրա և նույն չափով մոռացել են նրա տնտեսական կյանքը: Այս խնդիրը նշանավոր խնդիր է և նրան սպառել մի քանի երեսում շատ և շատ դժվար է, ուստի մի կողմ թողնելով այդ ես կուզեի խոսել մի տնտեսական երևույթի մասին և այն շատ համառոտ, որ վերջին տարիներս նկատվում է Լոռվա գավառում»:

Իբրև հաստատումն «Մուրճի» խմբագրի տեսակետը հիշեցնող այս եզրակացության, որը նա հմտորեն պետք է կիրառեր գրական երևույթների գնահատման ժամանակ ևս, պատրաստվում է վերլուծել Լոռվա գավառում տարածված «մի տնտեսական երևույթ»: «Երեկ գնացել էի այստեղից (ամենայն հավանականությամբ Ջալալօղլիից. - Գ. Ա.) 16 վ. վերա գտնվող Վորոնցովկա գյուղը, ուր բնակվում են երեք աղանդի պատկանող ուսուցիչներ՝ սուրբոտմիկներ, բապտիստներ և մալականներ: Գնալուս նպատակն է ծանոթանալ, գոնե հարևանցիորեն, այնտեղ գտնվող Ծատիկյանի կաթնատնտեսական գործարանի հետ. ավելորդ չեն համարում դիտողություններս արձանագրել»: Դժբախտաբար դիտողությունները չի շարադրել կամ դրանք մեզ չեն հասել. գրության ոճը ենթադրել է տալիս, որ այդպիսիք, իսկապես, եղել են: Տնտեսագիտական հիմնավոր ուսումնառությունը նրան հնարավորություն պիտի տար հետագայում հանդես գալու տնտեսական լուրջ խնդիրների շուրջ ևս: Ահա մի նմուշ. երկյուղելով օտար դրամագլուխը երկրամաս թա-

փանցելու իրողությունից, քանի որ այն հայ դրամատերերին կարող էր զրկել երկրի կյանքում «գործուն դեր» խաղալուց, վերջիններիս խորհուրդ է տալիս. «... Մենք կարծում ենք, թե նրանց ազատ դրամագլուխների լավագույն գործադրությունը այն կլիներ, եթե նրանց տերերը միանալով կազմեին մի «Հողային դրամատուն» և հնարավորություն տալին հայ գյուղացիներին հողեր ձեռք բերել»¹:

Այսպիսի համակողմանի «ինքնաշխատությամբ» էր նախապատրաստում նա իրեն այն նվիրական գործին, որին զինվորագրվել էր: Տարիներ հետո, արդեն լուսավորության նախարար, ազգային կրթական համակարգ մշակելիս, նրանում հատուկ տեղ պետք է հատկացներ ինքնագարգացմանը:

Թիֆլիս վերադարձած պատանին ակտիվ մասնակցություն է ունենում գրական-հասարակական կյանքին: Բնութեն որդու փրկած թղթերում պահպանվել է հայոց հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովներից մեկի վերաբերյալ մի գրության («Բաց նամակ հասարակության») սևագրությունը, ուր խոր դժգոհություն է հայտնում ժողովի որոշման դեմ: «Պ. պ. Աղայանի, Թումանյանի և Պոռչյանի հարուցած հարցերը թարգմանիչներից վճարելու մասին չընդունվեց», «խառն ժողովը», բաղկացած զանազան տիկիներից ու օրիորդներից, այլևայլ, «ամբոխային հակումներով» մարդկանցից, մերժեց այդ առաջարկը: Գրական գործիչների ճակատագիրը վճռեցին «ոչ գրական» մարդիկ: Ապագա գործչի սուր աչքը լավ է տեսնում հավաքվածների տրամադրությունները. «Ես տեսնում եմ այս վարմունքի մեջ безобразие,- գայրույթով արձանագրում է նա,- և ճշմարիտ, ժողովի մեծամասնությունը տեսնում էր արածները,

¹Հորիզոն, 1913, N37:

իսկ փոքրամասնությունը լսում խոսածները, մի չնչին մասը լուում էր, մյուս մասը նայում»¹:

Թիֆլիսում հրատարակվող «Մուրճի» 1896-ի երկրորդ կեսի համարներում շուտով լույս են տեսնում առաջին գրախոսականները: Այնուհետև մինչև 1899 թվականը ներառյալ կանոնավորապես տպագրվում էր ամսագրում:

Ա. Արասխանյանի ուշադրությունը երևան է հանում մի շնորհալի ուժ ևս: Առաջին հոդվածները, զանազան ազդեցություններով հանդերձ, դրսևորում են գեղագիտական ուրույն համակարգ հայտնաբերելու միտում, որը մի շարք դեպքերում («Ղոչաղը իբրև տիպ հայ գրականության մեջ», «Ծանթ», «Երագ օրեր», «Ավ. Իսահակյան», «Երգ ու վերք», «Դիկկենս», «Դավիթ Կոպերֆիլդ») հանգում է փայլուն արդյունքների: Երեք տարվա ընթացքում տպագրեց շուրջ չորս տասնյակ հոդված ու գրախոսական, որոնցից շատերը նշված տասնամյակի հայ քննադատական մտքի նվաճումների մակարդակը հաստատելով՝ իրենց արդիական հնչեղությունը պահպանում են այսօր էլ: «Մուրճի» խմբագրությունը առաջադեմ մտածողների մի իսկական հավաքատեղի էր: Երիտասարդ Աղբալյանն այստեղ ձեռք է բերում նոր բարեկամներ, որոնց հետ նամակագրություն էր պահպանում խմբագրությունից 1899-ի կեսերին սովորելու նպատակով Մոսկվա մեկնելուց հետո էլ: Նրանցից շատերը հետագայում գործընկերներ եղան: «Մուրճը» և նրա խմբագիր Ա. Արասխանյանը զգալի հետք են թողել երիտասարդ գործչի վրա: Առանց վարանելու կարելի է պնդել, որ Ն. Աղբալյանը Արասխանյան խմբագրի, հրապարակախոսի ու քննադատի լավագույն ավանդույթների ժառանգորդն ու զարգացնողն է:

¹Երևանի համալսարան (ամս.), 1989, N 3, էջ 28:

Վիթխարի աշխատասիրությամբ գիտելիքներ ձեռք բերելու ընդունակությունը, այնուամենայնիվ, չի մարում համալսարանական կրթություն ստանալու ցանկությունը: Եվ, ահա, 1899-ին նրան տեսնում ենք Մոսկվայի համալսարանի, ուր մնաց ընդամենը մեկ տարի, ազատ ունկնդրի դերում:

«Սիրելի ծնողներ. Այսօր առավոտ ժամը 8 1/2-ին հասա Ռոստով: Հիմի Նոր - Նախիչևան նստած թեյ եմ խմում, չգիտեմ երբ դուրս կգամ այստեղից. ընկերներիցս մեկի տունը գտա, տանը չէր. տեսնեմ ինչ կլինի, պիտի մնամ, թե պիտի գնամ, ինչպես խոստացել եմ՝ ամեն օր նամակ կգրեմ. լավ եմ ես, ճամբին բան չեմ կորցրել. պաշարս այսօր հատավ, բայց դեռ բոլոր պանիրը, գինին ու բուլկիներից մեկը մնում է, այն էլ ճամբին: Տղերքը թե եկան՝ կասես, որ նամակ կգրեմ Մոսկվայից, այժմ շտապելու ժամանակ է: Բարևս քրոջս, Արմենին, Գևորգին և երեխանցն ու Ղազարին, բարև տուր ով ճանանչ են:

Ձեր որդի՝ Նիկոլ.

1900. 4/22 - շաբաթ, Նոր-Նախիչևան»¹:

Փոքրիկ այս «բացքարտում» (ինչպես ինքն էր անվանում) ամբողջ Աղբալյանն է. ուշադիր որդին («ինչպես խոստացել եմ՝ ամեն օր նամակ կգրեմ») ու հարազատը, ծայր աստիճան անկեղծ մարդը (հիշենք «պաշարի» հետ կապված մանրամասները): Ամեն օր, իհարկե, նամակ գրել հնարավոր չէրավ, բայց ամեն շաբաթ գրելը սովորույթ էր դարձել: «Սիրելի ծնողներ. նամակս գրում եմ պոստումը: Անցյալ շաբաթ նամակ չգրեցի, շատ էի խառնված. հիմի էլ թեև ժամանակ չունեմ, բայց գրում եմ, որ միամտվեք, չասեք՝ թե այս ինչ է, երկու շաբաթ է, նամակ չկա»²:

¹ԳԱԹ, Ն. Աղբալյանի ֆոնդ, գ. 3839-1:

²Նույն տեղում, գ. 3839-2:

«Հետևյալ տարին (1900թ. կեսերին. - Գ. Ա.) մնացել էմ թիֆլիս պաշտոն վարելով քաղաքի քիմիական լաբորատորիայում: Այնուհետև երկու տարի եղած էմ Պետրոգրադ մասնավոր դասեր տալով և հայոց գրականության պատմության մասին նյութեր հավաքելով տեղի մատենադարանում»¹:

Բարեբախտաբար պահպանվել են Պետրոգրադից գրված նամակներ, որոնք լույս են սփռում այս շրջանի նրա գործունեության վրա: Կրկին ծանր էին պայմանները: Առավոտից երեկո աշխատում էր, աշխատանք, որ ավելի շուտ մաքատում էր: Լսենք իրեն.

«... Ահա ինչ էմ անում: Կազմում էմ մեր պարբերական մամուլի նյութերի ցանկը և դրան զուգահեռ մի քանի ուրիշ ցուցակներ, այն է. մի տեղ հավաքում էմ այն բոլոր տեղեկությունները, որ կա որևէ նշանակություն ունեցող անձի մասին մեր գրականության մեջ, առայժմ միայն տեղերն էմ նշանակում, այսպես, օրինակ՝ Գր. Արծրունի -տես «Արձագանք», 1883, նո. 7, ներք. տես: Մի այլ տեղ-որևէ գրքի մասին ինչ կա գրած կամ հենց հիշած թե ստացանք: Մի ուրիշ տեսրակում ցուցակագրում էմ որևէ հեղինակի գրածը առհասարակ՝ օր. Մանդինյան Սեդ. «Վարժարան», 1882/3, նո. 4 «դաստիարակությունը»: Մի ուրիշ տեղ թե ինչ կա թարգմանած որևէ օտար հեղինակից. օր. Անդերսեն - «Որևէ անուն», տես «Վարժարան» 1883/4, մանկական բաժին, էջ 34. և այլն: Այս՝ համարձակվում էմ ասել, հսկա ձեռնարկությունը մի նախապատրաստական աշխատանք է իմ ապագա հոդվածների, կենսագրությունների, բնորոշումների և՛ իբր վախճան ու վերջնական նպատակ այս ամենի՝ «Հայոց նոր գրականության պատմության»՝ եթե մի կերպ Վիեննա ընկա, և «Ռուսահայ գրականության

¹ ՀՀ. ՀԿՀԱ, ֆ. 207, ց. 1., գ. 18, ք. 28:

պատմության», եթե այս քանդված երկրում փոշելու դատապարտվիմ վերջնականապես»¹:

Անմնացորդ նվիրվել էր այս գործին, պատրաստ էր չխնայել անգամ... երիտասարդությունը: Բայց ապրուստի միջոցներ հայթայթելը մեծ դժվարություններ էր հարուցում: Նույն նամակում կարդում ենք. «Ես պիտի նաև հաց աշխատեմ իմ ու ծնողներիս համար»: Իր ու ծնողների համար հաց վաստակում էր Պետերբուրգի հայկական եկեղեցու երգչախմբում երգելով (ամսական 10 - ուրլի) և մասնավոր դասերով: «Սիրելի ծնողներ,- Պետերբուրգից գրած մի բացքարտում ցավով հայտնում է նա,- սպասեցի, որ փողն այս շաբաթ ուղարկեմ, չեղավ. ժամանակին. ամսի 9-ին կամ 10-ին կստանամ (նամակը դեկտեմբերի 6-ին է գրել. - Գ. Ա.) և կուղարկեմ: Օտտ էլ բարկանում էմ, բայց ինչ կօգնես: Դրա համար էլ նամակս ուշացավ»²: Մի այլ նամակում՝ «Ստացել էմ Ձեր նամակը. ցավում էմ, որ փողն ուշ է հասել»³:

Դժվարություններից չէր ընկրկում, չէր բողոքում բախտից ու ճակատագրից. «Ոչ ոքից չեմ գանգատվում և ոչ ոքից էլ պահանջ չունեմ: Կանեմ այն, ինչ որ հնարավոր է, հնարավորություն չունենալով անելու այն, ինչ որ կարող եմ և ընդունակ եմ»⁴: Այսպես էլ ապրեց ամբողջ կյանքը:

«Մուրճին» աշխատակցելու տարիները (1896-1899) խիստ արդյունավոր եղան: Գրեթե յուրաքանչյուր համարում հոդված կամ գրախոսական, հաճախ գրախոսականներ էր տպագրում: Հավանաբար այս տարիներին էլ հենց մտերմական կապեր են ստեղծվում ամսագրին աշխատակցող գրողների ու հրապարակախոսների միջև (Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Լ. Օսանթ, Դ. Դե-

¹ Բանբեր Երևանի համալսարանի, 1989, N 2, էջ 59:
² ԳԱԹ, Ն. Աղբալյանի, ֆոնդ, գ. 3839-3:
³ Նույն տեղում, գ. 5855 - 4:
⁴ Բանբեր Երևանի համալսարանի 1989, N 2, էջ 59:

միրճյան, Լ. Մանվելյան, Ա. Ղազարյան և շատ ուրիշ-ներ): Դրան նպաստում էր վերնատան գործունեությունը ևս: Համեմայն դեպս Պետերբուրգից Ավ. Իսահակյանին գրած նամակները հաստատում են հոգեկից մտերմություն: «Մեր Օհանեսը», - այսպես է արտահայտվում Հովհ. Թումանյանի մասին, ունի նրա մեծության ըմբռնումը, խիստ մտահոգված է Իսահակյանի ու Դեմիրճյանի ապագայի խնդրով: Արտակարգ մի հոգատարությանմբ էր վերաբերում իր ստեղծագործող բարեկամներին, ամեն ինչ անում էր նրանց կրթության գործը կազմակերպելու համար, խորհուրդներ էր տալիս, հորդորում էր, ձեռքից եկածն անում նրանց գործերը տպագրելու նպատակով: Սրտառուչ են Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքերի» երկրորդ հրատարակության համար գործադրած ջանքերը. հրատարակողներ էր փնտրում, հաշվարկներ էր անում տպագրական ծախսերի վերաբերյալ, պայմանավորվում էր տպարանատերերի հետ: Որքան գորովանք կա, ասենք, այս ցանկության մեջ. «Գրվածքդ եթե տպելու լինես, - գրում է Իսահակյանին, - մտադիր եմ գրչագրերից առած խորանագարդերով տպել...»¹:

Լրջորեն մտահոգված էր իր գրչակից ընկերների մտավոր զարգացմամբ: Մասնավորապես Իսահակյանին դարասկզբին գրած նամակներում խոր տազնապ է արտահայտում նրա և Դեմիրճյանի տաղանդի հետագա զարգացման վերաբերյալ, հորդորում է գալ Մոսկվա կամ Պետերբուրգ, մեկնել Եվրոպա՝ մոտիկից շփվելու ռուսական ու համաշխարհային գրականությանն ու մշակույթին, խորհուրդ էր տալիս կարդալ Պուշկին ու Գյոթե: «Դու ունես ինքնուրույն հոգի և տրամադրություն, - Իսահակյանին հղած նամակում հայտնում է նա, - բայց մեծ արվեստագետներին լավ ուսումնասիրիր, ոչ թե նրանց

¹Նույն տեղում, էջ 61:

մտքերի համար, որոնք նույնպես կարող են օգուտ բերել՝ վառելով քո հոգու հրանյութը, այլ նրանց արտահայտելու արվեստն ուսումնասիրելու համար. հատկապես Պուշկին և Գյոթե. այս վարպետներն անմասն են»¹: Նրան մտահոգում էր Դեմիրճյանի ճակատագիրը. օժտված մարդը նյութական հնարավորություններ չունի կրթություն ստանալու, իր տաղանդը կատարելագործելու: «Ցավում եմ Դերենիկի վրա... որովհետև նրա ամբողջ ապագան նրա հոգու և մտքի հարստությունից է կախված, իսկ չի ձգտում հարստացնել իր հոգին մեծ երգիչների բարեկամությանմբ, միտքը մեծ մտածողների ընկերությամբ... Գրողը որ դադարեց հառաջադիմելուց - նրա մահը մոտ է արդեն»: Քննադատն իրավունք ուներ այսպես բողոքելու. ինչպես երևում է մի այլ նամակից, նա աշխատել է Մոսկվայում պայմաններ ստեղծել Դեմիրճյանի համար, բայց նա ոչ միայն չի եկել, չի էլ պատասխանել. «Եկա Մոսկվա թե չէ, աշխատեցի, որ նրա (Դեմիրճյանի. - Գ. Ա.) համար միջոց գտնեմ... մի քանի պայման ու հանգամանք աչքի առաջ առա, որ սեպտեմբերից գործի կենամ: Բայց անկախ սրանից, ամառս գտա այլ աղբյուրից ամսական 15ռ., գրեցի իրան, թե 15ռ. եմ գտել, ինչ ես ասում, կա՞րող ես մի 10-15 դու գտնես՝ գաս... ինչ ես կարծում, ոչ մի տող չգրեց»²:

Աշխատակցությունը «Մուրճին» արդյունավետ եղավ, և ըստ էության ձևավորվեց երիտասարդ քննադատի գլխավոր սկզբունքներից մի քանիսը: Հետագայում իր խմբագրած «Նոր հոսանք» ամսագիրը շարունակում էր «Մուրճի» ավանդույթները:

Հայերեն գրքերի մասին պարբերաբար և որոշակի սկզբունքներից ելնող գրախոսություններ տպագրելը «Մուրճից» է սկսվում: Այսպես ծնունդ առավ «Գրախո-

¹ Ավ. Իսահակյանին ուղղված նամակը մեզ է տրամադրել Ն. Աղբալյանի Ռուբեն որդին:

²Բանբեր Երևանի համալսարանի, 1989, N 2, էջ 57-58:

սություն» բաժինը: Գրական կյանքի նշանակալից երկույթներին վերաբերող հոդվածները տպագրվում էին բաժնից դուրս: Այս խնդրի իրականացման համար ևս Արասխանյանը որոնում և ամսագրի շուրջ համախմբում էր երիտասարդ, շնորհալի ուժեր: Աղբայյանը սրանցից էր: Գրախոսությունն այս ձևով տեսնում ենք մաս «Նոր հոսանքում» («Մուրճ»-ի կառուցվածքը գրեթե կրկնում է):

Արասխանյանը հատուկ հետևում էր, որպեսզի գրական քննադատությունը հավատարիմ մնա գիտական չափանիշներին, չդառնա բարեկամներին շահելու, չարականներից վրեժ առնելու ասպարեզ: «Մենք պնդում ենք, որ, «Մուրճից» առաջ չկար այսպես հասկացված քննադատական մի բաժին մեր պարբերական մամուլի մեջ», - հավաստում էր խմբագիրը՝ նշելով մասնման քննադատության բարերար ազդեցությունը. «հայ գրականության վրա»:

Երիտասարդ քննադատի բեղմնավոր գործունեությունը ամսագրի էջերում վկայությունն է այն բանի, որ նա վայելում էր խմբագրի վստահությունը:

Ավելին՝ Արասխանյանի «ուղղամիտ վերաբերմունքի» մթնոլորտում դաստիարակված Աղբայյանը ուղղամտության հիանալի դասեր է տալիս: Երիտասարդ քննադատի տեսակետները երբեմն կարելի էր վիճարկել, անվիճելի է, սակայն, որ դրանք խորին համոզմունքի արտահայտություններ են: Նա բարոյական իրավունք ուներ տարիներ հետո գրելու. «Առաջին իսկ օրվանից ձգտել եմ հավատարիմ թարգմանը լինել մտածումիս ու զգացումիս»¹:

Արասխանյանի գրական քաղաքականության սկզբունքներից մեկը, որ նույնպես կիրառվում էր հետևողականորեն, հետևյալն էր. «Կրիտիկան կարող է

զարգանալ, երբ նա կզբաղվի այն կյանքով, ինչ կյանք որ ներկայացնում է գրականությունը»¹: Արդեն իսկ Մուրճում տպագրած մի շարք հոդվածներում, մասնավորաբար «Ղոչաղը իբրև տիպ հայ գրականության մեջ» ուսումնասիրության մեջ, այս սկզբունքը դասական կիրառություն է գտել:

1904-ից Հայ հեղափոխական դաշնակցության անդամ է և հատուկ հանձնարարություններով հաճախ է լինում տարբեր երկրներում: Նույն թվականին Պետերբուրգից վերադառնալով Կովկաս՝ հեղափոխական գործունեություն է ծավալում Կարսում. «Հետևյալ տարին, - վկայում է ինքնակենսագրականում, - ուս իշխանության հետապնդումից խուսափել եմ արտասահման և կուսակցական գործով անցել Եգիպտոս»: 1906-ին ընդունվում է Լոզանի համալսարանի գրական բաժինը, հաջորդ տարին անցնում Սորբոն, «բայց կուսակցության հրահանգով թողել եմ Ֆրանսիան և նորից մեկնել Եգիպտոս»²: 1908-ի ամռան սկզբին «Եգիպտոսից կեղծ անձնագրով» վերադառնում է Թիֆլիս և ոստիկանական հետապնդումից խույս տալու համար անցնում Օուշի՝ դասավանդելու տեղի թեմական դպրոցում: Թեմականի ուսուցիչ Իսահակ Տեր-Ղազարյանի (Գյուտ եպիսկոպոս) հետ միասին թարգմանում է Վիպպերի «Հին ազգերի պատմությունը». «Ես թարգմանում էի, իսկ նա գրում էր իր արագահաս և անվերծանելի գրությամբ: Թե ինչ եղավ այդ թարգմանությունը՝ չգիտեմ»³:

Ոստիկանական հետապնդումները շարունակվում են, և հարկադրված անցնում է, հավանաբար 1909-ի կեսերին, Թեհրան, ուր երեք տարի զբաղեցնում է տե-

¹Մուրճ, 1897, N 2, 10, էջ 1426:

²ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1., գ. 18, ք. 23:

³Ն. Աղբայյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 344:

դական դպրոցների վարիչի և ազգային խորհրդի նախագահի պաշտոնը:

Կուսակցական գործունեությունը մոռացնել չի տալիս գրական աշխատանքը: Այս տասնամյակը այնքան բեղմնավոր չէ, որքան էին «Մուրճին» աշխատակցելու չորս տարիները: Համեմայն դեպս մինչև այժմ հայտնի փաստերը նման եզրակացության են բերում: Բայց մի քանի նշանավոր հոդվածներ, այնուամենայնիվ, գրել է: Հիշենք Ա. Պ. Չեխովի մահվան կապակցությամբ գրված ներհուն հոդվածը, «Երգ ու վերջից» հետո գրախոսությունը՝ նվիրված Ավ. Իսահակյանի նոր ժողովածուին, «Զանգակ» (1908) թերթում տպագրած շուրջ երկու տասնյակ գրախոսություն-հոդվածները, այդ թվում նաև Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջների» մասին նշանավոր հոդվածը: Լ. Շանթի և Ավ. Իսահակյանի առաջին գրքերի մասին ընդարձակ հոդվածներից հետո, ուր դրանց հեղինակների համար գրական փայլուն գալիք էր գուշակում, նույն կանխատեսումը կատարում է Տերյանի համար: Վիճելի, նույնիսկ մերժելի որոշ կարծիքների հետ միասին աներկբա գրում է. «Հոգու այն տարրերը, որ ընդհնմարում ենք նրա անձն շարքերի միջից, տրամադրությունների մաքրությունն ու մեղմությունը, հակումների մեղկ գալարումները և երբեմնի վայրկենական պոթփուները, կատակի և սրամտության կատարյալ բացակայությունը մեզ բերում են մի խոհուն ոգի, որ եթե չգոեճկանա կյանքի ցեխի և հեշտանքի մահացնող գրկի մեջ, կարող է զարգանալով դառնալ մի մեծություն մեր գրականության համար»¹:

Տասնամյակը նշանավորվեց մի շարք պատմական իրադարձություններով (ոռու ճապոնական պատերազմ, 1905-1907 թթ. հեղափոխություն, սրան հաջորդած դաժան ռեակցիան): Ինչպես է գնահատել իրապարակախոսը

¹ Զանգակ, 1908, N 13:

այս երևույթները: Քիչ բան է հայտնի, այն էլ՝ կողմնակիորեն: 1904-ին Հայ հեղափոխական դաշնակցության մեջ մտնելը ինքնին խոսուն փաստ է: Դա նշանակում է նաև հետաքրքրություն սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության նկատմամբ: Ադրալյանի բնավորությանը ծանոթ մարդը համոզված պետք է լինի՝ եթե մի բան նրան հետաքրքրում էր, ապա դրանով զբաղվում էր հիմնավորապես: 1917-ի մայիսյան տոնի առթիվ գրած «Միջազգային համերաշխության տոնը» հոդվածը և այլ ելույթներ հաստատում են սոցիալ-դեմոկրատական գրականության լուրջ իմացություն: Հոդվածը գրված է քրիստոնեության և սոցիալիզմի ընդհանրության ու տարբերության բացահայտման սկզբունքով:

Երկուսն էլ փորձում են «համախմբել մարդկությունը և դարձնել մի դաշնավոր եղբայրություն»: Այն, ինչ չհաջողվեց քրիստոնեությանը, կհաջողվի ընկերվարությանը, քանի որ վերջինս դիմում է ոչ թե «մարդու բարի և այլասեր մղումներին», այլ նրա իրական շահերին: Ընկերվարությունը «հենվում է աշխատանքին և նրա շահերի պայծառ գիտակցության»: «Ինչպես քրիստոնեությունը բոլոր մարդկանց կուզեր տեսնել սիրով ապրող որդիների մի հոր, որ երկնքում է, այնպես էլ ընկերվարությունը բոլոր մարդկանց ուզում է տեսնել աշխատավոր և նույնիրավ որդիներ մի մոր, որ երկիրն ինքն է»¹:

Այլազգի ու տարակրոն աշխատավորական զանգվածների արթնացող ինքնագիտակցությունը կհանգի նրան, որ բոլոր աշխատավորները «եղբայր ու դաշնակից» են: Այնժամ նրանց ջանքերով կստեղծվի ներդաշնակ հասարակություն. «Մի աշխատավոր, ուրախ մարդկություն, առույգ ու գեղեցիկ, ուրույն, բայց նույնարժեք հաճույքներով, աշխարհը տուն ամենքին, աշխատանոց և

¹ Հորիզոն, 1917, N 78: 3-7

հանգստավայր, ուր չկա զրկում ու կեղեքում, գոեհիկ անկումներ և մտքի ու նյարդի հանցավոր նրբացումներ, այլ հանրօգուտ միտք, առողջ զգացում և խաղաղություն տիեզերական»¹:

Սակայն հեռու է այդ օրը:

«Ընդհանրական արդարության» ստեղծմանը խանգարում են հայրենիքները՝ շլատելով «համաշխարհային աշխատավորության» ուժերը: «Հայրենիքներ պետք չէին լինի, եթե ազգային ու պետական միավորները կարողանային արդարություն և խաղաղություն ապահովել աշխարհում»²: Բայց քանի որ աշխարհում տիրում է անարդարությունը, և մեծ պետական ու ազգային միավորները ձգտում են ոչնչացնել կամ իրենց ենթարկել փոքրերին, վերջիններս պետք է պայքարեն արևի տակ իրենց տեղն ունենալու համար: Պատահական չպետք է համարել այն ցնծությունը, որով ընդունեց 1905-ի հեղափոխությունը: Անմիջապես արձագանքներ մեզ հայտնի չեն. «Հին աստվածների» մասին 1913 թվին գրած ընդարձակ հոդվածում («Երազ և մեկուսացում») անափ ոգևորությամբ վերհիշում է Ռուսաստանի և Կովկասի վրայով ոչ վաղուց անցած «շառաչուն փոթորիկը. «Հասարակության և ժողովրդի բոլոր հույսերն ու թաքուն տենչերը ծաղկել, լույս աշխարհ էին եկել՝ փարթամ ու շքեղ: Մի ընդհանուր ու վարակիչ ոգևորության մեջ բոլոր արդարամիտ տարրերը կամքի մի գերագույն լարումով և անդրդվելի վստահությամբ ձեռնամուխ էին եղած տապալելու հին ու անարդար համարված կարգերը և խորապես հավատում էին, թե մոտ է «Ատուծո արքայությունը», արդարության հաղթանակը, աշխատանքի թագավորությունը և անարգ տառապանքների վախճանը: Ամեն սիրտ բաբախում էր ժողովրդի և մարդկության

¹Նույն տեղում:

²Հորիզոն, 1917, N 50:

բարիքի համար, ամեն եռանդ ձգտում էր մի գործ դառնալ, գործ արդարության և ազատության... Աշխարհն ահով ու հիացումով դիտում էր լայնածավալ մի երկրի զարթնումն ու պայքարը անշարժության դեմ և արդարության համար»¹:

Դեռևս մինչ սոցիալ-դեմոկրատական գրականությանը հետաքրքրվելը 1890-ականներին «Մուրճում» տպագրած հոդվածները վկայում են, որ Աղբալյանը հասարակական կյանքը արմատապես վերափոխելու կողմնակից է («Ղոչաղը իբրև տիպ...» և այլն):

Բուրժուական հարաբերությունների անհաշտ հակառակորդ էր, խորապես համոզված, որ «իբ հիմքերի մեջ» համատարած փտող «ներկա կյանքը» հիմնովին վերափոխել է պետք: Հասարակության «մասնակի մերկացումը» այլևս բավարար լինել չի կարող, այն ամբողջովին պետք է մերժել, պետք է վերացնել «չարիքի արմատները»: Հիշենք, որ դեռևս 90-ականներին «Մուրճում» տպագրած բազմաթիվ հոդվածներում խնդիրը նույն կերպ էր դնում. գրականությունից պահանջում էր ոչ միայն հետևանքը ցույց տալ, այլև պատճառները: Գրական հերոսների հոգեբանության ու վարքի մեջ որոնում էր նրանց «հիմքը», «բոլորին շարժող զսպանակը»: Իր կողմից խստորեն կիրառվող չափանիշներից էր սա: «Նա տեսնում է երևույթներ,- գրում է գրողներից մեկի մասին,- բայց ոչ երևույթները շաղկապող ու զուգորդող իսկական պատճառները: Խիստ արտահայտած՝ նա ավելի աչք ունի, քան միտք»²: Ռուբենի փրկած թղթերում ուշադրություն գրավեց պատանի Աղբալյանի մի դիտողությունը «Русское богатство» ամսագրի ընդարձակ մի հոդվածի վերաբերյալ. հոդվածի «գլխավոր արժանիքներից մինն այն է, որ տնտեսական զարգա-

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, I, էջ 36:

²Մուրճ, 1898, N4, էջ 528:

ցումը Ակատի է առնված քաղաքական դեպքերի մեջ. կան և պատմական դեպքերի ազդեցությունն Ակատած»: Գրողի միտքը պետք է իրականության մեջ «թափանցել ու լայն ընդհանրացումներ անել» կարողանա: Գրականությունը պետք է օգնի մարդկանց կյանքի զանազանաձև կապերի մեջ հայտնաբերել «չարիքի արմատները» և միավորել նրանց դեմ պայքարում: Այս առումով արժե հիշել նրա մի դիտողությունը ևս. ժողովուրդը տեսնում է, զգում իր կաշվի վրա, թե ինչ են անում գյուղի տերերը, այսպես կոչված «դեկավարները», բայց «անկարող է միանալ ու ընդհանուր ուժով իր ցավից դարմանալ անել»: «Ընդհանուր ուժով ցավից դարմանալ», - սա չի՞ վկայում, արդյոք, որ նա վաղուց նախապատրաստված էր ժողովրդական զանգվածների հուժկու ցասումը ողջունելուն: Իսկապես՝ մշակումներում ու սևագրություններում պահպանվել են մտքեր, որոնք լույս են սփռում նրա ոչսովնառության վրա. «Русское богатство»-ի 1897 թ. N 2-ի մի հոդվածի առիթով, ուր քննվում են Ֆրանսիայի «կոլոնիաների» հարցերը, այսպիսի գրառում է կատարում. «կոլոնիաներ» պահողները «անխիղճ դահիճներ են և ոչ քաղաքակրթության տարածողներ»: Ծատ ավելի հետաքրքրական է և ծանոթագրելու անկարոտ հետևյալ գրառումը վերոհիշյալ ամսագրի նույն համարում տպագրված «Карл Маркс и его русский критик» հոդվածի վերաբերյալ.

«Հոդվածը երկար է և գրված է Սյունիմսկու լ. գ. հոդվածների առիթով Вест. Европ. խոսում է այն ուրախալի շարժման մասին, որ Ակատվում է ոռու գրականության մեջ վերջերս, երկրի տնտեսական զարգացման վեճերի առիթով և թե ինչպես Մարքսն ուսումնասիրության առարկա է դառել, բայց ցավ է հայտնում, որ շատերը իրանց մարքսիզմի հետևորդ են համարում,

¹Մուրճ, 1898, N 5, էջ 699:

բայց շատ չեն հասկանում: Սյունիմսկին աշխատում է մի քանի քննադատական Ակատողություններ Մարքսի դոկտրինին, որ ձգտում է առաջնորդող դեր խաղալ ոռու ժողովրդա-տնտեսական գաղափարների ու ուղղությունների աշխարհում. Ռատներ գնահատում է այդ «քննադատական Ակատողությունները» և ապացուցում, որ Սյունիմսկին չի հասկացել Մարքսի մտքերը: Ծատ լավ մեջ է բերած Մարքսի արժեքների թեորեն. պարզ, ընդարձակ-ով ծանոթ չէ կապիտալին, կարող է կարդալ այստեղ»:

Մեջբերման տոնն ու բնույթը կասկած չեն թողնում, որ 1897-ին Ադրբայջանն արդեն ծանոթ էր Մարքսի «կապիտալին» և տնտեսագիտական հայացքներին:

Գրականությունը «ազգերի կյանքն ընդգրկող մեծ շարժումների» համապատկերում քննող Ադրբայջանը դարասկզբի գրականության մեջ տեղի ունեցած որոշ երևույթներ բացատրում է հենց 1905 թ. հեղափոխության պարտությանը, սրան հաջորդած ռեակցիայով, որ հուսախարության լայն դուռ բացեց: Զարմանալի է՝ այս կամ այն չափով գրական արժեք ներկայացնող գրեթե բոլոր գրքերը գրախոսել է ու գնահատել: Իսկապես Ծիրվանզադեի, Պոռշյանի, Թումանյանի, Հովհաննիսյանի, Իսահակյանի, Ծանթի, Տերյանի, Չարենցի կողքին տեսել է նաև Արտաշես Տեր-Մարտիրոսյանին, Միքայել Մանվելյանին, Հր. Ֆայյանին, Աթաբեկ Խնկոյանին, Արմենուհի Տիգրանյանին, «Պատանի» հանդեսը... Եվ բոլորին անխտիր ճիշտ է գնահատել: Այս դեպքում մեզ հետաքրքրում է մասնավորապես այն խնդիրը, թե ինչպես է ընկալում «լայնածավալ փոթորիկներից հետո» ստեղծված իրականության և գրականության կապը: Հեղափոխության պարտությունը «հասարակական» այն հիմքն է, որը պայմանավորում է «խորապես եսական» տրամադրությունների գոյությունը երիտասարդական գրականության մեջ: Որոշ դեր խաղում է նաև օտար հո-

վերի թողած ազդեցությունը՝ «անազդեցիկ չեն մնացել հեղինակի տրամադրության վրա ժամանակակից օտար գրականության աչքի ընկնող դեմքերն՝ ինչպես Պշի-բիշևսկի»¹: Ինչպես ինքը կասեր՝ «հիմունքը» անձնական, մանավանդ հասարակական երևույթներն են: Հին հոբեալների կործանումով պայմանավորված այս գրականությունը, որ ոչինչ չէր կարող տալ կյանքին, բնականաբար պետք է մերժեր՝ չուրանալով նրա ինչ-ինչ արժանիքներ: Իրականությունը նոր և հուսադրող իրադարձություններով էր հղի, և քննադատ-հրապարակախոսը գրականությունից պահանջում է «նոր հոբեալներ մշակել մեր կյանքի համար»²:

Բալկանյան պատերազմը արթնացնում է հայ հասարակական միտքը՝ կանգնեցնելով նրան սպասվող լուրջ իրադարձությունների և անխապատրաստվելու անհրաժեշտության առաջ: Տարերայնորեն տեղի էին ունենում ժողովներ, հավաքներ, միտինգներ: Սրանցից մեկի ժամանակ «ընդհանուր գործերը» վարելու համար ստեղծվում է «ժամանակավոր բյուրո» հետևյալ կազմով. Ս. Հարությունյան, Ա. Խատիսյան, Ա. Քալանթար, Հ. Առաքելյան, Ա. Պողոսյան, Հովհ. Թումանյան, Ն. Աղբալյան³: Արդեն նոյեմբերի 25-ին բյուրոյի անխաձեռնությամբ Թիֆլիսում հրավիրվում է համագումար ժողով, որը վերընտրում է ժամանակավոր բյուրոն՝ լրացնելով նրա կազմը երկու նոր անդամով՝ Ժ. Ստեփանյան և Ա. Զամայան⁴:

Թեհրանից վերադարձած Աղբալյանը կրկին հայտնվում է իրադարձությունների հորձանուտում՝ միշտ խաղալով առաջնակարգ դեր (ինչպես չհիշես պատանեկության տարիներին գրած «Հիշատակարանի» հետևյալ

¹ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. 1, էջ 205:

² Նույն տեղում, էջ 208:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 241, ք. 25:

⁴ Նույն տեղում, ք. 26:

խոստովանությունը. «Այն հարցերը, որոնք ինձ հետաքրքրում են, ես չեմ կարող առաջարկել գյուղացուն, քանի որ իմ անձնավորությունը փոքրամուս էր հայր սուրբի անձնավորության առաջ և ես երկրորդական դեր էի խաղում, սարսափելի է: Ես պատրաստ եմ կեսարի հետ կրկնել, որ ուզում եմ առաջին լինել և ոչ երկրորդ»): Նորընտիր բյուրոն առաջնահերթ խնդիր է համարում հայոց դատի վերաբերյալ համազգային ծրագիր կազմելը. «Պետք է այնպես կազմած լինի, - կարդում ենք պահպանված փաստաթղթերում, - որ դեմ չզգնա ոռուսաց շահերին, որովհետև ոռուս կառավարության աջակցությունը ամենից կարևորն է հայ դատի հաջողության համար»¹: Ա. Քալանթարը, Լեոն և Հ. Առաքելյանը հանձնարարություն են ստանում նյութեր պատրաստել «հայոց դատի և հարակից խնդիրների մասին»: Տեղեկացվում է, որ «երկու աշխատություն վերջացած են»: Աղբալյանի հետագա գործունեությունը նպատակամղված էր այս ծրագրի իրականացման: Իբրև Թիֆլիսի Ազգային բյուրոյի անդամ մասնակցել է 1916-ին Պետրոգրադում հրավիրված խորհրդակցությանը: Գաղթականության խնդրի քննարկման պատրվակով հրավիրված ժողովը նպատակ ուներ քննելու քաղաքական խնդիրներ, սակայն կառավարության «անպաշտոն թելադրանքով» ժողովը շուտով ավարտեց իր աշխատանքը...

Թեհրանից վերադարձած և Թուրքիայում կարճատև «մի պտույտ» գործած գործիչը, հավանաբար Թումանյանի երաշխավորությամբ, նշանակվում է «Հորիզոնի» խմբագիրներից մեկը: Առաջին հոդվածն այս թերթում, որ Աթ. Խնկոյանի «Ծիտն ու որբերը» հեքիաթին էր նվիրված, լույս է տեսել սեպտեմբերի 13-ի համարում (N 200): Սկսվում է բուռն գործունեության նոր շրջան:

¹ Նույն տեղում, ք. 27:

Հազվադեպ են թերթի այն համարները, որտեղ հողված չունենա: Սովորականը երկուսից - երեք հողված տպագրելն է, որոնք ոչ քիչ դեպքերում կազմում են թերթի կեսը: Հավատարիմ մնալով ընթացիկ գրականությանը ակնդետ հետևելու իր սովորույթին և մի քանի տասնյակ գրախոսականներ գրելով հանդերձ, մշտական մասնակցություն ունենալով Թումանյանի գլխավորած Հայ գրողների միության գործունեությանը, ուշադրության կենտրոնում առավելապես պահում է Բալկանյան պատերազմի խնդիրը:

«Պատերազմի դաշտում» ընդհանուր խորագրով տասնյակ տեսություններ, նույնքան էլ անստորագիր առաջնորդողներ է գրում: Զարմանալի մի խորատեսությամբ քննում է պատերազմի ծագման պատճառները, տարբեր երկրների փոխհարաբերությունները, հայերի ակնկալությունները, Ռուսաստանի դիրքը, հայ հասարակական խավերի վերաբերմունքն ու դիրքորոշումը և այլ լուրջ խնդիրներ: Անսպառ եռանդ, քաղաքական խնդիրներում կողմնորոշվելու հմտություն, հայոց դատի հնարավոր լուծումների կանխագուշակում, ամենաընդհանուր գծերով այսպես կարելի է բնութագրել նրա գործունեությունը: Մեծ եռանդ է ներդրում «Նոր հոսանքի» հիմնադրմանը, որի խմբագիրն էր: Իբրև ամսագրի տիպ «Նոր հոսանքը» շարունակում է «Մուրճի» ավանդույթները:

Գրական-հրապարակախոսական եռանդուն աշխատանքը զուգակցում էր հասարակական գործունեությանը, մասնավորապես ամենագործուն մասնակցություն է բերում կամավորական շարժմանը: Որքան եռանդ, ուժ ու նվիրում կար այս մարդու մեջ:

«1914 թվից վարել են կամավորական գործը իբր կարգադրիչ հանձնաժողովի անդամ», - գրում է հիշատակված համառոտ ինքնակենսագրականում: Ենթադրելի է, թե սա էր «Նոր հոսանքը» թողնելու պատճառը:

Սարիղամիշում գործող կամավորական խմբերի կոմիսարն էր՝ քաղաքացիական ներկայացուցիչը: Ավելի ուշ չթաքցված հումորով է գրել այդ օրերի երբեմն ապարդյուն ջանքերի մասին. «Ինձ հետ ոմանք կհիշեն այն աշնան ու ձմռան գիշերները, երբ մինչև ժամը 1-ը թաղվում էինք բազմահազար փաստաթղթերի և հաշիվների մեջ... այն երկարատև պրպտումները մի քանի ուրբիներ ստուգելու համար, ուր գերազանցում էինք միմյանց և ծիծաղով նկատում, թե բոլոր ջանքերն այս անգամ էլ ապարդյուն անցան»: Ջերմացնող հուշեր էլ արթնանում են, իհարկե. «Հիշում են, անշուշտ, Իգդիրի այն պարզ սեղանը, որի շուրջը բոլորում էինք մեծ ու փոքր և ախորժ սրամտությամբ և զրույցներով կարճում գավառական խուլ անկյունի ձանձրույթը¹:

Երբեք խտրություն չի դրել իրեն տրված հանձնարարությունների միջև, չի ձգտել բարձր պաշտոնների, եղել է այնտեղ, ուր իր կարիքն զգացել են: Հիշենք, որ Հանրապետության օրերին եղել է նաև Ծիրակի լքված գյուղերում հացահատիկ և բրինձ հավաքող հանձնաժողովի նախագահ, որի համար էլ ընկերները կատակով «բրնձի կոմիսար» էին անվանում: Դարձյալ կամավորական բանակին ծառայելու նպատակն էր հետապնդում 1917-ին հիմնադրված «Ռազմիկ» թերթը, որի խմբագիրն էր: «Հայ զինվորական միության կենտրոնական մարմնի» շաբաթաթերթը հիմնադրվեց Թիֆլիսում, վերջին համարները լույս տեսան Կարսում (հանրապետության գրադարաններում դժբախտաբար չի պահպանվել): «Կամավորական... շարժումը ուրիշ բան չէր, այլ սովորական մի պարտք, որ մենք պատրաստ էինք տալ Ռուսաստանին իբրև քաղաքացիներ և իբրև մեր դատը պաշտպանողի»²: Պառլամենտի նիստերից մեկում

¹Հորիզոն, 1917, N164:

²ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, ք. 49:

տրված այս գնահատականի հետ նա ընդգծում է այն անբարյացակամ վերաբերմունքը, որ հարևան վրացիները դրսևորեցին հիշյալ շարժման նկատմամբ. «կամավորական խնդրի ժամանակ նրանք չխնայեցին ոչ մի ջանք, որպեսզի արգելեն հայ կամավորական շարժումը»¹: Պատճառը հասկանալի է. շարժումը զգալի օժանդակություն էր ուսական բանակին՝ Հայաստանի ազատագրության գործում...

Կառավարությունն ինքն էլ դժվարություններ հարուցում էր: Ամեն անգամ, երբ հայերը հարց են բարձրացրել ուսական կառավարության առջև կամավորական գնդերի վերաբերյալ, որոնք պետք է օգնեին Թուրքիայի լծի տակ հեծող հայերի ինքնապաշտպանության կազմակերպմանը և, բնական է, ուսական բանակին:

«Միշտ էլ այն պատասխանն է ստացված, թե կառավարությունը ամեն միջոց ձեռք է առել հայերի ապահովության համար և որ ուրեմն պետք չի տեսնում օժանդակելու ինքնապաշտպանության»²: Նրա համար անհասկանալի էր, թե ցարական կառավարությունը ինչու է խուսափում կամավորական շարժումից, քանի որ այն համընկնում էր կառավարության արևելյան քաղաքականության, բացի այդ՝ ինքն էր հրահրել: Դրա համար էլ փորձում էր պատճառը որոնել հարևանների դժկամության և ստորին աստիճանավորների չարյացակամության մեջ: Ծատ բնութագրական է այս տեսակետից Փ. Վարդազարյանին 1915-ին գրած մի նամակը. «Զարմանում ես. հայերը տալիս են ամեն ապացույց, որ հարած են ուս պետության շահերին, անձնվիրությամբ ծառայում են նրա զինական հաջողության, զոհաբերում են մարդ ու դրամ, աշխատանք և տեսնում են չարյացակամ վերաբերում: Իմ կարծիքով վարերն ուրիշ վերաբե-

րում ունեն, վերերն՝ ուրիշ. վարը վատ է վերաբերում, որովհետև չի կարողանում անսահման շահվել այս պատերազմից. հայերն ամեն տեղ աշխատում են պաշտպանել ժողովրդի շահն ու պետական օրենքը: Այդ բանը շատ է զրգոում: Բացի այդ՝ զորքի մեջ եղած պաշտոնատար անձինք՝ առավելապես թուրք ու վրացի՝ փոխանակ պետական քաղաքականություն վարելու... ազգային քաղաքականություն են վարում ընդդեմ հայերի և նրանց գործի՝: Ավելացրեք սրան «դիսցիպլինի պակասը», որի հետևանքով «վերի քաղաքականությունը չի անցնում վար և թափանցում պետական մեխանիզմի մինչև հետին գամերն ու պտուտակները», և պատկերը լրիվ պարզ կլինի: Դժվար է առարկել հրապարակախոսին, բայց և դժվար է սպառիչ համարել նման բացատրությունը: Ցարիզմի երկդիմի քաղաքականության իսկական պատկերը նրա համար բացահայտվելու էր քիչ հետո:

Վանի հերոսական ինքնապաշտպանությունից անմիջապես հետո եղել է այնտեղ: Հետագայում գրի է առել տպավորությունները. «Հաղթանակից քիչ հետո ես վան գնացի և տեսա հայ իշխանության սկիզբն ու կազմավորումը այդ հինավուրց քաղաքում, որ ինն դար չէր տեսած հայ զորք ու վարիչ: Մեծ էր գինովությունը, մեծ էր և վստահությունն ապագայի մասին: Հաղթանակը նրանց աչքին երևում էր վերջնական և շատ-շատերը ձեռնարկած էին մասնավոր գործի»: Նա հետո հասու պիտի լիներ այն ճշմարտության, որ հենց հայ իշխանության ստեղծումն էր սարսափեցնում ցարին՝ պայմանավորվելով կամավորական շարժման նկատմամբ թաքցված երկյուղը, որ «ոուսն ու թուրքը միասնաբար խորտակեցին... (Վանի. - Գ. Ա.) ազատությունը»²:

¹Նույն տեղում:

²ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1., գ. 241, ք. 28:

¹ԳԱԹ, Հովհաննես Թումանյանի ֆոնդ գ. 1654:

²Հայրենիք, Բոստոն, 1940, N7, էջ 4:

վան է մեկնել իբրև կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի ներկայացուցիչ: Բայց միայն այդ գործով չէր զբաղվում: Ազատ ժամերին այցելում էր վանքերը, ավերակներից հանում-փրկում ձեռագրեր: Ականատեսի մի վկայություն Նարեկա վանք ու Նարեկացու գերեզմանին կատարած այցի մասին. «Վանքի դուռը բաց էր, ներսը կիսախավար: Խորանի ձախ կողմը աղոտ լույս էր պլպլում: Անաղմուկ մոտեցա խորանի դռանը. ներսը, գերեզմանաքարի կողքին, մոմի առջև, գիրքը ձեռքին, չոքած՝ Աղբալյանը մեղմ ձայնով Նարեկ էր կարդում՝ հոգեզմայլ վերացման մեջ: Կանգնած սպասեցի լուտ: Ոչ մի կողմ չէր նայում-վերացած՝ երգում էր կարծես՝ հատ-հատ արտասանելով Նարեկացու երկնասլաց խոսքերը...

Հազացի, չնկատեց:

-Նիկոլ,- խզեցի լուրջումը:

Գլուխը դարձրեց իմ կողմը: Կարծես հաշիչ առած լիներ:

- Նիկոլ, բավական է, մեզ սպասում են:

-Հա՛,-արտասանեց նա՝ դանդաղ ոտքի ելնելով: Կարծես հարբած լիներ»¹:

Դարասկզբի երկրորդ տասնամյակում իրադարձությունները Անդրկովկասում ծավալվում են սրընթաց: Միշտ չէ, որ հայ հասարակական միտքը հասցնում էր թափանցել կատարվող դեպքերի ներքին ու արտաքին պատճառների մեջ: Ավելացնենք՝ հայ հասարակական միտքը միասնական չէր. սպասվելիք փորձությունների նախօրյակին այն բաժանվել էր տարբեր ուղղությունների՝ ջլատելով ժողովրդի միասնությունը: Կապված Թուրքիայի ներքին կյանքի, ռուս-թուրքական հարաբերությունների, միջազգային իրադրության փոփոխությունների հետ՝ հայ քաղաքական կուսակցություններն ու

խմբավորումները հայոց հարցի լուծման տարբեր, իրարամերժ ուղիներ էին առաջադրում. աջակցություն Ռուսաստանի արտաքին քաղաքականության և համագործակցություն Թուրքիայի առաջադեմ ուժերի հետ՝ երկու պետությունների հովանավորության ներքո ինքնավար Հայաստան ունենալու հեռանկարով (սա դաշնակցության ելակետն էր), ազգային-ազատագրական պայքարով անկախության ձեռքբերում (հնչակյաններ), ձեռնպահ մնալ այլ ժողովուրդների քաղաքական պայքարից (արմենականներ), կար նաև մի հայացք, բուշևիկյանը, որը հարցի լուծումը կապում էր համաթուրքական հեղափոխական պայքարի հետ: Այս հավանատ հայացքները ներքին երկպառակություն էին ստեղծում, որը շարունակվեց հետագա տարիներին և՛ երբեմն ստանալով զինված բախումների ձև և բախտորոշ նշանակություն ձեռք բերելով ժողովրդի ճակատագրի համար: Աղբալյանը, որ իր կուսակցության համոզված զինվորն էր, իրադարձությունների կենտրոնում էր, հաճախ նրանց կազմակերպիչն ու ղեկավարը:

Ռուսաստանում միապետության անկումից հետո իրադրությունը Անդրկովկասում բավականին սրվեց: Կովկասի փոխարքայության փոխարեն ժամանակավոր կառավարությունը 1917 թ. մարտին նշանակեց Անդրկովկասի Հատուկ կոմիտեն (կազմը՝ երկու վրացի - Մ. Չխենկելի, Բ. Աբաշիձե, մեկ ռուս - Խոռլամով, մեկ թուրք-Ջաֆարով, մեկ հայ-Մ. Պապաջանյան), «անջիղ, անգույն... մարմին մը» (Ս. Վրացյան), որը ոչ միայն չնպաստեց երկրամասի տարբեր ազգությունների համախմբմանը, այլև, ընդհակառակը, ավելի խորացրեց ազգային հակամարտությունները: Իրավացի էր Աղբալյանը. «Կովկասը ոչ թե խմբվեց կառավարության, այլ կառավարության այս կամ այն անդամի շուրջը՝ Պապա-

¹Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, հ. գ. Բեյրութ, 1963, էջ 90:

ջանյանի, Ջաֆարովի և Չխենկելիի»¹: Ազգային բյուրոյի նախաձեռնությամբ ապրիլի 10-13-ը Թիֆլիսում հրավիրվեց միջկուսակցական խորհրդակցություն, որը մշակեց ազգային համագումար հրավիրելու պայմանները: Համագումարը, որ քննարկեց հայությանը հուզող շատ խնդիրներ, հանդիսավորաբար բացվեց սեպտեմբերի 29-ին: Մասնավորապես բուն վեճեր ծավալվեցին Հատուկ կոմիտեի կազմի, նրա հայ անդամի գործունեության շուրջ, որոնց կենտրոնում, հաճախ էլ կրկին տոն տվողը, դարձյալ Ն. Ադրալյանն էր: 1917 թ. հոկտեմբերի 2-ի չորրորդ նիստում «Անդրկովկասի Հատուկ կոմիտե» օրակարգի շուրջ իբրև 2-րդ զեկուցող հանդես է գալիս Ադրալյանը: Պահպանվել է այս զեկուցման սղագրությունը՝ մեզ հասցնելով օրերի տաք ու կրքոտ շունչը: Վերոհիշյալ ելույթի մեծ մասը Պապաջանյանի գործունեության գնահատմանն է նվիրված, Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրադրության քննությանը: Անդրկովկասի Հատուկ կոմիտեին չհաջողվեց իր ձեռքը վերցնել իրադրության ոչ միայն ղեկավարությունը, այլև նույնիսկ հսկողությունը: Դրան խանգարեցին, ըստ հոետորի, ազգամիջյան խորացող հակասությունները և Ռուսաստանի ժամանակավոր կառավարության անկայուն վիճակը: «Կառավարությունը մի տեսակ կոմիսիա էր, որ կարգադրություններ էր անում, բայց որոնք չէին իրագործվում»²:

Այս պայմաններում շատ ավելի ծանր էր հայերի վիճակը: Ինչի հետևանք էր դա: Ըստ հոետորի՝ 1. Հատուկ կոմիտեի հայ անդամ Մ. Պապաջանյանը «գորեղ կուսակցության անդամ չէր»: Ադրալյանի բացատրություններում դրսևորվում է մի ցավալի իրողություն. ստեղծված բարդ պայմաններում հայ քաղաքական կու-

¹ ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 222 ց. 1, գ. 20, ք. 19:

² Նույն տեղում, ք. 20:

սակցությունները շարունակում են իրար հակադիր ու փեղկված քաղաքականություն վարել՝ բոլոր ուժերը համախմբելու և մեկ միասնական նպատակի ծառայելու փոխարեն: Հայ անդամի գործունեությունը «ժողովրդի լայն բազմության մեջ հենարան չէր գտնում», - թաքցված չարությամբ արձանագրում է հոետորը՝ փոքր ինչ չարաշահելով «ժողովուրդ» հասկացությունը: Այս հանգամանքը չվրիպեց քննադատվողի աչքից: Հայաստանի ժողովրդական կուսակցության անդամ էր: «Մի պատճառ էլ իմ թուլության այն է, որ այսօր առաջին անգամ հայտարարեց դաշնակցության ներկայացուցիչը - որ դաշնակցությունը չի կամեցել ինձ աջակցել: Պարզ է, որ եթե դաշնակցությունը հայ ժողովուրդն է՝ նրա ներկայացուցիչը թույլ պետք է լիներ»¹: Երկրորդ հանգամանքը, որ բավականին մեղմում է վերևում մեր ասածը, հայ տարրի ինքնագիտակցության պակասն է: 3. Հայերին խանգարում է նաև «բազմաճակատայնությունը». «Ամեն մի խմբակ պարտավոր է չորս ճակատում կովել: Մի որևէ հայ գյուղ ունի կամ թուրք, կամ վրացի, կամ ռուս հարևան»²: 4. Էական պատճառներից մեկն էլ պետականություն ունենալու, պետական գործեր վարելու փորձի բացակայությունն է: «Կոկարդավոր հայը ուրիշ է եղել բոլորին... իշխանության մեջ եղող հայը օտար է համարվել»³: 5. Ադրալյանի հետաքրքիր դիտարկումներից մեկը հանգում է բոլշևիկյան կուսակցության նվազ ազդեցության, ստեղծված պայմաններում եռանդուն գործելու անկարողության: «Մեր մտավորականությունը... բոլոր ուժերը նվիրել (է) Տաճկահայ դատին, ուստի և հեղափոխությունը մեր երկրի մեջ չգտավ հարկ եղած թվով մարդիկ, որ լողան, որպես ձուկը ջրում»⁴: Ցավով արված

¹ ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 222, ց. 1, գ. 21, ք. 15:

² Նույն տեղում, ք. 20:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

այս խոստովանությունը ավելի հավաստի է, քան մեր որոշ հետազոտողների անհարկի կոմսնապարծությունը՝ պատմական դեպքերի ընթացքի վրա ու մեջ բոլշևիկների դերի ու նշանակության մասին: 6.«Տաճկաստանի կոտորածը սոսկալի ազդեցություն ունեցավ- գաղթականությունն առաջ եկավ հարյուրային ցավերով և խնդիրներով... Տեղահանությունը, բնաջնջումը կոտրեց Ռուսահայերի թևերը»¹:

Ստեղծված իրավիճակը շտկելու ուղին հոետորը տեսնում է Հատուկ կոմիտեի կազմը փոխելու մեջ: Այստեղ կրկին դրսևորվում է նրա անվերապահ ռուսական կողմնորոշումը: Կովկասյան երեք ազգությունների մեջ իր չեզոքությամբ հավասարակշռություն ստեղծել կարող են ռուսները, դրա համար էլ առաջարկում է կոմիտե ընտրել յոթ հոգուց. «Գալով օգակոմի առաջիկա կազմին՝ հոետորը գտնում է, որ նա կազմված պետք է լինի 7 անձից, որոնցից 4-ը ռուս (սոց. հեղ. և երկու դեմ.), իսկ երեքն երեք ազգերի ներկայացուցիչներից»²: Հետագայում հարևանները իբրև հանդիմանություն մեր երեսով պետք է տային, թե «հայերն են, որ ռուսներին Կովկաս քերին»:

Այս հանդիմանության մեջ ահագին ճշմարտություն կար. դաշնակցականները, ոչ առանց հիմքի, երկյուղ էին կրում, որ Ռուսաստանից անջատված Կովկասը հայերին կարող է կանգնեցնել ճակատագրական խնդիրների լուծման առջև: Աղբալյանի ելույթի այս մասը սուր տարածայնությունների տեղիք է տվել նաև քննարկման ժամանակ:

Հոկտեմբերի 4-ի նիստում պատասխանելով ընդդիմախոսներին՝ ասում է. «Մեզ մեղադրում են, որ մենք կամենում ենք հրավիրել վարչագետ (օգակոմի նոր

¹Նույն տեղում:

²Նույն տեղում:

կազմի մեջ ռուս անդամներ): Եթե մենք համոզված լինեինք, որ կարելի է հայերի գոյությունը պահպանել՝ չէինք հրավիրի: Հավասարակշռությունը պահպանելու համար պետք է ոչ թե կուսակցական, այլ պետական տարր մտցնել Կովկասում, ուստի հարկավոր է ռուսներ հրավիրել»¹:

Համագումարը վերջում ընտրեց Գործադիր Մարմին, որ կոչվեց Հայոց ազգային խորհուրդ: Նախագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը: Աղբալյանը խորհրդի կազմում էր: Խորհրդի՝ հայ ժողովրդին ուղղած կոչը, Ս. Վրացյանի վկայությամբ, գրել էր Աղբալյանը:

Քիչ հետո կտեսնենք, որ անվանի հրապարակախոսը դեռևս 1915-ի կեսերին գուշակում էր, թե ինչ հետևանքներ կարող էր ունենալ ռուսական բանակի հեռացումը երկրամասից: Շուտով իրականացավ է նրա գուշակությունը: Օգտվելով Անդրկովկասի Հատուկ կոմիտեի անգորությունից՝ վրաց մենշևիկներն ու ադրբեջանցի մուսաֆաթականները գաղտնի համաձայնության եկան միասնական Կովկասը երեք հանրապետությունների վերածելու վերաբերյալ՝ ունենալով հեռում գնացող նպատակներ: Դաշնակցությունը դեմ էր ինչպես Կովկասի անջատմանը Ռուսաստանից, այնպես էլ Կովկասի մասնատմանը ազգային հանրապետությունների ձևով: «Մենք դեմ էինք անջատման, տարիներ հետո, արդեն արտասահմանում, պետք է գրեր Աղբալյանը, որովհետև գիտեինք, թե ովքեր էին եկողները»²: Նույն հողվածում խոստովանում է, թե ինչպիսի ցավով ճանապարհ տվին Ռուսաստան վերադարձող բանակին. «Ռուս բանակին ետև հայ ժողովուրդը կարող էր պահպանել իր ազատությունն ու անկախությունը: Ու ի վերջո ցավով, բայց սիրով ճամբա տվինք ռուս բանակին, թեև

¹Նույն տեղում, ք. 16:

²Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 349:

զայն ոչնչացնելը՝ մեր անդնդախոր ձորերուն ու կիրճերուն մեջ շատ դյուրին գործ էր մեզ համար: Վրացիները փակեցին անոնց ճանապարհը, որ Ռուսիա տանող ուղիղ գիծն էր, իսկ թաթարները տասնյակ հազարներով ռուս զինվորներ մորթեցին իրենց երկրի մեջ»¹:

* *

1918 թ. մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը. հարյուրամյակների ընդմիջումից հետո պատմական Հայաստանի փոքրիկ մի հողակտորի վրա վերածնվում է հայոց պետականությունը:

Հայ հեղափոխական դաշնակցությունն էր, որ ստանձնեց անկախ պետականության ստեղծման ղեկավարի դերը: Բազմաբնույթ ներքին ու արտաքին դժվարությունների հաղթահարումով կուսակցությունը զցում էր ազգային պետության հիմքերը, մի բան, որ այնքան մեծ նշանակություն ունեցավ երկրորդ հանրապետության կայացման և ազգային ոգու պահպանության համար:

Հանրապետության տարեդարձի օրը ընդունվում է հանրահայտ որոշումը «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման» մասին. «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումը ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից (1919թ. մայիսի 28-ից. Գ. Ա.) Հայաստանի բաժան -բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»²:

Ծանր ժամանակներ էին: Երկիրը քայքայված էր, լցված թուրքական յաթաղանից մազապուրծ, սովի և հա-

¹ Նույն տեղում, էջ 350:

² ՀՀ. ԳԿԳԱ, ֆ. 198, ց. 1, գ. 4, ք. 1:

մաճարակի ճիրաններում մաշվող գաղթականներով, մշտապես կախված էր թուրքական արշավանքի սպառնալիքը: Ազգային խաթարված կյանքը վիթխարի ճիգերով էր մտնում բնականոն հունի մեջ: Եվ սակայն թուրքական ու միջազգային իմպերիալիզմի քաղաքական շահերի զոհ այսպիսի մի երկրի համար «ժողովուրդների հայրը» պետք է հորիներ «իմպերիալիստական Հայաստանի» առասպելը՝ Անդրկովկասում վարած իր քաղաքականության իրական հիմքերը քողարկելու համար: Իսկ թե իրենք՝ երկրի տերերը, այսպես կոչված «իմպերիալիստները», ինչպես էին գնահատում իրենց վիճակը, կարող է վկայել հետևյալը: Մինիստրների խորհուրդը մի գրությամբ դիմում է Աղբալյանին՝ իմանալու համար նրա կարծիքը այն մասին, թե որ բառն է ավելի հարմար օգտագործել՝ «նախարարը», թե՛ «մինիստրը»: «Ի պատասխան Ձեր ս. թ. դեկտ. 16 նո. 5500 (պետք է լինի 5509. - Գ. Ա.) գրության պիտի հայտնեմ, որ թե «նախարար» և թե «մինիստր» բառերը նկատում են ոչ տեղին. առաջինն իր պատմական իմաստով «մինիստր» չէ, իսկ երկրորդը նախ օտար բառ է և ապա շատ է մեծահնչյուն մեր համեստ հանրապետության համար: Լայնածավալ և հզոր Ամերիկյան չունի «մինիստր», այլ պարզ «քարտուղարներ»: Լավագույն կլինե՞ր «վարիչ» բառը... որով մինիստր-նախագահն իր հերթին կդառնար «վարչապետ»: Այդ համեստ բառը շատ ավելի պատշաճ կլինե՞ր մեր համեստ հանրապետության և նրա բարձր պաշտոններին: Ընդամենը «վարիչ» ու «վարչապետ» կոչվելու արժանի մի «համեստ հանրապետություն» և... «իմպերիալիստական Հայաստան»: Իսկ մենք տասնամյակներ կրկնել ենք այս առասպելը...

Ազգային բյուրոյի գործունյա անդամը հասկանալիորեն հանրապետության խորհրդարանի անդամ էր:

¹ ՀՀ. ԳԿԳԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, ք. 95:

Ընդգրկված լինելով ինքնավարության, ֆինանսական և խմբագրական հանձնաժողովներում՝ նրանց անունից ու հանձնարարությամբ հաճախ ելույթներ էր ունենում, օրինագծեր առաջարկում, կատարում ճշգրտումներ, ակտիվորեն մասնակցում հանրապետությանը հուզող բոլոր խնդիրների քննարկմանը: Դրանցից մեկը հարևանների նկատմամբ քաղաքականության մշակումն էր: Կովկասը այնտեղ ապրող բոլոր ժողովուրդների հայրենիքն է, այսպես էր համոզված նա: Բայց, ահա, ոուսական հեղափոխությունից հետո նույն Կովկասում կատարվում են իրադարձություններ, որոնք սրում են հարաբերությունները հատկապես երեք հարևան ժողովուրդների միջև: Գաղտնի համաձայնության գալով՝ Վրաստանն ու Ադրբեջանը իրենց անկախ հայտարարեցին: Ադրբայջանը հասու էր այն շարժառիթներին, որոնք նրանց մղեցին այդ քայլին. հայերը միայնակ էին մնում թուրքական արշավանքի և մյուս դժվարությունների առջև: Դեռևս թարմ էին պատերազմի ընթացքում Հայաստանի ինքնավարության նկատմամբ նրանց թշնամանքի դրսևորումները: «Վրաց մտավորականությունը և թուրքահայերը» առաջնորդողում դատապարտում է վրաց շովինիզմը, որը բացահայտ թշնամական դիրք էր գրավել «հայկական ավտոնոմիայի» խնդրում և ողջունում ուսկավարության ծնունդը, կուսակցություն, որը պարզել էր բախտակից և դրկից ժողովուրդների եղբայրության դրոշը¹: Հայտնի է ադրբայջանական զնահատականը այն թշնամանքի, որ վրացիներն ու թաթարները դրսևորեցին հայկական կամավորական շարժումների հանդեպ: «Ես սխալված չեմ լինի,- խորհրդարանի նիստերից մեկում հայտարարեց Ադրբայջանը,- եթե ասեմ, որ մեր հարևանների դերը մանավանդ այս պատերազմի ընթացքին երկդիմի էր և անկեղծ չէր դեպի այն պետությունը, որի

¹Հորիզոն, 1913, N 39:

քաղաքացիներն էին և դեպի այն դատը, որ վարում էին դաշնակիցները»¹: Նրանք ոչինչ չարեցին «պաշտպանելու այն ֆրոնտը, որը համառուսական էր»: Նրանց քաղաքականությունը մի նպատակ էր հետապնդում՝ «թուլացնել այն տարրը, որ կարող էր մրցող լինել»²:

Հայաստանի անկախության հուշակումից հետո Լոռվա, Բորչալուի և Ախալքալակի ժողովուրդը ըմբոստության դրոշ է բարձրացնում՝ ցանկանալով միավորվել մայր հայրենիքին: Հայ-վրացական լարված հարաբերությունների լուծման միակ եղանակը հրապարակախոսը տեսնում է ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման մեջ: Հար և մտան մեր օրերի իրադարձություններին: 1918-ի դեկտեմբերի 12-ի նիստում որոշում է ընդունվում դիմել վրաց կառավարությանը՝ հարցը միջազգային ընդունված օրենքներով խաղաղ լուծելու առաջարկով, որը մերժվում է: «Վրաց կառավարությունը, չեմ ուզում ասած լինել ժողովուրդը,- շեշտում է հրապարակախոսը,- ստեղծում է մեզ համար անախորժություններ հանիրավի»³: Երբեք չմոռացավ իր սկզբունքը՝ Կովկասը այնտեղ ապրող բոլոր ժողովուրդների հայրենիքն է, բայց դա բոլորովին էլ չէր նշանակում թույլ տալ, որ «ոտնահարեն» ազգային արժանապատվությունը: «Այդ հողամասում (Լոռի-ում. - Գ. Ա.) ապրում է մի ժողովուրդ, որին պիտի հարցնել, թե նա ում է ուզում, ում հետ է ուզում լինել: Նա արտահայտել է իր կամքը պարզ ու որոշ՝ իրեն համարում է մերը և միանալ է ուզում մեզ հետ: Նա մտածում է մեզ պես»⁴: Յուրաքանչյուր կառավարություն, մանավանդ եթե իրեն ուսկավարական է համարում, պարտավոր է հարգել ազգերի ինքնորոշման իրավունքը: Դեկտեմբերի 15-ի նիս-

¹ՀՀ. ՊԿՊԱ. ֆ. 198, ց. 1, գ. 15, ք. 49:

²Նույն տեղում, ք. 50:

³Նույն տեղում, ք. 39:

⁴Նույն տեղում:

տում «մինիստր-Ճախագահը» հաղորդում է. «այս երեք օրվա ընթացքում մեր քաջարի զորքերը ունեցել են միշտ հաջողություն և այն վայրերը, որոնք բռնել էին վրաց զորքերը, մերոնք արդեն գրավել են և մեր հողերն անցել են մեր ձեռքը»¹: Բայց, ահա Անգլիայի ներկայացուցիչ կապիտան Գրինը դաշնակիցների անունից պահանջում է.

«1. Երկու շաբաթով հայտարարել զինադադար,

2. Վրաց զորքերն անմիջապես մաքրում են Ախալ-քալակի գավառն ու Բորչալուն, մինչև Խրամ գետը, հայկական զորամասերը չեն գրավում այդ շրջանները»²:

Այլ կետեր էլ կային, որոնցից «մեկը մեր զորքերն անմիջապես հետ քաշելն է այն վայրերից, ուր նոքա գտնվում են կամ գտնվելու են վաղը»³: Այս և մյուս պահանջները բուռն քննարկումների առարկա դարձան: Ելույթ ունեցավ Ադրալյանը: Անգամ անհարազատ արձանագրությունը մեզ է հասցնում նրա հուզվածքը: Նա դեմ էր զինադադարին. հայոց զորքերը պարզապես հայկական հողը մաքրում են անբարյացակամ հարևանից. «Մենք ոչ մի թիզ հող օտարի ձեռքից չենք խլել և մտքներովս անգամ չի անցել որևէ ժողովրդի շահերին դիպչել և եթե կարողանանք մեր իրավունքները պաշտպանել, այդ էլ մեծ բան է մեզ համար: Մենք այսօր առաջ ենք խաղում մեր հողի վրա և երբեք չենք հասել մեր հողի իսկական սահմաններին: Երբ որ հասնենք այդ սահմաններին, մենք կանգ կառնենք և այնուհետև թույլ չենք տա, որ որևիցե մեկը մեր իրավունքները ոտնակոխի: Մենք առանց այն էլ բավականաչափ հող և ժողովուրդ ենք թողել նրանց: Մենք հեռու ենք օտար հողը գրավելու մտքից, բայց չենք էլ կարող օտարին թողնել մեր հողի վրա...

¹Նույն տեղում, ք. 47:

²Նույն տեղում, ք. 49:

³Նույն տեղում:

Մենք երբեք չենք ցանկացել կովի դիմել, մեզ ստիպել են այդպես վարվել, և այսօր, ինչպես էլ միշտ, պատրաստ ենք բանակցությունների դիմել... Մենք մեր զորքերը հետ չենք քաշի մեր հողերից, որովհետև մենք չենք կարող թույլ տալ, որ ուրիշները ոտնահարեն մեր իրավունքները»¹:

Այսօր կրկնվում է երեկը, հուսանք, որ վախճանը, չնայած որոշ լավանների, նման չի լինի երեկվան:

Ժողովրդավարական ընտրություններում ձևավորված Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանը աշխատանքները սկսեց 1919-ի օգոստոսի 1-ին: Նույն ամսի 10-ին հաստատվեց կառավարության նոր կազմ. Ն. Ադրալյանը նշանակվեց հանրային կրթության և արվեստի նախարար: Այստեղ նոր ուժով դրսևորվեց նրա կազմակերպչական տաղանդը: Իրեն հատուկ հետևողականությամբ ավարտի հասցրեց մշակութային ոլորտի ձգձգվող ու անավարտ գործերը, եղավ նոր նախաձեռնությունների հեղինակ: Հոգատարություն արդեն պետական դարձած հայոց լեզվի նկատմամբ, տարրական ու միջնակարգ դպրոցներ, համալսարան, երաժշտական ու թատերական գործ և ուսուցում, պետական մատենադարանի, ազգային ու ազգագրական թանգարանի հիմնադրում, Անհի հնադարանի վերականգնում և ընդհանրապես հնությունների պահպանություն, հանրային մատենադարան և գրադարանային գործ, պետական նվազախումբ և խմբավարական դասընթացներ, գիտական և գրական ընկերությունների հիմնում, հրատարակչական գործի կազմակերպում, մանկապարտեզներ և մանկական խաղահրապարակներ, մարմնակրթարանի հիմնում, - ահա բոլորովին էլ ոչ ամբողջական ցանկը այն բնագավառների, որոնցով զբաղվեց նշված մինիստրությունը և որոնց լուծմանը իր ավանդը ներդրեց նաև

¹Նույն տեղում, ք. 50-51:

մինչև 1920թ. մայիսը հանրային կրթության և արվեստի «վարիչ» Աղբալյանը:

Օժտված էր վարչական աշխատանքի անուրանալի ընդունակություններով: Կրթոտ ու ներգործուն խոսքը, բացառիկ շիտակությունը, համակողմանի գիտելիքները, իրեն վստահված գործին անմնացորդ նվիրումն ու աշխատասիրությունը, պատասխանատվության խոր զգացումը, մարդկային հմայքը ապահովում էին վիթխարի հեղինակություն, աշխատանքային մթնոլորտ, ազնիվ հարաբերություններ: Ուր էլ լիներ, իր շուրջն ստեղծում էր համակրանքի, հարգանքի ու վստահության մթնոլորտ:

Ինքնուրույն պետականությունը մշակույթի ու կրթության զարգացման գորավոր նախապայմանն է: Այս միտքը անցնում է այս շրջանի նրա հողվածների ու ելույթների միջով, իսկ իր գործունեությունը հաստատումն է այս մտքի: «Անցյալ կիրակի ամսույս 6-ին երեկոյան ժամի 8-ին պառլամենտի սրահում տեղի ունեցավ Հայաստանի գրական ընկերության 11-րդ գրական երեկոն, ուր դասախոսեց պ. Նիկողայոս Աղբալյանը «Հայ գրականության ապագան» նյութի մասին»¹: Դասախոսության հիմնական թեզը հանգում է նրան, որ նոր պետականությունը հոգևոր բնագավառների նոր վերելքի գրավականն է: «Հայաստանի կառավարությունը մի հոգածու ուժ է, որ...- ստեղծելու է հայոց գրականության ապագայի համար պայմաններ», - կարդում ենք նույն տեղում: Այս համոզումը միայն իրենը չէր: Լուսավոր երախտավորների մի սերունդ ոչ միայն մտածում, ամեն ինչ անում էր ցանկությունն իրականություն դարձնելու համար: Այդ են վկայում հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպման վերաբերյալ բազում որոշումներն ու հատկացվող գումարները: Այսօրվա համեմատությամբ

հարյուրապատիկ անգամ ավելի ծանր պայմաններում գտնվող երկրի պետական այրերը հոգևոր-մշակութային բնագավառները չհանձնեցին դեպքերի զարգացման տարերքին, այլ տեր կանգնեցին նրանց:

Լավագույն ապացույցը Աղբալյանի գործունեությունն է նախարարի պաշտոնում:

Առաջնահերթ խնդիրներից մեկը սերնդի, նաև ժողովրդի կրթության կազմակերպումն էր:

Այս հարցերը միշտ էլ եղել են նրա ուշադրության կենտրոնում: Տասնամյակներ շարունակ ուսուցչություն է արել ամենատարբեր դպրոցներում, վերջին շրջանում՝ Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանում: Պարբերաբար անդրադարձել է կրթական գործի կազմակերպական հարցերին: Ուշի-ուշով հետևում էր ծխական և թեմական դպրոցների, հոգաբարձուների գործունեությանը, մամուլում լուսաբանում էր, առաջարկություններ անում: 1913-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատում է թեմական դպրոցների ծրագիրը, որով հստակ և «միօրինակ կարգ» է սահմանվում բոլոր դպրոցների համար: Այս կապակցությամբ քննում է ծխական, թեմական դպրոցների ու ճեմարանի փոխհարաբերության կարգավորումը, հստակ շեշտում է դպրոցների «ազգային բնույթը», քննում բազում ուրիշ խնդիրներ: Առանձնահատուկ սիրով արձագանքում է Ղարաբաղի թեմական դպրոցի հոբելյանին, դպրոց, որի շրջանավարտները ստեղծել են մի հասարակություն, որը «պահում է մեր գրականությունը, թատրոնը, մամուլը և այլն»:

Վերածնված պետականության ներկայացուցիչը, քիչ անց՝ նախարարը առավել խորությամբ ու ամբողջությամբ է անդրադառնում կրթության խնդիրներին:

1916/1917 ուս. տարում երկիրը «ունեւր մոտ 500 դըպրոց»: Բայց արդեն հաջորդ տարին դպրոցների գրեթե երկու երրորդը չէր գործում: «Տաճիկների արշավանքը, նրա հետևանք գաղթականությունը մեր դպրոցական

¹ Ժողովուրդ, 1920, N 94:

շենքերն ու կայքը մատնեցին ավերի ու թալանի,- 1919-ի ապրիլի 15-ին մի կապակցությամբ կառավարությանը հայտնում է հանրային կրթության և արվեստի մինիստրը: - Օտտ տեղեր այս տարի անհնար եղավ դպրոց բաց անել շենքերի ավերված և գույքն ոչնչացված կամ թալանված լինելու պատճառով, թեև այդ դպրոցների անունով վարկ բացված էր: Նույն պատճառներով որոշ տեղերում էլ դպրոցական կյանքը ընթանում է անկանոն կերպով»¹: Պարապմունքները երբեմն հարկադրված էին լինում անցկացնել «Վերին աստիճանի անհարմար, ցուրտ և խոնավ շենքում, ծայրահեղ դեպքում նույնիսկ գոմում... Օտտ դպրոցներում նստարանները պատրաստվում էին ամենահասարակ և պարզ ձևի... Ջգացվում էր մեծ կարիք գրատախտակների, գրեմական պարագաների, դասագրքերի և պատրաստի ուսուցչության»²: Այո, այսպիսին էր վիճակը, այնուամենայնիվ պետք է շարունակվեր լուսավորության ու կրթության գործը: Աղբալյանը առաջադրում է ինչ գնով էլ լինի «ընդհանուր կրթություն» ապահովելու խնդիրը: Երջանային տեսուչներին կարգադրություն է անում, որպեսզի քաղաքներում, ավաններում ձեռնարկեն բոլոր միջոցները բացելու համար այնքան առաջին դասարաններ, «որքան պետք է, որ ոչ մի դպրոցական հասակ ունեցող երեխա դուրս չմնա դպրոցից», իսկ կառավարությունից պահանջում է միջոցներ՝ ուսուցիչների լրացուցիչ վարձատրության, դասարանների ավելացման, շենքերի վերանորոգման համար: Սրա հետ սերտորեն առնչվում է նախադպրոցական կրթության կազմակերպումը: Աղբալյանն էր, որ առաջին անգամ արեց այս հարցադրումը: «Նախադպրոցական կրթությունը մեր երկրում ծավալելու համար անհրաժեշտ է փորձեր անել այդ ուղ-

¹ ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 199, ց. 1, գ. 57, ք. 12:

² ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 207, ց. 1, գ. 136, ք. 1:

ղությամբ, ուստի Մինիստրությունս մտադիր է ամեն շրջանային տեսչության մեջ բանալ մի-մի, իսկ Երևանում և Ալեքսանդրապոլում երկուական մանկապարտեզ»¹: Կառավարությունն ընդառաջ է գնում այս պահանջին ևս: «Ընդհանուր կրթության» գործը թերի կլինի, եթե անտեսվի ժողովրդական լայն զանգվածների լուսավորության կազմակերպումը: «Մինիստրությունս» հանրային կրթության գաղափարն ըմբռնելով իբրև հանուր ժողովրդի կրթություն, Մինիստրների խորհրդին հղած զեկուցագրում ընդգծում է Աղբալյանը, մտադրություն ունի կազմակերպել «հասակավոր անգրագետների և թերավարժ գրագետների կրթության գործը: Այդ նպատակով նախագծում ենք երեք կարգ դասընթացներ. 1)անգրագետների համար- գրագետների դասընթաց, 2)թերավարժների համար- գրավարժական դասընթաց, 3)թերուսների համար- հանրային համալսարան»²: Այնուհետև լրացուցիչ առաջարկություն էր անելու՝ բացել կիրակնօրյա, երեկոյան դպրոցներ ևս:

Կրթական գործի առաջընթացը պարտադրում է ուսումնական ծրագրերի և դպրոցական համակարգի արմատական վերակառուցում: Ծրագրերում մեծ տեղ էր հատկացնում բնական գիտությունների դասավանդմանը և աշխատանքային դաստիարակությանը: Վերջինս պարտադիր համարելով տարրական դպրոցների համար՝ ծրագրեր էր մշակում այն միջնակարգի համար ևս պարտադիր դարձնելու, որպեսզի ամեն շրջանավարտ անպայման տիրապետի որևէ «ձեռարվեստի»: Հասավ նրան, որ դպրոցներին հատկացվեցին հողամասեր՝ «գործնական պարապմունքների համար»: Ըստ Աղբալյանի՝ տարրական դպրոցը պետք է ունենար 6, որոշ տարբերակներում՝ 7 դասարան: Միջնակարգ դպրոցը

¹ ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, ք. 103:

² ՀՀ ԳԿԳԱ, ֆ. 207, ց. 1, գ. 219, ք. 32:

պետք է գոյություն ունենար համապատասխան թեքումով՝ մանկավարժական, պատմալեզվաբանական, բնագիտական-մաթեմատիկական, առևտրական, տեխնիկական»¹: «Տարրական ուսուցումը տևելու է վեց տարի և ավանդվելու է մայրենի լեզվով»: Օտար դպրոցներում պետական լեզուն ուսուցանելը պետք է լինի պարտադիր: Միջնակարգ դպրոցում օտար լեզուների ուսուցումը այնպիսի հիմքերի վրա պետք է դրվի, որ շրջանավարտը կարողանա ազատորեն օգտվել այլալեզու գրականությունից: Ուշադրությունից չի վրիպում ֆիզիկական դաստիարակությունը ևս: Նախարարության գրությամբ ԱՄՆ-ից չորս հայ մարզիկ են հրավիրում հատուկ այս նպատակի համար: Ավելացնենք, որ այդ խնդրին Ադրբայջանը վաղուց էր անդրադարձել: Գալիք փորձությունները դիմագրավելու ընդհանուր ծրագրի մեջ տեղ էր հատկացված «ֆիզիկական կրթության և մարզաճրճերին» ևս: Հաշվի առնելով հայության մեջ իշխող ընդհանուր թմրության ու անտարբերության ոգին, առաջարկվում է ստեղծել «մարմնամարզական մի ընդհանուր միություն», որ մասնաճյուղեր ունենար բոլոր վայրերում՝ մշտապես «մրցություններ, խաղեր, զբոսաճրճեր» կազմակերպելու համար:

Այս կերպ կարելի կլինի ստեղծել «առույգ հասարակություն և ժողովուրդ»:

Համանման խնդիրներ հետագայում արժարծելու էր սպիտոքում ևս:

Ադրբայջանը դարասկզբի իրադարձությունների ականատեսն էր, մասնակիցը, մի որոշ իմաստով՝ կազմակերպիչը: Նա ակտիվ մասնակցություն էր ունեցել մասնավորապես կամավորական գնդերի կազմավորմանը, եղել էր ռազմաճակատում, կամավորների հետ հասել Վան ու Բիթլիս: Գրեթե նույն շրջանում նույն ճանա-

¹Նույն տեղում, գ. 136, բ. 3:

պարհով անցնում էր նաև հանճարեղ մի պատանի՝ Եղիշե Չարենցը:

Չէ, այստեղ նրանք չէին հանդիպելու, հանդիպումը մի փոքր ուշ պիտի կայանար: Նրանք առայժմ կովում էին հայրենիքի ազատագրության համար, սարսափով նկատում պատերազմի ավերածությունները, հույսով նայում վաղվան: Այդ օրերը, սակայն, չէին կարող մոռացվել, և յուրաքանչյուրը յուրովի է պետք վերհիշեր այն:

Ստանձնելով Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի մինիստրի պաշտոնը, Ադրբայջանը առաջարկ է մտցնում մինիստրների խորհուրդ՝ պատերազմում և «ազատագրական կռիվներում» զոհված («սկսած 1914 թ. սեպտեմբերի 1-ից») «կամավորների, զինվորների, սպաների, բժիշկների և գթության քույրերի զավակներին» «ձրի դասական պիտույքներ մատակարարել»:

Հանրային կրթության ու արվեստի մինիստրության ուսերին էր ծանրացած վրաստանում և Ադրբեջանում տասնամյակներ շարունակ հաջողությամբ գոյատևած հայկական դպրոցների հարատևությունը ապահովելու դժվարին գործը: Անկախ հանրապետությունների ստեղծումից հետո վրաստանն ու Ադրբեջանը հրաժարվում են իրենց վարչական ենթակայության տակ գտնվող հայկական դպրոցները ֆինանսավորելուց (Հայաստանի Հանրապետության դպրոցներում շարունակում էին սովորել ռուսներ, ադրբեջանցիներ, հույներ և ուրիշ՝ այլազգիներ): «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական գործակալը Ադրբեջանում գրում է մինիստրության, որ Բաքվի հայոց դպրոցները Ադրբեջանի կառավարությունից նպաստ չեն ստանում... Մի ուրիշ գրությամբ նա ուղարկում է Մինիստրությանն Նուխու հայրենակցական միության գրությունը, որով նրանից խնդրում են նպաստել իրենց շրջանի երեք դպրոցներին»: Վիճակը նույնն էր նաև վրաստանում: Մինիստրը

այն միտքն է հայտնում, որ կառավարությունը, որքան էլ ֆինանսական նեղ պայմաններում, պետք է դրամական այնքան օժանդակություն ցույց տա «հարևան հանրապետությանց» հայկական դպրոցներին, որպեսզի նրանք «եթե ոչ գերազանց, զոնե հավասար պայմանների մեջ լինեն տիրող ժողովրդի դպրոցների համեմատությամբ»¹:

Աղբալյանի գրության վրա մուգ կանաչավուն թանաքով մակագրություն է արված՝ «Հիշյալով ընդունել արտասահմանում գտնված և բացվելիք հայկական դպրոցներին դրամական օժանդակություն ցույց տալը և առաջարկել Հանր. կրթ. և Արվ. Մ. - ին ներկայացնել ընդհանուր նախագիծ»: Հավանաբար ներկայացվում է նորը, քանի որ մակագրությունից հինգ օր անց՝ 1919-ի դեկտեմբերի 29-ին Միմիստրների խորհուրդը որոշում է ընդունում «Հայաստանի սահմաններից դուրս հայ կրթական հաստատություններին նպաստելու նպատակով» հանրային կրթության և արվեստի միմիստրությանը մեկ միլիոն հինգ հարյուր հազար ռուբլի վարկ հատկացնելու վերաբերյալ²:

Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայերի հոգսերը, հայրենիքի և «դրսի» հետ կապերի հաստատումը, որ օգտակար կլինի երկու կողմի համար էլ, մշտապես հուզել են Աղբալյանին, միայն թե ճակատագրի բերումով նա մի դեպքում հայրենիքն էր ներկայացնում, մյուս դեպքում՝ «դուրսը»: Պահպանվել են բազմաթիվ գրություններ, որոնցով կառավարությունից պահանջում է միջոցներ պետական թատրոն ու թատերական վարժարան, երաժշտական բարձրագույն դասընթաց և պետական նվազախումբ, պետական ու դպրոցական

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, ք. 44:

² Նույն տեղում, ք. 100:

գրադարաններ, գիտական, կուլտուրական, մշակութային այլ օջախներ հիմնելու համար:

Անհրաժեշտ ենք համարում մեջբերել մեկից մի հատված: Մի գրությամբ պահանջում է միջոցներ տրամադրել «երկու հմուտ դերասան» Պոլիս ուղարկելու համար. «Այդ գործը Պոլսում սկսելն ունի այն առավելությունը, որ 1 (դրանով մեր և արևմտահայ ուժերն ու արվեստը շփման մեջ կդրվեն, 2) նրանց հայախոսությունը և բարեձև պահվածքը կպատվաստվեն մերոնց»¹: Մի այլ տեղ ներքին բավականությամբ արձանագրում է այն հանգամանքը, որ հայ ժողովրդի երկու ազգային լեզուները սերտորեն միահյուսվում են. «Գրականությունը ազգի ոգին է, գրի առնված և շաղկապված է ազգի ճակատագրի հետ. իսկ գրականության զենքը լեզուն է: Հայությունը մինչև այժմ ուներ երկու լեզուներ՝ արևելահայ և արևմտահայ, այսօր դրանք խառնվում են իրար և ստեղծվում է հայ պետական լեզու»²: «Իմ նպատակն է, մի այլ տեղ գրում է Աղբալյանը, - հիմնել մի դպրոց, որտեղից դուրս գային երաժշտության դասատուներ և որ նպատակ ունենար զարկ տալու ազգային երաժշտության զարգացմանը»: Այս նպատակի համար հայոց երաժշտական ընկերությունը երաշխավորել է Ս. Բարխուդարյանին³:

Աղբալյանին է պատկանում «Հանրապետության պաշտոնետության համար հայոց լեզվի դասընթացներ» կազմակերպելու նախաձեռնությունը: Իրավացիորեն դժգոհելով, որ հայոց լեզուն կառավարական շրջաններում «-կիրառվում է իմիջիայլոց», վիճակը շտկելու նպատակով, ինչպես նաև հայրենի սովորել ցանկացող օտարազգիներին ընդառաջելու համար առաջարկում է

¹ Նույն տեղում, ք. 8:

² «Ժողովուրդ», 1920, N 24:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, ք. ք. 62-63:

կազմակերպել վերոհիշյալ դասընթացները: «Դասընթացներին հետևած և քննություններ բռնած պաշտոնյաները, ինչպես և նրանք, որ մասնավոր պատրաստություն ունենալով բավարար քննություններ են տալիս, համարվելու են մշտական պաշտոնյա: Անբավարար անկատվածները կհամարվեն ազատ վարձվող»¹: Կառավարությունը համապատասխան վարկ է բաց թողնում, և դասընթացները շուտով սկսում են գործել Երևանում և Ալեքսանդրապոլում: Այս միջոցառումը թելադրված էր հայոց լեզուն պետական դարձնելու մտահոգությամբ. «Հայերեն լեզուն տարածվելու է, - համոզված էր Աղբալյանը, - վարչատներում, հասարակական հաստատություններում, դպրոցների, թատրոնի, գրականության, պետական հաստատությունների և ամեն տեսակ ասպարեզների մեջ, ինչպես նաև ընկերային, հասարակական, օրենսդրական, գինվորական, գրական, տեխնիկական, գյուղատնտեսական, մանկավարժական և այլն մասնագիտական գրականության ճյուղերում, նախ թարգմանական և ապա հայկական գրականություն պիտի զարգանա»²:

Դպրոցներն ազգայնացվում էին, այդ նշանակում էր, որ ուսուցումը միայն հայերենով էր առաջ տարվելու, մինչդեռ մայրենի լեզվով համապատասխան գրականություն չկար: Հարկավոր էր շտապ կարգով կազմակերպել դասագրքերի և գիտական գրականության թարգմանության գործը: «...Մեր դպրոցներն ազգայնացվում են. հետևապես մեր աշակերտները պիտի չկարողանան օտար լեզուներով գիտական պաշարի տիրանալ, - ահազանգում է հանրային կրթության նախարարը: - Մյուս կողմից հայ գրականությունը բավական գրքեր չունի ժամանակակից իմաստով հանրակիրք քաղաքա-

¹Նույն տեղում, ք. 59:

²«Ժողովուրդ», 1920, N 94:

ցիներ պատրաստելու համար: Եթե չենք կամենում ազգայնացումը նույնացնել տգիտացման, անհրաժեշտ է մայրենի լեզվով գիտական գրականություն ստեղծել, որ հնարավոր է թարգմանական գրականությանը զարկ տալով միայն»¹: Դպրոցների աստիճանաբար ազգայնացման, հայոց լեզուն պետական հռչակելու հետևանքով օտարազգի պաշտոնավարողները հարկադրված էին հեռանալ Հայաստանից: Դա մասնավորապես վերաբերում է ռուսազգի ուսուցիչներին: Այս կապակցությամբ Աղբալյանը դիմում է կառավարությանը հետևյալ միջնորդությամբ: Աշխատանքից ազատվող ուսուցիչները «լիկվիդացիոն գումարներ» ստանում էին երկու մվագից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «երկարամյա ծառայությունից» հետո ոմանք (ոչ միայն ուսուցիչներ) պետք է թողնեն Հայաստանի սահմանները (Աղբալյանը սա համարում էր «անարդարացի»), առաջարկում է նրանց գումարները վճարել միանգամից, հնարավորության դեպքում «մի քանի ամսվա», եթե ոչ ամբողջ տարվա» համար, քանի որ ուսումնական տարին սկսվել է, և այդ ընկերները Ռուսաստանում կդժվարանան համապատասխան աշխատանք գտնել: Բացի այդ «մինիստրությունս չէր ցանկանա, - շարունակում է Աղբալյանը, - մի քանի անձանց դժվար կացության մեջ դնելով մթազնել այն բարյացակամ տրամադրությունը, որ գոյություն ունի ռուս ժողովրդի մեջ դեպի հայությունը»²: Հատուկ որոշմամբ պառլամենտը հավանություն է տալիս Աղբալյանի առաջարկին: Թերևս ավելորդ չի լինի հիշել, որ կառավարությունը մի ուրիշ որոշում էլ ընդունեց. «Թույլ տալ նրանց («ռուս ծառայողներին»... - Գ. Ա.) Հայաստանի սահմաններից դուրս գալու դեպքում ձրի օգտվել երկաթուղիներից և ձրիապես փոխադրել իրենց

¹ՀՀ. ԳԿԳԱ ֆ. 199, ց. 1, գ. 98, ք. 59:

²Նույն տեղում, ք. 21:

իրերը ի հաշիվ նույն հիմնարկության, որտեղ ծառայում էին նրանք»¹:

1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում հանդիսավոր արարողություններով բացվեց Հայաստանի համալսարանը: Բացմանը ներկա էին «Հայաստանի կառավարության, պառլամենտի և զանազան հիմնարկությունների ներկայացուցիչներ», կային նաև արտասահմանյան հյուրեր²: Սրան նախորդել էր նախապատրաստական երկարատև աշխատանք: Հանրային կրթության առաջին մինիստրներից Գ. Մելիք-Ղարապոզյանը բազմիցս դիմումներ է հղում կառավարությանը՝ նորաստեղծ հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնելու առաջարկներով:

«Հայաստանի անկախ պետություն կազմակերպելու և ինքնուրույն կյանքի կոչվելու հենց առաջին օրերից, գրում է նա, - զարթնում է Համալսարան բաց անելու խնդիրը», հաստատություն, որ «պիտի հանդիսանա մի կողմից որպես ձգող կենտրոն մեր այն ինտելիգենցիայի և գիտական ուժերի, որոնք ցրված են Եվրոպայի զանազան քաղաքներում... մյուս կողմից... պիտի հանդիսանա այն մտավոր մարտկոցը, որ մեր երկրում պիտի բաշխե կուտակված գիտական ուժերը. պատրաստելով գործիչներ պետական կյանքի բազմապիսի ճյուղերի համար»³: Մինիստրական իր պաշտոնը Աղբալյանն ստանձնեց այն պահին, երբ նոր միայն սկսվել էին համալսարանի կազմակերպման աշխատանքները: 1919 թ. մայիսի 16-ի նիստում մինիստրների խորհուրդը ընդունում է Հայաստանում «համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300 000 ռ. հատկացնելու մասին» օրենքը⁴: Մշակվում են «Երևանի համալսարանի

¹ «Ժողովուրդ», 1920, N 24:

² «Մշակ», 1920, N 2:

³ ՀՀ. ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 220, ք. 20:

⁴ ՀՀ. ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 57, ք. 46:

Ժամանակավոր կանոնները», ուսումնական ծրագրեր, լուծում կառուցվածքի հետ կապված հարցեր: Աղբալյանը եռանդուն մասնակցություն է բերում համալսարանին առնչվող հարցերին. դասախոսներ է հրավիրում, շենք է առաջարկում, բանակցություններ է վարում Թիֆլիսի իր ներկայացուցիչ Ջավրիևի հետ, մտահոգվում է ապագա համալսարանի գրադարանի և զանազան սարքավորումների ձեռքբերմամբ: Այնուամենայնիվ այն Երևանում բացել հնարավոր չեղավ: Այս ժամանակ է, որ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը «բունցակություն» է հայտնում «համալսարանը իրեն խնամքին հանձնված քաղաքում» բացելու վերաբերյալ¹: Այսպես, ահա, Երևանի համալսարանը բացվում է Ալեքսանդրապոլում, իբրև Հայաստանի համալսարան: «Հանդեսը բաց է անում ալեզարդ պրոֆեսոր Ղամբարյանը ոուսերեն մի ճառով և առաջարկում է լսել հանրային կրթության մինիստրին: Ն. Աղբալյանը ողջունում է համալսարանի բացումը, նկարագրում է երկրի վիճակը և այն պայմանները, որ ստիպեցին կառավարությանը բանալ համալսարանը: Նա առաջարկում է հարգել հիշատակը այն զոհերի, որոնց արյան գնով հնարավոր եղավ իրականացնել հայերի երազը, ապա մատնանշում է, որ Հայաստանի համալսարանը լինելու է դեմոկրատիկ: Ամեն ուսումնաձարավ հնարավորություն պիտի ունենա ներս մտնելու, «բայց դժվարությամբ է դուրս գալու»:

Իրեն նման չէր լինի Աղբալյանը, եթե մոռացության տար գորողներին ու գրականությունը: Վարչական-քաղաքական գործունեության հետ միասին շարունակում էր ամենաակտիվ մասնակցություն ունենալ երկրի գրական կյանքին՝ գրում էր հոդվածներ, առաջաբաններ, կազմա-

¹ Նույն տեղում, գ. 98, ք. 86:

կերպում գրական զանազան միջոցառումներ, հանդես գալիս զեկուցումներով:

Հենվելով Հովհ. Թումանյանի գլխավորած կովկասի հայ գրողների ընկերության՝ Երևանում ապրող անդամների վրա, ստեղծում է նոր ընկերություն, որը հայրենի հողի վրա լինելու հանգամանքով իրավունք ուներ կոչվելու Հայաստանի գրական ընկերություն:

Թեհրանից վերադարձած գործիչը անմիջապես հայտնվեց նորաստեղծ ընկերության շարքերում և իբրև փոխնախագահ ամենագործունյա մասնակցություն ունեցավ նրա աշխատանքներին և՛ իբրև բանախոս ու քննարկումների ակտիվ մասնակից, և՛ իբրև կազմակերպիչ: Հայ գրական ընկերության ամենշաբաթյա միջոցառումները, գրերի գյուտի և տպագրության հոբելյաններին նվիրված հանդիսությունների հետ միասին, վիթխարի հետաքրքրություն արթնացրին մեր գրականության ու մշակույթի անցյալի ու ներկայի հանդեպ: Դրա վկայությունը այն բազմամարդությունն էր, որն անսովոր երևույթ էր նման միջոցառումների համար: Արձագանքները հասան մինչև Բաքու և Պոլիս: «Ամենքն զգում են,- Աղբալյանի վկայությունն է,- ավելի կամ պակաս չափավոր, կազմակերպված է հայոց մտավորական դասը ոչ միայն իր նյութական կացությունը բարվոքելու, այլ մանավանդ միացած ուժերով մի համազգային գործ կատարելու, որի բնույթն ու չափերը դժվար է նախորոշել, բայց որի նշանակությունը մեր կուլտուրական կյանքում պարզ է արդեն շատերի համար»: Գրական տարբեր խնդիրների հետ միասին քննության նյութ են դառնում արդիականության հուզող ծայր հարցեր ևս («Հայերը Թուրքիայում», «Քրդերի մասին», «Աշխարհագրական ֆակտորի ազդեցությունը պատմության և կուլտուրային վրա», «Բանակո՞վը մամուլի մեջ»): Ընկե-

¹ Հորիզոն, 1913, N 69:

րությունը օգնություն էր ցույց տալիս գրողներին, որբերին, գաղթական արևմտահայ գրական մարդկանց, կազմակերպեց գրական կուրսեր», կոչ ուղղեց «աշխարհի քրիստոնյա բոլոր պետությունների ղեկավարներին» (տարբեր լեզուներով), պահանջելով բողոքի ձայն բարձրացնել «կոտորածների առթիվ»՝ «հանուն մարդկության և կուլտուրայի»: Ընկերության նյութեր և գրական խմբակներ ստեղծվեցին Անդրկովկասի հայաշատ վայրերում, որոնք նույնպես հրատարակչական գործունեություն ունեցան:

Ընկերության աշխատանքի փորձը, որն ըստ էության շարունակում էր վերնատան գործունեությունը շատ ավելի լայն լսարանի համար, Աղբալյանը հաջողությամբ օգտագործեց վերստեղծված Հայաստանի գրողների ընկերության, ինչպես նաև Սփյուռքում Համազգային կրթական և մշակութային ընկերության գործունեությունը ծավալելիս:

Հայաստանի գրական ընկերության հանդիսություններից մեկում էր, որ ընկերության նախագահը «սարսելով դահլիճն ու ֆոյեն», 1919-ի հոկտեմբերին ազդարարեց «մի նոր բանաստեղծ-Չարենցի» հայտնությունը: Քննադատի ու բանաստեղծի առաջին «հանդիպումը» տեղի էր ունեցել մի փոքր վաղ, Բաքվի «Արև» թերթի խմբագրությունում: Դասախոսության հրավիրված քննադատը հետաքրքրվում է խմբագրությունում ստացված գրքերով: «Առաջին նայածս,- պատմում է նա,- մի մի հար տետրակ էր. «Ե. Չարենց. Երեք երգ տխրադայուկ աղջկան»: Մյուսը մի փոքրիկ գրքույկ էր նույն հեղինակի. «Դանթեական առասպել»... Վերնագրերն ուշագրավ էին: Տեսա մի նոր մարդ, նոր նյութ, նոր վերաբերում և վարժ տաղաչափություն: Մի տաղանդավոր սկսնակ: Տարվեցա ընթերցումով, մոռացա հավաքույթ և սպասում: Վ. Տերյանի հետքով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականության հորիզոնում: Որոշեցի առաջին իսկ

առիթով գրեմ այս նոր հեղինակի մասին»¹: Այդ անելու հնարավորությունը ունեցավ երկու տարի հետո միայն: Ջեկուցումը ցնցող տպավորություն է թողել: «Այդ օրը ամբողջ Երևանն իմացավ, որ մեծ բանաստեղծ է ծնվել»,- վկայում է ականատեսը: Թերթերը ընդարձակ հաղորդագրություններ տպագրեցին զեկուցման վերաբերյալ, Չարենցը դարձավ ճանաչված ու հնչեղ անուն: Այս լուրն առնելով, բանաստեղծը, որ ուսուցիչ էր Կարսի շրջանի Բաշքյադիկլար աննշան գյուղում, գալիս է Երևան, արժանանում հանրային կրթության ու արվեստի նախարարի ընդունելությանը և աշխատանքի նշանակվում նրա մոտ: Բանաստեղծի և քննադատի միջև կայացել է այս զրույցը. «Հը, եկե՞լ ես, Չարենց, լավ ես արել... լսել եմ նյութական վիճակդ շատ փայլուն չէ, և դիմում ես կատարել ուսուցչական մի պաշտոնի համար... Չէի՞ր ուզեճալ ինձ օգնել կրթական վերակառուցման գործում:

- Ինչպես թե, պարոն նախարար, ես որ բացարձակ բան չեմ հասկանում այդ գրասենյակային աշխատանքից...

- Եվ կարիք էլ չկա, որ հասկանաս,- կպատասխանե մեր Նիկոլը,- ես կտամ մի սեղան, կնստես առաջը ու կգրես բանաստեղծություններ, այդ քեզ համար ծանոթ աշխատանք է, չէ՞... կստանաս մի ոռճիկ, որ քեզ ապրուստի հոգսից կազատի, իհարկե շատ համեստ, ինչ-որ ստանում է մի ուսուցիչ կամ մի նախարար... Իսկ աշխատանքը, որ իրավունք ունեն քեզանից պահանջելու իբրև պաշտոնյա, այդ կթողնես ինձ, ես քո տեղը կկատարեմ... Բո անելիքը շատ ավելի էական գործ կլինի Հայ ժողովրդի համար»²:

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 329:

²Ն. Աղբալյան, Դասախոսություններ հայ մտեմնագրության մասին, Բեյրութ, 1952, էջ 17:

Ժամանակակիցները հաստատում են, որ բանաստեղծը այդպես էլ չվարժվեց գրասենյակային աշխատանքին: Աշխատակիցները դժգոհում էին նրա «չարանհիություններից»: «Աղբալյանի մոտ էի,- պատմել է մեզ Կ. Մելիք-Օհանջանյանը,- եկավ Պողոս Սոտնիկյանը (օգնականն էր) և զայրացած բողոքեց Չարենցից.

- Դուք նրան երես եք տալիս, պ. Աղբալյան, ոչ մեկի չի ենթարկվում, ոչինչ չի անում, նախարարության իրացանկն էլ դեռ չի կազմել...

Աղբալյանը մեղմորեն ժպտաց.

- Դուք խելոք մարդ եք, պ. Սոտնիկյան,- ասաց,- Չարենցը վաղը կարող է գրել մի բանաստեղծություն, որ ավելին կարժենա, քան նախարարությանդ ամբողջ փտած գույքը... հանգիստ թողեք նրան»:

Բանաստեղծը երբեք չմոռացավ «Սիրելի Նիկոլ Աղբալյանին»:

Չարենցի դեպքը եզակի չէր. Աղբալյանն օժտված էր առաջին իսկ ստեղծագործությամբ գրողի տաղանդը ճանաչելու և զարգացման ուղղությունը գուշակելու զարմանալի ձիրքով: «Այնպիսի մի դեբյուտ, ինչպիսին «Երազ օրերն» է,- Լ. Ծանթի առաջին վիպակի առիթով գրում է նա,- մի սկսող գրողի համար մեծ բան է... այդպես սկսողից ամենայն հավանականությամբ կարելի է սպասել ապագայում ավելի կատարյալ և գեղարվեստական երկեր»¹: Այդպես նա մեծ գալիք գուշակեց «սկսող գրողներ» Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ստ. Ջորյանի, Ժ. Հակոբյանի և ուրիշների համար:

Հայաստանի գրական ընկերության նախագահը, որ մինիստր էր միաժամանակ, կազմում է «հուսատուններից» մինչև «վաստակավոր» գրողների՝ կառավարության կողմից նպաստներ հատկացնելու մասին օրինագիծ և ներկայացնում հաստատման: Ֆինանսական

¹«Մուրճ», 1896, N 12, էջ 1605:

Անդ վիճակում գտնվող կառավարությունը, ընդառաջելով Հովհ. Թումանյանի խնդրանքին, մի զգալի գումար հատկացրել էր արդեն՝ նպաստներ տալու համար հայ գրողներին, հրապարակախոսներին, գիտնականներին»։ «Նպատակահարմար կհամարեի այս օժանդակությունը դարձնել պարբերական, - առաջարկում է մինիստրը, - վաստակավորներին իբր վարձատրություն, հուսատուններին իբր խրախույս», - նույն պայմաններով անհրաժեշտ է օժանդակել նաև հայկական բեմի վաստակավոր աշխատակիցներին և հայ նկարիչներին¹։ Կառավարությունն ընդառաջեց Աղբալյանի մի ուրիշ առաջարկին. միջոցներ տրամադրել «հայ հեղինակների ինքնուրույն և թարգմանական երկերի հրատարակության համար»², որը օժանդակություն է ոչ միայն «հայ հեղինակներին», այլև դպրոցներին, ընթերցող հասարակությանը։

Հայտնի հրատարակչական գործիչ Մ. Էփրիկյանը 1919-ի վերջերին կամ հաջորդ տարվա սկզբներին դիմում է Աղբալյանին՝ նրա «գրածները» հրատարակելու թույլտվությամբ։ Քննադատը, որ նախարար էր արդեն, շնորհակալությամբ ընդունում է առաջարկը և առաջին հատորի համար առանձնացնում «Մուրճ»-ում 1896-1898 թթ. տպագրած հոդվածները։ «Շնորհակալ եմ Ձեր մտադրության համար իմ գրածներս տպագրելու, - գրում է պատասխան նամակում, - ժամանակին շատերն են խորհուրդ տվել, բայց ոչ ժամանակ, ոչ հարմարություն են ունեցած այդ գործով զբաղվելու»։ Թեև գիտի, որ բոլոր գրածները «նույնարժեք չեն», բայց քանի որ «ամեն մեկի մեջ մի միտք, մի դիտողություն, մի նկատողություն կա, որ կարող է պիտանի լինել», նպատակահարմար է գտնում ունենալ «գրվածների լրիվ ժողովածուն»։ Նույ-

¹ ՀՀ. ԳԿԳԱ. ֆ. 207, ց. 1, գ. 137, ք. 126:
² Նույն տեղում, գ. 156, ք. 4:

Աիսկ առաջարկում է ձևավորման սկզբունքը՝ չմոռանալով «տարածմանը նպաստելու» պայմանները։

*«Վերտառությունն այսպես արեք.
 Ն. Աղբալյան
 Գրադատականներ
 Հատ. 1-ին*

(1896-1898)

Կարելի էր իբր երկրորդ խորագիր վերտառության տակ, փակագծով նշանակել այսպես՝ (Շիրվանզադե, Ավ. Իսահակյան, Լ. Ծանթ, Վ. Փափագյան, Քահ. Մուղուրյան, Ջ. Սվիֆտ, Չ. Դիկկենս և այլն)։ Սա կարող էր հետաքրքրություն շարժել և տարածմանը նպաստել»։

Աղբալյանի մարդկային նկարագրի առումով ուշագրավ են առաջարկած վարձատրության պայմանները. «Վարձատրությունը և նրա հատուցումը որոշեցեք այնքան և այնպես, ինչպես հարմար կտեսցնեք Ձեր գործի հաջողության համար»։ Խնդրում է միայն իրեն հատկացնել 15 օրինակ գիրք՝ բարեկամներին ընծայելու համար։ «Նրանց գինը կարող եք հաշվել վարձատրության մեջ, եթե այդպես է Ձեր ընդունած կարգը»։ Ամեն ինչում բծախնդիր քննադատը խնդրում է հատուկ ուշադրություն դարձնել սրբագրությանը։

«Չէի ցանկանա ինքս անփույթ երևամ ընթերցողին, երբ հաճախ խոսել եմ ուրիշների անփութության մասին»¹։

Մի քանի էջանոց առաջաբան գրելու ցանկությունը ուշացումով իրականացրեց։ «Լսեցի, - գրում է երկրորդ նամակում, - Ջատկից հետո մտադիր եք հավաքածուն տպագրության տալու, կուզեիք օր առաջ ունենալ նախաբանս։ Ջբաղված լինելով՝ այսօր միայն կարողացա

¹ ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, 4-9, գ. 2643:

ծամանակ գտնել գրելու և ահա ներփակ ուղարկում եմ»¹:

Աղբալյանին վիճակված չէր իր գիրքը տպագրված տեսնելու հաճույքը: Առաջաբանը, գրված ընթեռնելի ձեռագրով, դեղնավուն չորս թերթիկների վրա տասնամյակներ «ներփակ» էլ մնաց արխիվներում²:

Հայրենիքում նրա անունը տալն անգամ արգելվեց, նրա գործերի հրատարակության աշխատանքը հանձն առավ Համազգայինը, որ մինչ այժմ հրատարակել է չորս մեծադիր հատորներ, ավա՛ղ, մի այդքան նյութ էլ սպասում է իր հերթին...

Նախարարությունում աշխատանքը ընդհատվեց Մայիսյան ապստամբությանը: Աղբալյանը գործողվեց կարս: Նաև նրա հոնտորական ու կազմակերպչական տաղանդին ենք պարտական, որ այստեղ ապստամբությունը կանխվեց... առանց արյունի:

Պառլամենտի հունիսի 5-ի նիստում հանդես եկավ կրքոտ ճառով: Ջերմ ծափահարություններով բազմիցս ընդհատված ելույթը Մայիսյան ապստամբության պարտությանն էր նվիրված: Հիմնական եզրակացությունն այն էր, որ մեծամասնականները ազդեցություն չունեին ժողովրդի վրա և որ հենց ժողովուրդն էլ ճնշեց այդ ընդվզումը: Պառլամենտի հիշյալ նիստի մթնոլորտը հաստատում է, որ կարմիր Ռուսաստանի հետ ուղղափառ քաղաքական հարաբերությունների հաստատումը առաջին հանրապետության պետական այրերի համար անհնարին իրողություն էր:

Լուրջ պատճառներ ունեն մեծ վերաբերմունքը:

Դժվար էր հավատալ, թե քաղաքացիական պատերազմի բոցերում տապակվող հեղափոխական Ռուսաստանը կարող էր հաղթանակել այդ դժվարին պայքա-

րում: Ավելի հուսատու էին երևում կապիտալիստական աշխարհի միահամուռ օժանդակությունը վայելող և Ռուսաստանի տարբեր անկյուններից արշավող սպիտակ գեներալների հնարավորությունները:

Մինչդեռ Մայիսյան ապստամբության հաղթանակը կարող էր այլ շրջապատույտի մեջ հայտնաբերել կովկասի, առաջին հերթին Հայաստանի ճակատագիրը... Հայաստանի խորհրդայնացումը մայիսին այլ դեր և դիրք կապահովեր երկրին խորհրդաթուրքական «սրտառուչ միության» համապատկերում: Այդ միությունը այժմ «իմպերիալիստական» Հայաստանին կանգնեցնում է իշխանությունը բանվորագյուղացիական խորհուրդներին հանձնելու անհրաժեշտության առջև... Հայաստանի համար շատ ավելի վատ պայմաններում:

Ովքեր լավ էին ճանաչում իրենց գաղափարական հակառակորդներին՝ հեռացան Հայաստանից: Աղբալյանը մնաց: Նա, որ հավատում էր, թե «սրածության, ավերածի և մահացության... զարհուրելի» տարիներին պիտի հաջորդեն «անդորր աշխատանքի ստեղծագործ օրեր», հավատաց, թե խորհրդայնացած հզոր Ռուսաստանի հովանու տակ կարող են գալ այդ օրերը: Հավատաց և մնաց: Սուրը չթողեց գրչի մարդ դառնալ, գրիչը չթողեց՝ սրի մարդ դառնալ, խոստովանել է դառնությանը և իրեն հատուկ համեստությամբ. հայ իրականության պարտադրանք էր դա: Միշտ երազել էր խաղաղ մի անկյուն, մի կտոր հաց ու կում մի ջուր, որը հնարավորություն կտար նվիրվելու իր հոգուն այնքան մոտ գործին: Հայրենիքի անազատ վիճակը, սակայն, նրան մղում էր այլ ասպարեզ. խեղդում էր նաև ապրուստի դժվարին բեռը: Նրան թվում էր՝ եկել է ծամանակը քաղաքական պայքարից հեռանալով՝ ամբողջովին կրթական, գրական-մշակութային վերանորոգչական իր իսկ սկսած գործին նվիրվելու: Մտադիր էր դասախոսական աշխատանքի անցնել իր իսկ ջանքերով բացված համալսարա-

¹Նույն տեղում, գ. 2644

²Տե՛ս՝ Ազգակ, Բեյրութ, 1993, N 104, «Զիբատարակված գրքի Հառաջաբանը»:

նում, ավարտի հասցնել գրականության ու լեզվի վերաբերյալ իր հետազոտությունները: Առաջին պահ կարծես այդպես էլ լինում է: Աղբայանի թղթերում պահպանվել է մի պայմանագիր, որով Աշոտ Հովհաննիսյանը նրան հրավիրում էր մասնակցել իրավաբանական բառարանի կազմման աշխատանքներին, իրականացնում էր համալսարանում դասավանդելու երազանքը ևս: Շուտով վրա հասած բռնությունները, սակայն, հավանաբար ստիպելու էին նրան զոչալ հայրենիքում մնալու համար: 1921-ի փետրվարի 9-ին ձերբակալում են: Ավագ որդու պատմելով՝ ձերբակալողների հետ է եղել նաև... Չարենցը:

- Եկել էր, որ հայրիկին չնեղացնեն,- որդիների եզրակացությունն է սա:

Փետրվարյան ապստամբությունը շատերի հետ Աղբայանին էլ ազատեց կացնի դատավճռից... Տուն վերադարձավ փետրվարի 18-ին, Ռուբենի ծննդյան օրը: Ականատեսները պատմում են, որ առանձնապես չէր շտապում բանտից հեռանալ. տանից քերած անկողին ուներ, թողնել չէր ուզում: Մի զինվոր օգնել է նրան քեռր տուն հասցնելու: «Բանտից նոր ելած ու ծանրապես հիվանդ՝ ես չուզեցա անմասնակից մնալ իրադարձությունաց: Ինձ ուղարկեցին Էջմիածին»¹: Գյուտ եպիսկոպոսին նվիրված հուշ-բնութագրում պատմում է Էջմիածնում անցկացրած օրերի մասին. գիշերել է Գյուտի «մթին խցում», «եկեղեցուց քերած կես-այրած մոմի նվաղկոտ լույսի տակ» ինքը Նարեկ է կարդացել ու Հ. Գ. Ավետիքյանի մեկնությունը, իսկ Գյուտը՝ Նայյան պատրիարքի «մեծազանգված հատորի համապատասխան հատվածը»: Միայն հիվանդությունը չէ Էջմիածին ուղարկելու պատճառը. համախոհները ըստ երևույթին չնեղեցին 1920-ին Հայաստանում մնալու նրա վճիռը, որ, անշուշտ, քաղաքական վճիռ էր:

¹Ն. Աղբայան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 344:

Ինչևէ՝ նրան վիճակված չէր վայելելու թեկուզև դժվարությունների հետ տրված այս խաղաղ կյանքն ու Նարեկի ընթերցանությունը: Էջմիածնից տուն է վերադառնում ապրիլի մեկին: «... Առանց լուր ունենալու ռազմական կացության մասին, բնագոյական մղումով՝ ես մեկնեցի Երևան ընտանիքիս տեսնելու խոստանալով շուտ վերադառնալ, բայց նույն գիշերն իսկ հորդ անձրևի տակ ընդմիջտ թողի մեր աշխարհը¹: Դրոն գալիս է տուն, մոր պատմածը վերապատմում է Ռուբենը, և ասում.

- Պարոն Նիկոլ, վեր կացեք, քաղաքը թողնում ենք:

Եվ թողեցին քաղաքը Աղբայանն ու Շանթը: Վերջինս, որ Աղբայանի մոտ հաճախ էր լինում, այդ գիշեր նույնպես այստեղ էր: Հիվանդ Աղբայանը հանգստացնում էր տանեցիներին.

- Մի անհանգստացեք, ես կվերադառնամ, կանցնի մեկ-երկու տարի՝ կվերադառնամ:

Չվերադարձավ: Կյանքը օրինավոր հուն չմտավ, քաղաքական հալածանքները շարունակվում էին, վերադառնալ հնարավոր չէր: Բայց, փառք Աստծո, ամակագրություն կար, երկաթե վարագույրը դեռևս չէր քաշված երկրի սահմաններով մեկ: Նույնիսկ խոսակցություն կար ամբողջ ընտանիքով հայրիկի մոտ գնալու մասին, բոլոր փաստաթղթերը պատրաստ էին: «Մայրիկը իրեն հազիվ տուն գցեց,- պատմում էր աղջիկը,- և ուշաթափ փովեց գետնին»:

Մեկնումը մերժել էին ամենավերջին պահին: Դա 1923-ին էր:

Աղբայանն անցավ Թավրիզ: Նրա կյանքն ու գործունեությունը նոր փուլ էր թևակոխում: Հանրային ու անձնական հոգսերից ազատ լինել և նվիրվել գի-

¹Նույն տեղում, էջ 346:

տության, սա էր նրա նվիրական իղձը, որ այդպես էլ չիրականացավ:

- Երեխաներիս մեծացնեմ, գնալու եմ ս. Ղազար և զբաղվեմ գրականությամբ:

- Բա ինչո՞ւ ինձ հետ ամուսնացար,- կես-կատակ, կես-լուրջ առարկել է տիկին Հրարիին: Դուստրը այսպես է հիշում մոր պատմածը: Ծակատագիրը նրան արտասահման նետեց, ս. Ղազարի ճամփան բաց էր, բայց նա, այդուհանդերձ, հրաժարվեց ս. Ղազարից: Դարձյալ գործ շատ կար, գործավոր՝ քիչ, դավաճանություն կլիներ «մաքուր» գիտության նվիրվելը...

Պարապ չնստեց, նույն եռանդով շարունակեց կրթամշակութային գործունեությունը: Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկի արխիվում պահպանվող գրությունները, հիմնականում բանավոր ելույթների նշումներ և բազում սևագրեր, հաստատում են, որ 1921-ի նոյեմբերի 12-ին սկսել է հայ նոր գրականությանը նվիրված դասախոսությունների շարք (քսան դասախոսություն է կարդացել) մամուլում հանդես է գալիս դպրոցական կրթության կազմակերպման վերաբերյալ նոր առաջարկություններով: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում հետևյալը: Սփյուռքում հայապահպանության դժվարին գործը առաջին հերթին հենվում է լեզվի իմացությանը: Ուր էլ եղավ, վիթխարի ջանքեր գործադրեց դպրոցական շինարարության ուղղությամբ, ըստ որում՝ դժվարին վիճակներից դուրս գալու հետաքրքիր միջոցներ էր առաջարկում: «Հո՞ծ գաղութներու» խնդիրը այս կամ այլ կերպ լուծվում է, ինչպե՞ս վարվել «փոքրաթիվ գաղութներու» հետ: «Այս տեսակ վայրերու մեջ կարելի չէ առանձին դպրոց պահել: Բայց կարելի է այնպես կազմակերպել գործը, որ շրջուն ուսուցիչներ նշանակվեն և վեց ամիս տեղ մը, վեց ամիս ուրիշ, մտակա տեղ մը դասավանդություն կազմակերպեն տարական դասընթացով անշուշտ և միացյալ բաժիններու

դրությամբ: Այս կերպ կարելի կըլլա մեկ ուսուցիչով մեկե ավելի բաժիններ կառավարել և որոշ չափով օգտակար ըլլալ»¹:

1924-ին փոխադրվեց Եգիպտոս, ապրում և գործում էր Ալեքսանդրիայում:

Ռուբենի մոտ պահպանվել է Ալեքսանդրիայից հղած 21 նամակ-բացքարտ: Եգիպտոսի, գերագանցապես կահիրեի գունավոր տեսարաններով բացիկներ են դրանք, տեսարանների բացատրություններով, հայրական կարոտի զեղումներով ու հորդորներով: Աշխարհագրական փոքրիկ զրույցներ են. հեռուներում ապրող հայրիկը երեխաների համար նաև... ուսուցիչ էր: Ահա նմուշներ այդ նամակներից: Բացքարտի մի երեսին լայնահուն նեղուն է՝ բարձր ափով: Հեռվում երևում է մզկիթը, առջևում՝ մի արմավենի: Երեք կին ափին են, ջուր են առնում նեղուսից, երկուսը, ջրամանները զլխներին, մոտենում են գետին: Նկարի տակ, մի մատնաչափ սպիտակ տեղում, կարդում ենք՝ «Ողջույն նեղուսից և արմավենուց Հայաստանի լեռներին և Արաքսին»: Նամակն անթվակիր է: Մյուս երեսին կարդում ենք. «Սա վերին Եգիպտոսի մի տեսարան է:

Կահիրեից սկսած մինչև ծով տարածվում է վարի Եգիպտոսը կամ Դելտան, որ հունարեն եռանկյունի տառի ձևն ունի, ուստի այդ տառի անունով կոչվում է դելտա: Իսկ կահիրեից վեր դեպի Սուդան վերին Եգիպտոսն է, ուր նեղուսը հոսում է մի նեղ հովտի մեջ՝ երկու կողմից չոր և ժայռոտ լեռներով: Դրա համար է, որ նեղուսի ափն այս պատկերի վրա բարձր է ջրից: Դելտայի շրջանը հարթ հավասար մի տարածություն է՝ առանց լեռ ու բլուրի: Երեկո է, ավելի շուտ մթնշաղ, երբ արևը նոր է մայր մտել և լուսինը նորած՝ երևում է երկնքում ու ջրի մեջ արտացոլվում: Կանայք ջուր են առնում նեղո-

¹ Հուսափր, 1924, N 17:

սից. մոտ է հանգստի ժամը Ֆելլաֆի (եգիպտացի գյուղացու) համար:

Բարեկենք և Համբուլըներ»:

Միշտ չէ, որ կարողանում էր երեխաների մանկական ցանկությունները բավարարել:

«Միրելի Աչիկ»:

Առաջին նամակդ ստացել եմ և պատասխան եմ գրել մի սիրուն բացքարտի վրա. երկրորդն էլ հիմա ստացա. նկարածո աղջիկը շատ հպարտ է երևում. թեք կանթել է կողքին և համարձակ նայում է հեռուն, չի տեսնում, որ ոտքի տակ մի սիրուն վարդ կա. թե՞ տեսել է, բայց չի հավանում. հուսով եմ, որ նա քեզ նման չէ. կամ դու նրա նման անուշադիր և անհավան չես: Հա, կուկլա ես ուզում, գրեցի Հրասուն մորքուրին, պատասխանեց, թե դժվար է ուղարկել. այստեղից էլ բերող չկա. ի՞նչ անեմ՝ չգիտեմ: Սպասենք, տեսնենք, գուցե մի հնար գտնվի, որ քո ուզածն ուղարկեմ:

Այս նկարը Ալեքսանդրիայի փարոսն է. գիտե՞ս ինչ է փարոս. դա մի բարձր աշտարակ է, որի գլխին գիշերները լույս են վառում, որ ծովի մեջ եղած նավերը ճամփան չկորցնեն և ափի քարափներին չդիպչեն: Իսկ այն ծովը, որ տեսնում ես նկարի վրա, Միջերկրական ծովն է. ասում են «Միջերկրական», որովհետև Աֆրիկայի, Եվրոպայի և Ասիայի մեջտեղն է: Ալեքսանդրիան Աֆրիկայի ափին է, իսկ դու՞ որտեղ ես. գրիր.

Համբուլը, քո Հայրիկ»

Ահա մարդկային ողբերգությունը: Հարկադրված ես ապրել հարազատներից հեռու: Անափ կարոտին միանում է փոքրիկ նվեր անգամ ուղարկելու անհնարանությունը: Հնարը կարծես թե գտնվում է: Ահա Ս. Վրացյանին գրած նամակը, ուր այդ ողբերգությունը առավել ցայտուն է դրսևորվել:

«Միրելի Սիմոն, լրագիրներից իմացա, որ Հայաստանի Կ. խաչի ներկայացուցիչները Փարիզ են հասել.

աղջիկս ինձ գրում է, թե նրանցից մեկի միջոցով ինձ համար ուղարկել է թաշկինակի (անընթեռնելի), որ իր առաջին ձեռագործն է:

Ես չգիտեմ նրանք պիտի կարենա՞ն անցնիլ Եգիպտոս թե ոչ, ուստի կը խնդրեմ.

1) Այն մարդուց, որի ով լինելը չգիտեմ և որ բերում է աղջկաս ձեռագործը, խնդրեմ մանրամասն տեղեկանաս մերոնց դրության մասին՝ ապրուստ, հագուստ, առողջություն, բնակարան և այլն, և գրես ինձ:

2) Առնես նրանից իր բերած ձեռագործը և ուղարկես ինձ, թե նրանք Եգիպտոս գալու չեն:

3) Խնդրես, որ եթե կարող է, երեխաներիս համար մի քանի նվերներ տանի իր հետ Երևան: Կարծում եմ շատ իրեր կը տանեն իրենց հետ, ուստի դժվար չի լինի մերոնց համար մի քիչ բան տանել: Եթե համաձայնեն, այն ժամանակ կը խնդրեմ իմ հաշվին գնես և ուղարկես.

ա) մի Մեքանո (Օանթի երեխաներին հարցրու, գիտեն թե ինչ է, իրենք ունեցած են): Տուփ է երկաթեղեն մասերով լիքը, որ իրար կցելով՝ զանազան բաներ են շինում. կառուցողական խաղերի մարզանք է:

բ) Մի տեսակ մուրճեր կան, որոնց կոթը մետաղի տուփ է և մեջը զանազան գործիքների գլուխներ կան (խարտոց, սղոց, բիզ և այլն), սրանցից երկու հատ, սուղ չեն և թեթև են...

Մեքանոները զանազան արժեք ունեն. մեկ կամ մեկ ու կես ոսկիանոցը մերոնց համար շատ բավարար է:

գ) Երեք-չորս ձեռք ջութակի և վիոլոնչելի լարեր և նոտաներ՝ ջութակինը բավական վարժություն ունեցողի համար, իսկ վիոլոնչելի նոտաները մի տարվան ուսում ունեցողին հարմար:

դ) Ջրաներկի տուփեր, երեք հատ մեծ ու փոքր, վրձիներ և թուղթ, ներկերը լավ տեսակի լինեն, իսկ վրձիները երկու-երեք ձեռք:

ե) Album a colorer - թե պարզ և թե բարդ տեսակի:

Ձ) Կնոջս համար գուպաներ և ինչ որ կինդ հարմար տեսնի, բայց անպատճառ որևէ բան ուղարկես:

Ես շատ բան էի առած և մոտս եմ, հույս ունեի թե կարող է վստահելի մարդ պատահել և կուղարկես. երեք տարի է՝ առիթ չունեցա ուղարկելու: Ես դրամ չեմ ուղարկում, որովհետև չգիտեմ պիտի համաձայնու լինե՞ն որևէ բան տանելու մերոնց. եթէ համաձայնեն՝ դու մի կերպ դրամ գտիր ու գնիր, հաշիվն ուղարկիր ինձ, ես անմիջապես կը փոխադրեմ քեզ:

Հուսով եմ թե կհասկանաս վիճակս և ամեն ջանք կը թափես հաջողացնելու նրանց համաձայնությունը և հիշածս իրերն առնելով՝ կուղարկես մերոնց: Բացի իմ հիշածներից, ինչ որ կարողանաս և հարմար տեսնես ուղարկել երեխաներիս ու կնոջս՝ գնիր և ուղարկիր:

Կնոջդ ու ընկերներին սիրալիր բարևներ. բարևում եմ Ծանթը և Սաշա Մարգարյանց, որ նույնպես մեր վարժարանում պաշտոն ունի:

Սպասում եմ անմակիս պատասխանին և այս ձեռնարկության բարի լուրին:

Քո Նիկոլ

Գուցե իմ գնածներից մի երկու բան կարողանամ ուղարկել քո հասցեով: Արտանկարելու շատ լավ տեսրակներ կան. կարող ես սրանցից ևս ընտրել և ուղարկել»:

Կատարե՞ց սիրելի Սիմոնը այս խնդրանքը, Կ. խաչի ներկայացուցիչները համաձայնեցի՞ն նվերները տանել քաղաքական վտարանդիի երեխաների համար, համանման այլ հարցեր մնում են՝ անպատասխան:

Հասկանալիորեն դժվար էր տանում հայրենի եզերքի ու հարազատների կարոտը: Հուշի մի պատահիկ տեսանելի է դարձնում այդ կարոտը. «Օտտ ատեն հավաքություններում պ. Աղբալյանը շատ դարդոտ երկու կարոտի երգ ուներ. ծխիկը վառած կերգեր ու արցունքները կհոսեին այտերեն վար, իրենները հիշելով...

*Ասում ես դիմացիր,
Ես ոնց դիմանամ,
Թղթիկ մ'ալ չես գրում
Դարդերդ իմանամ»¹:*

Հոգեկան տվայտանքներն ու նյութական դժվարությունները, սակայն, չէին ընկճում նրան: Ամբողջովին նվիրվում է հայապահպանության գործին:

Առաջնահերթ խնդիրը օտար ավերում հայի ազգային դիմագիծը պահպանելուն սատար կանգնելն է: Ամեն գնով, մասնավորաբար լեզվին ու կրոնին հավատարմությամբ, խաթարումից զերծ պահել ազգային դիմագիծը՝ մինչև հասնի հայրենիքում համիսբվելու երջանիկ պահը: Անվերապահորեն հավատում էր դրա հնարավորությանը: «Երբ մեր հայրենիքը ազատվի, ի՞նչ պիտի տանինք մեզի հետ, - նոր տարվա առթիվ ելույթներից մեկում հարցնում է հրապարակախոսը, - պետք է հայությունը աշխատի, որ երբ Հայաստանի ազատության զանգը հնչե, իր հետ տանի իր հոգեկան ու մտավոր հարստությունը: Պետք է հավաքվինք մեր իդեալներուն շուրջ, որոնք մեր դեմքը կպահեն հոս...²:

Դեմքը պահելու կովանները կրթությունն ու մշակույթն են: «Ի՞նչ պետք է ընենք առաջիկային» (ելույթներից մեկի վերնագիրն է): Հոնտորական հարցում չէր սա նրա համար, ամբողջական մի ծրագիր է առաջադրում՝ նյութականի համար ամենօրյա պայքարում մոռացության չտալ հոգևորը՝ «ազգային դաստիարակությունից» ու «կրթական գործի» կազմակերպումից մինչև հայագիտության զարգացում, ընդհանրապես մշակութային համակողմանի գործունեություն: Այսպես, ահա,

¹ Ալեքսանդրիայի Պողոսյան վարժարանի աշակերտներից Մարի Միխրայան Սեթյանի նամակից ուղղված «Աղբալյան բույր-եղբայրներին» (Ռուբենի տրամադրած թղթերից):

² Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 375:

ծնունդ է առնում Համագային հայ կրթական և մշակութային միությունն ստեղծելու գաղափարը, որ շուտով իրականացվեց մի խումբ նվիրյալների ջանքերով:

Նման մի գործում մեծ կիևեր «ազատ, խաղաղ և ապահով Հայաստանի մը»¹ օգնությունը: Բայց, ավաղ, հեռու է այդ օրը, մնում է հույսը սեփական ուժերի վրա դնել: Այդպես էլ եղավ: Ստեղծվեց միությունը, որ վիթխարի ծառայություններ մատուցեց ու շարունակում է մատուցել աշխարհի ծայրերում սիոված հայությանն ազգային դիմագիծը պահպանելու գործին:

Հայապահպանությանը բերած նպաստը պետք է դառնար մեկը այն չափանիշներից, որոնցով գնահատում էր հասարակական, գրական-մշակութային գործիչներին ու երևույթները («Մտածումներ ազգի և դավանանքի մասին», «Տարեկից», «Ես ծեր եմ արդեն և ասում եմ երիտասարդ հոգիներում» հոդվածները, Բ. Կանաչյանի «քառասնամյա հորեյանի» առթիվ ուղերձը, հայ մշակույթի արմատների ու ավանդույթների մասին դասախոսությունը և այլ ելույթներ): Այլադավանության խնդիրը քննելով «գաղթաշխարհում» հայ ապրելու գերագույն ճիգի տեսանկյունից, անվանի հրապարակախոսը հատուկ ընդգծում էր. «Կրոնը մարդու կապն է իր Աստծո հետ, իսկ ազգությունը մարդու կապն է իր հայրենիքի և մշակույթի հետ»²: Դավանանքները կարող են մեկից ավելի լինել, մինչդեռ ազգությունը մեկն է: Սեփական հոգին փրկելու ձգտումը չպետք է խոտորնակի ընթանա ազգի միասնությունը պահպանելու, ազգը փրկելու ձգտումին: Օտար երկիւնքների տակ և օտար մշակույթների գրկում հայ մնալու, հայ ապրելու, սերունդը հայ պահելու ուժգին գագցումն է, որպիտի համախըմբի զանգվածներին, որովհետև անհատների ճիգերը, որ-

¹Նույն տեղում, էջ 360:

²«Վեմ», Փարիզ, 1938, իր, էջ 5:

քան էլ գովելի, դատապարտված են փլուզման: «Միայն միատեսակ տենչ ու կամք ստեղծելով զանգվածների մեջ կարելի է կղզիացած հայությունն պահել օտար ազգերի ծովերում»¹: Այս նպատակի իրականացման գորավոր միջոցը հայոց լեզուն է: «Այլադավան հայերի համար հայոց լեզուն բավական կապ է իր ազգությունը պահելու համար. ուստի անհրաժեշտ է, որ նրանց կրթությունը և պաշտամունքը հայոց լեզվով կատարվին»²: Ուժացման ահռելի վտանգի հանդեպ հուսալի վահան կարող է լինել նաև հայ երգը, հայ մշակույթը: «Ոչինչ կարող էր միացնել կոտորակված հայությունը,- Բարսեղ Կանաչյանին հղած ուղերձում խոստովանում է Աղբալյանը,- քան միևնույն հայ երգը, որ ներդաշնում է բազմազան ոգիներ և միապես հուզում է այլամետ սրտեր»³:

Հայրենիքի և գաղթաշխարհի սերտ կապերի ստեղծումը, փոխադարձ ազդեցությունները, շփումները հուզում էին Աղբալյանին: Ցանկանաք մենք, թե ոչ, պատմությունը հայերին երկու մեծ մասերի է բաժանել՝ «դուրսի և ներսի»: Հեռավորությունն ու տարաբնույթ սահմանները չպետք է խանգարեն համատեղ ու ներդաշնակ ազգայնանվեր գործունեությանը, որովհետև «Դրսի և ներսի Հայությունը նույն մշակույթի ժառանգներն են և նույն անցյալի զավակները. պատմականորեն լինելով ժառանգակից՝ գործնապես ու ներկայիս պետք է լինին գործակից և միասնաբար պահեն ու շահեցնեն հանր ժառանգությունը»⁴: Այնուամենայնիվ «նորաշինվող» հայրենիքն է ոչ միայն ազգային ինքնատիպ արվեստի ներշնչանքը, այլև «հայեցի հոգով և հայաշունչ գործով» հայտնի արվեստագետների հանգրվանը: Ահա թե ինչու Բ. Կանաչյանի հորեյանին հղած ուղերձում հետևյալ

¹Նույն տեղում, էջ 2:

²Նույն տեղում, էջ 3:

³«Ազդարար», Բեյրութ, 8-ը հունիսի, 1946, էջ 5:

⁴«Ազդարար», Բեյրութ, 30-ը նոյեմբերի, 1946, էջ 3:

ցանկությունն է հայտնում. «Իցիվ թե այս փառաշուք հանդեսի արձագանքը հասնի Հայաստան և դու, բարեկամ, հրավիրվիս ապրելու այնտեղ, որի մեծարժեք քաղաքացին ես արդեն քո հայեցի հոգով և հայաշունչ գործով: Այն ժամանակ այս փառաշուք հանդեսը կդառնար մի համեստ նախատոնակ այն մեծաշուք հանդեսի, որ կկազմակերպեր Հայաստանի երաժշտական աշխարհը հայ երգի և դաշնակության վարպետի պատվին: Ամեն, եղիցի, եղիցի»¹:

«Օտար ազգերի ծովերում» հայության բեկորները հայ պահելու համար ոչ միայն ազգային ինքնատիպ մշակույթ պետք է ունենալ և փարած լինել հայոց լեզվի ամենագոր օգնությանը, այլև պետք է կարողանալ վեր բարձրանալ «հացի խնդրի» ու վայելքների տենչերից և կյանքը ապրել «ոգեկան վերելքի համար», որ նշանակում է գործունեության ելակետ ունենալ ժողովրդի ու հայրենիքի ապագան: «Ես ծեր եմ արդեն և ասում եմ երիտասարդ հոգիներուն».
«Ուտող ու վայելող երկուտանու վիճակից վերանալ դեպի մարդը սավառնող, այս պետք է լինի երիտասարդության հոգն ու ճիգը, որովհետև այս է նրա կոչումը տիեզերքի մեջ»²:

Հայագիտությունը նրա հիմնական սերն էր, որին միշտ անդավաճան մնաց: Մեծ նվիրումով հայոց լեզու և գրականություն դասավանդեց դպրոցներում ու կոլեջներում, առանց հոգնելու տարաբնույթ դահլիճներում անհաշիվ ելույթներ ունեցավ հայ գրականության բոլոր շրջանների վերաբերյալ անխտիր, գրեց բազմաթիվ հոդվածներ, գրախոսականներ, «ռեպլիկներ»: Հրատարակեց գիտական լուրջ արժեք ներկայացնող հետազոտություններ ու մեծագրություններ: Հայտնի է նրա տևական հետաքրքրությունը Սայաթ-Նովայի անձի ու ստեղ-

¹ «Ազդարար», Բեյրութ, 1946, 8-ը հունիսի, էջ 8:

² «Ազդարար» Բեյրութ, 1945, 29-ը դեկտեմբերի, N 165:

ծագործության հանդեպ: Դարասկզբին աջակցելով մեծ սիրահարի ու հումանիստի ժառանգությունը մասսայականացնելու ուղղությամբ Հովհ. Թումանյանի ջանքերին, արտասահմանում սկսեց, ավաղ, ավարտի չհասցնելով, նրա ստեղծագործության համակողմանի քննությունը, իր տեսակի մեջ բանասիրական եզակի մի աշխատանք, որտեղ զարմանալի ներդաշնակությամբ դրսևորվում են Աղբալյանի գրականագիտական, լեզվաբանական, ազգագրական, բանասիրական կարողությունները: Ամփոփելով տարիների իր հետազոտությունները՝ դասախոսությունների շարք կարդաց հայ գրականության հազարամյա ուղու վերաբերյալ: Այս նյութերի հիման վրա 1944-ին Բեյրութում լույս տեսավ «Պատմություն հայոց գրականության» ուշագրավ գիրքը: Այսօր անգամ իր հետաքրքրությունը չի կորցրել 1937-1938 թթ. հրատարակած «Բանասերի հուշագիրը» պրակների շարքը, ուր զետեղված են հայոց ձայնավորների ու բաղաձայնների մասին զննումները, մի շարք ստուգաբանություններ (բազմաթիվ ստուգաբանություններ ցրված են պարբերական մամուլի էջերում): Պրակները լույս տեսան ընկերների, բարեկամների, սակավ ընթերցողների նվիրատվություններով: Ավելորդ է ասել, լեզվասեր բարեկամներիս և ընկերներիս ուղերձում զգուշացնում է հեղինակը, թե աշխատանքիս համար ոչ մեկ դրամ կհանվի այդ գումարից (նվիրատվություններից. - Գ. Ա.): Հրատարակված պրակների ամբողջ պահեստն ու մնացորդ գումարը պիտի մնա Համազգային ընկերության»¹: «Հուշագիրը» մի մասն էր հայոց լեզվի մասին այն գրքի, որ տարիների ընթացքում մտքում փայփայել էր բանասերը: «Տարիներս անցած են, փոքրիկ առաջաբանում ցավով հիշում է նա, մտավորական երկարատև ճիգը հոգնություն է բերած և հին ու օտար լեզուների

¹ Ն. Աղբալյան, Բանասերի հուշագիրը, պր. Ա., Բեյրութ, 1937, էջ 19:

անագան ծանոթությունս կասեցնում է վստահությունս»։ Բայց քանի որ տարիների ընթացքում «տաշած եմ քարեր և հավաքած եմ ատաղձ», ուստի անհրաժեշտ եմ համարում հրատարակել դրանք, խնդրելով գալիք բանասերներից, ովքեր կօգտվեն այդ նյութերից, «չմոռանան հիշատակել հավաքողին»¹։ «Չմոռանան հիշատակել հավաքողին»... Դժվար տարիներին մոռացանք հիշել «հավաքողին» և ոչ միայն նրան։

Մեծ հայը մահկանացուն կնքեց 1947-ին, «նորաշինվող» հայրենիքի անափ կարողը սրտում։ Որքան բնորոշ է Իսահակյանի 70-ամյա հոբելյանի առիթով այս խոստովանությունը. «Թույլ տվեք հիմա անձնական տենչանք մը արտահայտեմ, որ հուսամ թե նաև ձերն ըլլա։ Կուգեի, որ հիմա գարուն լիներ, ապրիլ, և մենք մտած ըլլայինք Ավ. Իսահակյանի հայրենի գյուղին մեջ, Ախուրյանի ափին։ Բայց ոչ։ Նախ Արաքսի ափը տղմոտ է և հետո դիմացը դարձյալ նույն տաճիկն է՝ կլափն արյունոտ։ Լինեի՞նք Երևան, Հրազդանի ափին (այս գետը մերն է ծայրեծայր)։ Գետեն ձուկ լիներ հանած, խաշած ու դրած սեղանին. լիներ Երևանի թունդ գինին։ Չուռնաչին Ավ. Իսահակյանի երգերից մեկը նվագեր նեյի վրա և թմբկահարը մատերի հարվածով ընկերանար նվագին։ Լցնեի՞նք բաժակներն ու կանչեի՞նք. «Ավո ջան, քու կեցանքը, շատ ապրես հայոց ազգի համար, երգդ անսպառ, հասար մուրազիդ։ Բայց... հասա՞վ արդոք։ Հիսուն տարի առաջ, երբ մենք երիտասարդ էինք, Հայաստան ըսելով մեր մտքեն բնավ չէր անցներ Երևան ու Սևան։ Մեր միտքը կթռչեր Կարին, Մուշ ու Վան»²։

¹Նույն տեղում, էջ 1:

²Ազդարար, Բեյրութ, 1946, N 171:

ՔՆՆԱԴԱՍԸ

1

Լայն են Ադրայան-քննադատի հետաքրքրության շրջանակները։ Նրա որոնող միտքը թևածում է հայ գրականության բոլոր դարերում՝ ժողովրդական բանահյուսությունից մինչև ընթացիկ գեղարվեստական զարգացում։ Գրականության պատմաբանը, գրական քննադատն ու տեսաբանը հաճելի ներդաշնակություն են կազմում նրա կերպարում։ Տեսության խնդիրների շուրջ հողվածներ չի գրել, բայց նրա աշխատանքները ոչ միայն գրված են ժամանակի տեսական մտքի նվաճումների հաշտումով, այլև հագեցած են տեսությամբ։

Նաև հարուստ է նրա գրական - քննադատական ժառանգությունը։ Զարմանալի մի անփութությամբ չի մտածել գրածը հավաքելու և հրատարակելու մասին։ Միակ փորձը անկատար մնաց. հայտնի հրատարակիչ Մ. Էփրիկյանը պատրաստվում էր հրատարակել նրա գրադատականները, բայց խորհրդային կարգերի հաստատումը կանխեց գրքի հրատարակ գալը։ Վերակառուցման տարիներին հնարավոր եղավ պլանավորել երկերի եռահատոր հրատարակություն, այս անգամ էլ երրորդ հանրապետության ծնունդը խափանեց տպագրությունը։ Առաջին հերթին հասարակական գործունեությամբ զբաղվելու պարտադրանքով պայմանավորված այս «անփութությունը» տեղիք է տվել անհիմն պնդումների, թե օժտված քննադատի կարողություններն ու ստեղծածը անհամեմատելի են։ Սա դեռ ոչինչ, կարծիք է հայտնվել, թե նա ընդամենը տաղանդավոր «սիրող» էր... Եվ սա ասվում է մի քննադատի մասին, որի հողվածներն ու ուսումնասիրությունները ստվար հատորներ կարող են կազմել, որի «գրադատականները» և հե-

տագոտությունները հայ գրականության գրեթե բոլոր նշանավոր և գրական նշանակալից երևույթների վերաբերյալ այսօր իսկ պահպանում են իրենց գիտական արժեքը:

Ահա այսպիսի բեղուն և երկարակյաց «սիրող»...

Ավելացրեք սրան հայոց լեզվին նվիրած լեզվաբանական ուսումնասիրություններն ու աշխատությունները, որոնց մի փոքր մասն է միայն հրատարակել «Բանասերի հուշատետրի» պրակներում, մեր պատմության ու մշակույթի բազմաթիվ առանցքային խնդիրների լուսաբանումներն ու կոահումները, և ձեր առջև կհառնի համակողմանի հետաքրքրությունների տեր և բեղուն դասականը:

Դարասկզբին գրական քննադատությունը բուռն զարգացում ունեցավ: Աղբալյանը նշում է դրա մի քանի պատճառներ՝ գրերի գյուտի և տպագրության հոբելյանին նվիրված հանդեսներ, առավելապես՝ Կովկասի հայ գրողների ընկերության՝ պարբերաբար կազմակերպվող և խիստ մարդաշատ երեկույթները: «Ոչ մի ժամանակ մեզանում այնքան գրական գնահատականներ, քննադատություններ չեն եղած, ինչպես մեր օրերում»¹: Որակական նոր աստիճանը բնութագրվում է ոչ միայն «պատմական հոլովույթի» մեջ անցյալ ու ներկա հեղինակների նորովի մեկնաբանությամբ, գեղարվեստական զարգացման շրջանների իմաստավորման ձգտումով, այլև հասարակական գիտակցության մյուս ձևերի վրա որոշակիորեն ներգործելու փաստով: Գրական քննադատությունը, այսպիսով, իր վրա է առնում հասարակական միտքը արթնացնելու դերը: Նա ժամանակակից հայացքը բնեռում է ոչ միայն գրական, այլև «կյանքի հարուցած երևույթներին» ու խնդիրներին: Այս ամենը խթանում են ազգային ինքնագիտակցության արթնացումը:

¹Հորիզոն, 1913, N 35:

Մի ուրիշ առիթով ընդգծում էր գրականության պատմությանը, ընթացիկ քննադատությանն ու գրականության տեսությանը զարկ տալու, այլ ժողովուրդների գրականություններին ծանոթանալու անհրաժեշտությունը: Առանձին մեծարժեք գործերի հետ միասին պետք է թարգմանաբար տպագրել նաև «գրականության պատմություններ... և գրական երկերի վերլուծություններ: Ծատ օգտակար կլինեին նաև համառոտ, բայց հմտալից տեսություններ օտար գրական հոսանքների մասին»¹: Հետաքրքիր է, որ նրա հայացքը կանգ է առնում Բրանդեսի և Կոզանի աշխատությունների վրա, որոնց թարգմանությունները «նոր աշխարհ կբանային հայ ընթերցողի առաջ»: «Գրականություն, գրականության պատմություն և գրական-քննադատություն, այսպիսով կլրացնեին իրար և... կբարձրացնեին մեր գրական կրթության մակերևույթը»²:

Աղբալյանը ներկայացուցիչն էր մի սերնդի, որի բարոյականությունը հեմվում է առաջադրած խնդիրները կյանքում անձնական օրինակով իրագործելու անհրաժեշտությանը: Ապացույցներից մեկն էլ այն, որ թարգմանեց «Փոխառումները գրականության մեջ» (Հորիզոն, 1914, N 56), «Հնդիկ իմաստասիրության գանձարանից» (Հորիզոն, 1914, N 75) հոդվածները, նմուշներ համաշխարհային գրականությունից ու նրանց մասին հոդվածներ՝ Ա. Ֆրանսի «Երեք դար ու կես հետո» (Հորիզոն, 1913, նո. 66), «Շեքսպիր և Սերվանտես» (Հորիզոն, 1916, N 95), «Սըր Ջոն Ֆլյուտաֆը և Դոն Կիխոտ Լամանչեցին» (Հորիզոն, 1916, N N 92, 98):

Գրականությունն ու քննադատությունը նրա համար ժողովրդի ազատագրության մեծ նպատակին ծառայելու եղանակներ էին, հանգամանք, որ սրում էր նրա ուշադ-

¹Հորիզոն 1912, N 238:

²Նույն տեղում:

րությունը հատկապես այնպիսի գրական երևույթների նկատմամբ, որոնք խտացնում էին անձնագոհությունը, անմնացորդ նվիրումը, ազատության ու ճշմարտության համար նահատակությունը: Ծապոնական գրականությունից մի թարգմանություն, ուր հերոսը սեփական երեխային զոհում է... տիրոջ երեխային փրկելու համար, նրան գրավում է «ատող հոգեբանության, երկաթե հավատարմության, ամբողջական բնավորության և աներեր վճռականության համար, որը հարկադրում է մարդուն թողնել ամեն ինչ և գնալ պարտականության ձայնի ետևից»¹: 1900-1910-ական թվականներին նրա հոդվածների համար սկզբունքային էլակետ է ծառայել սա: Ծատ բնորոշ է, ահա, Լև Տոլստոյի օրինակը: Նշելով հանդերձ այն անպարփակելի մեծությունը, որ կոչվում է Տոլստոյ, մասնավորապես շեշտում է. «Պետք է լինել նրա պես ճշմարտության ծարավի, կյանքի իմաստը որոնող և մեզ համար ամենաթանկ բանն այս աշխարհում ճշմարտության համար զոհաբերող»²:

Աղբայլանն ստեղծել է ամբողջական մի համակարգ, որն ունի իր ուղղությունը, ներքին օրինաչափությունները, գեղարվեստական զարգացման օրինաչափությունների վերլուծության ու գրական փաստերի գնահատության իր հետևողական մեթոդը:

Նա մեծապես նպաստեց քննադատության մեջ գիտական չափանիշների արմատավորմանը: Իսկական քննադատության առաջին պայմանը, ըստ նրա, անհերքելի ապացույցն է. «Պիտի փաստերով երևան գալ և ոչ խոսքերով»: Սա մասնավոր պնդում չէր, այլ սկզբունք, որ քննադատը հաստատում էր ամենօրյա փորձով: Բարձր գնահատելով Իսահակյանի առաջին ժողովածուն նրա քննարկությունը ինչպես բովանդակության, այն-

¹Հորիզոն, 1913, N 155:

²Ջանգակ, 1908, N 46:

պես էլ ձևի տեսակետից աննախադեպ էր համարում մեր գրականության մեջ: Ոմն Հ. Ծահնագարյան առարկում է նրան՝ պարզապես հայտարարելով, թե, իբր, երիտասարդ բանաստեղծը ձևի և «տեղեկնցիայի, գաղափարների» տեսանկյունից կրկնում է այն «մի շարք բանաստեղծներ (ին), որոնք Իսահակյանից առաջ են երևացել մեր գրականության հորիզոնի վրա»: Ոչ մի համեմատություն, ոչ մի անուն, ոչ մի փաստ: Այսպիսի քննադատությունը համարելով «անպտուղ»՝ գրում է. «Ի՞նչն է մեր հանցանքը. որ ասել ենք, թե Իսահակյանը... եղածներից ոչ ոքի նման չէ՞»: Այն ժամանակ թող մեզ առարկողն ապացուցի, թե նա մեր «մի շարք բանաստեղծներից» այսինչի նման է... Կարդացի՛ք: Որ ի՞նչ. հերքվե՞ց մեր պնդումը, թե Ավ. Իսահակյանը ինքնուրույն գրող է. ամենևին: Խոսքեր ասվեցին և հեզմախառն զարմանք արտահայտվեց. բայց խոսքերն ու զարմանքն ապացույց են: Այդպես առարկելն ու հերքելը շատ հեշտ է ու շատ էլ սովորական. բայց և անօգուտ է և ուսանելի չէ...»: Պետք է «մեկնել հեղինակի գործերը... վերլուծել, համադրել, բնորոշել տաղանդի հատկությունները և նրա արգասիքը»¹:

Ե. պատրիարք Դուրյանի «Ամբողջական երկերի» ընդարձակ գրախոսականում հատուկ շեշտում է, որ ապացուցել, գիտական աշխատանք կատարել, նշանակում է տվյալ նյութի, առարկայի շուրջը ունենալ որոշակի ըմբռնում, հայացք և այդ ըմբռնումն ու հայացքը շարադրելու որոշակի եղանակ: «Գիտունին գիտուն դարձնում է գիտական մտածումն ու մեթոդը»,- հակիրճ ու ճիշտ ձևակերպում է նա իր միտքը²: Միմչդեո «հայոց գրականության մեջ արմատացած է ճարտասանական մտայնություն, որ աշխատում է ոճով ու ոլորուն գրել

¹Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 287:

²Նույն տեղում, էջ 434:

առանց հոգալու մտածումների պայծառության, կարծիքների հիմնավորման, դատումների և գաղափարների ճշգրիտ բանաձևումի մասին: Նրան խորթ է գիտական ուղին: Նա հետամուտ է բառերի ներդաշնակ հնչումին, պարբերությանց ախորժ թավալումին, առանց անդրադառնալու, որ հստակ ու որոշ գաղափարների տրամաբանական ներդաշնակության մեջ է դատողական ոճի գեղեցկությունը: Սա մի չարիք է, ինչպես չարիք են ախորժելի արբեցուցիչները: Բառ ու պարբերություն շոյում են ականջը ու թմրացնում միտքը: Սառն ու չոր դատումները խոցում են այդ մտայնության տերերի նրբազգացությունը, որ սիրում է անորոշի ու անծիրի շոյիչ ոլորտը»¹:

Նրա քննադատական գործունեությունը իր իսկ առաջադրած տեսական-մեթոդաբանական սկզբունքի կիրառությունը եղավ:

Նկատված է, որ «Ն. Աղբալյանի գրականագիտական ըմբռնումները ձևավորվեցին տարբեր գաղափարական գործոնների ազդեցության տակ, բայց հիմնականը Օ. Կոնտի պոզիտիվիստական իմաստասիրությունն էր և Հ. Տենի ու Ա. Պիպինի կուլտուրա-պատմական ուսմունքը... Որոշակի է նաև ռուսական դեմոկրատական քննադատության, արվեստի ժողովրդայնության և քաղաքացիականության սկզբունքների ազդեցությունը Աղբալյանի հայացքների վրա...»²: Իսկապես, Աղբալյան-քննադատի հայացքներն ակնհայտորեն ձևավորվել են ռուսական առաջադիմական գրականության ու քննադատության բարերար ազդեցությամբ: Դա խոստովանել է նաև ինքը:

Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուի կապակցությամբ գրած հոդվածում, ինչպես նաև այլ առիթներով գրականության ժողովրդայնության հարցը քննելիս, նա ուղղակիորեն ելնում է ռուս հեղափոխական դեմոկրատների, մասնավորապես Վ. Բելիմսկու տեսական սկզբունքներից: Անշուշտ, Աղբալյանը չի հասնում գրականության ժողովրդայնության և գրողի դեմոկրատական աշխարհայացքի անմիջական կապի հիմնական գաղափարին: Բայց ժողովրդայնությունը՝ իբրև ստեղծագործության ազգային ինքնատիպության և գրողի անհատական անկրկնելիության կարևոր ցուցանիշ, դիտում ու մեկնաբանում է բելիմսկիական դիրքերից:

Աղբալյանի քննադատական ժառանգությունը դիտարկելով առավելապես կուլտուրա-պատմական դպրոցի շրջանակներում՝ անհրաժեշտ է հենց սկզբից նկատի ունենալ մի էական հանգամանք: Հայտնի է, որ այդ դպրոցի ներկայացուցիչները հասարակական կյանքի և գրականության կապը քննում էին վերջինիս յուրահատկությունների անտեսմամբ, շրջանցելով անցման բազմաթիվ օղակները՝ կենսական փաստի և դրա գեղարվեստական համարժեքի միջև: Ընդունելով հանդերձ գեղարվեստական գրականության՝ իբրև մտածողության տեսակի, յուրահատկությունները, չմերժելով գրականության զարգացման ներքին օրինաչափությունների գոյությունը, այնուամենայնիվ ուշադրություն չէին դարձնում այդ յուրահատկությունների ու օրինաչափությունների բացահայտմանը: Նրանց համար ոչ թե հասարակության պատմությունն է հիմք՝ գրական երևույթների մեկնաբանման համար, այլ՝ հակառակը:

«Огромная, четырехтомная "История русской литературы", действительно, прежде всего излагала пипинскую концепцию русской истории и истории русской культуры, она переполнена сведениями по

¹Նույն տեղում, էջ 444-445:

²«Հայ նոր գրականության պատմություն», հ. V, Երևան, 1979, էջ 163:

истории русского просвещения, науки, книги, публицистики, истории религии и церкви»¹.

Այս ծայրահեղությունը Աղբալյանի մոտ մասնակի բացատրություններով դրսևորվեց: «Սվիֆտ Ջոաթան, «Գուլիվերի ճանապարհորդությունը» հոդվածում, օրինակ, ոչ այնքան մեծ երգիծաբանի երկն է վերլուծում, որքան նրա միջոցով ներկայացնում է նկարագրվող ժամանակաշրջանի Անգլիայի իրականությունը: Բնորոշը նրա առաջին հոդվածների համար գրականության՝ իբրև մտածողության եղանակի, հարաբերական ինքնուրույնության, գիտակցության մյուս ձևերից սկզբունքային տարբերության ընդգծումն է, այդ տարբերությունները բացահայտելու ձգտումը:

Երկի գեղարվեստական խնդիրներին մեզանում թերևս ոչ ոք այնքան ուշադրություն չի դարձրել, որքան Աղբալյանը: Այս հանգամանքը նրան զգալիորեն հեռացնում է կուլտուր-պատմական դպրոցից և մերձեցնում ռուսական դեմոկրատական քննադատությանը, առաջին հերթին Վ. Բելինսկու գեղագիտությանը: 1900-1910-ական թվականների նրա լավագույն հոդվածները արդեն չեն տեղավորվում կուլտուր-պատմական դպրոցի շրջանակներում. դրանք հիշեցնում են ռուս գրականության դասական արժեքների բելինսկիական վերլուծությունները: Հետաքրքիր է, որ Թումանյանի «Վերնատանը» նրան ուղղակի «հայկական Բելինսկի» էին անվանում:

Աղբալյանը լավ գիտեր ոչ միայն Հ. Տենի «եռանդամ բանաձևը», այլև նրա ժառանգությունը. «Русское богатство» - ի 1897 թ. 4-րդ համարի մի հոդվածի առումով այսպիսի նշում է կատարում. «1-ին գլուխը Դեֆոյի, Սվիֆտի և <Յունյուսի> մասին, կարծես Տենի գրքից»:

¹ Академические школы в русской литературоведении, Москва, 1975, стр.116.

Խորապես գիտակցում էր նաև, թե ինչպիսի մեթոդական սխալի կարող է հանգեցնել այդ բանաձևի ուղղագիծ կիրառությունը քննադատության մեջ: 1913-ին գրախոսելով Լ. Շանթին նվիրված մի գրքույկ՝ գրում է. «Հետևելով Հ. Տենի եռանդամ բանաձևին, ըստ որում մի հեղինակի երկերը հասկանալու համար պետք է նկատի առնել ցեղը, որին պատկանում է նա, միջավայրը, ուր ապրել է, և ժամանակը, երբ երևացել են նրա երկերը... հեղինակն այդ տեսությունը գործադրում է... մի էջի մեջ: Շանթը պատկանում է հայ ցեղին... Շանթն ապրել է կովկաս ու Պոլիս: Նա ստեղծագործել է վերջին 20-25 տարիների ընթացքում:

Այսպիսով, Տենի ասած «ցեղը» այստեղ դառնում է մի պարզ հիշատակություն, «միջավայրը»՝ աշխարհագրական անուններ, իսկ «ժամանակը՝ տարիների սահմանում»¹: Աղբալյանը ելնում էր սեփական քննադատական փորձից: Դեռևս երկու տասնամյակ առաջ այդ մեթոդն ինքը հաջողությամբ կիրառել էր նույն Լ. Շանթի «Երազ օրեր» վիպակին նվիրված ընդարձակ հոդվածում: Գլխավոր հերոսների մասին խոսելիս, օրինակ, նա հատուկ ուշադրություն է դարձնում այն միջավայրին, ուր նրանք ձևավորվել են: Նրանց հոգեբանության ու գործելակերպի բոլոր հիմնական որոշիչները քննադատը ձգտում է բացատրել շրջապատող ընտանեկան, դպրոցական, հասարակական մթնոլորտով: Նկատելով, որ «Վարդուհին բուն հայ հասարակությունից ու երկրից օտարացած մի շրջանի զավակ է... Այդ շրջանը այնպիսի շրջան չէ, որի զավակները ցանկալի ուղղության ու մտքերի տեր լինեն»², այնուհետև մանրամասնորեն գծում է այդ միջավայրի պատկերը, բացում ազգային ու հասարակական կյանքի նկատմամբ հերոսուհու ան-

¹ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. II, էջ 31-32:

² «Մուրճ», 1896, N 12, էջ 1608:

տարբերության, բարոյական սնանկության, «լայն և հանրաշահ իդեալներից զուրկ» լինելու հասարակական հիմքը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Վարդուհուն ծնած ու սնած միջավայրի պատկերը Աղբալյանի գրախոսականում շատ ավելի ամբողջական է, քան Ծանթի «վեպիկում», քննադատը շատ ավելին է տեսնում, քան Ակարագրել է գրողը:

Մյուս հերոսներին բնութագրելիս ևս քննադատն ընդգծում է նրանց սոցիալական ծագման, շրջապատի դերը՝ լայնացնելով արձակագրի Ակատածն ու «մակաբերելով» չնկատածը:

Կուլտուր-պատմական դպրոցի այս սկզբունքը Աղբալյանը հաջողությամբ կիրառել է նաև Սայաթ-Նովայի տաղերի մեկնաբանության մեջ: «Մի քանի հարմարությունների» շարքում, որոնք արդարացնում են Սայաթ-Նովայի ստեղծագործությամբ զբաղվելու իր «հանդրգնությունը», նա առաջին հերթին նշում է «համակովկասյան» դեմքի ապրած միջավայրի խոր իմացությունը. «Ես ծնած ու մեծցած եմ նույն այն քաղաքի - Թիֆլիս- և նույն այն թաղի մեջ- Հավլաբար, ուր ծնած և ապրած է Սայաթ-Նովան... Իմ մանկության շրջանին Թիֆլիսը դեռ պահում էր շատ հին հետքեր անցյալ շրջանից և իմ տեսած նիստ ու կացը չէր հեռացած արքայական շրջանի Թիֆլիսի կյանքից... Ժողովրդի կյանքը նոր միայն սկսած էր փոխվիլ և նիստ ու կացը դեռ շատ հնամենի էր»¹: Այնուհետև շատ մանրամասն և ընդարձակ Ակարագրվում է այդ «նիստ ու կացը», վերստեղծվում այն իրականության պատկերը, ուր գրվել են Սայաթ-Նովայի տաղերը: Այս ամենը քննադատը հմտորեն օգտագործում է՝ տաղերի հետ կապված զուտ գեղարվեստական խնդիրները լուծելիս:

Ծանթի հերոսների մարդկային Ակարագիրը տալիս առաջադրում է մի այլ կանխադրույթ, որը դարձյալ առնչվում է կուլտուր-պատմական դպրոցի, Հ. Տենի «եռանդամ բանաձևի» սկզբունքներին. «Որևէ անձնավորության մենք այն չափով ենք համակրում, որ չափով նա մոտենում է մարդու մասին ունեցած գիտակցական կամ անգիտակցական իդեալին»¹:

Այս ամենով հանդերձ Աղբալյանի՝ մասնավորապես 90-ական թվականների հողվածներում տիրապետող միայն կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքները չեն: Այդ շրջանի նրա լավագույն քննադատական ելույթներում առավելապես զգալի է հոգեբանական ուղղության շունչն ու ոգին:

Հ. Տենի «եռանդամ բանաձևի» սխեմատիկ գործածության դեմ բողոքելիս արդեն հիշված հողվածում քննադատն ընդգծում էր. «Հեղինակը ծանոթ է նաև այն առարկության, որ անում են Տենի մեթոդի դեմ, ասելով, թե արվեստագետների անհատականությունը Տենը հաշվի չի առնում»²: Առաջ տանելով իր միտքը՝ այնուհետև Ակատում է, թե արվեստագետի անհատականությունը հաշվի առնել չի նշանակում միայն շարադրել նրա «համառոտ կենսագրականը», ինչպես վարվել էր քննադատվող հողվածի հեղինակը: Ի հակակշիռ կուլտուր-պատմական դպրոցի՝ հոգեբանական դպրոցի ներկայացուցիչները, մշակութային խնդիրներ քննելիս, հատուկ տեղ էին հատկացնում ստեղծագործող անհատի հոգեբանական խառնվածքին: Անհատն, այո, կրում է միջավայրի ազդեցությունը, բայց ինչոր տեղ էլ այդ միջավայրից անկախ, միջավայրով չպայմանավորված երևույթ է:

Հոգեբանական ուղղությունը մեզանում լայն տարածում ստացավ հատկապես դարասկզբին: Սակայն Աղ-

¹ «Մուրճ», 1896, N 12, էջ 1611:

² Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 32:

¹ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. II, էջ 17:

բայյանի հակվածությունը՝ դեպի գեղարվեստական երկույթների հոգեբանական վերլուծությունը, ակնհայտ էր արդեն 90-ական թվականներին: Այս կամ այն որոշակի ստեղծագործության վերաբերյալ իր դիտարկումները քննադատն աշխատում է հիմնավորել հեղինակի բնութագրումներով: Ծատ դեպքերում նա նույնիսկ ընդգծում է իր մեթոդաբանական ելակետը:

Այսպես, օրինակ, Ավ. Իսահակյանի առաջին ժողովածուի գրախոսականում կարդում ենք. «Բայց մեզ հարկավոր է բանաստեղծի հոգին ուրվագծել այստեղ: Ահա ձեզ մի հարուստ, բազմակողմանի և տարօրինակ ու բնուրույն հոգեկան կազմ:

Նա իր հոգին դրել է իր գրքույկի մեջ. այդ հոգին մեզ երևում է մի ձյունապատ լեռան մեջ, որի ստորոտները, փեշերը լայն փռած՝ խրված են իրական կյանքի մեջ, ծածկված են արգավանդ և բերրի հողերով, մատչելի են բազմաթիվ մարդկանց, լանջը սիրուն արտատեղեր են, ուր ամենքը չեն բարձրանում, բայց ուր կարելի է բարձրանալ, իսկ զագաթը սառն է սառույցի պես և թաղված անթափանցելի մշուշում ու գորշ ամպերում... նրա հիմքը պարզ է, արմատները կենսունակ են և հյութառատ, բունը հաստատուն է, թեև սուր ու դժվարակոխ, իսկ գլուխը չոր ու անկյանք»¹: Իսահակյանի «ներքին մարդը» որոշելիս Աղբալյանը ելնում է նրա բանաստեղծությունների՝ իր համոզմամբ տարաշերտ բնույթից, իսկ բանաստեղծությունները բնութագրելիս հաշվի է առնում «բանաստեղծի հոգու»՝ իր գծած պատկերը: Իսահակյանի «հոգեկան կազմին» տված պատկերավոր բնութագրումը քննադատը երեք շերտի է բաժանում. ա) բանաստեղծը ժողովրդի հետ է, և այս դեպքում նա ուժեղ է ու ինքնուրույն, բ) անձնական տրամադրություններ երգելիս «նրան հակակրողների օղակը նե-

¹ «Մուրճ», 1898, N 6, էջ 844:

ղանում է... գ) բանաստեղծը շատ է հեռանում իրականությունից, «սառը բարձունքներում» նրա ձայնը կորցնում է իր բնականությունը, «զգացմունքները անորոշ են դառնում ու ցուրտ»: Անկախ այս ամենից, սակայն, նա հրաշալի բացահայտում է Ավ. Իսահակյանի բերած հսկայական նորությունները, մասնավորապես նրա խոր ժողովրդայնությունը:

Վ. Գ. Բելինսկու մահվան հիսնամյակի առթիվ գրած հոդվածում, «Դմիտրի Կալինին» ողբերգությունը գնահատելուց առաջ, նախապես պարզում է իր ելակետային սկզբունքը. «նախքան այդ՝ մի քանի գծեր նրա այն ժամանակվա հոգեկան կյանքից»¹:

Տարիներ հետո նույն մեթոդը հաջողությամբ կիրառելու էր Սայաթ-Նովային նվիրված մի գեկուցման մեջ՝ «նախ ներքին մարդու մասին կուզեմ խոսիլ»: Ինչպես մյուս դեպքերում, այստեղ էլ քննադատը տարրալուծում է իրեն այնքան սիրելի աշուղի «հոգեկան կազմը»: Սայաթ-Նովան քննադատին ներկայանում է իբրև «ներքուստ պառակտված հոգի»: Այս տեսանկյունից էլ քննվում են տաղերը:

Վ. Գարշինի ստեղծագործությունները քննվում են հեղինակի հիվանդագին անհատականության ազդեցության տեսանկյունից:

Հոգեբանական դպրոցի ազդեցությամբ պետք է բացատրել Աղբալյանի հոդվածներում անընդհատ կրկնվող այն միտքը, թե գրականությունը ազգային ոգու արտահայտությունն է. «Գրականությունը մարդկային հոգու գրավոր արտահայտությունն է որևէ լեզվով»²: Սակայն Աղբալյանը արվեստում չէր բացարձակաճանցնում մարդկային կամ ազգային հոգեբանության նշանակությունը, այլ դիտում էր այն իբրև հետևանք «ընկերա-

¹ «Մուրճ», 1898 N 6, էջ 810:

² Ն. Աղբալյան, «Ամբողջական երկեր» հ. IV, էջ 14:

յին կյանքի»։ «Ո՞րն է այն հիմնական երևույթը, որի հուլովման փուլերը անդրադառնում են մարդու հոգեկան աշխարհի մեջ և շարժում են այդ ներքին աշխարհը իրենց ընթացքին զուգահեռ։ Ընկերական կյանքն է դա և իր հուլովույթը»¹։

Հոգեբանական ուղղության հանդեպ հետաքրքրությունների առումով ուշագրավ է նրա մի գրառումը։ Կրսւտեր որդու՝ Ռուբենի փրկած թղթերում պահպանվել են «Русское богатство» (1876-1918) ամսագրի 1897թ. - մի քանի համարների մշակումները։ Նա սովորույթ ուներ մեծ լուսանցք թողնել, ուր նշում էր ընթացիկ նյութի հիմնական խնդիրը, առարկան։ Ահա էջերից մեկի լուսանցքում կարդում ենք՝ «Աոր հոսանքներ քննադատության մեջ»։ Ամսագրում կարդալով (N 3), ոմն Горнфельд - ի «Критика и лирика» հոդվածը, կատարում է հետևյալ նշումը. «Վերին աստիճանի աչքի ընկնող հոդված իր տված Աոր տեղեկություններով և մտքերով։ Քննության է առած սուրբեկտիվ իմպրեսիոնիստական քննադատությունն ու առարկայականը և ցույց է տրված վերջինի առավելությունները։ Նկատած է, որ կազմվելու է Աոր քննադատական դպրոց, որ միացնելու է բոլոր կտորկտոր հոսանքներն ի մի օրգանական ամբողջություն. դիտած է, որ այդ ուղղությամբ քայլեր են լինում։ Ֆազե՝ Ֆրանսիայում և Օվսյաննիկո-Կուլիկովսկի Ռուսիայում։ Այս վերջինս մի Աոր գրող է քննադատության մեջ. գրվածքն է «Этюды о творчестве Тургенева» (քաղվածքները փոքր տեսքում)։ «Քաղվածքների» տեսորդ դժբախտաբար չի պահպանվել։ Կարելի է չկասկածել, որ այս հետաքրքրությունը գնալով խորացել է։ Ապացույցը քննադատի հոդվածներն են։

1900-ական թվականների մի շարք-հոդվածներ («Երգ ու վերքից հետո», «Երազ և մեկուսացում», «Հ.

Թումանյանի «Քաջ Նազարը», «Հ. Թումանյանի «Աղավնու վանքը», «Ի. Իսահակյանի «Հեքիաթ Արևի տակ», «Առաջաբան Ստ. Զորյանի «Տխուր մարդիկ» հատորին» / յուրօրինակ համակցությամբ խտացնում են կուլտուր-պատմական, հոգեբանական, գեղագիտական դպրոցների, մասնավորապես ոռուսական առաջադիմական քննադատության լավագույն ավանդույթները։

Հայտնի է, որ կուլտուր-պատմական դպրոցի ներկայացուցիչները իրենց վերլուծություններում ինչ-որ տևող անտեսում էին երկի գեղարվեստական յուրահատկությունները։ Ստեղծագործության համար վճռական տեղ վերապահելով ճանաչողական կողմին, հասարակական-պատմական ճշմարտացիությանը՝ նրանք հաճախ խախտում էին արժեքների գնահատման չափանիշները։ Աղբալյանը այս երկու ծայրահեղություններից էլ զերծ մնաց։ Ավելին՝ նա մեզանում առաջիններից էր, որ ստեղծագործության գնահատման հիմնական ու կարևոր չափանիշներից մեկը համարում է գեղարվեստականությունը։ Հատուկ պետք է ընդգծել, որ ոչ մի մերձգրական երևույթ չարժանացավ նրա խրախուսանքին։ Օժտված լինելով գեղեցիկն ընկալելու բացառիկ կարողությամբ՝ անսխալ որոշում էր տաղանդի ուժը։

Իր գրական-քննադատական գործունեության ընթացքում Աղբալյանն առիթ է ունեցել արժեքավորելու մի քանի տասնյակի հասնող գեղարվեստական-հրապարակախոսական ու այլ բնույթի գրքեր, գրական տարբեր երևույթներ, ինչպես նաև գրական-մշակութային բազմաթիվ գործիչների։ Չնայած վիճելի, նույնիսկ հնացած որոշ տեսակետների առկայության, ամբողջության մեջ նրա բնութագրումները գիտական և ընդունելի են մեր օրերի համար ևս։ Գեղարվեստական զարգացման շարժումն ընթացքի մեջ նա բարձր է գնահատել Խ. Աբովյանի, Պ. Պոռոչյանի, Ղ. Աղայանի, Ռ. Պատկանյանի, Գ.

¹Նույն տեղում, էջ 25։

Սունդուկյանի, Բաֆֆու, Հ. Հովանհիսյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Լ. Ծանթի, Վ. Տերյանի, Ստ. Չորյանի, Ե. Չարենցի ստեղծագործությունը: «Գրախոսական Նավասարդ գրական տարեգրքի»... հոդվածում, Պոլսի գրական ասուլիսներին վերաբերող մանրամասն տեսություններում, բազմաթիվ այլ առիթներով բնութագրել և արժեքավորել է նաև արևմտահայ մշակութային գործիչներից շատերին, ինչպես՝ Խրիմյան Հայրիկին, Գ. Սրվանձտյանին, Ծերենցին, Հ. Պարոնյանին, Գր. Չոհրապին, Սիամանթոյին, Վարուժանին՝ կոչելով նրանց «թրքահայ հայտնի գրական դեմքեր», «թրքահայ ականավոր հեղինակներ...»: Սա, անշուշտ, քննադատի տաղանդի վկայությունն է, եթե գրողի մեծությունը չափվում է նրանով, թե որքան խորն ու ճշմարտացի է արտացոլում իրականությունը, քննադատի կարողության չափանիշն էլ այն է, թե ժամանակին որքանով է ճիշտ ընկալել ընթացիկ գրականության զարգացման միտումները, այդ միտումները կրող արվեստագետ անհատներին բնորոշ գրական երևույթները...

Աղբալյանի սկզբնական շրջանի հոդվածներում կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքները յուրացվում էին առավելապես ռուսական առաջադիմական քննադատության և գրականության միջոցով: Այդ փորձի խոր անսվածքները պայմանավորում են քննադատի հայացքների ողջ համակարգը: Գրականության հասարակական-քաղաքական նշանակության ու ռեալիզմի սկզբունքները պաշտպանելիս նա ակնհայտորեն էլնում է Բելինսկու դիրքերից: Հետազոտողները նկատել են, որ՝ «Բելինսկու ազդեցությունը դպրոցի (կուլտուրպատմական- Գ. Ա.) ռուս ներկայացուցիչներին ստիպում էր «տեմիզմի» սխեմաներն անցկացնելիս ավելի քիչ ուղղագիծ լինել, ավելի շատ հաշվի առնել հետազոտվող

նյութի առանձնահատկությունը»¹: Այս բնութագիրը հավասարապես կարող է վերաբերել նաև Աղբալյանին:

Բելինսկու, Դոբրոլյուբովի հայացքների խոր իմացությունը իսկապես օգնել է նրան հրաժարվելու կուլտուր-պատմական և այլ դպրոցների ծայրահեղություններից, ստեղծագործությունները քննելիս լրջորեն հաշվի առնել նրանց գեղարվեստական յուրահատկությունները: Առաջին իսկ հոդվածներում նա ընդգծում է գրականության՝ իբրև մտածողության ինքնուրույն տեսակի, առանձնահատկությունը: Հ. Ծողոլորյանի «Մոռացված աշխարհ» գրքի Գ հատորի գրախոսականում կարդում ենք. «Ստեղծագործությունը կապված է ավելի կամ պակաս չափով լայն ընդհանրացումներ անելու ընդունակության հետ: Այդ ընդհանրացումները գիտական ընդհանրացումներ չեն: Ստեղծագործող գրողն ընդունակ է դիտելով ժամանակը և մարդկանց ի մի հավաքել նրանց էական հատկությունները և բանաստեղծական պատկերներով վերարտադրել»²: Կարևոր ու վճռական նշանակություն տալով գրականության բովանդակությանը՝ միշտ ընդգծում էր, որ այդ բովանդակությունը իր բարոյական դերի լիարժեքությանը կարող է հասնել միայն «բանաստեղծական պատկերներով»: Տարիներ հետո ևս քննադատը հավաստում էր իր հավատարմությունը որդեգրած սկզբունքին. «Գիտություն և բանաստեղծություն իմացական տարբեր աշխատանքներ են. գիտուն և բանաստեղծ կարող են վերլուծել, բայց ի՞նչ. մեկը գաղափարներ, մյուսը՝ պատկերներ»³:

Քննադատության հիմնական խնդիրը համարելով հենց «բանաստեղծական պատկերներով» «կատարված իմացական... աշխատանքի» բացահայտումը, դեմ էր

¹ Академические школы в русском литературоведении, стр. 169.

² «Մուրճ», 1896, N 12, էջ 1597:

³ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 439:

այնպիսի քննադատության, որ ուշադրությունը բևեռում է միայն ձևի խնդիրներին. «Գնահատությունների մեծ մասը արված են գրական տեսակետից. երկերի հասարակական արժեքը որոշելուն հազիվ մի քանի խոսքեր են նվիրված»¹: Մի այլ առիթով մերժում է «գեղեցկությունը ինքն իրմով» գնահատելու տեսակետը, համարելով այն միակողմանի: «Արդեն գործն» «ինքն իր մեջ» դատելով, մենք դատում ենք մեր դավանանքի համեմատ, որ ունենք արվեստի մասին: Մյուս կողմից՝ միայն «ինքն իր մեջ» տեսակետը պաշտպանել, «նշանակում է ուրանալ գրականության հասարակական արժեքը»: Նախընտրելին տարբեր մոտեցումների համադրումն է. «Արվեստի գործը պիտի դատվի և ինքն իր մեջ, և մեր հավատամքի համեմատ, մեկը մյուսին չի խանգարում, եթե մարդ կարողանա երկու կողմից էլ արդարամիտ դատաստան անել»²:

Քննադատության դերի մասին Ադրայանի ըմբռնումը որոշակի ուրվագծվում է հատկապես արևելահայ և արևմտահայ գրական քննադատության տարբերությունների մասին խոսքում: Նշելով, որ քննադատության բնագավառում ռուսահայերն ու թուրքահայերը հակոտնյաներ են, այնուհետև շարունակում է. «Նրանք (թուրքահայերը. - Գ. Ա.) խորշում են սիստեմներից, մենք անհատական բնորոշումներից: Սովորաբար ամեն մի նոր գիրք նրանց համար մի անջատ երևույթ է, մեզ համար մի որոշ շարժման ցուցանիշ: Նրանք ավելի արվեստին, ձևին են կարևորություն տալիս, մենք բովանդակությանը: Պետք է գտնել քննադատության այնպիսի ձև, որ այս երկու հակումները համադրվեն և կազմեն մի ներդաշնակ ամբողջություն»³: Գեղարվեստական երկի բովանդակությունն ու ձևը «մի ներդաշնակ ամբող-

ջության» մեջ համադրաբար քննելու պահանջը Ադրայանի համար ոչ միայն տեսական առաջադրություն էր, այլ նաև քննադատական գործունեության եղանակ, որ դրսևորվում է նրա գրեթե բոլոր հոդվածներում:

Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուին նվիրված հոդվածում, որն, ինչպես հայտնի է, առաջին հոդվածներից է, ամենայն որոշակիությամբ գրում էր. «Լավ են այն գրվածները միայն, ուր նյութն ու ձևը իրար բռնում են, ներդաշնակ են, համապատասխան: Եվ հենց այստեղ է թաքնված գեղարվեստական երկի գաղտնիքը, ուր նյութն ու ձևը, զգացմունքն ու միտքը և նրանց արտահայտությունն իրար չեն գալիս, այնտեղ միք փնտրի գեղարվեստականություն»¹:

Երկի գեղարվեստականության չափանիշները սահմանելիս, բովանդակության ու ձևի ներդաշնակության պահանջը առաջադրելով հանդերձ, առաջնությունը տալիս է բովանդակությանը: Նրա համոզմամբ՝ հենց բովանդակությունն է, որ պայմանավորում է ձևը. «Ամեն զգացմունք, ամեն նյութ իր արտահայտության ձևն ունի՝ իր լեզուն, իր չափը, իր պատկերը»... Ծարունակության մեջ ընդգծում է. «... գեղարվեստականությունը չի որոշում երկի կարևորության չափը»: «Հասարակական, հոգեբանական և պատմական» ի՞նչ բովանդակություն է արտահայտում այն, ահա այն չափանիշը, որից պետք է էլնել՝ երկի գեղարվեստականության մասին խոսելիս: Ռեալիզմի և ժողովրդայնության կատեգորիաներով մտածող քննադատը մի այլ տեղ գեղարվեստականության կարևոր պայմանը համարում է հավատարմությունը կյանքի ճշմարտությանը. «Գեղարվեստական լինելու առաջին պայմանը իրականության հավատարիմ լինելն է»²: Քննադատի իրավացի տեսակետով հենց բովան-

¹Նույն տեղում, էջ 280:

²Նույն տեղում, էջ 29:

³Նույն տեղում, էջ 281:

¹Նույն տեղում, էջ 93:

²«Մուրճ», 1897, N. 5, էջ 678:

դակության առաջնության մասին է խոսում այն հայտնի իրողությունը, որ ինչպես ձևի բացարձակացումը, այնպես էլ ձևի և իմաստի ներդաշնակության խախտումը բացասաբար են անդրադառնում երկի գեղարվեստականության վրա: Նշելով, որ Լ. Շանթի «Երազ օրեր» վիպակի լեզուն ընդհանրապես ներդաշնակ է նյութին, հերոսներից մեկի լեզվի վերաբերյալ նկատում է. «Ափսոս, որ նա ավելի մեղմ, նուրբ ու ճկուն է, քան սազ կգար մեր լեռների ու կոշտ պայմանների զավակ Միքեին»¹: Մի այլ առիթով բանաստեղծի անհաջողության գլխավոր պատճառը համարվում է այն, որ «... հանգն է ղեկավարել հեղինակին և ոչ թե հեղինակը իշխել հանգին»:

Բազմիցս կրկնվող այս մտքերը տեսական հստակ ձևակերպում են ստանում կյանքի վերջին շրջանում գրած «Պատմություն հայոց գրականության» գրքի ներածության մեջ, որն ըստ էության Աղբալյանի գեղագիտական ըմբռնումների հանրագումարն է. «Կատարյալ են այն գործերը միայն, - աներկմիտ և ուղղակի գրում է քննադատը, - ուր ձև ու բովանդակություն ներդաշնակ են, այսինքն՝ հարմարած են իրար»²: Գեղարվեստականության այս ստույգ չափանիշով է քննադատն արժեքավորում Պոռչյանի ստեղծագործությունը: Իբրև բարձր արժանիք դիտելով գրողի իրապաշտական ուղղությունը՝ նա, այնուամենայնիվ, սուր դիտողություններ է անում վիպասանի ստեղծագործություններում նկատելի գեղարվեստական պակասությունների վերաբերյալ: «Նա» պատկերում, օրինակ, «արձակագրին քիչ է հաջողվել կենդանի և ամբողջական իրական բնութագրություններ ստեղծել»: Ընդհանրացնելով իր միտքը՝ քննադատն այնուհետև կտրուկ նկատում է. «Չի հաջողվել նրան և իր գրական ամբողջ գործունեության ընթացքում մի կատա-

¹ «Մուրճ», 1896, N. 12, էջ 1607:

² Ն. Աղբալյան, «Ամբողջական երկեր», հ. IV, էջ 43:

րելապես գեղարվեստական վեպ կամ վեպիկ ստեղծել», քանի որ՝ «նրա գրվածքներում շատ են պատահում բոլորովին ավելորդ կտորներ և երկարաբանություններ»¹:

Աղբալյանը սրատես հայացքով նկատում ու գնահատում էր ոչ միայն գրականության, այլև հենց քննադատության մեջ կատարվող դրական տեղաշարժերը: 1913-ին գրած մի հոդվածում գոհունակությամբ արձանագրում է մեզանում ոչ միայն «քննադատական գրականության անսովոր աճը, այլև զանազան ուղղությունների գոյության փաստը. «... Հրապարակ է իջել մի նոր սերունդ, տարբեր ճաշակի և գրական ըմբռնումների տեր, տարբեր պատմաշրջանի պտուղ և տարբեր հայացք ունեցող աշխարհի վրա»²:

Նոր սերնդի ներկայացուցիչներից մասնավորապես առանձնացնում էր Արսեն Տերտերյանին. «Հեղինակը (Տերտերյանը. - Գ. Ա.), որ արդեն մեն մենակ մի ամբողջ քննադատական գրականություն է ստեղծել մեզանում, ամենամեծ ուշադրության արժանի մի դեմք է, որ ունի որոշ աշխարհայացք, գնահատության որոշ չափ և աշխատանքի մեծ կարողություն»³: Այս դեպքում ևս Աղբալյանի կոաբիտները ճիշտ էին, ինչպես հետագայում պիտի հաստատեր գրականության պատմության փորձը:

2

Քննադատական գործունեությունն սկսել է «Մուրճի» էջերում: 90-ական թվականների նրա հոդվածները՝ իրենց ուղղվածությամբ, հարցադրումներով համահունչ են ամսագրի խմբագիր Ավ. Արասխանյանի ըմբռնումներին: Զգտելով իր ամսագիրը դարձնել ոչ միայն գեղարվեստական անթերի գործերի ժողովածու, այլև գեղար-

¹ «Մուրճ» 1897, N 1, էջ 131:

² Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 280:

³ Նույն տեղում:

վեստական զարգացման ընթացքը ամբողջության մեջ արտացոլող և այդ ընթացքի վրա ներգործող օրգան, Արասխանյանը «Մուրճի» էջերը լայնորեն բացել էր և՛ դասականների, և՛ սկսնակների առաջ, այստեղ տպագրվում էին և՛ ռեալիստները, և՛ ռոմանտիկները, այլ խոսքով՝ խմբագիրը ձգտում էր ընդգրկել գրական կյանքի ամբողջական համայնապատկերը: Աղբալյանի որոշ ըմբռնումներ ուղղակի արձագանքում են Արասխանյանի հայացքներին:

Իր քննադատական գործունեության առաջին իսկ քայլերից Աղբալյանը հետևում է Արասխանյանի գրական քաղաքականությունից բխող մի հիմնական սկզբունքի՝ արժեքները գնահատել ոչ թե նկատի ունենալով նրանց ռեալիստական կամ ռոմանտիկական ուղղությունը, այլ գեղարվեստականության աստիճանը: «Մուրճի» միևնույն համարում նա ընդարձակ գրախոսականներով հանդես է գալիս միաժամանակ Լ. Ծանթի «Երազ օրերի» և Հ. Շուրուրյանի «Մոռացված աշխարհի» մասին՝ երկու դեպքում էլ երկը գնահատելով բարձր գաղափարայնության ու գեղարվեստականության դիրքերից: Ինչպիսի կրթով քննադատը պաշտպանում էր իսկական արժեքները, նույնպիսի կրթոտությամբ էլ մերժում էր այն ամենը, ինչ կապ չուներ գրականության հետ կամ, այսօրվա տերմինով, մերձգրական երևույթ էր: Աղբալյանի առաջին քննադատական ելույթը Ա. Օիրվանգադեի «Կրակը» պատմվածքի մասին գրախոսությունն է: Արձակագրի ստեղծագործության համապատկերում քննելով պատմվածքը, անելով կառուցվածքային ու հոգեբանական բնույթի կարևոր դիտողություններ, մանրակրկիտ բնութագրում է Սանթուրյանին՝ նշանակալից հասարակական կշիռ վերապահելով այդ տիպի անհատներին. «Անկախ մտքի, ազնիվ զգացմունքների տեր մարդիկ են, որ հասարակությունը առաջ են մղում և հասարակության հալածանքները նոցա ավելի

կոփում, ամրացնում են»¹: Եթե, այսպիսով, Օիրվանգադեի պատմվածքը դիտվում է որպես գեղարվեստական բարձր արժեք, ապա նույն հետևողականությամբ հաջորդ հոդվածում մերժվում են Գ. Բաբուրյանի «Փոքրիկ ընթերցարան», «Փոքրիկ գրույցներ» գրքույկները, իբր գաղափարազուրկ, հասարակական հետաքրքրություն չունեցող իրողություններ:

Հավանաբար նաև «Մուրճի» մատերիալիստ խմբագրի ազդեցությամբ պետք է բացատրել Աղբալյանի հայացքներում նկատելի մատերիալիստական նըստվածքները: Դա ակնառու է գրականության ու արվեստի խնդիրները մեկնաբանելիս:

«Տնտեսական պայմանները, որոնք ամեն կյանքի գլխավոր հիմքերից մեկն են կազմում, իրենց փոփոխվելովը ահագին ազդեցություն են անում և նրա վրա գտնված շենքի՝ կյանքի վրա»²: Ա. Աղեյանի «Տգիտության զոհեր» վեպի կապակցությամբ արտահայտած այս միտքը մեթոդաբանական ելակետ է դառնում քննադատի համար՝ մերժելու հեղինակային գաղափարի միակողմանիությունը: Վեպի արժեքներից մեկը տեսնելով «ժողովրդական կյանքի» ճշմարիտ նկարագրության մեջ՝ մերժում է այդ կյանքի մեկնաբանության հեղինակային ելակետը, այն, թե իբր՝ «Տգիտությունն է, որի պատճառով մարդը իր համար կորստաբեր հանգամանքներ է ստեղծում և դառնում նոցա գերին»³: Մատերիալիստական աշխարհայացքի հիմունքներին ծանոթ Աղբալյանը չէր կարող ընդունել այս միակողմանի ընդհանրացումը: Ոչ միայն տգիտությունը, նկատում է այնուհետև, այլև ընդհանրապես «մտային տարրը որպես գործոն գլխավոր դեր չի խաղում, այլ միայն գլխավոր դերերից մեկն է

¹«Մուրճ», 1896, N 9, էջ 1174:

²«Մուրճ», 1897, N 9, էջ 1252:

³«Մուրճ», 1896, N 9, էջ 1059:

խաղում»: Զծխտելով մտավոր ու հոգևոր գործոնների դերը հասարակական զարգացման գործում՝ քննադատն առաջնությունը տալիս է տնտեսական ու քաղաքական այն պայմաններին, որոնք որոշում են իրենց վրա հենվող «շենքի» բնույթը: «Ինքը տգիտությունը, - եզրակացնում է նա, - ենթակա է տնտեսական պայմանների ազդեցության, քաղաքական այս կամ այն կազմը նրան այս կամ այն գույնն է տալիս»¹: Գրողի գծած պատկերները ընթերցողին պատկերացում են տալիս «տնտեսական պայմանների անկանոնության» մասին (դա «մենք կարող ենք մակաբերել, վեպում հիշատակություն չկա այդ մասին», - շեշտում է քննադատը), մինչդեռ գրողն իր նկատած երևույթների պատճառը որոնում է սուսկ տգիտության մեջ: Այս հանգամանքը հիմք է տալիս Ադբայյանին հակասություն տեսնելու Ադելյան-գրողի և Ադելյան - մտածողի միջև, այսինքն կրկնում է աշխարհայացքի և մեթոդի միջև հնարավոր հակասության հայտնի տեսակետը. «Գրականության պատմության մեջ անսովոր երևույթ չէ, որ հեղինակն իր գրվածքի ընդհանուր միտքը այնպես չի հասկանում, ինչպես ընթերցողը կամ թե ուղղակի սխալ է հասկանում: Նույնը պատահել է և Ադելյանին: Հեղինակ Ադելյանը և մտածող Ադելյանը ձեռք ձեռքի տված չեն գնում վեպի մեջ, այլ բաժանված և իրարից բավականին հեռու»²:

Ադբայյան-քննադատի բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ նա գրողի կամ նրա առանձին ստեղծագործության մեջ ամենից առաջ որսում է կարևորը, գլխավորը, ինքնատիպը և ընդգծում այն: Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքերի» հիմնական հատկանիշը քննադատն իրավացիորեն համարում է ժողովրդայնությունը, Ադելյանի «Տգիտության զոհեր» վեպում առաջին պլան է մղում

¹ «Մուրճ», 1897, N 9, էջ 1261:

² «Մուրճ», 1897, N 9, էջ 1262:

«դոչադի» տիպը, որին գրողն ինքը շատ էլ ու - շադրություն չի դարձնում: Մինչդեռ քննադատը հենց այդ տիպն է դարձնում վերլուծության առանցք, որովհետև այդ տիպն է, որ հնարավորություն է տալիս ճանաչել «ժողովրդական կյանքում» կատարված մեծ տեղաշարժերն ու երևույթները: Ադբայյանը ամսագրերի երկու համար զբաղեցնող ընդարձակ ուսումնասիրություն է գրում այդ բնորոշ երևույթի և հարակից խնդիրների մասին՝ տեսադաշտից դուրս թողնելով հեղինակի ուշադրության կենտրոնում գտնվող բազմաթիվ անկարևոր իրողություններ: Սա քննադատի խորաթափանցության լավագույն վկայությունն է:

Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուում ժողովրդական երգերի առկայությունը Ադբայյանը համարում է «պատահմունք» (այս սխալը շտկեց մի քանի տարի հետո գրած երկրորդ հոդվածում. - Գ. Ա.), գրողին ոչ բնորոշ: Սակայն լինելով գրականության ժողովրդայնության կողմնակից և այդ խնդիրը մեկնաբանելով Դոբրոլյուբովի ու Բելինսկու դիրքերից, ընդգծված սիրով ու ջերմությամբ հենց այդ երգերն է մանրամասնորեն քննության ենթարկում. «ժողովրդական բանաստեղծությունները շատ չեն թվով, բայց որակով թանկագին են»: Զորյանի առաջին գրքի առաջաբանում շատ դիպուկ նկատելով երիտասարդ արձակագրի տաղանդի բնույթը՝ «համակերպություն, ահա իր հիմնական տրամադրությունը. իր սրտի պես համակերպված ու անգոր են և իր պատկերացրած անձերը»¹: Քննադատը պահանջում է դուրս գալ «տխուր մարդկանց» համակերպության աշխարհից, դիմել իրական կյանքին, հասկանալ ու մեկնաբանել այն, որը ստեղծագործական նոր հորիզոններ կբացի արձակագրի առջև. «Եվ քանի Ստ. Զորյանի հոգին կմնա նկուն, հակված դիտելու և զգալու

¹ Ն. Ադբայյան, Ամբողջական երկեր, հ. II, էջ 246:

կյանքի մեծ ճամփից դուրս շարտվածների տխուր վիճակը՝ նա միշտ կմնա մանր պատկերների հեղինակ, որովհետև համակերպվում են անհատները, իսկ խմբերը մաքառում են. առկայծող ու մեղմ բարության կողքին կա բոցավառ բարություն, որ հրդեհում է բազմություններ ու լուսավորում է նոր հորիզոններ, ստեղծագործելով կյանքի նոր ձևեր ու կապեր»։ Երիտասարդ Չարենցի ստեղծագործություններում առաջին հերթին ողջունում էր հենց այդ «բոցավառ բարությունը», հրդեհված բազմությունների, «նոր հորիզոնների» ոգեշունչ պաթոսը...

3

Հատուկ հետազոտություններ չի անվիրել գրական ուղղություններին, բայց առանձին հեղինակների ու առանձին գործերի անվիրած հոդվածներում, գրական տեսություններում և այլ առիթներով արտահայտված տեսակետներն ու մտքերը բերում են այն համոզման, որ գրական արդիականության տեսակետից առաջնային էր համարում ռեալիստական ուղղությունը՝ չթերագնահատելով, սակայն, ռոմանտիկականը և ժխտողական վերաբերմունք դրսևորելով անկումային հոսանքների հանդեպ:

«Բելետրիստական գրվածքի» գլխավոր արժանիքը հավատարմությունն է կյանքին. «Մի հեղինակ մեր աչքում այնքան ավելի գին ունի, որքան նա, առանց կանխակալ դիտավորությունների, տալիս է ներկա կամ պատմական կյանքի ավելի լայն շրջանի հավատարիմ պատկերը»¹: Ռեալիզմը մյուս ուղղություններից առանձնանում է նրանով, որ «իրական կյանքը» պատկերում է առանց «որոշ տեսակետների հարմարեցնելու»: Արքայանի մեծությունը, օրինակ, առաջին հերթին նրանում է, որ գրեց «ժողովրդի համար և նրա կյանքը նյութ

¹ «Մուրճ», 1896, N 12, էջ 1598:

առավ»: Համառոտ տեսության մեջ բարձր է գնահատում Արքայանի բերած նորությունները, նրա դերը գրականության զարգացման հետագա ընթացքի վրա ունեցած վիթխարի ազդեցության տեսանկյունից. «Նոր գրականության հայրը չամաչեց, այլ սիրով ու պատվով հյուր կանչեց գյուղացուն իր տրեխով ու մորթե փափախով, իր ցնցոտիներով ու խոնջացած մարմնով և գրականության մեջ առաջնակարգ ու պատվավոր տեղը հատկացրավ նրան»¹: Հետագա գրողները, Պոռչյանից ու Աղայանից մինչև 90-ական թվականների ներկայացուցիչները, մինչև Ծիրվանգաղե ու այսօրվա ըմբռնումով՝ գյուղագիրներ (Աղեյան, Ծուղություն), որդեգրեցին այդ սկզբունքը: «Սունդուկյանն իր իրականին հավատարիմ դրամաներով» շարունակում էր ռեալիստական գրականության ավանդները:

Ոչ Արքայանը, ոչ էլ Պոռչյանը (նկատի ունենալով «Սոս և Վարդիթերը».- Գ. Ա.) «զուտ իրական վեպի ներկայացուցիչները» չեն, քանի որ երկուսն էլ «գյուղացուն իդեալականացնում էին», «երկու հեղինակների գրվածներում էլ իդեալականն ու իրականը ձեռք-ձեռքի տված են գնում»: Աղայանն է, որ «Արություն և Մանվել» վիպակով «պինդ խրվում է իրականության մեջ», «այստեղ գյուղացին հավատարմությամբ է վերարտադրված»:

Թուլանայով հետագա տասնամյակներում, «Այս կենսունակ ուղղությունը նոր զարկ է ստանում միայն 90-ական թվականներին և շարունակում է զարգանալ»: Դրան նպաստեց Սունդուկյանը «իրականին հավատարիմ դրամաներով», Պոռչյանը հետագա տարիների գործերով, որոնք «ավելի ու ավելի մոտենում էին իրականության», «Ծիրվանգաղեն իր ամբողջ գրական գործունեությամբ»:

¹ «Մուրճ», 1897, N 7-8, էջ 1060:

Բավականին հստակ գծելով նոր գրականության մեջ ռեալիզմի անցած ուղին, ոչ միայն նկատում է «կենսունակ» ուղղության «նոր զարկ» ստանալը 90-ական թվականներին, այլև ընդգծում է որակական տեղաշարժերը: Առաջին բնորոշ գիծն այն է, որ ժամանակակից ռեալիստական ուղղությունը անհամեմատ լայնացրել է կյանքի ընդգրկման շրջանակները: Եթե նախկին տասնամյակների «ժողովրդական գրողները գլխավորապես աչքի առաջ ունեին գյուղական դասի ընտանեկան կյանքը, ընտանիքի անդամների փոխադարձ հարաբերությունները», ապա նորագույն ժամանակների գրողները «գլխավորապես հետաքրքրվում են գյուղական համայնքի կյանքով, համայնքի անդամների փոխադարձ հարաբերություններով»: Վերջին տասնամյակներում «ժողովրդական կյանքը» հսկայական փոփոխություններ է կրել, և գրականության պարտքն է նկատել դրանք, արձագանքել դրանց, նկարագրել: Բայց սա դեռ հարցի մի կողմն է. գրականությունը պետք է ոչ միայն իր վերաբերմունքը ցույց տա «շատ խոշոր և ուշադրության արժանի փոփոխությունների» հանդեպ, այլև բացատրի դրանք, բացահայտի դրանց զարգացման ուղղությունը, դրսևորի որոշակի վերաբերմունք: Հենց այստեղ էլ, ինչպես դիտում է քննադատը, դրսևորվում է մյուս առանձնահատկությունը: Նոր ժամանակների ռեալիզմը ձեռք է բերել սոցիալական խորություն. նա փորձեր է անում կյանքի նկարագրությունից անցնելու կյանքի բացատրության, կյանքի մեկնության: «Դեպի առաջ արած» քայլերից մեկն էլ այն է, որ նոր ժամանակների գրողները ձգտում են ըմբռնել ժողովրդի կյանքի «հիմունքները և բացատրել նրա բազմաթիվ ու բարդ երևույթների հիմնական պատճառները»: «Տեխնիկայի կողմից ևս,- շարունակում է իր միտքը հետազոտողը,- նշանավոր առաջադիմություն է եղել... նորերի գրվածները

ավելի ու ավելի են մոտենում վիպագրության իսկական ձևերին»¹:

90-ական թվականների ռեալիզմի վերաբերյալ Ադրալյանի հայացքների համար խիստ բնութագրական է «Ղոչաղը իբրև տիպար հայ վիպագրության մեջ» հոդվածը, ուր Ադելյանի «Տգիտության զոհեր» վեպի օրինակով հիմնականում ներկայացվում են «ժողովրդական կյանքը» նկարագրող վիպագրության մեջ կատարված տեղաշարժերը:

Խորապես համոզված, որ գեղարվեստականության հիմքը անանությունն է կյանքին, այսինքն՝ գրականության խնդիրը համարելով իրականության ճշմարտացի արտացոլումը, կյանքի խոր ճանաչողությունից էր ելնում գեղարվեստական երկը արժեքավորելիս: Ադելյանի վեպի գլխավոր արժանիքը քննադատը համարում է այն, որ այստեղ արձանագրված են «ժողովրդական կյանքում» տեղի ունեցած «ուշադրության արժանի» տեղաշարժերը: «Ղոչաղի» տիպի նկատմամբ ցուցաբերած հատուկ ուշադրությունը ցույց է տալիս, որ քննադատն օժտված է կյանքի սուր հակասությունները, իրականության մեջ կատարված նոր երևույթները նկատելու բացառիկ կարողությամբ: «Ղոչաղը» նախնական կուտակման շրջանի այն տիպն է, որը հետևանքն ու խտացումն է «ժողովրդական կյանք» ներխուժած բուրժուական հարաբերությունների: Այս տիպի մոտ դիզելու, ինչ գնով և ումից ուզում է լինի մի պատառ փախցնելու, «տունը լցնելու» սկզբունքը բնականաբար մոռացնել է տվել հասարակական, բարոյական բոլոր շահագրգռությունները, դարերով սրբազործված կեցության օրենքները: Այս «տիպարի» աղբալյանական մեկնաբանությունը համոզիչ է, կատարված տեսական ու գործնական հիմնությամբ և այսօր էլ պահպանում է իր իմացա-

¹Նույն տեղում, էջ 1062:

կան նշանակությունը: «Ղոչաղի» տիպը քննվում է ծագման, զարգացման, վաղվա, ապագայի համար «ունեցած նշանակության տեսանկյունից», հանգամանք, որը նրա հոդվածին հաղորդում է խոր գիտականություն, վերլուծական բնույթ. «Ղոչաղի» արածը այսօրվա համար չէ, որ նշանակություն ունի, այսօրը մի կերպ կմթնի, բանն այն է, որ նա ծանր հանգամանքներ է ստեղծում «վաղվա, ապագայի համար»: Այնուհետև բերվում են գյուղացու տնտեսական, բարոյական, ընտանեկան սովորությունների աշխարհում կատարված այն փոփոխությունները, որոնք հետևանք են «ղոչաղության» և հիի են վտանգավոր ու վնասակար հետևանքներով:

Ծարունակելով կյանքում կատարված տեղաշարժերի տեսանկյունից Աղեյանի վեպի քննությունը՝ արձանագրում է շատ դրական մի երևույթ. «Այդ տիրապետող, քայքայիչ ուժը՝ ղոչաղությունը, մենակ չէ գյուղում, նա միահեծան չէ: Նա ունի իր հակառակորդ ուժը, որ ընդհարվում է նրա հետ, մեծ մասամբ անուղղակի կերպով և կովի է բռնվում»¹: «Ղոչաղության» դեմ կովի էլած «ոչ ղոչաղների» դասի բնութագրումը արտահայտում է քննադատի խոր համակրանքը վերջիններիս նկատմամբ: Այդ համակրանքի հիմքը «ոչ ղոչաղների» կովի նշանակությունն է և՛ այսօրվա, և՛ թերևս առաջին հերթին, վաղվա համար. «Որպես թարմ, հզոր և արդարություն բերող մի նոր ուժի կրողներ նրանք («ոչ ղոչաղները». - Գ. Ա.) արժանի են խորին ուշադրության և մանրագնին ուսումնասիրության. ապագայում նրանք են հաղթանակելու»²: Տասնամյակներ առաջ Նալբանդյանը ոգևորությամբ ողջունում էր վայկունի կերպարը «Սոս և վարդիթերում»: Մեծ քննադատը երևույթը դիտում էր պատմական հեռանկարի մեջ՝ դրսևորելով քննադատա-

կան հստակատեսություն: Աղբալյանը շարունակում էր իր մեծ նախորդին: Սոցիալական ավելի բարդ հարաբերությունների մեջ նա գոհունակությամբ նկատում է այն նոր ուժը, որի անվան հետ էր կապում ապագա պատմական վերափոխումների հեռանկարը. «Սրտի բաբախումով մարդ հետևում է այդ նոր մարդկանց գործունեությանը, գործելու եղանակներին և ձգտումներին»: Այս ամենը ակնհայտորեն ցույց է տալիս քննադատի աշխարհայացքի դեմոկրատական տարերքը:

Աղբալյանը սերտ կապ էր տեսնում գրական ուղղության, ժողովրդայնության և գրականության հասարակական նշանակության միջև: Գրական իրողությունների նրա վերլուծությունները կատարվում են այս երեք հատկանիշների հաշվառմամբ: Հենց առաջին լուրջ հոդվածներից մեկում՝ նվիրված Լ. Ծանթի «Երագ օրեր» վիպակին, քննադատն իրեն որոշակիորեն սահմանազատում է «գրական բնավորության» այն տիպերից, որոնք հանուն իդեալականի հեռանում են կյանքի իրական շահագրգռություններից: «Ծանթը այն գրողներից է, որոնց տեսածը վարդ է ու վարդ են երգում», - դիտում է նա՝ շարունակության մեջ ավելի պարզելով իր միտքը. «Նա նման է մի մարդու, որ նստած ամստային մի պարզ ու զով գիշեր բանաստեղծական կահավորության մեջ, նայում է աստղաշող երկնքին և հիանում նրա տեսքով և չի էլ ուզում այդ անդորր ու վերացնող բովանդակությունը կորցնել, նայելով շուրջը և տեսնելով, որ «հազարք հազարաց և բյուրք բյուրոց» մարդիկ ամենաչնչին միջոցներ անգամ չունին մի փոքր ժամանակ գոնե երկնքով հրճվելու»¹: Դժվար չէ նկատել, որ ռեալիզմի դիրքերից քննադատվում է ռոմանտիկական հայացքը կյանքի նկատմամբ: 90-ական թվականները մեզանում ռեալիզմի տիրապետության տարիներ են, սոցիալական սուր

¹«Մուրճ» 1897, N 9, էջ 1253:

²Նույն տեղում, էջ 1256:

¹«Մուրճ», N 12, էջ 1606:

բախումների բացահայտման տարիներ: Աղբալյանը բնականաբար թաքուն դժգոհություն է դրսևորում Օանթի ոտմանտիզմի հանդեպ, մի գրողի, որ որքան էլ տաղանդավոր, այնուամենայնիվ իր տաղանդի բնույթով կյանքի հակասություններից վեր էր կանգնած, թեև նրա հերոսների խոհերը հենց այդ հակասությունների վերացման շուրջ են: Այս իմաստով հետաքրքիր է նաև քննադատի մի ուրիշ միտքը Օանթի մասին՝ արտահայտված այլ կապակցությամբ. «Իր «Երնեկ» բանաստեղծության մեջ, ուր նա իր «պետքի գալն» զգալու համար ամենատարօրինակ և թովիչ բաներ է ուզում դառնալ - երգ, երազ, ցողի շիթ և այլն, նա ցանկություն չի հայտնում լինել մի հասարակ զինվոր, որ կովում է ժողովրդի բարիքի համար»¹: Կարևոր չէ, որ ինքը «այս նկատողությունը փոքր է» համարում, կարևորը ինքը՝ նկատողությունն է, որովհետև դրա մեջ դրսևորվում է արվեստի ու գրականության հասարակական դերի մասին Աղբալյանի հայացքների էական կողմերից մեկը:

90-ական թվականների ռեալիզմի մասին ուշագրավ դիտարկումներ կան նաև Հ. Շուդուրյանի «Մոռացված աշխարհ» գրքի մասին հոդվածում, ուր հանձին Շուդուրյանի բնութագրվում է հայ գյուղագրությունն առհասարակ:

Քննադատի դիտողությունները շոշափում են մի քանի սկզբունքային խնդիրներ, որոնք այսօր իսկ կարևոր նշանակություն ունեն հայ գյուղագրության էությունն ու պատմությունը ճիշտ հասկանալու տեսանկյունից: Արվեստի ուժը, ինչպես նկատում է քննադատը, կյանքի ճշմարտությունը «բանաստեղծական պատկերների» մեջ ընդհանրացնելն է, տիպեր ստեղծելը: Տիպը, քննադատի ըմբռնմամբ, խտացնում է իր նմանների էական գծերը՝ իրենով բնորոշելով պատմական որևէ շրջան: «Մեծ

¹Նույն տեղում, էջ 1606:

վեպ ասելով,- հաստատում է նա,- մենք ծավալը չենք հասկանում, այլ այն, որ վեպի հերոսը մի կենտրոնական բնավորություն լինի, բնորոշի մի որոշ ժամանակաշրջան»¹, Շուդուրյանին, ահա, պակասում է ընդհանրացման ուժը: Պատճառն այն է, որ նա ոչ թե ստեղծագործում է այս բառի իսկական իմաստով, այլ՝ ընդամենը լուսանկարում: Շուդուրյանի տիպի գրողները «լավ քարտուղարներ են և ամենայն հավատարմությամբ արձանագրում են իրենց տեսածը, ուրիշի պատմածը, լսած խոսակցությունները, իրենց դիտողությունները... Այսպիսի գրողների գրվածներում չկան տիպեր. կան միայն անձնավորություններ, որոնք իրենցով չեն բնորոշում որևէ շրջան, այլ միայն անհատներ են. նրանք չեն բովանդակում իրենց նմանների էական հատկությունները»²:

Այս տիպի գրողները քիչ ուշադրություն են դարձնում իրենց հերոսների ներքին աշխարհի բացահայտմանը. «Հոգեբանական վերլուծություն ասած բանը նրանց մեջ (գրվածքների մեջ. - Գ. Ա.) քիչ է պատահում»:

Քննադատի մյուս դիտողությունը վերաբերում է գեղարվեստական ձևին. նման տիպի գրողների երկերում, չափի զգացողության պակասի հետևանքով, աչքի են զարնում կատարման պակասությունները: Հավատարմությամբ պատկերելով տեսածն ու լսածը՝ գյուղագիրը «չի հոգում գրվածների համաչափության, կոկելու վրա»:

«Շուդուրյանը քիչ է ճանաչում այն անհրաժեշտ հատկությունները, որ պիտի ունենա մի գեղարվեստական գրվածք: Այս ցույց է տալիս, որ նրա շնորհքը չի իմանում իր անելիքն ու նրա սահմանները, ընտրություն

¹«Մուրճ», 1896, N 10-11, էջ 1356:

²«Մուրճ», 1896, N 12, էջ 1587:

չի անում կարևորի և անկարևորի, հարկավորի և ավելորդի, գլխավորի և մասնավորի միջև»¹:

Այս ամենի կողքին չի անտեսվում այն հիմնական արժանիքը, որով ժողովրդային ու իր նմանները տեղ են գրավում գրականության մեջ. «... Նրա գրվածներն ունեն մի մեծ և գլխավոր արժանիք, նրանց մեջ կյանքի ճշմարտություն կա. այսինքն հենց այն՝ ինչ ամենից առաջ շատ է հարկավոր, հենց այն, ինչ որ վեպիկում, վեպում, մի խոսքով ամեն մի բելետրիստական գրվածքում ամենագլխավորն է և ուշադրության արժանին»²: Մի այլ առիթով կոնկրետացնում է «կյանքի ճշմարտություն կա» արտահայտությունը. 50-60-ական թթ. գրողների ստեղծագործություններում պատկերված է նահապետական գյուղը՝ իր լույսով ու ստվերով, դեռևս չենթարկված կապիտալիզմի արշավանքին... Հաջորդ տասնամյակների նշանավոր գործերում արդեն երկփեղկված գյուղն է, նրա վիճակը:

Տարբեր գրախոսականներում, որքան հնարավորություն է տալիս ժանրի տարողությունը, փորձում է նաև տեսականորեն հիմնավորել կյանքի ճշմարտությանը հավաստարիմ լինելու սկզբունքը: Բոլոր դեպքերում, իբրև տեսաբան, նա կանգնած է ժամանակի տեսական մտքի առաջավոր դիրքերում:

Ինչպիստ գրողը վերարտադրում է կյանքի ճշմարտությունը, այն, ինչը ընդհանրական է տվյալ ժամանակաշրջանի համար: «Բացառիկ, ոչ սովորական, ոչ շատ հանդիպող երևույթներ» պատկերող և պատկերածը «ընդհանուր պատկերի տեղ» առաջարկող գրողը կասկածի տակ էր դնում իր խոսքի հավաստիությունը: Հետաքրքիր է, որ «երևակայության ուժով ինչ որ նոր կյանք» հնարելը մերժող քննադատը առանձնակի ջեր-

մությամբ է վերաբերում գրական այն երկերին, որոնցում փորձ է արվում գուշակել... գալիքը: Ա. Ֆրանսի «Երեք ու կես դար հետո» «փոքրիկ գրվածքի» թարգմանության առիթով համառոտ տեսություն է տալիս ուտոպիական գրականության նշանավոր երևույթների մասին, գրքերի, որոնք անհրապույր ներկային հակադրում են «հրապուրիչ ապագան»: «Ազատատենչ գրականությունը» արժեք ունի այն դեպքում, երբ խորությամբ հակադրվում է «ներկայի չարիքին»: Գրականության հասարակական դերի ըմբռնումը, գրականությունը հասարակական ազնիվ նպատակներին ծառայեցնելու գիտակցությունը քննադատին մղում է բարձր գնահատելու այն երկերը, որոնք «կարող են բանալ ընթերցողի աչքը մեր ընկերական կարգի թերությունների վրա և վարակել վերակազմության տենչով շատերին, որոնք խուլ դժգոհություն ունեն աշխարհից, բայց պարզորեն չեն գիտակցում իրենց հակումներն ու ժամանակակից կյանքի զարգացման միտումները»¹:

Ուտոպիական գրականությունից ևս կյանքի ճանշողություն պահանջող Ադրայանի ըմբռնմամբ՝ ճանաչել ու ներկայացնել իրական կյանքը բոլորովին էլ չի նշանակում «արտոկոլիստի նման» նկարագրել այն. գեղարվեստական երկից նա պահանջում էր խոր վերլուծություն, նկարագրվող դեպքերի ու հոգեբանությունների խոր համոզականություն: Լումայի «Գաբոյի ընտանիքը» վեպի անհաջողության գլխավոր պատճառներից մեկը, թերևս գլխավորը, այն է, որ «պ. Լուման հարցի արմատից չի բռնել, հիմնական պատճառը չի ցույց տվել մեզ և իր ցույց տված բացառիկ երևույթի պատճառը սխալ կամ առնվազն շատ միակողմանի է հասկացել»²: Նկարագրվող դեպքերի ու հոգեբանությունների հիմնա-

¹Մուրճ, 1899, N2-3, էջ 290:

²Մուրճ, 1896, N 12, էջ 1598:

¹Հորիզոն, 1913, N 166:

²Մուրճ, 1897, N էջ 677:

վոր կամ անհիմն լինելը վճռվում էր կյանք-գրականություն կապի դիրքերից: Հոգևոր երևույթների պատճառները տնտեսական կյանքի պայմանների մեջ որոնելու ձգտումը երբեմն ուղղագիծ է՝ միջարկված կապի անտեսման չափ: Նա կարող էր պնդել, օրինակ, թե «երբ ազգն իրավագուրկ է և աղքատ՝ նա կլանված է առօրեական ապրուստի և գոյության տարրական հոգսերով: Նա ոչ ժամանակ ունի լայն ծրագրեր մշակելու և ոչ հնարավորություն հոգեկալ վայելքներով ապրելու և նոր ուղիներ գտնաբերելու»¹:

Հետաքրքիր է, որ հայ գրականության անցած ուղուն լավատեղյակ հետազոտողը անտեսում է նրա ընձեռած օրինակները... Այնուամենայնիվ, գրական երևույթները այդ կապի տեսանկյունից գնահատելու տիրապետող ձգտումը Աղբայրյանին անկասկած դնում է 1890-1910-ական թվականների մեր քննադատության այն ներկայացուցիչների կողքին, որոնք գրականությունից պահանջում էին սոցիալական հագեցվածություն:

4

Ժողովրդայնությունը համարելով ռեալիստական գրականության անբաժան հատկությունը՝ քննադատի անդալվաճան ձիրքը նրան հնարավորություն տվեց երկու դարերի սահմանագլխի մեր պոեզիայում առանձնացնելու Հովհաննես Թումանյանին և Ավետիք Իսահակյանին՝ իբրև հայ գրականության ամենաժողովրդական բանաստեղծների: Նրանց մասին հոդվածները այսօր էլ պահպանում են իրենց գիտական նշանակությունը:

Իսահակյանի առաջին ժողովածուի արժեքը Աղբայրյանը տեսնում է այն հսկայական նորության մեջ, որով այն տարբերվում է նախորդ ու ժամանակակից բանաստեղծների գրվածքներից. «Այստեղ ամեն բան նոր է

¹Հորիզոն, 1913, N 1.

լեզվից ու ձևից սկսած մինչև զգացմունքներն ու նրանց արտահայտությունը: Այսպես ոչ ոք չի գրում և չի գրել, այսպես ոչ ոք չի զգացել ու արտահայտել»¹: Սկսնակ բանաստեղծի բերած նորությունները թվարկելիս հատուկ ընդգծում է նրա ժողովրդայնությունը, իբրև բացառիկ մի հատկանիշ: Ծիշտ է, սխալվում է, երբ «ժողովրդայնությունը» չի համարում «նրա ընդհանուր բնագիծը», բայց տվյալ դեպքում դա չէ էականը, այլ այն, թե ինչ բովանդակությամբ է դիտվում ժողովրդայնության հատկանիշը. «Նա (Իսահակյանը. - Գ. Ա.) կարծեք հավում է ժողովրդի մեծ սրտի ու հոգու մեջ, և այլևս նրան անկարելի է ջոկել ժողովրդի մարդուց»: «Ինչումն է այդ ժողովրդայնությունը, - հարցնում է այնուհետև քննադատը, ինքն էլ պատասխանում, - նրա այն հատկության մեջ, որ կարողանում է ժողովրդի պես զգալ, նրա սրտով ապրել»²:

Մտածողության ժողովրդային տարերքը պայմանավորել է նաև արտահայտության ձևը, այսինքն՝ ժողովրդային է Իսահակյանի նաև լեզուն՝ «Իսահակյանը թափանցում է մեր լեզվի ոգու ներսը»: Սա է լեզվի ժողովրդայնության գաղտնիքը, որ քննադատն ընդգծում է շատ հստակ կերպով. «Այլ բան է ժողովրդական լեզվով գրել, նրա հոգով գրել, այլ բան է ժողովրդի լեզվով գրել. մեկը ցանկալի է մեր գրական լեզվի կենդանության համար, մյուսը վնասակար է»³:

Գրականության ժողովրդայնության մասին այս ըմբռնումները ավելի խորացան Թումանյանին նվիրված հոդվածներում: Թումանյանի յուրահատկությունն այն է, որ նա «օգտագործում է մեր ժողովրդական անգիր բա-

¹Մուրճ, 1897, N 6, էջ 842:

²Նույն տեղում, էջ 853:

³Նույն տեղում:

նահյուսության անհատնում շտեմարանը, իր ընտրած նյութը մշակելով հայ ժողովրդի ոգով ու ոճով»¹:

Ինչպե՞ս էր պատկերացնում բանահյուսական նյութը «ժողովրդի ոգով ու ոճով» մշակելու խնդիրները:

Նախ նշենք, որ բարձր էր գնահատում ժողովրդական բանահյուսությունը առհասարակ: «Նավասարդին» նվիրված հայտնի գրախոսականում բացառիկ ոգևորությամբ է խոսում ժողովրդական «հանճարի ձայնի մասին, որին ունկնդրելը միայն կարող է արվեստագետին զանազան **խվերի** ստեղծած «խեղդուկ, կեղծ, շինծու և մեղ աշխարհից» դուրս հանել ստեղծագործական մեծ թռիչքների: Ընդունելով հանդերձ Սիամանթոյի, Վարուժանի մեծ տաղանդը, մինչև վերջ չհասկանալով հեթանոսական շարժման էությունը, որի պատճառով էլ մասամբ չի ընդունում շարժման ներկայացուցիչներին, արևմտահայ գրականության կենսական ակունքը տեսնում է ժողովրդական «հանճարի ձայնը լսելու» խոհեմությունն ունեցած Հայրիկի, Սրվանձտյանի, Պարոնյանի ստեղծագործական ավանդների մեջ: Նույն նկատառումով արևելահայ գրականության մեջ առանձնացնում էր Թումանյանի և Իսահակյանի ստեղծագործությունը:

Սակայն բանահյուսական նյութի ամեն մի մշակում դեռևս գեղարվեստական արժեք չէ: «ժողովրդի ոգի» հասկացության մեջ ընդգծվում է գաղափարական այն դիրքորոշումը, որն ընկած պետք է լինի յուրաքանչյուր մշակման հիմքում:

Գերի մնալ ավանդական նյութի գաղափարին, նշանակում է արվեստի գործ ստեղծելու փոխարեն պարզապես «վաղեմի ժամանակներ» հիշեցնել: Հենց այս տեսանկյունից էլ խստորեն մերժվում է ոմն Պողոս Ղազարյանի «Սրտագին նվեր» ժողովածուն, որի հեղինակը «լրջորեն ու անկեղծությամբ շատ անհաջող ու անկապ

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 132:

ոտանավորներ է գրում ավանդական նյութերի մասին»: Այս հեղինակի համար «Աբովյանից մինչև մեր օրերը» մտավորական կյանք գոյություն չունի, նա ամբողջովին հին մեջ է, այն էլ՝ կրոնական ըմբռնումների մեջ, ահա թե ինչու նա «այրաբնակի տպավորություն է» թողնում:

Թումանյանի «Աղավնու վանքին» նվիրված հմտալից հետազոտության մեջ ընդգծված կրոնական երանգավորում ունեցող ավանդության թումանյանական վերստեղծման ամենամեծ արժանիքը համարում է այն, որ նորաստեղծ երկի ոգին արդեն «ազգային է և ոչ եկեղեցական»: Ազգային ոգու ընդգծումը «քայքայած է կղերի հղացումը»: «Նյութը տալ իր ազգային կերպարանքի մեջ», - այսպես է ընդհանրացնում քննադատը բանահյուսական նյութի մշակման Թումանյանի փորձը: Բանահյուսական նյութը «միջազգային» է, «աման գծեր երևում են Հնդկաստանից մինչև Սկովտիա», բայց ամեն մի ժողովուրդ այդ նյութը ընկալում է իր պատմության, հոգեբանության, բնավորության տեսանկյունից, ուստի և բանահյուսական նյութի գեղարվեստական մշակման հաջողության կարևոր պայմաններից մեկը բանահյուսական ստեղծագործության մեջ դրսևորված ազգային յուրահատկությունների բացահայտումն է: Գրողը ոչ միայն հավատարիմ պետք է մնա «ժողովրդի մտայնության, աշխարհայացքին և պատմական փորձին», այլև պետք է հատուկ ջանք թափի այդ՝ հատկանիշները առավել ընդգծելու, այդ գծերը ավելի ցայտուն դարձնելու համար: Գեղարվեստական այս խնդրի իրականացումը ենթադրում է գրողի ստեղծագործական ազատություն նյութի նկատմամբ. ստեղծագործողը կարող է որոշ հատվածներ դուրս գցել, ավելացնել նոր դրվագներ, իրադարձություններ: Այդ ամենը պետք է, սակայն, խստորեն ենթարկված լինի տվյալ ժողովրդի մտածողության բնույթին և օրինաչափություններին: Նշելով, որ «Քաջ Նազարում» Թումանյանը կատարել է հավելումներ, ավելացնում է.

«Կարող եմք վկայել, որ իր ավելացրած մանրամասները չեն հակասում մեր ժողովրդի այդ ստեղծագործության բնույթին և հարազատությանն, ընդհակառակն նրանք լրացնում են այն ազգային իմաստությունը, որով տոգորված է Քաջ Նազարի բազմաբովանդակ նյութը»¹:

Նույն մոտեցումը ընկած է «Աղավնու վանքի» գնահատման հիմքում: «Հապավելով ավանդության այս մասը (կրոնական իմաստ ունեցող հատվածը. - Գ. Ա.), Հ. Թումանյանը գորապես շեշտած է ավանդության հիմնական գաղափարը»: Իրեն հայտնի նյութը բանաստեղծը «համախմբած է տարբեր ձևերով. մի քանի գիծ հապաված է, մի երկու կետ պարզած, թերի թողածին տված է լրիվ կերպարանք և վերափոխած է ոգին, առանց հիմնական գաղափարին ձեռք տալու»²: Այս կարգի վերամշակումը «ազգային ավանդություններ(ի) վերստեղծում» է: Հենց այդ ազատ վերստեղծումն է, որ Թումանյանի հեքիաթին հաղորդել է փիլիսոփայական խորք և արդիական հնչեղություն. «Այո, մինչև այսօր էլ թագավորում է Քաջ Նազարը և իրավունք ունի ծիծաղելու այս հիմար աշխարհի վրա: Նա ապրում է ամեն տեղ... ու քանի կա մարդկային սնափառությունն ու վեհերոտությունը և ինքնաներշնչումը ու նախապաշարման անհիծյալ հակումը՝ դեռ մարդկությունը շատ կը տեսնի «Վախկոտ նազարների Քաջ Նազար դարձած»³:

Քաջ Նազարի Թումանյանի մշակումը Աղբալյանը համարում էր հայ գրականության մնայուն արժեքներից, «որ ունի մեծ ստեղծագործութեանց անկասկածելի կնիքը - լինի մատչելի և թելադրական մանուկին ու մեծին և ազգի բոլոր խավերին»⁴: Քննադատը թումանյանական

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 134:

²Հորիզոն, 1913, N 53:

³Նույն տեղում, էջ 190:

⁴Նույն տեղում, էջ 191:

ուղղությունը, որի բնորոշ գիծը «ժողովրդի զգացումով ու մտածումով» տոգորվելն է, դիտում է իբրև գրականության զարգացման կենսականորեն կարևոր օրինաչափություն:

Գուշակել ժողովրդի «իդեալը գեղեցիկի աշխարհում» և տոգորվել նրանով՝ սա ժողովրդայնության հասնելու ճանապարհն է և բարձր քննադատության չափանիշը: Չի կարելի հայ գրողներին գնահատել գեղեցիկի մասին այլ ժողովուրդների ըմբռնումներով: «Մենք պիտի աշխատենք գտնել հայ ժողովրդի իդեալի ըմբռնումը» և դրանով գնահատենք հայ գեղարվեստի արժեքները, «եթե ուրիշ ազգի, թեկուզ զարգացած ազգի տեսակետով մոտենանք, սխալ կլինի»¹:

Ընկած լինելով արևելքի ու արևմուտքի սահմանագծում հայ ժողովուրդը յուրացրել է երկու աշխարհամասերում ապրող ժողովուրդների հոգևոր արժեքների ավանդույթները: Սա յուրահատկություն է, որ չպետք է անտեսել:

5

20-րդ դարասկզբին գրական ու գեղարվեստական նորագույն ուղղությունները, իրենց բնորոշ հակասություններով, այս կամ այն չափով արձագանք գտան նաև հայ իրականության մեջ: Մեր կյանքը առավել նպաստավոր հող էր ստեղծում այդ ուղղությունների ներթափանցման համար: 1905-1907 թթ. հեղափոխության պարտությանն ու սոցիալական հակասությունների սրմանը ավելանում էր ազգային երազանքների փլուզման ողբերգությունը:

Քննադատը չէր կարող անտարբեր անցնել գրականության ու արվեստի մեջ դրսևորվող նորագույն երևույթների կողքից: Վերաբերմունքը, դիրքորոշումը ինք-

¹Նույն տեղում, էջ 191:
9.7

նին բնութագրում է քննադատին, բացահայտում նրա հայացքների ուղղվածությունը:

Նահանջը ռեալիզմի ու ժողովրդայնության դիրքերից բացատրում էր «-ամենամեծ հասարակական և ընկերական» շարժման պարտությամբ.

«...Շատ իդեալներ չիրականացան, շատ հույսեր մարեցին. եկավ մի ընդհանուր լքում և վիատություն... ամեն մարդ լքեց ընդհանուր գործը և անձնատուր եղավ իր անհատական կյանքին: Բնական էր, որ գլուխ բարձացնեին մի կողմից վայելքը, մյուս կողմից ինքնազրկությունը»¹: Թող որ սա երևույթի սպառնիչ բացատրություն չէ, բայց գլխավոր նախադրյալներից մեկը ճիշտ է կոահված:

Մշտապես հանդես գալով ռեալիստական, ժողովրդային գրականության դիրքերից, 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում ընդգծված բացասական դիրքորոշում ունի ոչ ռեալիստական ուղղությունների ու հոսանքների հանդեպ: Այդ շրջանի հոդվածներն ու գրախոսականները հաստատում են, որ շարունակում է հավատարիմ մնալ դասական ռեալիզմի ավանդներին: Տարբեր առիթներով բազմիցս իր դժգոհությունն է հայտնել գրական այն դպրոցներից, որոնք հրաժարվում են «հանրային նպատակներից»՝ «ամայացած շրջապատում» գերի դառնալով «սեփական սրտի բախումների» և «սեռական բնազդի մթին խլրտումների».
«Մարդն իրեն զգում է մեռակ, լքված. վերը երկինք, վարը իր «ես»-ը և դիմացը հակառակ սեռին պատկանող էակները: Ինքնանպատակ սիրո վայելքը հասցնում է իր բնական վախճանին՝ հիասթափության կամ հագեցման, և մարդիկ ավելի քարշ են գալիս, քան ապրում: Տխուր խազերը գերակշռում են բոլոր եղանակների մեջ և թախ-

ծությունը համակում է ամեն վրձին, երգ ու երգիչ: Կորչում է մտքի պայծառությունը, զգացումի թափը և կամքի ամրությունը»¹:

Նորարարությունն այն դեպքում արժեք ունի, երբ չի հրաժարվում «հանրային նպատակներից», այսինքն նորի որոնումը չի հանգում գրականության հասարակական կոչման ու արժեքի մերժմանը կամ թերագնահատմանը: Արտաշես Տեր-Մարտիրոսյանի «Աշնուտ» ժողովածուի գրախոսականում ուղղակի գրում է. «Հեղինակն ըստ երևույթին հետևում է բացի Տերյանից՝ նաև նորագույն անտաղանդ և մարդկանց զարմացնելու մարմաջով բռնված շարքթուխներին, կարծելով նոր բան է գտել: Կանցնի տասը տարի և այսօրվա թերթն իրենց ոտանավորներով լցնող այդ «բանաստեղծներից» մեկի անունը չի մնա: Նորաձևության հետևում են ծանծաղամիտ գլուխները և թեև զբաղեցնում են մարդկանց, բայց ամենաշատը մի քանի տարի, այնուհետև ուրիշ նորաձևություն գալիս վանում է հինը: Ստեղծագործությունը ծանր խաչ է և ոչ նորաձևություն»², - գրում է 1912 թ.: Մի այլ առիթով՝ «Կան հեղինակներ, - և նրանք վերջերս շատ են մեզանում, որոնց համար արտաքին աշխարհն իբր վերստեղծման նյութ անարժեք է բնավին... Նրանք մտահոգված են իրենց անձնական ապրումները վերարտադրելու և երազները կերպարանելու»³: «Իրենց ներքին բովանդակությունը զեղող» այս հեղինակների ստեղծագործական անկեղծությանը քննադատը չի կասկածում: Բայց և գտնում է, որ դա մերժելի անկեղծություն է, քանի որ տանում է դեպի անտրտունջ համակերպում: Աղբալյանի համար էականը գրականության հասարակական բովանդակությունն է: Այս ելակետից է խստորեն մեր-

¹Նույն տեղում, էջ 249:

²Նույն տեղում, էջ 238:

³Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. II, էջ 240:

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 240-241:

ծում անկումային գաղափարաբանությունն ու գեղագիտությունը, քանի որ վերջիններս անհատին հաշտության են մղում «բախտի սուր սլաքների» և «անհրաժեշտությունների հետ»...

Մերժելով անորոշության, մթամած զգացումների ու մշուշային ապրումների գրականությունը՝ երիտասարդությանը կոչ էր անում կապվել կյանքին, մաքառել գեղեցիկ իդեալների իրականացման համար, գրականությանը կենդանություն հաղորդել կենսական ապրումների, գաղափարների շնչով: Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով գրական երիտասարդության, գրական հերթափոխի անի ու զարգացման խնդիրները՝ չէր բավարարվում սուկ դատապարտելին մերժելով: Անգամ ավագների մասին գրելիս փորձում էր գուշակել տաղանդի զարգացման ուղղությունը, խորհուրդներ էր տալիս, ուղիներ նշում: Ահա ընդարձակ մի բնորոշում գրական զանազան «իզմերի» լաբիրինթոսում խարխափող երիտասարդության մասին. «Ի՞նչ սերունդ է սա, որ չի կարողանում իր դիրքը որոշել կյանքում, տիրել նրա ուղիներին և բարիքներին, հարձակումով գրավել կին ու դիրքեր և շատաչով անցնել աշխարհի վրա քանդելով ու ստեղծագործելով:

Հայության կյանքում բարձրանում է մի ալիք և փոխանակ կազմ ու ջլապինդ կուրծքեր ու բազուկներ գտնելու իր դեմ, որ թոչեն նրա ուսին և բաց ծովերը լողորդեն, նա գալու է ծածկե շարժուն դիմակներ, որոնք մտորում են, երազում և անձկությամբ հարցնում՝ ո՞վ է մատնել մեզ մառախուղի և այլն...

Գրականության մեջ նրանք սեր են կապում նյարդային և միզամած հեղինակների և իրենց վարակում վհատ ու անկենսունակ տրամադրություններով ու զգացմունքներով, իբր թե մարդկությունը ստեղծած չիներ հանճարներ, մարդկային մտքի և զգացումի բարձրագույններ, ուր օղը սառն է, մաքուր և կազդուրիչ և որտե-

ղից վհատության մշուշապատ հովիտները երևում են խղճուկ տափակության մեջ...

Կյանքն անցնում է հակառակ ամեն տեսակ վայնասունի, «ախ»-երի և «ավաղ»-ների և ապրում ու հաղթում է նա, ով հզոր է իր տրամադրությամբ ու առույգ իր ինքնազգացումով: Ամեն մաքառում բերում է կենդանություն ոչ միայն մաքառողին, այլև նրա շրջապատին:

Թող երիտասարդությունը ականջին օղ անի այս ճշմարտությունը¹:

Այս նորագույն ուղղությունների աղբայրանական մերժումը զերծ էր այն ծայրահեղություններից, որ նկատվում էր «ուղղափառ» ռեալիստների հողվածներում: Նա հակված էր այդ ուղղությունների մեջ տեսնելու նաև ձեռքբերումներ... Շատ բարձր էր գնահատում լքումի ու վհատության, «տրամադրության ամենատաղանդավոր ներկայացուցիչ» Վ. Տերյանին, որը «գունավորում էր իր ազդեցությամբ բոլոր սկսնակ բնաստեղծների երկերը»: Քննադատը հատկապես ընդգծում էր բանաստեղծական արվեստի ասպարեզում այդ ուղղությունների ձեռք բերած նվաճումները: «Հին Աստվածների» կապակցությամբ ուշագրավ դիտարկումներ է անում սիմվոլիստական դրամայի բերած նորությունների վերաբերյալ: Գրականությանը հասարակական առաջադեմ գաղափարներին սպասարկուի դեր հատկացնելով՝ նման գաղափարներից խուսափող, «եսական երջանկության անձնատուր» գործերի ու հեղինակների արժեքը հայտնաբերում է մի կետում, որը դարձյալ հանգում է բարձր գաղափարներին ծառայելուն. «Մանվելյանի գրքույկը մի ցուցափայտ է՝ տնկված մեր կյանքի ճամփին. նա ցույց է տալիս թե դեպի ուր չպետք է գնա մեր որոնող երիտասարդությունը»²:

¹ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 239:

² Հորիզոն, 1912, N 239:

Գրական երիտասարդության մի սովոր մասի համար կինը սուկ «մի միջոց է տղամարդու երջանկության, մի հարդարանք: Սերն է «խորհուրդ խորհանը» կյանքի, նրանից դուրս չկա նպատակ, չկա մի բան, որի համար արժենար ապրել: Ավելի հեռուն չի կարող գնալ մարդկային հոգու աղքատությունը»¹:... Միանշեռ կինն ու սերը ոգևորության աղբյուր պետք է լինեն մեծ նպատակների իրականացման ճանապարհին և՛ կյանքում, և՛ գրականության մեջ, սա էր նրա համոզումը: Ահա մի հատված Համաստեղին գրած նամակից. «Սերն այնքան նույնացած է հիմա սեռի հետ, որ «մարդն» անտեսվում է և «կինն» է մարդու աչքին երևում... «Մարդուն» սիրելով պետք է «կին» առնել և ոչ կին սիրելով մարդ որոնել նրա մեջ»²: Գրական երիտասարդության համարձակ նորարարական փորձերի մեջ նկատում և արժեքավորում էր նաև առողջ ու կենսահաստատ միտումները, գեղարվեստական հետաքրքիր հայտնությունները: Այս տեսակետից ուշագրավ է Իս. Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ» ստեղծագործության գրախոսականը: Նկատելով, որ այս «գրվածքն իր ձևով գրական ոչ մի սովորական տեսակի չի հարմարում», որ այն «մի զեղում է կամ լավ ևս մի խանդավառ հիացում սիրո գոյության», քննադատը ոգևորությամբ արձանագրում է այն խանդավառ պաթոսը, որ առանձնացնում է երիտասարդ հեղինակին իր հասակակիցներից և ոչ միայն հասակակիցներից. «Այս տրամադրությունը նոր ու ցանկալի մեր երեկվա լալկան և այսօրվա վհատ գրականության մեջ»³: Ի դեմս Իս. Իսահակյանի արձակ պոեմի՝ Աղբալյանը տեսնում էր երիտասարդությանը, ընդհանրապես գրականությանը ներկայացրած իր պահանջի իրականացումը. «Հար-

ձակումով գրավել կին ու դիրքեր և շատաչով անցնել աշխարհի վրա»... Հասարակական լայն բովանդակության, գրականության դերի առողջ ըմբռնման դիրքերից էր գնահատում այս ստեղծագործությունը. «Մի թարմ, կազդուրիչ հով է փչում այն պատանեկան խիզախ կանչերից, այն ինքնավստահ հրավերներից, որ նետում է հեղինակը դեռատի սերունդին: Ես զգում եմ վհատության մղձավանջից ազատված ապագա մարտիկների զուսպ ուժերի բարախումը դեռ չամրացած կուրծքերի տակ. կարծես վարից բարձրանում են նրանք բեմը՝ պայծառ, գորեղ ու նշանակալից մի դեր խաղալու. ինչ ոգևորություն, ինչ լայն համակրություն, ինչ հմայիչ ինքնավստահություն»¹: Սա գրական երկուսի գնահատական լինելուց բացի նաև գաղափարական ինքնաբացահայտում է: Այս տողերի մեջ հառնում է ապագայապաշտ քննադատը, որի համար գրական ստեղծագործությունների գնահատման կարևոր չափանիշներից մեկն էլ այն է, թե որքանով են այդ ստեղծագործությունները կոչված ծառայելու լուսավոր գալիքին: Քննադատությունը ուղղված պետք է լինի նաև գալիքի գրողներին, պետք է նախապատրաստի նրանց ծնունդը: 1916-ին հրատարակելով Վ. Տերյանի «Տխրություն» բանաստեղծության մասին՝ իր դիտողություններն ավարտում է իմաստալից մտորումներով, որոնք հետաքրքիր են հենց այդ տեսակետից. «Ռումբերի որոտով և արյան հեղեղով աշխարհ է գալիս վաղվան մարդկությունը: Ավերակների վրա պիտի բարձրանա ավելի արդար, ավելի մարդկային մի շենք: Արդեն ծլում է նոր կյանքը և մարդկային ոչ մի հուր չի կարող քանդել նրա ծիլը, որ ժպտուն աչքով նայում է արևին: Անհայտ տաղանդները աճում են անշուշտ նաև մեր կյանքում, այս թո՛հ ու բո՛հի մեջ և լուռ ու առանձին՝ իրենց ներքին աշխարհում փայփայում են նոր

¹Նույն տեղում:

²Ավանգարդ, 1989, 19-ը ապրիլի:

³Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 224:

¹Նույն տեղում, էջ 222:

գեղեցկության շքեղ պատկերները: Այդ ապագա վարպետներին գուցե սատարեն այս քանի մը տողերը: Դրանով միայն կարելի է արդարացնել սրանց երևումը արյունի և արցունքի այս ահավոր օրերին...»¹:

Աղբայլան-քննադատն օժտված էր գրական տաղանդը առաջին իսկ քայլերից ճանաչելու եզակի կարողությամբ: Գեղարվեստական երկը հասկանալու, ժամանակի հասարակական կյանքի ու գրողի տաղանդի առանձնահատկությունների հաշվառմամբ այն բացատրելու կարողությունը նրա մոտ ներդաշնակորեն գուգակցվում էր տաղանդի ընթացքին հետևելու համբերատար հետաետությանը: Դրա շնորհիվ է, որ արդեն իսկ առաջին գրքերով նա մեծ գալիք գուշակեց Լ. Ծանթին, Ավ. Իսահակյանին, Վ. Տերյանին, Ե. Չարենցին, Ստ. - Ջորյանին... Նորից հիշենք սկսնակ Լ. Ծանթի առաջին ելույթի գնահատականը. «Այնպիսի մի դեբյուտ, որպիսին «Երազ օրերն» է, մի սկսնակ գրողի համար մեծ բան է... այդպես սկսողից ամենայն հանգստությամբ կարելի է սպասել ապագայում ավելի կատարյալ և գեղարվեստական երկեր»²: Այդպիսի ենթադրության համար քննադատին հիմք էր տալիս այն, որ «Ծանթը մի կենսուրախ, լավատեսական, իդեալականի հակած և անկեղծ գրող է... իսկ ինչումն է տաղանդի ուժը, եթե ոչ անկեղծության մեջ»³:

Աղբայլան-քննադատի պրոֆեսիոնալ տաղանդը վկայող իրողություններից մեկն էլ այն է, որ նա ոչ միայն կարողանում էր ճշգրտորեն բնութագրել սկսնակի առաջին գործը, այլև գրեթե անսխալ գուշակում էր տաղանդի զարգացման ուղղությունը:

¹ «Հորիզոն», 1916, N 17:

² «Մուրն», 1896 N 12, էջ 1605:

³ Նույն տեղում, էջ 1607:

Գնահատելով Լ. Ծանթի «Երազ օրերը» և նկատելով, որ գրողը հեռու է կյանքի դժվարությունների տակ կքած մարդուց, չի ուզում տեսնել «մի կտոր հացի համար» իր «մարմնական ու հոգեկան ուժերը» վատնող ամբոխին վերջինս նրան հետաքրքրում է միայն տեսականապես, կամ որպես իր հերոսների խոսակցությունների առարկա, կամ որպես նրանց ցնորքների և ձրգտումների հեճակետ՝ հանգում է մի հետևության, որը հաստատվում է Ծանթի հետագա ողջ ստեղծագործությամբ. «Գործնականապես նա չի հետաքրքրվում, ցույց չի տալիս նրան (ամբոխին. - Գ. Ա.) և իսկ չի էլ ցույց տա»): Իսահակյանի «Երգեր ու վերքեր» գրքի առիթով գրած ընդարձակ հոդվածում մասնավորապես նշում է բանաստեղծի խառնվածքի երկու կողմը՝ բուն ժողովրդայնությունը, որ շատ բարձր է գնահատում, և բանաստեղծի ոռմանտիկ սլացումները, բանաստեղծական ես-ի տիեզերական ընդհանրացումները, որոնք բուրրովին դուր չեն գալիս նրան: Իր հոդվածը Աղբայլանն ավարտում է իրեն շատ բնորոշ մի հարցումով. «Մենք տեսանք Պ. Իսահակյանի հոգու շրջման կետերը՝ մեկը ժողովրդի մեջ, մյուսը վերացականության սատույցներում. սիրով նա կապված է երկրի հետ, իսկ ինչ - որ անհասկանալի վերքերով «հեռու ափերի» հետ: Որտեղի՞ց է սկսել և ո՞ր է գնում, մի՞թե դեպի սառն ու մեռած բարձունքները...»

Չենք ուզում հավատալ»¹:

Չհավատաց և տարիներ հետո իրավունք ուներ հպարտանալու. «Ուրախ եմ, որ այդ գրքին առաջին գնահատողն եղած եմ և անոր հեղինակի մեջ մատնանշած եմ նշանավոր բանաստեղծ մը»²:

¹ Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 108:

² Նույն տեղում, էջ 120:

Իսահակյանին Ավիրված հետագա հողվածներում խորացրեց բանաստեղծի ժողովրդայնության մասին իր հայացքը և նորովի մեկնաբանեց նրա բանաստեղծական ես-ի համապարփակ ընդհանրացում-ընդգրկումները:

Հավատարիմ իր սկզբունքին՝ պատրաստվում էր գրել Տերյանի երկրորդ գրքի մասին ևս («Բանաստեղծություններ», 1912): Ռուբեն որդու փրկած թղթերում պահպանվել են դեղնավուն թղթի վրա կատարված նշումներ, դժվար ընթեռնելի, որոնք, սակայն, ինչ-ինչ պատճառներով հողված չեն դարձել:

Բայց նա չնոսացավ Տերյանին: «Ռուսահայ գրականությունը 1912 թվին» ընդհանուր տեսության մեջ խոստովանեց, որ հեղափոխության պարտությամբ պայմանավորված վիատության ու լքումի տրամադրությունների «ամենատաղանդավոր արտահայտիչը» Վահան Տերյանն է, «որ այսօր կենտրոնական դեմքն է ռուսահայ բանաստեղծության մեջ», իսկ նրա «Բանաստեղծություններ» ժողովածուն «անցյալ տարվա հրատարակությունների մեջ... անտարակույս ամենից աչքի ընկնող երևույթն է մեզանում»¹:

Հայ գրողների ընկերության նիստերից մեկը Ավիրվում է «բանաստեղծ Վահան Տերյանին» (բանախոս՝ Վարդգես Ահարոնյան), հանդես է գալիս նաև ինքը՝ անելով մի քանի դիպուկ լրացումներ: «Ն. Աղբալյանն ասում է, որ Տերյանի ստեղծագործությունները քննելիս չպետք է նրանք խիստ որոշ՝ բաժանումների ենթարկել: Դասախոսի ասածով այնպես դուրս եկավ, որպես թե սերը, տխրությունը, միայնությունը և այլն առանձին ջոկված են Տերյանի մոտ, միևնդեռ դրանք միաժամանակ կատարվող բաներ են»²: Տերյանի կրած ազդեցությունների խնդրում դասախոսի արած դիտողությունները հա-

¹Հորիզոն, 1913, N 4:

²Հորիզոն, 1913, N 270:

մարել է «արժեքավոր»: Իսկ դասախոսը մասնավորապես նշել է ռուսական և ֆրանսիական «դեկադենտների շկուլայի» ազդեցությունը:

Հաջորդ տարին Ա. Տիգրանյանի մասին գրախոսականում հպանցիկ անդրադառնում է Տերյանին՝ կատարելով մի մեծ ընդհանրացում և սրբագրելով «Զանգակի» հողվածի վերապահումները: «Մթնշաղի անուրջներով» նշանավորվում էր պոեզիայի մի նոր շրջան: 80-ական թթ. բանաստեղծության կենտրոնական դեմքը Հ. Հովհաննիսյանն է, 90-ականների՝ Թումանյանն ու Իսահակյանը, 900-ականների՝ Վ. Տերյանը: «Վ. Տերյանը նույնպես դարձել է կենտրոնական դեմք. շատերը գում են նրա բանաստեղծության թարմությունը և ավելի կամ նվազ չափով ազդվում նրա տրամադրությունից, լեզվից, արտահայտության ձևերից, նյութերի մշակման եղանակից»: Նրա ստեղծագործության մեջ «նկատվում է ձևի հոգատար մշակում և մեր լեզվի թաքուն կարողությանց նրբին զգացում»¹:

Իսկ 1916-ին հրատարակած «Տրտում օրերից» (Վ. Տերյանի մասին) մանրապատումը վկայում է, որ քննադատը անընդհատ զբաղված է եղել Տերյանի ստեղծագործությամբ: Հետագա տարիներին էլ բազմիցս դասախոսություններ է կարդացել նրա մասին:

Այս իմաստով հետաքրքիր է Ստ. Զորյանի և Ե. Զարեանի օրինակը ևս:

Ստ. Զորյանի «Տխուր մարդիկ» պատմվածաշարը լույս տեսավ 1918 թվին, Թիֆլիսում: Առաջաբանը, որով երիտասարդ հեղինակը ներկայացվում էր գրական աշխարհին, Աղբալյանի գրչին էր պատկանում: «Նշանավոր հեղինակի մասին գրել, նշանակում է վերժանել ու մեկնել նրա գործը. սկսնակ մեկի մասին խոսել, նույնն է

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. II, էջ 239:

թե հանձնարարել նրան ընթերցողի ուշադրության»¹:
 Հավատարիմ վերծանողի ու մեկնողի իր կոչումին՝ ոչ միայն ներկայացնում է սկսնակին, այլև բնութագրում է նրա տաղանդը, գուշակում զարգացման ուղղությունը:

Երիտասարդ արձակագրի առաջին գրքի գլխավոր արժանիքը ռեալիստական ուղղության պատկանելն է: 1900-1910-ական թթ. գրական զարգացումը երևան է հանել մեծ թվով ստեղծագործողների, որոնց «համար արտաքին աշխարհը» իբր վերստեղծման նյութ «անարժեք է բնավին»: Եվ ահա «մի քանի անուններ», երիտասարդ Ջորյանը նրանց հետ, փորձում են շարունակել Շիրվանզադեի սկսած «գրական աշխատանքը»: Սրանք «ձգտում են արտաքին իրականությունը, ինչպես որ կա, հասկանալ և մեկնել իրենց անձնական ապրումների օգնությամբ»:

Սակայն ուժեղ բնավորություններ չեն Ջորյանի հերոսները: «Նկուն սիրտ է Ստ. Ջորյան և աշխարհից ձեռնթափ: Համակերպություն, ահա իր հիմնական տրամադրությունը, իր սրտի պես համակերպած ու անզոր են իր պատկերացած անձերը... Նրանք ապրում են անջատ, ամեն մեկը հյու իր ցավին ու ճակատագրին, որի դեմն առնելու անճարակ է կամ անզոր: Անողորմ ուժեր ծանրանում են ամենքի վրա և պայքարը նրանց դեմ հարուցանում է ծիծաղելի կացություն, թշվառագին վիճակ կամ հանցանք: Ահա թե ինչու իր պատկերները տոգորում են տրտմությամբ»²: Մեծ կյանքից դուրս գետնաված այս մարդկանց՝ գյուղի և գավառական քաղաքի բնակիչներ, Ջորյանը ներկայացնում է բնության ու կենցաղի համապատկերում: Քանի դեռ սրանք են Ջորյանի հերոսները, նա կստեղծի միայն մանր պատկերներ:

Ջորյանի գրական վարպետության մի քանի առանձնահատկություններ բացահայտվում են արդեն իսկ առաջին պատմվածքներում: «Իր աչքը սուր է կյանքի մանրուքը դիտելու և շատ հաճախ կարողանում է բնորոշը գատել»... Սրան ավելանում է երգիծելու շնորհքը, բնության գեղեցկությունը զգալու և վերարտադրելու կարողությունը: «Աչքի ընկնող է և Ստ. Ջորյանի վերլուծական կարողությունը»: Մի քանի պատմվածքներ, որոնցում երիտասարդ արձակագիրը կարողանում է մեկնել, բացահայտել, ընդհանրացնել իր տեսածը, «անհասկանալին» ու «պատահականը», հիմք են տալիս քննադատին եզրակացնելու, թե «հեղինակը կարող է ավելի հետազայում արժեքավոր երկեր տալ մեզ, քան ինչ որ գետնել է ժողովածուի մեջ»: Նրա աչքից չեն վրիպում այն աղերսները, ուսումնառության իմաստով, որ դրսևորում են Ջորյանի մի շարք պատմվածքներ Չեխովի ու Մոպասանի ստեղծագործության հետ: Քննադատը խրախուսում է այդ կապը, որը կարող է հետագա ստեղծագործական հաջողությունների խթան հանդիսանալ. «Ուսումնասիրել ոչ թե նրանց (Բոկաչչո, Մոպասան, Չեխով. - Գ. Ա.) հետևելու ստրկաբար, ինչ որ կլինեք ծիծաղելի, այլ նրանց օգնությամբ սեփական ճամփան հարթելու, որ կլինեք մի ծառայություն մեր գրականության և փառք ու հռչակ հեղինակին»¹: Հենց այս ուղղությամբ էլ ընթացավ արձակագրի տաղանդի զարգացումը:

Փորձված ու նրբաճաշակ քննադատը իսկույն նկատում է երիտասարդ Չարենցի տաղանդը. որքան անվերապահ և դիպուկ է նրա ձևակերպումը. «Վ. Տերյանի հետքով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականության հորիզոնից»: Եթե առաջին երկու գրքույկի մեջ Աղբալյանը տեսնում է «տաղանդավոր սկսնակին», ապա հե-

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. 2, էջ 239:

²Նույն տեղում, էջ 141:

¹Նույն տեղում, էջ 248:

տագա գործերում արդեն հայտնաբերում է ձևավորված բանաստեղծին: Այդ վկայում է նաև հայտարարության ձևակերպումը՝ «Մի նոր բանաստեղծ-Չարենց»: Ահա ունկնդրի վկայությունը ևս. այդ օրը ամբողջ Երևանն իմացավ, որ նոր մեծ բանաստեղծ է ծնվել: Հիացմունքով լսեցինք Աղբայանին. դասավորեց Չարենցի բանաստեղծությունները երեք մասի, խորունկ վերլուծում ըրավ, խոսեցավ մեկուկես ժամից ավելի...»¹:

Այս գեկուցումը փաստորեն Չարենցի հայտնությունն էր: Իրավացի է քննադատը. «Լրագիրները հաշիվ տվին դասախոսության մասին և Ե. Չարենց դարձավ մի անուն»: Իսկապես, 6-7 գիրք էր հրատարակել բանաստեղծը, բայց կիսաբերան ու կցկտուր երկու գրախոսականից այն կողմ ոչինչ չէր եղել, իսկ Աղբայանի գեկուցումից հետո գրականության մասին ոչ մի լուրջ խոսակցություն առանց Չարենցի այլևս չէր լինում:

Մամուլի կցկտուր արձագանքներից միայն կոահել կարելի է, թե «մի լուրջ քննադատը» ինչպես է արժեքավորել Չարենցի ստեղծագործությունը: «Չգիտեմ, կենդանի է գրողը, թե մեռած,- գեկուցողի խոսքը հիշում է Կ. Քոթանջյանը,- բայց նրա երկերից էլնելով կարելի է ասել, որ բանաստեղծը պետք է, որ բոլորած լինի 40 - տարին»²: Կարելի է ենթադրել, թե ինչ խորություններ է տեսել քննադատը բանաստեղծի երկերում, որ նրան վերագրել է արդեն «իմաստուն այրության» տարիք, մինչդեռ այդ երկերը ստեղծվել էին 16-21 տարեկան հասակում:

Աղբայանի գեկուցումից հետո Չարենցի ստեղծագործությանը հաճախ են անդրադառնում՝ երբեմն վիճարկելով նրա տեսակետները: Հենց այսպես կողմնակիորեն կարելի է կոահել նրա որոշ սկզբունքները: «19

¹ «Ձահակիք», Բեյրութ, 1963, N 12, էջ 7:

² «Սովետական գրականություն», 1967, N 9, էջ 22:

թվին հանդես եկավ մի այլ քննադատական՝ Եղիշե Չարենց: Մեր ականավոր քննադատ Ն. Աղբայանը հմտալից վերլուծությամբ դասեց նրան հայ գրական ընտանիքի մեջ և այն էլ բավական պատվավոր տեղ, տալով միաժամանակ երիտասարդ բանաստեղծին մի լայն վկայական,- գրական նոր և արթնացնող տրամադրության կրողն ու երգիչը լինելու պատիվ»¹: 10-ական թվականների մեր գրականության ընդհանուր համապատկերում, որը գերազանցապես շնչում էր «ողբի ու որբի» թեմաներով, արյունոտ ու մահաշունչ պատկերներով՝ փրկության համար վերակոչելով հեթանոս աստվածներին կամ Նաիրիի հնամյա ոգին, Չարենցի պոեմները բերում էին պայքարի ու ոգևորության անսպառ հնարավորություններ, հեղափոխության հրացույքի տակ տեսնում էին կյանքի գեղեցկությունները և փառաբանում դրանք: Կենսասիրությունը «Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմների մեծագույն առավելությունն էր, մեր ժողովրդի համար այնքան անհրաժեշտ մի հատկանիշ: Քննադատը այդ պատիվը վերցնում է Չարենցից և տալիս նրա տաղանդավոր ժամանակակիցներից մեկին. «Աղբայանի այն պնդումը, թե գրական այն նոր, կենսասիրտ ու աշխարհասեր տրամադրությունը, որ ունի Չարենցը և որ նրան է պատկանում առաջնությունը ուղիղ չէ... այդ տրամադրության նախակարապետը Ավ. Իսահակյանն է իր «Հեքիաթ արևի տակ» երկով»²: Թերևս որոշ ճշմարտություն կա քննադատի դիտողությունների մեջ, քանի որ Իս. Իսահակյանի այս ստեղծագործությունը, իսկապես, գեղեցիկ ու ներդաշնակ իրականության մասին մի երկ է՝ ողողված լույսով, գեղեցիկ ու ծիրանագույն երագներով: Բայց այդ երկը չի կարող «կենսասիրտ ու աշխարհասեր» այն տրամադ-

¹ «Ծառաջ», 1920, N 39:

² Նույն տեղում:

րության սկիզբը լինել (ոչ առավել ևս Դ. Վարուժանի ստեղծագործությունը), որի գաղափարական ու ստեղծագործական ակունքը սոցիալիստական հեղափոխությունն էր՝ աշխարհը վերափոխելու, այն համընդհանուր գեղեցկության թագավորություն դարձնելու խոստովաներով:

Աղբայլանը կոսիել է Չարենցի տաղանդի մի առանձնահատկությունը ևս՝ համակողմանիությունը, առանձնահատկություն, որ քննադատի ընդդիմախոսները ներկայացրին իբրև Չարենցի... թերություն: «... Եթե մնանք այն եզրակացության, ինչ անում է Աղբայլանը, Եղիշե Չարենցը չունի դեռ իր հաստատ մնայուն հուզական կենտրոնը»¹: Նկատի ունենալով Աղբայլանի հետագա տարիների զննումները ևս, կարելի է եզրակացնել, որ քննադատը մկատի ունի տաղանդավոր սկսնակի ստեղծագործական «բազմադիմությունը»: Իսկապես, բացառությամբ թերևս Դ. Վարուժանի, դարասկզբի բանաստեղծական աստղաբույլի բոլոր մշանավոր ներկայացուցիչները շատ էին մման իրենք իրենց (սա իբրև տաղանդի առանձնահատկություն և ոչ իբրև թերություն): Մինչդեռ Չարենցի «Երեք երգն» ու «Դանթեսական առասպելը», «Կապուտաչյա հայրենիքն» ու «Սոման», «Ծիածանն» ու «Ամբոխները խելագարվածը», ինչպես ակունքների, այնպես էլ գաղափարականգեղարվեստական յուրահատկությունների առումով, միևնույն բանաստեղծի անհատականության ու ոճի ներքին միասնության կնիքը ունենալով հանդերձ, իրարից տարբեր էին ու բազմազան: Եթե Աղբայլանի մման պրոֆեսիոնալները կոսիում էին այս առանձնահատկությունը, ապա սովորական գրական մարդիկ դրա մեջ տեսնում էին... տաղանդի բացակայություն: «Բանաստեղծը պետք է և կարելիություններ գերշնչի»,- «հաստատ մնայուն հուզա-

¹Նույն տեղում:

կան կենտրոնի» բացակայությունից այս եզրակացությանն է հանգում Աղբայլանի ընդդիմախոսը:

Բանաստեղծը երբեք չմոռացավ գրականագետ-նախարարի իմաստավորված հովանավորությունը: Երբ հանգամանքների բերումով Աղբայլանն անցավ արտասահման՝ մվիրվելով գրական-մանկավարժական գործունեության, Չարենցը բարեկամների միջոցով նրան ուղարկեց իր գրքերը («Երկերի ժողովածուի» մոսկովյան երկհատորյակը, «Ռոմանս անսերը», «Պոեզոգուոնան», (հինգերորդը հնարավոր չեղավ պարզել)՝ (չերմ մակագրություններով: «Հին ու մի քանի նոր հատվածները կարդացի մեծ հաճույքով, երբ ձեռք առա «Ռոմանս անսեր»-ը, որ անպատկառ բովանդակություն ուներ և ոգու անկում էր ցուցադրում՝ գայրույթս պահել չկարողացա: Իր իսկ անպատկառ ոճով մի մամակ գրեցի ու իր նորօրինակ տաղաչափությամբ մի «պոեզոկարծիք» շարադրեցի»¹: Աղբայլանի վրա ճնշող տպավորություն են թողել «Ռոմանս անսերը» և «Պոեզոգուոնան», ընդդիմախոսը հեռու էր Չարենցի մոլորությունների գրական-հասարակական ընկալումից, բայց գրականագետի ճաշակն ու ներքին զգացողությունը կոսիում էր շեղումը: Նախորդ շրջանի երգերով անկեղծորեն հիացող քննադատը անողորջությամբ դատապարտում է սիրելի բանաստեղծի ձախությունները: Ակադեմիկոս Կ. Մելիք Օհանջանյանի՝ վկայությամբ Չարենցը մտերիմներից ցույց էր տալիս մամակը և ասում՝ «Տես, Նիկոլն ինչ է գրել»: Անվանի գրականագետի խոսքը, անտարակույս, իր դերն ունեցավ նորագույն գրականության «մանկական հիվանդությունից» բանաստեղծի բուժվելու գործում: Թվում է՝ հիմքից զուրկ չէ Աղբայլանի այն կոսիումը, թե «Սիրելի Ա-ին» բանաստեղծությունը իրեն է մվիրված: Անհամոզիչը, թերևս, գրության թվականի վերաբերյալ դիտողությունն

¹Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 241: 10-7

է,- «թվում է ինձ, որ նա մինչև իսկ պատասխանած է իմ գրությանց և հետքը կորցնելու համար իր բանաստեղծության տակ ուշ տարերթիվ է նշանակած»¹: Հիշենք, որ հին բարեկամին ուղարկած բոլոր գրքերը սկսվում էին «Սիրելի Նիկոլ Աղբալյանին» բառերով: Այդպես է սկսվում նաև հիշյալ բանաստեղծությունը՝ «Սիրելի Ա-ին», որ թվագրված է «1929. 27. 11. Երևան»: Ուշագրավ է, որ այդ թվականին ու ամսին լրացել է Աղբալյանի հայտնի գեկուցման 10 տարին: Ենթադրելի է, որ բանաստեղծությունը գրվել է իբրև վերհուշի արձագանք. չէ՞ որ գրքերից մեկին մակագրել էր. «Սիրելի Նիկոլ Աղբալյանին, իմ առաջին ուսուցչին, որին ես երբեք չեմ մոռանա և երբեք չեմ դադարի հարգել»:

Բանաստեղծության ներքին լիցքը, գրուցային-«մեղայական» տոնը, անցած ուղին հիշելու մասին խոստովանությունը ճշմարտության երանգ են հաղորդում կուսմանը:

Սիրելի Ա-ին

*Ես չեմ մոռացել քեզ, բարեկամ,
 Եվ հիշում եմ քեզ կրկին, կրկին,
 Ինչպես անցորդը թափառական
 Հիշում է միշտ իր անցած ուղին:
 Սիրով է հիշում նա ուղին հին,
 Գուցե թախիծով, սակայն երբեք
 Նա չի ցանկանա կրկին, կրկին
 Թողնել հեռուներն ու դառնալ ետ...
 Երբ անցած ուղին հուշով անշեջ
 Խոցում է, ինչպես կարոտի նետ,-
 Խեղդում է նա այդ կարոտն իր մեջ,
 Որ երբեք, երբեք չդառնա ետ...*

1929. 27. 11. Երևան

Մերժելով Չարենցի ձախությունները՝ Աղբալյանը հույս է հայտնում, որ իր մեծ տաղանդի ուժով նա կգտնի ճշմարիտ արվեստի ուղին. «... Աստված քեզ տվել էր շնորհք թելու վեր, ամեն հնարավորություն կերտելու անանց գեղեցկություններ - երևակայության թոհչք, հորդահոսուն լեզու, զգացումի հզոր պոռթկումեր և մեղմի, երանգի, քնքուշի ըմբռում»:

Արդեն իսկ «Էպիկական լուսաբացը» քննադատը դիտում է իբրև զարգացման նոր փուլ, հին մոլորությունը հաղթահարելու և «դեպի անանց գեղեցկություններ» բարձրանալու սկիզբ:

Որքան հոգատար էր տաղանդի, նույնքան էլ անխընձա էր անտաղանդության հանդեպ: «Վերջին տարիները մեզանում երևացել են մի շարք մեծ ու փոքր գրքեր, որոնց ես կանվանեի տգիտական գրականություն»:

Տգետը մեծամիտ է լինում և անգիտակ իր տգիտության, սա մի նպաստավոր հանգամանք է հեղինակների համար, քանի որ դրանով նրանք ապրում են միամիտ մոլորության մեջ: Բայց խիստ աննպատակ պարագա է ընթերցողի համար, քանի որ ձեռքդ առնելով նրանց գրքերը՝ կարծում ես շահեկան բան գտած լինել և տեսնում ես մեծամտության ու տգիտության մի վիժվածք:

Ա. Ջանյանի «Լիլի»-ն այդ կարգին պատկանող գրվածների մի փոքրիկ ժողովածու է»: «Տգիտական գրականության» «վիժվածքներից» են նաև Ս. Տարախյանի «Թարգմանական մեղեդիները», Ա. Պայազատի «Խելագարի կտակը» (սրա երկրորդ գրքի նկատմամբ ավելի բարյացակամ եղավ), Լ. Լարենցի «Դրախտի երգը», Ա. Եսայանի «Կնիկարմատի շալվարը կամ մողմի յուրկեն» և էլի ուրիշ շատ գործեր: Այսպես՝ քննադատի իր պարտքն էր համարում չխուսափել «փոքր» խնդիրներից, հսկել գրական զարգացման ընթացքը, օգնել գե-

¹Նույն տեղում:

¹Հորիզոն, 1912, N 215:

դարվեստական ճաշակի արմատավորմանն ու զարգացմանը:

Գրականության ընթացքին հետևող քննադատի համար մի էական առանձնահատկություն ևս. հիշաչար չէր, զարմանալի սթափ և արդար հայացքով էր նայում բոլորին: Ահա թե ինչու «տգիտական գրականության» ներկայացուցչի հաջորդ գործը, եթե նրա մեջ ինչ-ինչ արժանիքներ լինեին, նորից արժանանում էր նրա ուշադրությանը և ընդհակառակը՝ խրախույսի արժանացած առաջին գործի հեղինակին կարող էր խստորեն հանդիմանել հաջորդ արդեն անհաջող գործի համար: Միայն մեկ օրինակ՝ Ա. Պայազասի «Խելագարի կտակը» ոչնչացնող քննադատության ենթարկեց. «Սա մի գիրք է, որ միշտ նույն տպավորությունն է անում, որ կողմից էլ կարդաք. վերջից դեպի առաջ, էջի վարից վեր, վերից վար, ամեն էջից երկու տող»¹: Բայց երբ լույս տեսավ նրա «Էսքիզներ» փոքրիկ ժողովածուն, շտապեց հայտարարել, որ այս գրքույկի հեղինակը, «անպայման շնորհիք ունի, նա ունի հատուկ հոգեկան աշխարհ և հատուկ հայացք աշխարհի վրա, որ զուցե հեռուն չի տեսնում և մարդկային հոգու խորքը թափանցում, բայց և այնպես իր հայացքն է: Սակայն թե նրա շնորհքը և թե լեզուն անմշակ է»²: Ահա մի մյուշ հակառակ օրինակից: «Զանգակում» բարձր գնահատեց Հր. Ֆայյանի «Թշնամիները» (հայ թուրքական ընդհարումներից) պատմվածքը: Թուրքերի դեմ կոչվում վիրավորված հերոսը հիվանդանոցում հայտնվում է... վիրավորված թուրքի կողքին, պատրաստվում է խեղդել նրան, բայց հանկարծ իրեն տեսնում է զառանցանքի մեջ որդուց ջուր խնդրող թուրքին ջուր տալիս...

¹Գործ, 1908, N 2.

²Հորիզոն, 1912, N 207.

Քննադատի վրա տպավորություն էր գործել «ամենաբարդ հոգեբանական հանգույցներից մեկը» համոզիչ ներկայացնելու կարողությունը: Պակասությունները չեն վրիպում քննադատի հայացքից, դրանք թվում են անփորձության հետևանք, ուրեմն ուղղելի, պակասություններից մեկը «Ահարոնյանի չնչին ազդեցությունն» է: Բայց, ահա, լույս է տեսնում «Հաշտություն» վերնագրով երկրորդ պատմվածքը, կրկին «հայ-թուրքական ընդհարումներից»: «Հաշտությունը» համեմատած հեղինակի «Թշնամիների» հետ մի հետադիմություն է. պակասությունները մեծացել են և նոր առավելություն չի ավելացել»¹: Ինչպես են մեծացել պակասությունները: Պարզվում է, որ Ահարոնյանի «չնչին ազդեցությունը» դարձել է տիրական այն աստիճան, որ կարծես Ահարոնյանը գրած լինի, իսկ «կրկնությունը միշտ ձանձրալի է, և ուր կա Ահարոնյան՝ Ֆայյանն ավելորդ է»: Ոճի առումով կրկնելով Ահարոնյանին՝ նյութի տեսակետից կրկնում է իրեն. վիրավոր հայն ու թուրքը իրար հանդիպում են ոչ թե հիվանդանոցում, այլ ռազմի դաշտում, «եղբայրորեն համբուրում են իրար և մեռնում հաշտված»: Հակառակ առաջին պատմվածքի՝ այստեղ նույն գեղջուկները խոսում են կիրթ ու գրական հայերենով՝ ստեղծելով «նյութի և ձևի աններդաշնակություն»:

Երկրորդ պատմվածքի ժխտման կիրքը իրավունք է տալիս ենթադրելու, թե դրանում դեր ունեւր հոգեբանական մի հանգամանք ևս. երբ գրախոսում էր «Թշնամիները», իր կուսակցությունը փորձեր էր անում երիտթուրքերի հետ սուլթանի դեմ հանուն դեմոկրատիայի համատեղ պայքարի ուղիներ գտնել, «Հաշտությունը» գրախոսելիս հաշտության հեռանկարը փլուզում էր ապրել, հասունանում էր դարավոր անարգ թշնամու դեմ կենաց-մահու ու կովի անխուսափելիությունը...

¹Հորիզոն, 1912, N 151:

Գրական վարպետության բարձրացման ուղին, ունեցած շնորհքը զարգացնելու միջոցը ուսումնառությունն է դասականներից, տքնաջան աշխատասիրությունը: «Արվեստը հաճույք է վայելողի և տառապանք ստեղծողի համար և հեղինակների անանց փառքը պետք է որոնել ոչ թե վաղանցուկ հուշակի, այլ գրականության ընթացիկ և առօրեական ձևերից դեպի արվեստի բարձունքները մագլցելու մեջ»¹:

Մշտապես գրական կյանքի ընթացքի մեջ էր, արձագանքում էր հասունացած խնդիրներին, արժեքավորում նշանակալից ստեղծագործությունները, մերժում գրական միջակությունն ու խոտանը: Մի ուրիշ հատկանիշ էլ ուներ Աղբալյան-քննադատը. սիրով հետևում էր իր ճանաչած տաղանդի զարգացմանը, խրախուսում նոր հաջողությունները, անխնա դատապարտում վրիպումները: Այս հոգատար հետևողականության բացառիկ օրինակներ են Ծանթի, Իսահակյանի, Չարենցի մասին նոր հոդվածներն ու ուսումնասիրությունները: Գրախոսել, գնահատել, արժեքավորել է Ծանթի գրեթե բոլոր ստեղծագործությունները, ամբողջ կյանքում մշտապես իր հոգում կրել է Իսահակյանի պոեզիան՝ անընդհատ լրացնելով բանաստեղծի ստեղծագործության իր գնահատումները, ուշի-ուշով հետևում էր Չարենցի ստեղծագործական աճին:

«Երազ օրերի» մասին ընդարձակ հոդվածը սկիզբ դրեց քննադատի ու գրողի բարեկամության, որը նրանց ուղեկցեց մինչև իրենց կյանքի վերջը: Առաջին հանդիպումը հավանաբար կայացել է «Մուրճի» խմբագրությունում: Աղբալյանի ուշադրությունը ոչ միայն ու ոչ այնքան բարեկամության պարտադրանք էր, որքան Ծանթի ստեղծագործության գեղարվեստական արժեքի խոր ըմբռնում:

¹ Հորիզոն, 1912, N 207:

Աղբալյանի լավագույն հոդվածներից մեկը, որ նաև «Հին աստվածների» մասին գրված բազմաթիվ նյութերի մեջ հաջողվածներից է, «Երազ և մեկուսացում» է: Դրամայի հաջողության հասարակական և գրական նախադրյալների խոր ըմբռնումը, գեղարվեստական ինքնատիպ արժանիքների հմուտ ընկալումը, վերլուծական ձիրքն ու վարպետությունը, ներշնչված շարադրանքն ու գեղեցիկ լեզուն, վիճելի, նույնիսկ սխալ տեսակետներով հանդերձ, այժմեական շունչ են հաղորդում ուսումնասիրությանը:

Դրամայի «անօրինակ հաջողությունը» երկու կարևոր նախապայման ունի: Ռուսական առաջին հեղափոխությունը, որ «մի ընդհանուր և ոգևորիչ տրամադրությամբ» էր համակել «հին ու անարդար համարված կարգերը» տապալելու, արդարության հաղթանակն ու «աշխատանքի թագավորությունը» հաստատելու կոչված բոլոր առաջադեմ ուժերին, պարտություն կրեց: Վրա հասավ համատարած հուսահատության ժամանակը. «Համատարած հավատն ու կորովը տեղի տվին նույնքան համատարած լքումի և բոլոր իդեալները, որոնք շողում էին այնքան պայծառ և որոնց իրագործումը այնքան մոտ էր համարվում՝ կորցրին իրենց թուլությունը և համարվեցին անարժեք... Ամեն տասներկուսից մեկ եղավ մի Հուդա և ապրելը հնարավոր դարձավ ոգեկան մահի կերպարանքով միայն»¹:

Ահա այսպիսի մթնոլորտում «Հին աստվածները» հնչում է իբրև նախնիների հզոր ոգու վերակենդանացման, բոլոր տեսակի կապանքները մերժելու, ազատ ու լիարժեք կյանքով ապրելու պահանջ: «Հին աստվածները» մերժում էր հենց այն մթնոլորտն ու իրականությունը, որի մեջ ապրում էր հասարակությունը: Հաջողության մյուս գաղտնիքը, ինչպես նկատում է քննադատը:

¹ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 37:

տը, գեղարվեստական մտածողության նորությունն էր, որը շլացրեց թատերասեր հասարակությանը. «Թատերական գրականության նոր հոսանքն էր, որ բեմական արտահայտություն էր գտնում մեզանում. նորագույն դրամայի մի ազգային նմուշ էր դա, որ գալիս էր շլացնելու հասարակության անսովոր աչքերը: Գրական հին ճաշակներին և ըմբռնումներին, հին ու սովորական ձևի հիացումներին ու կատարումներին «Հին աստվածները» տաղանդով ու համարձակությամբ հակադրում էին նորը»¹: Այս նորը, գեղարվեստական այս նոր մտածողությունը հասարակական ճանաչում ունի, այլապես դրաման «փոթորկալի և տևական ծափերի» դիմաց «սուլոց պիտի վաստակեր»: Այսպիսով՝ քննադատը վավերացնում է դարասկզբի մեր գրականության մեջ կատարված մեծ տեղաշարժը՝ «սիմվոլիք» մտածողության խոր նստվածքները:

Զարմանալի հմտությամբ այնուհետև բացում է դրամայի գեղարվեստական համակարգը, «իրապատականի» և «ոչ իրապատականի» համադրությունը, բնութագրում կերպարները դիպուկ, հաճախ աֆորիզմի ուժ ստացող ձևակերպումներով («Իշխանուհին պարտավորության աղախինն է», Արեղան «մի աշխարհիկ մարդ է», «Վանահայրը ոչ թե գայթակղվում է աշխարհիկ հրապույրներից, այլ վիճում է աշխարհիկ սկզբունքների դեմ»), բացահայտում թատերագրի հիմնական հնարքները, կատարում հոգեբանական խոր վերլուծություններ՝ երբեք չմոռանալով ընդգծել այն նորը, որ բերում է հեղինակը:

Ամեն ինչ չէ, սակայն, որ ճիշտ ընկալեց քննադատը, երբեմն էլ ճիշտ նկատվածից սխալ կամ վիճելի եզրակացության հանգեց: Ամբողջ ուսումնասիրության ընթացքում հմտությամբ բացելով այն հակադրությունը,

որն, ըստ էության, առաջ է տանում դրաման, հակադրություն կրքերով լի իրական աշխարհի և վանական անապատի, հեթանոսական կյանքի և քրիստոնեական ինքնաժխտումի, ազատության, «կովի ու սիրո» և ստոր խուցի, մենակության ու անգոր համակերպության միջև, որի ընթացքում փառաբանվում է կյանքը, ազատությունը, անկաշկանդ ապրելու բնածին ձգտումը, քննադատը հանկարծ եզրակացնում է, թե «Հին աստվածները» «խորապես հոռետեսական մի գրվածք է»: Նման եզրակացության համար հիմք է ծառայում այն միակողմանիությունը, որ երբեմն դրսևորվում է հիմնական հերոսների բնութագրման մեջ. մերժելով աշխարհիկ կյանքը՝ Վանահայրը գնում է դեպի մեկուսացում, Արեղան երազը գերադասում է իրականությունից, Իշխանուհին հակադրվում է իր ծանր խաչին... և հերոսներից ոչ մեկը երջանիկ չէ: Այստեղից էլ վերնագիրը՝ «Երազ և մեկուսացում»: Բայց որ իր մահով արեղան հաստատում է իրական կյանքը, իր դժբախտությամբ Իշխանուհին մեծ սիրո օրհներգությունն է անում, Վանահորը դեպի մեկուսացում է տանում այն գիտակցությունը, որ իր ղեկավարած վանքում ու վանականների մեջ ապրում են հզոր հին աստվածները... անտեսվում է: Դրամայի վերնագիրն էլ հաստատում էր հին աստվածների կյանքի ու գործի գեղեցկությունը: Քննադատն, արդյոք, չի՞ հակասում իրեն, չէ՞ որ նա դրամայի «անօրինակ հաջողությունը» բացատրում է նրանով, որ բոլոր հասակների հանդիսատեսները լցվում էին թատրոն, «այնտեղ լսելու մի կենդանի կոչ, գտնելու մի լուսավոր ու կախարդիչ հորիզոն, մի լավագույն կյանքի ու աշխարհի հեռանկար»:

Նման «մեղանչումների» էլի կարելի է հանդիպել: «Հին աստվածները» համարելով «սիմվոլիկ դրամա»՝ միևնույն ժամանակ ճիգ է թափում հիմնավորելու, թե այն «իրապատական» է կամ կամուրջ է «ստեղծագործական իրապատակ և սիմվոլական հիացումների միջև»:

¹Նույն տեղում, էջ 38:

Նկատելով, որ Ծանօթի նոր դրաման «երկու կարգի տեսարաններ ունի»՝ իրական, առարկայական և պատրանքային, ոչ իրական, որոնք սերտորեն միահիյուսված են իրար, դա իրավացիորեն բացատրում է ընտրած նյութով, դրամատուրգի մտահղացմամբ և այն աղերսակցությամբ, որ դրաման դրսևորում է նորագույն գեղարվեստական մտածողության, «թատերական գրականության նոր հոսանքի» հետ: Բայց, ահա, դիպուկ նկատված մի ուրիշ հատկանիշ խուսափում է բացատրել նույն «նոր հոսանքի» պահանջներով: Հայտնի է, որ գործողությունների ծավալմամբ հանգուցալուծման հասնելու իրապաշտական դրամայի հատկանիշը սիմվոլիստական դրաման արմատապես փոխեց՝ իրականություններից այն փոխադրելով հերոսների ներաշխարհը: Աղբայլանը նկատեց այս նորությունը: Դրամայի թերություններից մեկը նա համարում էր գործողության բացակայությունը, բայց զարմանալիորեն սա չի ընկալում իբրև սիմվոլիստական դրամայի յուրահատկություն: Նկատել, որ դրամայի «հերոսները դրաման ապրում են իրենց ներքը» և դա նույնպես, ինչպես այլ դեպքերում, չկապել նոր ուղղության հետ, պարզապես անհավատալի է. Աղբայլանը պետք նկատեր դա:

Ինչ էլ լինի, «Երազ և մեկուսացումը» «Հին աստվածների» մասին գրված լավագույն ուսումնասիրություններից է:

Սրանով չսպառվեց քննադատի հետաքրքրությունը դրամայի, ընդհանրապես Ծանօթի ստեղծագործության նկատմամբ: Ամբողջ կյանքում, ամենատարբեր առիթներով (գրքի հրատարակություն, ներկայացում, հոբելյան և այլն) իր խոսքն է ասել՝ հիմնականում կրկնելով նշված հոդվածի գլխավոր սկզբունքները: Արժե հիշել մի ընդհանրացում, որը լրացնում է Ծանօթ-արվեստագետի դիմանկարը. «Իր նյութն է՝ ոչ թե հայ կյանքն ու հայ մարդը, այլ մարդը հայի մեջ, հայի մարդկայինը, կամ կարճ

և՛ մարդկայինը, որ մեծ արվեստի նյութն է բոլոր դարերի»¹:

Քննադատի հետաքրքրությունը տևական է եղել Խառնակյանի նկատմամբ ևս: Երբ 1903-ին Բաքվում լույս տեսավ «Բանաստեղծություններ» ժողովածուն, արձագանքեց անմիջապես՝ «Երգ ու վերքից» հետո շատ խոսուն վերնագրով: Հայտնի է նաև նրա ելույթը բանաստեղծի ծննդյան 70-ամյակի առթիվ: Ի տարբերություն Ծանօթի՝ Խառնակյանի ստեղծագործության գնահատականը գնալով ամբողջացել է:

Առաջին գրախոսականում ժողովրդական երգերը, որոնք այնպես հիացրել էին իրեն, համարում էր «պատահումների արդյունք», այժմ փորձում է գտնել նույն ժողովրդականության ակունքները: Ելնելով Ի. Տենի «եռանդամ տեսության» սկզբունքից՝ հատուկ շեշտում է միջավայրի դերը գրողի ժողովրդայնության ձևավորման հարցում: Ժողովրդական երգերի ու «մանիների», աշուղների ու երգիչների միջավայրում է ձևավորվել բանաստեղծի աշխարհը՝ կրելով միջավայրի անցնջելի կնիքը: «Թեև ճեմարան ուսած է և Գերմանիա եղած՝ բայց երբ գրիչը ձեռք առնե՝ ան շիրակեցի հայ մարդն է»:

Հատուկ ուշադրություն դարձրեց բանաստեղծի բնութենապաշտությանը. «Բնության անդրաձայնելու, նրա հետ ապրելու ընդունակությունը այնպիսի կենսաբեր աղբյուր է, որ կարող է մեր կյանքի անապատը նեղ կանաչուտով կապել գոհունակության դրախտի հետ»²: Բնության ու բանաստեղծի ներդաշնակ միաձուլումից ծնվում են «խորագույն բանաստեղծություններ»՝ ճանապարհ բացելով բանաստեղծի առջև դեպի անհուն ու անեզր տիեզերքը... նման «բանաստեղծությունների մեջ մենք տեսնում ենք մարդու և տիեզերքի սերտ կապը»:

¹Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 83:

²Նույն տեղում, էջ 112:

Դժվար է չհամաձայնել նրա մի ուրիշ տեսակետի հետ. «Գրականության պատմության մեջ որոշ և հաստատուն է Ավ. Իսահակյանի տեղը: Ան կուգա Հ. Թումանյանեն հետո և ձեռք կմեկնե վ. Տերյանին»¹: Աղբալյանը ուշադրություն է դարձնում այն կապին, որ նկատվում է բանաստեղծի և Նիցշեի փիլիսոփայության միջև:

Առաջին ժողովածուին նվիրված գրախոսականը ավարտվում էր քննադատի մտահոգությունը արտահայտող մի հարցումով. «Մենք տեսանք Պ. Իսահակյանի հոգու շրջման կետերը՝ մեկը ժողովրդի մեջ, մյուսը վերացականության սառույցներում... Որտեղից է սկսել և ուր է գնում, մի՞թե դեպի սառն ու մեռած բարձունքները... Չենք ուզում հավատալ...» «Երգ ու վերքից» հետո գրախոսականը այս հարցի վստահ ու իմաստավորված պատասխանն է. Իսահակյանը սկիզբ է առել ժողովրդական ակունքներից, «հասունանում է, կյանքը խոհուն հայացքով դիտում, իմաստասիրում և հաստատ քայլերով բարձրանում է ազգային պարծանքների բնակավայրը»:

Աղբալյանի քննադատական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում արևմտահայ գրականության խնդիրները: Զարգացման ընդհանուր օրինաչափությունների, գրական մեծ դեմքերի մասին հատուկ հոդվածներ քիչ է գրել, ավելի շատ հանդիպում ենք առանձին ասույթների, տարբեր առիթներով արտահայտված մտքերի ու գնահատականների: Այնուամենայնիվ նրա դիրքորոշումը արևմտահայ գրականության ու քննադատության բնորոշ երևույթների նկատմամբ շատ որոշակի է: «Նոր հոսանքի» խմբագիրը պարբերաբար անդրադառնում է նոր սկսած գրական ասուլիսներին՝ դիտելով դրանք իբրև արևմտահայ կյանքի աշխուժացման ակնհայտ վկայություն: Ընդարձակ տեղեկություն-

¹Նույն տեղում, էջ 128:

ներ են տպագրվում Գր. Զոհրապի նորավեպերի, Դ. Վարուժանի «Հեթանոս երգերի», Ռ. Զարդարյանի «Ցայգալույսի» մասին ասուլիսների վերաբերյալ: Պետք է հիշել հատկապես «Նավասարդ» տարեգրքի առաջին համարին նվիրված ընդարձակ ու բովանդակալից գրախոսականը. «Մենք ջերմապես հանձնարարում ենք այս ժողովածուն այն բոլոր մարդկանց, որոնք կուզեին մի գաղափար կազմել թուրքահայ նոր գրականության վրա, ծանոթանալ այդ գրականության նորագույն ձգտումներին: «Նավասարդից»-ից կարելի է բան սովորել և հանույք ստանալ»¹:

Քննադատի ուշադրությանն ու դրվատանքին արժանանում է ամենից առաջ այն, որ հայ գրականության ու արվեստի զարգացման նպատակին կոչված տարեգրքի «հատորը համարյա ամբողջովին ինքնուրույն գործերից է կազմված»:

Ազգային ինքնուրույն մշակույթի զարգացման տեսանկյունից նա բարձր է գնահատում ոչ միայն «թուրքահայ ականավոր հեղինակների» ստեղծագործությունները, այլև հատորում տպագրված հայ ժողովրդական երգերը և Լոռվա գութաներգերի մասին Կոմիտաս վարդապետի ուսումնասիրությունը: Վերջիններս արժեքավորվում են և այլ առումով. դրանք ինքնուրույն մշակույթի գոյության հաստատումն են և ցույց են տալիս, որ ինքնուրույն մշակույթը ունի ազգային դեմք ու դիմագիծ: Խոր ու ճշգրիտ է քննադատի դիտողությունը մասնավորապես Կոմիտասի հոդվածի մասին, «Մեր կարծիքով այդ հոդվածը ամենից առաջ արժեքավոր, հմտալից և արտասովոր գրությունն է «Նավասարդի» մեջ, արժանի ամենախորին ուշադրության: Կոմիտաս վարդապետը նույնն է հայ երաժշտության համար, ինչ որ Թ. Թորամանյանը հայ ճարտարապետության համար: Հովհ.

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. II, էջ 200:

Թումանյան, Կոմիտաս վարդապետ և Թ. Թորամանյան - ահա երեք անուն, որ խորհրդանշում են մեր կուլտուրական զարգացման աստիճանը. մեկն ստեղծագործում է հայոց ինքնուրույն գրականություն, մյուսները հետազոտում են հայ երաժշտությունն ու ճարտարապետությունը՝ ապագա ստեղծագործողների ուղին հարթելով»¹:

Միանգամայն հասկանալի պետք է համարել և այն, որ ռեալիստական ուղղության ջատագով Աղբալյանը, ի հակակշիռ հեթանոսական շարժման, պաշտպանության տակ է առնում ժողովրդական գրականության ներկայացուցիչներին. «Հայրիկ, Սրվանձտյան, Պարոնյան. նրանց սիրտը տրոփում էր ժողովրդի լայն բարախին ներդաշնակ»²:

Քննադատը մեծ իմաստ է տեսնում այն բանում, որ գրախոսվող տարեգրքում արևմտահայ ականավոր հեղինակների կողքին զգալի տեղ է հատկացվել նաև «ոռուսահայ հին ու նոր անունների»։ Նա առանձին հիացմունքով չի խոսում վերջիններիս մասին, նրան ուրախացնողը երկու հատվածների գրականությունները միասնության մեջ ընդունելու երևույթն է:

Սկզբունքորեն չընդունելով «հեթանոսական շարժումը»՝ Աղբալյանը, այնուամենայնիվ, իր ժամանակակիցներից տարբերվեց նրանով, որ հասու եղավ շարժումը ծնող հասարակական ու գեղագիտական նախադրյալներին: «Գրականության հասարակական և գեղարվեստական արժեքը» որոնելով կյանքի առաջադրած խնդիրներին «տեղին... և հաջող» պատասխանելու մեջ՝ նա նրբորեն նկատում է, որ շարժումը «ուժի և գեղեցկության» պահանջ է առաջադրում և ներկայի մեջ այն չգտնելով՝ «հաճում է հայ հեթանոսական անցյալը, ուր կա ուժ ու գեղեցկություն» («Միամանթոն դիմում է Անա-

¹Նույն տեղում, էջ 202:

²Նույն տեղում, հ. II, էջ 208:

հիտին, ասելով. «Տուր ինձի շեկ զորությունը Արտաշեսյան նախնիքներուն»)¹: «Հեթանոսական շարժման» արդիական նշանակությունը՝ իբրև «թուրքահայ վերածնության», «ազգային իդեալների ու տեսիլքների» արտահայտություն, հասկանում և ընդունում է: Սակայն «հայության տեսիլքների այս թարգմանությունը» անհրազատ է համարում, քանի որ գրականությունը կյանքից պիտի առնի իր նյութը և պատասխանի կյանքի իրական խնդիրներին: Աղբալյանը դեմ չէ պատմական թեմային, միայն թե պատմության ոգին պետք է ըմբռնել, և պատմությունը չպետք է «դիտել իբրև թատերական տեսարաններ»: Անշուշտ, այս հարցում նա սխալվում էր. հեթանոսական շարժումը հենց պատմության ոգին էր վերակոչում՝ ներկայի ու ապագայի մտահոգություններով անհանգստացած: Բայց պետք է հասկանալ նաև քննադատին. նա աշխատում էր գրողների ու գրականության ուշադրությունը բևեռել ներկա կյանքի վրա, իրական կյանքի հոգսերը արծարծել իրական կյանքի պատկերներով: Արձագանքելով բնաշխարհիկ և տարաշխարհիկ գրականության խնդրին՝ հատուկ ընդգծում էր, որ «հայոց գրականությունը Հայաստանում միայն կարող է ստեղծվել ու ապրել»: Ահա թե ինչու բարձր է գնահատում Ռ. Զարդարյանի ստեղծագործությունը. «Գավառը, որ քսան տարի առաջ կատարեց իր առաջին խուժումը գրական ասպարեզ, այնուհետև դառնալու է տեր ու տնօրեն... Զարդարյանը մեկն է այն մարդկանցից, որ հայության տարագրի միտքն ու զգացումը կապում են բնաշխարհի հետ: Դա զարգացման մի աստիճան է, որ տանում է դեպի ազգային գրականություն բառի ճշմարիտ առումով»²: Ուրեմն՝ ազգային հողի վրա ազգային կյանք, հենց այսօրվա կյանքի նյութով, - սա է քննադատ-

¹Նույն տեղում, էջ 205:

²Նույն տեղում, էջ 293:

տի պահանջը, այս տեսանկյունից է մերժում արդիակա-
նության խնդիրների արժարժույթը հեթանոսական կյանքի
պատկերմամբ. թուրքահայ գրականության «ականավոր
ներկայացուցիչները» «իրական կյանքի միտումները
թարգմանում են անհարազատ ու մթին պատկերնե-
րով...»: «Եվ եթե հիշենք, որ քննադատի ըմբռնումով
«գրականությունն իր բովանդակ առումով պաշտոն ունի
պարզել մթինը», ապա հասկանալի կդառնա նրա հա-
յացքի հետևողականությունը, որը, ինչ խոսք, չի արդա-
րացնում հայացքի միակողմանիությունը, այլ միայն բա-
ցատրում է:

6

Խոր արմատներով կապված էր ռուս գրակա-
նությանն ու մշակույթին, մասնավորապես դեմոկրատա-
կան գրաքննադատությանը: Ա. Չեխովի մահվան կա-
պակցությամբ գրած նշանավոր էսսեն ունի շատ բնու-
թագրական մի ծանոթություն. «Այս թուուցիկ նկատո-
ղությունը գրելիս մենք ոչ մի աղբյուր չունենք ձեռքի
տակ՝ բացի մեր հիշողությունից»¹: Եվ հիշողությամբ
գծում է «նրբագգաց և սիրելի հեղինակի» դիմանկարը:
Հայ քննադատը այդպես «հիշողությամբ» կարող էր
գրել ռուս գրողներից շատերի, ռուսական կյանքի ու
գրականության շատ երևույթների մասին: Դա իրոք են-
թադրում է ռուսական կյանքի ու մշակույթի հետ գաղա-
փարական և ստեղծագործական խոր հոգեհարազա-
տություն: Մ. Նալբանդյանից հետո Ն. Աղբալյանը երկ-
րորդն է, որ այնքան մեծ ընդհանրություններ է դրսևո-
րում մասնավորապես ռուս հեղափոխական-դեմոկրա-
տական գեղագիտական մտքի հետ: Նրա հոդվածներում
հանդիպում են առանձին ձևակերպումներ, մտքեր, ար-
տահայտություններ, որոնք անմիջաբար հիշեցնում են Ն.

¹«Մուրճ», 1904, N 7, էջ 127:

Դոբրոլյուբովին, Վ. Բելինսկուն, Ն. Չերնիշևսկուն: Այս-
պես, օրինակ՝ Ա. Աղբալյանի «Տգիտության զոհեր» վեպի
հերոսներից մեկի՝ Վառվառի մասին գրում է. «Ղոչա-
ղության խավար երկնքում նա միակ լուսավոր աստղն
է»: Ակամա հիշում ես Ն. Օստրովսկու Կատերինայի
մասին Դոբրոլյուբովի ձևակերպումը՝ «Լույսի շող խա-
վարի թագավորության մեջ»: Ի դեպ՝ Աղբալյանի «Ղո-
չաղը իբրև տիպ...» հոդվածը, որից կատարված է քաղ-
վածքը, հարցադրումներով, առաջադրված խնդիրների
լուսաբանման մեթոդներով Դոբրոլյուբովի նշված հոդ-
վածի հետ շատ ավելի ընդհանուր զուգահեռների հնա-
րավորություն է տալիս:

Իսահակյանի «Երգեր ու վերքերի» առիթով գրած
ընդարձակ հոդվածում պոեզիայի, ընդհանրապես գրա-
կանության ժողովրդայնության բնութագրումը կրկին հի-
շեցնում է դոբրոլյուբովյան ձևակերպումը: Տեղին է հի-
շել նաև, որ թարգմանությունների առիթով հայ քննա-
դատը սիրում էր կրկնել ժուկովսկու հայտնի խոսքը՝
«Արձակի թարգմանիչը ստրուկ է, բանաստեղծությանը՝
մրցակից»:

Գրականության մեջ ռեալիզմի, ժողովրդայնության
պաշտպանությունը, բարձր գաղափարայնության ու ձևի
կատարելության պահանջը իբրև գեղարվեստակա-
նության չափանիշ առաջադրելը իրենց ակունքները առ-
նում են նաև ռուսական առաջադիմական գրաքննադա-
տության հետ ունեցած սերտ աղերսներից: Այս ամենից
բացի հաճախակի և անմիջապես անդրադարձել է ռուս
գրականության առանձին խնդիրների՝ գերազանցապես
ռուս հեղինակներից կատարված թարգմանությունների,
առանձին դեպքերում՝ հոբելյանների առիթով: Նա
ուշադրություն է դարձնում գլխավորապես այն հեղինակ-
ներին, որոնք ինչպես իրենց ժամանակին, այնպես էլ
հետագայում աչքի ընկնող դեր են կատարել ռուս գրա-
կանության մեջ: Հատկապես անկումային ուղղություննե-

րի ոչ մի ներկայացուցիչ նրա ուշադրության չարժանացավ: Նույնիսկ առաջադեմ գործիչների ժառանգության մեջ հայ քննադատը մերժում էր ժամանակավոր նահանջներն ու այն ամենը, ինչը չէր կապվում «Լուսավոր Ռուսիայի» հետ: Ծատ բնորոշ է այս առումով Բելինսկուն նվիրած հոդվածաշարի ծանոթագրություններից մեկը: Հայտնի է, որ Բելինսկին մոլորություններ ևս ունեցավ: Որդեգրելով Վ. Գյոթեի «ինչ իրական է՝ բանական է» սկզբունքը, կարճատև մի շրջանում նա հրաժարվեց Ռուսաստանի արատները քննադատելուց: Եվ ահա, երբ «Տարագում» Բելինսկուց մի հատված է տպագրվում՝ իբրև նմուշ հայ ընթերցողին ծանոթացնելու նպատակով՝ անմիջապես հետևում է Աղբալյանի դիտողությունը. «Տարագի» այս տարվա հունիսի համարներում տպված Բելինսկու հոդվածի կտորը այդ շրջանի (նահանջի շրջանի. - Գ. Ա.) գրվածներից է. լույս է տեսել 1837 թ., այնպես, որ պետք է զգուշանալ. այդտեղ իսկական թանկագին Բելինսկին չէ խոսողը»¹:

Քննադատի խոստովանությունը այն մասին, որ «մոլեկան եռանդով անձնատուր» է եղել «ոռուսաց գրականության, պատմության և արվեստի» ուսումնասիրությանը, հաստատվում է բազմաթիվ այլ հոդվածներով ևս: Ըստ որում՝ անմիջաբար ոռուսաց գրականության վերաբերող հոդվածներից բացի, քննադատը ոռու մշակույթի հետ կապված առանձին խնդիրներ արծարծել է նաև հարակից ձևով, հայ գրականությանն ու այլ հարցերի նվիրված ելույթներում:

Նրա համար ոռու գրականությունը կատարելության չափանիշ էր: Միայն այս դեպքում կարող է հասկանալի լինել դառը հանդիմանությունը. «Անպատվություն է մեզ համար, որ մինչև այսօր չունենք Տոլստոյի «Պատե-

¹ «Մուրե», 1898, N 7-8, էջ 1085:

րագվն ու խաղաղությունը» և «Աննա Կարենինան»¹: Հաշվի առնելով հայ գրականության համար թարգմանությունների նշանակությունը, կարող անձանցից և «մեծ միջոցներ ունեցող միություններից» պահանջում էր թարգմանել ոռու ու համաշխարհային գրականության լավագույն երկերը:

Սկզբունքորեն մերժելով անկումային գրական հոսանքները՝ ոռու գրականության երևույթները գնահատելիս ևս արժեքավորում է հատկապես ռեալիզմի նվաճումները: Ռուսական իրականության 30-ական թվականների ամենաբնորոշ իրողությունը Պուշկին երևույթն է. «Պուշկինը հատունանում էր և պատրաստում էր Գոգոլի գրական ուղղությունը, որի նպատակը պիտի լիներ իրականության հավատարիմ ստեղծագործությունը»²: Ռեալիզմի մեջ նա գնահատում է ոչ միայն կյանքի ճշմարտացի արտացոլումը, այլև, դրա շնորհիվ ազգային ինքնատիպ գծեր արտահայտելու կարողությունը: «Գոգոլն առաջինն էր, որ չենթարկվեց այդ ազդեցության («օտար երևելի գրողների ազդեցության». - Գ. Ա.) և գնաց նոր, ինքնուրույն և սեփական ճանապարհով, այդ կողմից նա կարող է հայր համարվել հետագա բոլոր գրողների համար»³: «Նոր, ինքնուրույն և սեփական ճանապարհը», ըստ քննադատի, «իրական շկոլայի» նվաճումն էր: Այնուհետև տարբեր առիթներով ու տարբեր ժամանակներում գրած հոդվածներում մշտապես նկատում ու արժեքավորում է ռեալիստական ուղղության ներկայացուցիչներին Գոգոլից մինչև Կորոլենկո:

«Լ. Տոլստոյ ամենահարուստ և բարդ հոգիներից մեկն է, որ երբևիցե ապրած է աստղերի տակ: Ահագին գեղարվեստական տաղանդը, միացած չափազանց սուր

¹ «Զանգակ», 1908, N 14:

² «Մուրե», 1898, N 7-8, էջ 1073:

³ «Մուրե», 1898, N 10-11, էջ 1349:

ու թափանցիկ մտքի և անօրինակ աշխատասիրության հետ, նրան դարձրին համաշխարհային մի հեղինակ և մտածող»¹: Համակրանքով է արտահայտվել երիտասարդ Վ. Կորոլենկոյի մասին. «Իր «Վեպիկներ ու պատկերներով» արդեն ուշադրություն է գրավել թե՛ գրվածների գեղարվեստական արժանիքների և թե՛ իր համակրելի հայացքների պատճառով»²: Հաջորդ հեղինակը, որից կատարված թարգմանությունները գրավում են քննադատի ուշադրությունը, Վ. Գարշինն է: Աղբայլանին գրավում էին ոչ միայն «գրական գործերը Տոլստոյի ու Տուրգենևի բարձր գնահատականները», այլև այն, որ Գարշինի պատմվածքները «անվիճելի գրական արժանիքներ ունեն» և իրենց հեղինակին բնութագրում են իբրև «առաջադիմական ուղղության տեր գրողի»³:

1895 թվին Մոսկվայում Ալ. Ծատուրյանի թարգմանությամբ լույս տեսավ Տուրգենևի «Արձակ բանաստեղծությունները»: Ն. Աղբայլանը «Մուրճում» բարձր գնահատեց ոչ միայն թարգմանությունը («Ինչ վերաբերում է թարգմանությանն՝ դրականապես լավ է»), այլև Տուրգենևի՝ նշված ժանրի գործերը: Ի. Տուրգենևը Գոգոլի «իրական շկոլայի» և Բելինսկու արթնացրած մթնոլորտի ծնունդն է և «ոռու գրականության մեջ առաջնակարգ» տեղ է գրավում:

Հարկ է նշել, որ ոռու գրողների ու գրական երևույթների վերաբերյալ դիպուկ բնութագրումներ է կատարել նաև այն հայ գրողներին գնահատելիս, որոնք զանազան խնդիրներում աղերսվում էին ոռու գրականությանը: Ջարմանալի մի նրբությամբ որսում էր ազդեցությունը, բացահայտում երևույթի հասարակական-գրական ազդակները: Դրանում համոզվել կարելի է

¹ «Զանգակ», 1908, N 14.

² «Մուրճ», 1896, N 10-11, էջ 1356:

³ «Մուրճ», 1897, N 1, էջ 134:

մասնավորապես Ադելյանի, Ջորյանի, Չարենցի ստեղծագործություններին նվիրված հոդվածներում ու նշումներում: Խոսելով Գ. Ոսպենսկու ազդեցության մասին գլուղագիր Ա. Ադելյանի պատմվածքների վրա («նույնիսկ գրվածների ձևը, որ ձգտում է հրապարակախոսական ակնարկների բնավորություն ստանալ, Ոսպենսկուն է»), մեծ հմտությամբ ու համոզականությամբ բացահայտում է նաև Լ. Տոլստոյի «Խավարի թագավորություն» դրամայի հետ «Տգիտության զոհերի» դրսևորած աղերսները. «Առաջ նա (Ադելյանը. - Գ. Ա.) դիմում էր Գ. Ոսպենսկուն, այժմ, հավանորեն, Տոլստոյին (վեպի մի քանի տեսարանները և երևույթների բացատրությունը զգալի կերպով հիշեցնում են հայտնի ոռու գրողի «Власть Тьмы» պիեսը)»¹:

Չելսովի մահվան առիթով գրած հոդվածում, որ խորին սիրով ու քննարկականությամբ է շնչում, նշանավոր գրողի ստեղծագործական խառնվածքի մի քանի բնութագրական կողմեր նշելով հանդերձ, քննադատը հատկապես ընդգծում է մի կարևոր օրինաչափություն. «Նա գնում էր ոռու մեծ արվեստագետների ճանապարհով. նա շարունակում էր Պուշկինի, Գոգոլի, Տուրգենևի և Տոլստոյի գործը»:

Մ. Լերմոնտովը միակ բացառությունն է, որ Գոգոլի «շկոլային» չպատկանելով՝ արժանացել է նրա բարձր գնահատականին: Հրաշքով փրկված թղթերի մեջ պահպանվել է մի պատառիկ՝ «Աղջկա հուշատետրից» վերնագրով, որը Լերմոնտովի հանդեպ նրա անմնացորդ սիրո արտահայտությունն է. «...Ոչ ոք չի կարող փոխարինել Լերմոնտովին ինձ համար»: Քննադատի պատանության տարիների զեղումներ են սրանք, որտեղ փորձում է բացատրել Նադսոնի բարության դիմաց Լերմոնտովի «չար բնավորության» պատճառները. անտարբեր

¹ «Մուրճ», 1897, N 9, էջ 1263:

մարդիկ և չար միջավայրը ծնունդ տվին այդ չարությամբ: Ընդգծված սերը Լեւոնուտովի Ակատմամբ դրսևորվում է հողվածներում ու նամակներում անընդհատ հանդիպող թեկուզև հպանցիկ գնահատումների, խոստովանությունների ձևով ևս: Այնուհետև ամբողջ կյանքում, ամենատարբեր առիթներով հիշել է խոսվահույզ բանաստեղծին, որը պատանության տարիներին գրավում էր «իր օտարությամբ», մատնանշել է նրա առանձին գրքեր, խոստովանել իր համակրանքը:

1898-ին լրանում էր Վ. Գ. Բելինսկու մահվան 50 տարին: Այս կապակցությամբ «Մուրճում» հանդես եկավ հողվածաշարով, որը, ըստ էության, նշանավոր գործչի մասին մեզանում գրված լավագույն գործն է: Պատահական չպետք է համարել Աղբալյանի բուն սերը Բելինսկու Ակատմամբ: Վերջինիս մեծության, ոռուսական քննադատության ու հասարակական մտքի համար ունեցած նշանակության ըմբռնումից բացի, այստեղ վճռական նշանակություն է ստանում նաև ներքին հարազատության հանգամանքը: Իզուր չէ, որ Թումանյանի «Վերնատանը» Աղբալյանին «հայկական Բելինսկի» էին անվանում: Սրանով ընդգծվում էր ոչ միայն հայ քննադատի՝ Բելինսկու հետևորդ լինելը, այլև Բելինսկի-քննադատի հետ Աղբալյանի ունեցած ընդհանրությունները: Գրական ստեղծագործությանը առաջադրվող բարձր գաղափարայնության և գեղարվեստականության պահանջներ, կրքոտ հետևողականություն սեփական հայացքների ու սկզբունքների մեջ, գրական առաջին քայլերից իսկ տաղանդի ուժն ու զարգացման ուղղությունը գուշակելու կարողություն,- սրանք հատկանիշներ են, որոնք Աղբալյանին հարազատ են դարձնում Բելինսկուն: Այս հոգեհարազատությունը նույնպես մեծ ազդակ էր՝ նշանավոր գործչի կյանքն ու գործը մահվան 50-ամյակի առիթով գնահատելու համար: Ահա բնութագրումներ, որոնք իրեն՝ Աղբալյանին էլ կարող են վերաբերել.

«Առաջին անգամ հասարակությունն առիթ ունեցավ իր գրողների մասին այնպիսի կարծիքներ լսելու, որոնք հիմնված են ոչ թե անձնական ճաշակի, այլ հայտնի տեսակետների վրա»¹: «Գնահատելով անցյալը, նա աչքից երբեք բաց չէր թողնում ներկան և միշտ առաջինն էր, որ Ակատմում էր նոր գրողի երևալը և գնահատում նրան ու նրա երկը»²:

Դեռևս Տուրգենևի «Արձակ բանաստեղծությունների» մասին գրախոսականում հայ քննադատը բարձր է գնահատում Վ. Բելինսկու տաղանդը և ճիշտ մեկնաբանում նրա ժառանգության ընդգծված սոցիալական - քաղաքական տարերքը. «Հոչակավոր քննադատի կրակոտ հողվածները շարժում ձգեցին մեռած հասարակության մեջ և դուրս կոչեցին մարդիկ, որոնք, Նեկրասովի ասած՝ «Դեռ զգացմունքի մնացորդներ ունեին և բոլորովին չէին մեռել»: Այնուհետև՝ «Ստիպված լինելով հարմարվել խիստ ժամանակների ուժեղման, նա բավականանում էր միայն գեղագիտական (էստետիկ) և փիլիսոփայական հարցերով. թեև շատերի համար պարզ ու Ակատմելի էին այն մտքերը, որոնք ավելի թանկ էին նրա համար և որոնց ուղղակի չկարողանալով՝ արժարժում էր տողամեջ»³: Եվ, վերջապես, Գոգոլի հետ միասին Բելինսկու գործունեությունը «սնեց գրողների մի նոր սերունդ, որ նշանավոր երկերով ասպարեզ դուրս եկավ և գրավեց ոռու գրականության մեջ առաջնակարգ տեղեր»: Այսպես էր հայ քննադատը բացահայտում Բելինսկու անփոխարինելի դերը ոռու կյանքի ու մշակույթի պատմության մեջ: Ներկայացնելով կյանքի ու գործունեության ուղին՝ ամբողջացնում է իր միտքը. «Նրա գծած ուղ-

¹ «Մուրճ», 1898, N 9, էջ 1233:

² Նույն տեղում, էջ 1234:

³ «Մուրճ», 1896, N 10-11, էջ 1349:

դուրյամբ գնաց ոչ միայն ռուս գրականության վիպական ճյուղը, այլև քննադատականը»:

Վերջապես Բելինսկու բնավորության մի գիծ ևս շատ դիպուկ է նկատված. «Նա ապրում էր այն ամենի համար, ինչ համարում էր ճշմարտություն, մոլեգնաբար ձգտում էր ու փնտրում այդ ճշմարտությունը և կրոնական մարդու պես կապված էր նրա հետ: Նա կատաղի կերպով պաշտպանում էր իր ընդունած ճշմարտությունը»¹:

Աղբալյանը հատուկ ընդգծում էր Վ. Բելինսկու գործունեության վիթխարի նշանակությունը՝ ռուս գրական-քննադատական ու հասարակական մտքի վրա՝ բոլոր ժամանակների համար. նրա ազատատենչ գաղափարներով են «սնվել... այն բոլոր մարդիկ, որ մեծ են... Ռուսիայում»²: «... Նա մինչև այսօր իր շնչով տաքացնում է ռուս միտքը»³:

Տարբեր առիթներով քննադատն ընդգծել է նաև ընդհանրապես ռուս գրականության նշանավոր գրողների նշանակությունը հայ գրականության զարգացման համար. «Ռուսահայերիս գեղարվեստական կրթության համար ևս ավելի լավ միջոց չեն ճանաչում,- Ա. Չեխովի կապակցությամբ գրում է Աղբալյանը,- քան այս հեղինակի երկերն ուսումնասիրելը»⁴: Ավելի բնորոշ է Բելինսկու առիթով խոստովանությունը. «Մենք՝ հայերս նույնպես շատ ենք պարտական այդ մարդուն. մեզանից շատ շատերն են սնվել նրա և նրա հաջորդների մտքերից. լինելով ռուս գրականության ազդեցության տակ՝ մեր թե գրականությունը, թե քննադատությունը և թե նորահաս միտքը կրել է նրա ազդեցությունը: Միայն ռուս-

¹«Մուրե», 1898, N 7-8, էջ 1077:

²«Մուրե», 1898, N 9, էջ 1238:

³Նույն տեղում, էջ 1236:

⁴«Մուրե», 1904, N 7, էջ 131:

ները չեն որ պարտական են նրան. մենք էլ ենք շատ պարտական»¹:

7

Առանձնակի համակրանք էր տածում Մխիթարյանների հանդեպ, բարձր էր գնահատում նրանց գրական-բանասիրական-հայագիտական գործունեությունը: «Դարավոր, պատկառելի և երախտավոր հիմնարկություններ»,- այսպես է բնութագրում նրանց: Հետազոտական մեթոդի տարբերություններից և դավանաբանական վեճերից բացի վեճերիցիներն ու վիճենացիները զանազանվում են իրենց հիմնական հետաքրքրություններով ևս: Հայագիտությունից բացի առաջինները հաջողություններ ունեն գեղարվեստի ասպարեզում, երկրորդների նվաճումները գերազանցապես գիտության ոլորտում են: Սա էլ իր կնիքն է դնում նրանց հանդեսների վրա՝ «անզուգական» «Հանդես Ամսօրյային» բնորոշ է «գերմանական մանրախույզ և ստուգասեր բանասիրության ոգին և համեմատական մեթոդը»², «Բազմավեպը» «խառն բնավորություն ունի», այստեղ գեղարվեստն ու գիտությունը ընթանում են գիրկընդխառն:

«Եվրոպական հուշակի» տեղ հայկաբաններ իրենց ամբողջ կյանքը նվիրել են «մեր հնագույն գրականության և արվեստի», մեր պատմության, լեզվի, աշխարհագրության ուսումնասիրությանը: Աղբալյանը լավատեղյակ էր նրանց հետազոտություններին:

Նոր ժամանակների ոգով կրթված հայագետը մերժում է նրանց կրոնական քարոզչությունը և նկատում հետազոտական մեթոդի պակասությունները:

«Այնտեղ, ուր պետք է հետազոտել մի բնագիր, որոնել նրա աղբյուրները, որոշել գրության ժամանակը և

¹«Մուրե», 1898, N 9, էջ 1238:

²«Հորիզոն», 1912, N 243:

առնչությունները, համեմատել նրա օրինակները, մեկնել մութ հատվածներն ու բառերը, վերջապես տպագրել արդի գիտության և տպագրական արհեստի պահանջների համեմատ՝ Մխիթարյան հայրերը անգուգական են»¹, բայց ահա կառչած մնալով որդեգրած կրոնական ըմբռումներին՝ զարմանալիորեն անմասնակից են մնում «Ընկերաբանական և հոգեբանական», այլ բնագավառների «նոր տեսություններին», թեև ապրում ու գործում են լուսավոր Եվրոպայի հենց սրտում: Սա շատ էական պակասություն է, որը խանգարում է, որպեսզի նրանց «ծովածավալ» հմտությունը դառնա ժամանակակից գիտություն: «Բուն գիտությունը, որ երևույթների մեկնությունն ասել է, շատ հեռու է նրանցից»²:

Այն, ինչ չեն անում հոգևորական Մխիթարյանները, պետք է անեն աշխարհական գիտնականները: Բայց վերջիններս չունեն առաջինների նյութական ապահովվածությունը, գիտական աշխատանքով զբաղվելու նրանց հնարավորությունները: Նա երազում էր, որպեսզի իր ջանքերով ևս Բելյրություն հիմնադրված ճեմարանը դառնար գիտության աշխարհականացման մի համեստ կենտրոն: Ծիշտ է՝ «Հայաստանի համալսարանը կատարում է այդ գործը», բայց Հայաստանի մեջ չկա մտքի ազատություն, թեև եղած միտքը «աշխարհական է»: «Չկար մի հասարակություն, որի հովանու տակ աշխարհական մարդը հմտանար իր անցյալին և աշխարհիկ գիտության ընդհանուր գաղափարներով լուսավորել այդ անցյալը»: Նամակը Համաստեղին գրվել է 1934-ին, բայց այս խոհերը նրան մտահոգում էին դեռևս դարակզբին. դեռևս 1912-ին խորը ցավով հարցնում էր. «Հոգևորականը նյութ է հավաքում ու ստուգում է հավաքածը, աշխարհականը պետք է կառուցանե: Նյութ հա-

¹ Հորիզոն, 1912, N243.

² ԳԱՔ, Համաստեղի ֆոնդ, 58-2:

վաքողները աշխատում են երկու դար, իսկ ու՞ր են կառուցողները»...

Հասկանալիորեն մերժում էր նրանց անհասկանալի հավատարմությունը գրաբարին. «Ժամանակ չէ՞ ձեռք քաշելու այդ թանկագին դիակից»:

8

Ծեմարանը թողնելուց հետո վերադառնում է Թիֆլիս և ակտիվորեն մասնակցում գրական-հասարակական կյանքի իրադարձություններին: Դա հաստատում են պատանեկության տարիների մշակումներն ու գրառումները: Տետրերից մեկում վրդովմունքով նշումներ է անում Հրատարակչական ընկերության մի ընդհանուր ժողովի վերաբերյալ, ուր գրական մարդկանց ճակատագիրը վճռել են... Ընկերության ոչ գրական անդամները: Ընդհանուր ժողովում հանդես են եկել Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը, Պ. Պոռչյանը «թարգմանության գործը կանոնավորելու իսկական պահանջ առաջադրելով թարգմանիչներին վճարելու» կանոնավորապես:

Հարցադրումը, սակայն, համախոհներ չի հավաքել, և ահա զայրացած Նիկոլը տետրում գրում է. «... ամբոխային հակումներով մարդիկ եկան և գրական մարդու վիճակը որոշեցին այն ընկերության մեջ, որը կարող էր հոգալ մեր թարգմանիչներու վարձատրության բարձրացնելու և հարմարեցնելու մասին»:

Նույն օրերին, հավանաբար ընդհանուր ժողովի ազդեցության տակ, կատարում է ուրիշ մի գրառում, որ անհրաժեշտ ենք համարում մեջ բերել ամբողջությամբ:

«-Ամեն անգամ, երբ մարդ թերթում է նոր լույս տեսած գրքերը, անկարելի է, որ չհարցնի իրան, թե ինչո՞ւ է այս ինչ գիրքը գրած, ինչո՞ւ թարգմանած, ու՞մ համար է, ով է ինչ օգտվելու և այլն: Մենք այնքան քիչ ենք գիրք առնել սիրում և այնքան քիչ են մեզ մոտ ընթերցանությամբ պարապողները գիտակցում իրանց պա-

հանջները, որ գիրք թարգմանողը (գրողի համար չեմ ասում) պիտի միշտ այս երկու հարցը տա իրան՝ ինչի՞ համար և ու՞մ համար եմ թարգմանում: Որոշելով, որ իր ընտրած գիրքը հարկավոր է, նա պիտի նայի այն բանից, թե ինչպես անի, որ գիրքը մատչելի լինի նրանց, որոնց համար նշանակվում է. այս արդեն լեզվի և գնի խնդիր է: Մեր թարգմանիչները հենց այն են մտածում, որ թարգմանեն, դրանից «դենը» էլ չեն գնում, այդ է պատճառը, որ մեր մի տարվա գրքերը թերթելիս մարդ ուզում է բացականչել՝ *сумбурь и болшае ничего*. Կա և այս և այն, և այս մասին, և այն, ինքդ էլ չես իմանում, թե ինչու այս և ոչ այն: Աշխատում ես գիրքը կարդալով նրա ընտրողին, թարգմանողին և հրատարակողին ճանաչել և ինչքան էլ գլուխդ ջարդում ես, ստիպված ես այն եզրակացության գալ, թե թարգմանիչը, ընտրողն ու հրատարակողը չի ճանաչում այն «հողը», ուր գործում է և այդ ինչ ասելու խոսք է, որ գլխավոր պատճառն է մեր անսխտեմ, աննպատակ հրատարակության գործի:

Ահա ձեզ օրինակ «Մ.- Ֆլուն» լավ, մի հարցնող լինի պ. Օհանյանին. ախր ժողովրդական գրադարան որ կպցրել եք երեսին ժողովուրդը ձեր լեզուն կհասկանա կամ այդ նյութից ավելի լավը չգտա՞ք»:

Ոչ մի տեղ չտպագրված այս գրառման հիմնական գաղափարները, այլ խնդիրների հետ միասին, թարգմանված գրքերին նվիրված իր գրախոսականներում անընդհատ պետք է արծարծեր՝ դրսևորելով ամբողջական մի հայացք խնդրի վերաբերյալ:

Ժողովուրդների փոխադարձ ճանաչման, գրականությունների փոխադարձ կապի ու հարստացման առումով Ն. Աղբալյանը ևս մեծ նշանակություն էր տալիս թարգմանություններին. «Ոչ մի միջոց այնպես չի մոտեցնում երկու ազգ կամ ժողովուրդ, որքան միմյանց

մտքի արտադրություններին փոխադարձ հաղորդակից լինելը»¹:

Ըստ երևույթին հետևելով հոգեբանական դպրոցի սկզբունքներին՝ նա թարգմանությունը համարում էր լեզվի երևույթ, որով թարգմանված է. «Միևնույն գրքի տարալեզու թարգմանությունները տարբեր գրականությանց են վերաբերում. մեկը նրանից տերն է բնագրի, մյուսներն՝ թարգմանության»: Այստեղից էլ քննադատի այն համոզումը, թե թարգմանի աշխատանքը նույնքան ինքնուրույն ու արժեքավոր է, որքան բնագրի հեղինակինը. «Թարգմանիչը վերամտածում է հեղինակի խոհերը և վերապրում նրա զգացումները և ապա իր լեզվով արտահայտում իրենը դարձած օտարի խոհերն ու զգացումները: Իմաստի ամեն յուրացում և զգացումի ամեն ներապրում նույնպես անձնական ճիգ է պահանջում և անհատական բնույթ ունի, ինչպես ամեն յուրածին միտք ու զգացում»: Հայտնի է, որ հոգեբանական ուղղության ներկայացուցիչները գրականության հիմքը համարում էին լեզուն, ավելի ճիշտ՝ խոսքը, բառը: Այս տեսակետը պաշտպանում է նաև Աղբալյանը. «Գիրը չէ անշուշտ, որ արտահայտում է մարդկային հոգին, այլ այդ գրով դրոշմված բառերն ու խոսքերը և նրանց շարակցությունը»: Դրա համար էլ «գրականությունը մարդկային հոգու գրավոր արտահայտությունն է որևէ լեզվով», - գրեթե բառացիորեն կրկնում է նա իր ուսուցիչներին:

Աղբալյանը ամենից շատ անդրադարձել է ռուս գրականությունից կատարված թարգմանություններին, որոնց առանձնակի նշանակություն էր տալիս. «... Չենք կարող ընթերցողներին չհայտնել մի ուրախալի լուր. պ. Մատուրյանը հայտարարել է... որ պատրաստում է իր «Ռուս բանաստեղծներ» խորագրով աշխատության առաջին գրքույկը... ուր պիտի մտնեն թարգմանություն-

¹ «Մուրճ», 1896, N 10-11, էջ 1351:

Անք Պուշկինի, Լերմոնտովի և Նեկրասովի երկերից: Սրտանց ուրախանում ենք, որովհետև ժամանակ է հարկավոր, որ մենք ծանոթանանք մի ժողովրդի ստեղծագործություններին, որի հետ այնքան կապված ենք»¹:

Այսքան կարևոր մի գործ, սակայն, մեզանում տարերային ընթացքով է իրականանում, «չկա համակարգ, չկան ղեկավարող սկզբունքներ», այստեղից էլ մտահոգությունը որևէ ընկերություն հիմնելու վերաբերյալ, որը նպատակապես ծրագրով, ընթերցողների տարբեր շերտերի ու հասակների հետաքրքրության հաշվառմամբ, իրականացնեն այս լուրջ գործի կազմակերպումը: Նման մի ընկերության գոյությունը կփակեր դուռը բոլոր անկոչ թարգմանիչների առջև, իսկ քանի որ այն դեռևս չկա, ապա դա քննադատների պարտականությունն է: Ցույց տալով 2. Դիկկենսի «Ժլատ Սկրուշը» պատմվածքի թարգմանության արատները և թարգմանության ճակատին կարդալով, որ թարգմանիչը պատրաստվում է նոր գրքեր ներկայացնել ընթերցողներին, գրում է. «Եթե այդպիսի թարգմանություններ պիտի լինեն հրատարակությունները, լավ է (թարգմանիչը. - Գ. Ա.) մեզ ազատի արջի ծառայությունից»²: Հատուկ ընդգծում է հեղինակի ու թարգմանչի կապի անհրաժեշտությունը, որը վճռական պայման է հաջողության համար:

Իսկ որն է հաջողության չափանիշը.

«Ամեն թարգմանության արժանիքը ճշմարտությունն է, եթե թարգմանելիք գիրքը բանաստեղծությունն չէ, պահպանելը՝ ճշմարտության հետ «ոգին» պահպանելը՝ եթե թարգմանելիք գիրքը բանաստեղծություն է (ընդարձակ մտքով ասած՝ վեպ, դրամա, ողբերգություն և այլն): Ոգին պահպանել, նշանակում է այնպես թարգմանել, որ կարդալիս մարդ կարծի, թե

¹Նույն տեղում:
²«Մուրճ», 1897, N 5, էջ 680:

քնագիրն է կարդում»¹: Մի այլ տեղ՝ «թարգմանել չի նշանակում մի լեզվի խոսքերը մյուս լեզվի խոսքերին վերածել, այլ թափանցել հեղինակի հոգու մեջ և արտահայտել նրա զգացածը»²: Այստեղ էլ ընդգծում է թարգմանչի ու թարգմանվող հեղինակի հոգեհարազատության խնդիրը՝ «Ծեքսպիրին թարգմանողը պիտի Ծեքսպիր լինի»:

Հեղինակները տարբերվում են ոչ այնքան պատկերած նյութով ու մոտիվներով, որքան «իրանց տեսողության անկյուններով»: «Զգացմունքի խորության, ըմբռնելու ուժի, թափանցելու կարողության, ճաշակի նրբության, դրդումների տարբերության աստիճանները հիմք են դառնում բանաստեղծների տարբերության», և թարգմանչի հաջողության գրավականներից մեկն էլ այս յուրահատկությունները փոխանցելու կարողությունն է: Այս տեսանկյունից էր Ադրալյանը մերժում Յու. Վեսելովսկու «Բանաստեղծական թարգմանություններ», պրակ I գիրքը. չնայած հեղինակի բարի կամքին ու ցանկության, գործադրած եռանդին ու ջանքերին՝ թարգմանություններն անհաջող են, որովհետև «Մենք ունինք հայերենից թարգմանություններ, բայց չունինք Ծաֆ. Ազիզի, Հ. Հովհաննիսյանի, Ծատուրյանի բանաստեղծությունների թարգմանությունը», թարգմանիչը բոլորին «մի հայտարարի է բերել»:

Մյուս չափանիշը, որ առաջնային էր քննադատի համար, թարգմանության լեզուն էր, այն, թե թարգմանչին որքանով է հաջողվել հեղինակի լեզուն դարձնել հայերեն: Գրեթե բոլոր գրքերի համար, իբրև կարևոր պայման, այս հանգամանքը նշվում է. «զալով թարգմանչի լեզվին-ուղղակի վատ է, նրա շարահարությունը ավելի ոռուներեն է, միայն բառերն են հայացրած»: «Երկու տեղ

¹«Մուրճ» 1897, N 1, էջ 136:
²«Մուրճ», 1897 N 11-12, էջ 1642:

է թարգմանիչն ուղղակի կարողացել հայերեն արտահայտել հեղինակի միտքը», «թարգմանության լեզուն տանելի է» և այլն:

Արդեն Հայաստանի Հանրապետության նախարար Աղբալյանը, որ ձգտում էր պետական հովանավորությամբ շրջապատել գրականության ու արվեստի մարդկանց, բնականաբար մոռացության չպետք է տար թարգմանության գործը: Նրա պահանջով «հայ հեղինակների ինքնուրույն ու թարգմանական երկերի հրատարակության համար» Մինիստրների խորհուրդը Հանրային կրթության և արվեստի մինիստրության անունով բացում է մեկ միլիոն վեց հարյուր տաս հազար ռուբլու վարկ»¹:

9

Գեղարվեստական ձևի խնդիրներին հետամուտ քննադատը չէր կարող աչքաթող անել այնպիսի մի բնագավառ, որպիսին ստեղծագործության լեզուն է: Գրեթե բոլոր գրախոսականներում, մեծ ու փոքր հոդվածներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ լեզվի խնդիրներին, գնահատել հեղինակի կամ թարգմանչի լեզվական արվեստը, առաջադրել զարգացման ուղիներ:

Աղբալյանը գրական լեզվի փայլուն օրինակներ էր համարում Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Լ. Ծանթի ստեղծագործությունների լեզուն. «Ավելորդ եմ համարում խոսել Հովհ. Թումանյանի լեզվի մասին, թեկուզ ունենայի ինչ-ինչ մանր դիտողություններ: Նա ինքը հայ լեզվի ստեղծողներից մեկն է, նա բանաստեղծ է. «ոտից մինչև գլուխ», ինչպես Լիրը՝ թագավոր, այսինքն նա ստեղծում է մեր ազգային բանը, որ խոսք և իմաստ է նշանակում միանգամայն: Իսկ ուր

¹ՀԳԿԳԱ, ֆ. 199, 1, գ. 156, ք. 4:

խոսում է բանաստեղծը՝ քերականը լոռն է»¹: Նույն, այսինքն՝ «ազգային բանի» դիրքերից էր գնահատում նաև Ավ. Իսահակյանին. «Այն աստիճան հայերեն է գրում, որ մեր կիսահայ լեզվին սովոր ականջին երբեմն խորթ են հնչում նրա դարձվածներն ու արտահայտությունները: Կանգնում եք, մտածում, հիշողությունը քչփորում և նոր նկատում, որ հայերս հենց այդպես էլ ասում ենք»²:

Խոր դժգոհություն էր հայտնում բարբառով գրելու տարածված իրողությունից: Բարբառը, այո, «մի շտեմարան է գրական լեզվի համար», բայց բարբառով գրելը նեղացնում է ընթերցողների շրջանակը, խոչընդոտում միասնական գրական լեզվի ստեղծմանը. «Մեր նպատակը պետք է լինի ստեղծել ոչ թե գավառական, այլ հայոց գրականություն, մատչելի ազգության բոլոր խավերին»³: Մանավանդ, ինչպես պնդում է քննադատը նույն տեղում, «միշտ հնարավոր է ժողովրդական լեզվի ոգին, համն ու հոտը պահել, առանց բարբառի մեջ ընկնելու»: Գրականության ժողովրդայնությունը ենթադրում է նաև լեզվի ժողովրդայնություն: Իբրև այս ճշմարտության մարմնացում քննադատը մատնանշում էր Ղ. Աղայանին, Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին: Ահա մի բնորոշ դիտողություն գրախոսվող գրքերից մեկի հեղինակին. «Միանգամայն անհրաժեշտ է, որ նա իր լեզուն գրական դարձնի. պետք է գրել ժողովրդի ոգով և ոչ թե ժողովրդի ոճով... Ձեզ օրինակ Ղ. Աղայանը՝ նրա լեզուն հայերեն է, հայի հոտ է գալիս նրա լեզվից, բայց մինևնույն ժամանակ գրական է և լիքը չէ ժողովրդական բառերով: Ահա այդպիսի լեզվով պետք է գրել, որ ժո-

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. 1, էջ 191:

²«Մուրճ», 1898, N 6, էջ 842:

³Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. 1, էջ 296: 12-7

դովրդական հոգին ունենալու հետ, միևնույն ժամանակ մաքուր գրական լեզու լինի»¹:

Լուրջ պահանջներ էր դնում հեղինակների առջև հերոսներին լեզվական միջոցներով ևս անհատականացնելու կապակցությամբ: Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Լ. Ծանթի «Երազ օրեր» վիպակը՝ անում է նաև մի բնորոշ դիտողություն. «Ծանթի ... հերոսները խոսում են միևնույն ձևով - գեղարվեստական չէ. ինչպես մարդիկ տարբեր են, այնպես էլ տարբեր է նրանց խոսելու ձևը. խոշոր և արվեստագետ գրողները միշտ հետևում են դրան, ուշադրության են առնում այդ»²:

10

Հայոց գրականության «մի գիտական և հմտալից» պատմություն «հորինելը» Ն. Աղբալյանի կյանքի նպատակներից էր: Տարիներ հետո, սակայն, ավելի ու ավելի հասու է դարձել մեկ մարդու ուժերով այդ խնդրի իրականացման և այլ բնույթի դժվարություններին. ժամանակի մեծ մասը կլանել է հասարակական-քաղաքական գործունեությունը, և օր ծերության, բարեկամների համառ հորդորներին ունկնդիր՝ ձեռնարկելով այն, իրեն հատուկ շիտակությամբ խոստովանել. «Գիտեմ թե ինչ պետք է և ինչպես. բայց բավական չէ պայծառ գաղափար ունենալ գրականության լավ և հմտալից պատմության մասին, պետք է այդ գաղափարն իրացնել կարենալ գործնապես:

Եվ բավական չէ իրացնելու կարողություն ունենալ, պետք է նաև հնար ու միջոց»³: Առաջին հերթին պակասում էր վերջինը՝ «հնար ու միջոցը»: Հիշենք դարասկզբի գանգատը. «Կանեմ այն, ինչ որ հնարավոր է,

¹ «Մուրն», 1896, N 12, էջ 1599:

² Նույն տեղում, էջ 1607-1608:

³ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. IV, էջ 80:

հնարավորություն չունենալով անելու այն, ինչ որ կարող եմ և ընդունակ եմ»: Նյութականից բացի կային ավելի լուրջ դժվարություններ, որոնց մասին կրկին ցավով ինքն է գրում. «Զունինք մեր գրական ժառանգության լրիվ իրացանկ, չունինք գրական պատմական մասնակի հետազոտություններ, չունինք բնագիրների գիտական հրատարակություն... Հին գրականության հետազոտությունը դեռ չէ դուրս եկած բանասիրական բովից... Նույն վիճակի մեջ է գրական գործերի գրապատմական հետազոտությունը. աղբյուրների և ազդեցությանց խնդիրների քննությունը հազիվ սկսված է: Կան գրական ընդարձակ դաշտեր, որ դեռ խոփի չեն հանդիպած»¹ ...

Մի կյանքը բավական չէ այս «չունինքների» փոքրիկ մասն անգամ լուծելու համար: Ուստի և իր պատմությունը համեստորեն կոչեց «ընդարձակ էջեր»: Եվ, այնուամենայնիվ, ինչ որ արեց՝ կրկին արեց որոշակի մի համակարգով, որի նպատակը, սակայն, ոչ թե «լավ ու հմտալից» պատմությունն էր, այլ ընթերցող լայն զանգվածներին գրականության անցած հազարամյա ուղուն ծանոթացնելը: Սրանով պետք է բացատրել «Ներածության» (1947) և «Դասախոսություններ հայ մատենագրության մասին» (1951) անավարտ հատորի էական տարբերությունները:

«Ներածության» մեջ խոստովանում է, որ գրականության պատմության վերաբերյալ իր ըմբռնումները ձևավորվել են «Ա. Պիպինի Ռուսաց գրականության և Հ. Տենի անգլիական գրականության պատմությանց» սկզբունքների վրա: Ըստ երևույթին հետևելով իր ուսուցիչներին՝ գրականության պատմության համար իբրև կարևոր պայման ընդունում է գրական պատմության գոյությունը՝ գրականության պատմությունը արհեստականորեն բաժանելով երկու մասի: Գրական պատմությունը

¹ Նույն տեղում:

հեղինակներին ու երկերը քննում է առանձին-առանձին՝ նախապատրաստելով գրականության պատմության «հորինումը», որի նպատակը, արդեն, «գրական տեսակների հոլովույթի» «պատճառական կապակցությանց» մեկնաբանությունն է: Երկու բաժիններում առաջադրված խնդիրների միասնական քննությունը բացահայտում է գրականության պատմության վերաբերյալ Աղբալյանի ըմբռնումների համակարգը:

Եղիշե պատրիարք Դուրյանի «Պատմություն հայ մատենագրության» աշխատությունը «գոհացում չի տալիս... որովհետև գիտական չէ իր բնույթով»: Գիտական չէ, քանի որ հեղինակը չունի «ստույգի ու ճշգրտի» վրա հենվող «որոշ տեսություն հայոց գրականության պատմության մասին»: Ո՞րն է իր տեսությունը:

Գրականության պատմությունը «Մի ազգի ոգեկան կյանքի գրական արտահայտութեանց և նրանց տարբեր կերպերի (ոճերի) պատճառակապ հաջորդությանց» մեկնությունն է: Գիտունի գործը ոչ թե փաստերի պարզ շարադրանքն է, այլ գրական երևույթների «պատճառական մեկնությունը»: «Այդ մեկնությունն է գիտության բուն գործը», - սա է ելակետային դրույթներից մեկը:

Ամեն գիտություն ունի հետաքրքրությունների իր շրջանակը, հետևաբար պետք է պարզել, թե որ գործերը կարող են նյութ դառնալ գրականության պատմության: Յուրաքանչյուր գրավոր խոսք դեռևս գրականություն չէ. իր ժամանակի համար միանգամայն հասկանալի վեճ է բացում նրանց հետ, ում համար գրականության «գաղափարը որոշ սահմաններ չունի», որի պատճառով էլ այդ հասկացության մեջ ներառում են «ճարտասանությունն ու պատմագրությունը», քննադատությունն ու «գիտական երկերը», այլ ասպարեզների ստեղծագործությունները՝ գրականությունը դարձնելով «ամեն տեսակ գրությանց համագումար»: Այստեղ է, որ ընդգծում է, թե նույնիսկ բոլոր «գրական վաստակները» չպետք է

դառնան գրականության պատմաբանի հետազոտության առարկա:

Հարկավոր է ընտրություն կատարել, որովհետև «ամեն գիտություն և գիտակարգ ունի իր հետազոտության առարկան, այսինքն՝ երևույթների մի համագումար, որ կազմում են այդ գիտության կամ գիտակարգի կալվածքը»¹:

Այսպես, ուրեմն, գրականության պատմության «կալվածքը» կազմում են գեղարվեստական ստեղծագործությունները, բայց ոչ բոլորը: Իսկ որո՞նք, ինչպե՞ս պետք է կատարել ընտրություն, ի՞նչն է դառնալու «հիմունք ընտրանքի»: Գրական երկերի ընտրությունը «անձնական» հմայքի խնդիր չէ. «Գրական վաստակների» «շեղջակույտից» ընտրության «կշռաչափը» պետք է լինի ձևի և բովանդակության ներդաշնակությունը: Հիշենք նրա բանաձևը՝ «Կատարյալ են այն գործերը միայն, ուր ձև ու բովանդակություն ներդաշնակ են, այսինքն՝ հարմարած են իրար»: Եվ քանի որ ամեն բովանդակություն ունի իր ձևը և հակառակը, ուստի միայն «հանրային բովանդակություն» ունեցող «ձևավոր հորինումով» գործերը կարող են հավակնել տեղ գրավելու գրականության պատմության մեջ: Գրականության պատմությունը վեր է հանում գրական տվյալ տեսակի «բարձրագույն կետը», դիտված իր «հոլովույթի» մեջ, «իբր մթնոլորտ»:

Բայց սա բոլորովին էլ չի նշանակում, ավելի նվազ արժեք ունեցող երկերը մոռացության են տրվում: Գրական մեծարժեք երկերը հավերժական են և կազմում են գրականության պատմության լեռնաշղթայի բարձր և անկրկնելի գագաթները: Օղթան, սակայն, ստեղծվում է բոլոր գեղարվեստական ստեղծագործությունների համադիր քննությամբ: «Գրականության պատմության հա-

¹Ն. Աղբալյան, «Ամբողջական երկեր», հ. IV, էջ 35:

մար կարևոր են ոչ միայն գլուխգործոցները, որոնք իրենց ժամանակեն ու շրջապատեն դուրս կապրին, այլ նաև երկրորդական հեղինակները, որոնք իրենց ժամանակը լավապես կբնորոշեն, «քանի որ անոնք միայն իրենց դարու գաղափարներով կապրին»¹: Եվ, այնուամենայնիվ, պետք է հիշել, որ բովանդակության ու ձևի ներդաշնակության պահանջը չբավարարող երկերը դուրս էր թողնում գրականության «լավ ու հմտալից» պատմության շրջանակից՝ հանձնելով դրանք «լիակատար պատմության» տնօրինությանը:

Գրականության պատմության տիրույթը որոշելուց հետո ծագում է հաջորդ խնդիրը՝ «գրական նյութի հայտնաբերումը»: Իր պատմությունը գրելու շրջանում հայ բազմադարյան գրականության աղբյուրները հավաքված էին Երևանի, Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի, Եվրոպայի և Ռուսաստանի զանազան ձեռագրատներում, չկային նրանց մասին լիակատար տեղեկություններ տվող ցուցակներ ու աղբյուրներ, շատ քիչ բան էր տպագրված: Տվյալները թերի էին նաև հայ տպագրության գյուտից հետո, յույս տեսած գրքերի վերաբերմամբ: Հսկայական թվով հեղինակներ կորած էին պարբերական մամուլի «շեղջակույտերում»: «Հայ գրականության մի մասը գրչագիրների մեջ է, մի մասը՝ գրքերի ու մեծագույն մասը պարբերական հրատարակությանց», մինչև այս ամենի մասին և ստույգ տեղեկություններ չիներ, անհնար է ստեղծել հայ գրականության «մի գիտական և հմտալից պատմություն»:

Հայ գրականության պատմության դեպքում ծագում է մի դժվարություն ևս. քիչ ձեռագրեր են մեզ հասել ինքնագրով: Բազմաթիվ ձեռագրեր ունեն տարբեր ժամանակներում կատարված ընդօրինակումներ, որոնք հաճախ լուրջ տարբերություններ ունեն:

¹Նույն տեղում, էջ 245:

Մի մարդու կարողությունից վեր է դրանց բաղդատությունն ու բնագրի վերականգնումը: «Այս գործը կարող է կազմակերպել Հայոց պետությունը՝ ստեղծելով մատենագիտական մի հաստատություն»¹: Իր պատմությունը գրելու ժամանակ կար այս դժվարությունը ևս, թեև նա զարմանք հարուցելու չափ տեղյակ էր բնագրագիտական ու բանասիրական աշխատանքներին:

Գրականության պատմությունը պետք է շարադրել «հաջորդական փուլերում»՝ նրանց «պատճառական մեկնությամբ»: «Գրական երևույթների հաջորդական փուլերի ցուցադրությունը և նրանց հոլովույթի մեկնությունն է գրականության նյութն ու բովանդակությունը»¹:

Արդեն պարզ է, որ փուլերի բաժանելը ևս գիտական հստակ չափանիշների պետք է հենվեր: Մերժում էր թե՛ «լեզվական» թե՛, «դասակարգային» սկզբունքները: Առաջինը կարծես ուղղված էր ժամանակակցի ու բարեկամի՝ Լ. Շանթի դեմ, որը գրականության պատմության պարբերացման հիմքում դնում էր լեզվական գործոնը, երկրորդը՝ 20-30-ական թվականներին մեզնում ծաղկող գեոհիկ - սոցիոլոգիզմին: Վերջինս անտեսում էր գեղարվեստական զարգացման յուրահատկությունները, կեղծ չափանիշներից էլնելով՝ ծուռ հայելու մեջ ներկայացնում գրական արժեքներն ու այն ստեղծողներին: «Լեզվի պատմության փուլերը գրականության պատմության փուլերը չեն», որովհետև հասարակական-գրական նույն պայմանների ծնունդ և նույն փուլի պատկանող երկերը կարող են գրված լինել տարբեր լեզուներով՝ գրաբարով, բարբառով, ժամանակակից գրականով: Աղբայլանի մոտ հանդիպում է մի միտք, որ առաջին պահ թողնում է գրականության դասակարգայնության վերաբերյալ մեզ հայտնի մարքսիստական թեզը. «Գրա-

¹Նույն տեղում, էջ 30-31:

կանությունն ազգային է իր լեզվով և դասակարգային՝ բովանդակությամբ»:

Սրանով նա միայն ընդգծել էր ուզում մի հանգամանք. հասարակությունը բաղկացած է խմբերից, դասերից, որոնք ստեղծում են իրենց միջավայրը և ունեն իրենց հատուկ մտածողություն: «Ինքնին պարզ է, որ մարդու հորինած խոսքը շատ ավելի մատչելի է այն միջավայրին, ուր նա ծնած է, որովհետև նրա հորինած գաղափարներն ու ստեղծած պատկերները այն տարրերով են կառուցված, որ ստացած է իր միջավայրից»: Քննադատի բերած օրինակը կրկին հաստատում է, որ նրա դասակարգայնությունը հեռու է մարքսիստականից: «Գյուղացի Խ. Արովյանը, Պ. Պոռշյանը, Ղ. Աղայանը և Հ. Թումանյանը մի ուսմական որոշ գունավորում տված են Ռուսաստանի հայոց գրականության մի ընդարձակ շերտի լեզվին և բովանդակության, իսկ քաղքենի Ս. Նազարյան և Ծիրվանզադե նույն գրականության լեզվին ու բովանդակության տված են տարբեր գունավորում»:

Այս իմաստով, ահա, «գրականության պատմության մեջ պետք է տարբերել շերտավորումները և բնորոշել ամեն մի խմբակցության գաղափարները, զգացումներն ու արվեստը»: Դժվար չէ նկատել, որ խոսքը վերաբերում է ընդամենը գրողի միջավայրին հատկացվող դերին:

Այս կամ այն միջավայրից ելած գրողի ստեղծագործության արժեքը, սակայն, չափվում է ոչ թե «առաջադեմ» դասակարգի հատկանիշներով, այլ նրանով, թե գրական երկը որքան համամարդկային է, որքան հանրային: «Լայնագոյեցիկ են» այն ստեղծագործությունները, որոնք «խոսում են լայն բազմության մտքին ու սրտին», իսկ «խմբական շահեր, գաղափարներ» արտահայտող երկերը կարճատև կյանք ունեն և գեղարվեստական չեն:

Տասնամյակներ առաջ Լավելի հստակ էր ձևակերպել այս միտքը. իսկական արվեստագետի «հայացքը լայն է և չի ճանաչում կուսակցությունն»: Սա ոչ միայն արվեստի համամարդկային արժեքի ընդունումն է, այլև ինքնաբացահայտում. առաջնորդվելով գեղեցկության չափանիշներով, ինքը՝ Աղբալյանը, քննադատի մեջ հաղթահարեց նեղ կուսակցական ըմբռնումները, որի շնորհիվ էլ միշտ գուշակեց ու գնահատեց իսկական «լայնագոյեցիկ» գեղեցկությունները, անկախ նրանից՝ խոսքը ռեալիստ Թումանյանի, սիմվոլիստ Ծանթի, դաշնակցական Ահարոնյանի, թե բոլշևիկ Չարենցի մասին է:

Գրականությունը ժողովրդի մշակույթի բաղկացուցիչ մասն է, «մեկ երեսը»: Ծատ բնական է, որ նույն պայմանների ծնունդ հոգևոր տարբեր ոլորտներ սերտորեն աղերսվեն իրար: Մշակույթի մյուս «երեսները-կրոն, տնտեսություն, արվեստ, պետություն, իրավունք անջատ երևույթներ չեն», փոխադարձաբար կապված են իրար:

Գրականության պատմաբանը մշակույթի բնագավառների «Բավարար հմտություն պետք է ունենա, ոչ միայն նրա համար, որ «գրական շատ երևույթներ իրենց մեկնությունն ու զուգահեռը գտնում են մշակույթի պատմության մեջ», այլև նրա, որ ժողովրդի հոգևոր ոլորտներ լինելով՝ «առնչակից» են իրար, «եթե ոչ ներդաշնակ՝ առնվազն մի կապակից միությունն»:

Գրականության պատմությունը պետք է բացահայտի «այն պատճառները, որ այս կամ այն կերպարանքը տված են ստեղծագործություններին: Պատմական հանգամանքները նկատի ունի քննադատը (նա անտես չի առնում նաև գրական նախադրյալները): «Կյանքի և գրականության փոխադարձ կապը բանալին է գրապատմական մեկնությանց, հետևապես հիմնական նյութերից մեկը գրականության պատմության»¹:

¹Նույն տեղում, էջ 79:

Գրականության պատմությունը մի կարևոր հատկություն էլ պետք է ունենա. ոռուսական ամսագրերից մեկի չորս համարներում տպագրված ընդարձակ մի հետազոտության արժեքների կողքին նկատում է մի էական թերություն. «... Բայց պատկեր չի ստացվում, այլ հատվածական բան: պատմաբանը պիտի արվեստագիտական տակտ ունենա և հոտառություն»:

Նույն դիտողությունն անում է Ե. Դուրյանի «Պատմություն հայ մատենագիտության» հատորի կապակցությամբ. «Մանր հատվածներ են, որ տեղ-տեղ կապակցություն չունին իրար հետ և երբեմն առանց կապի հաջորդում են իրար»:

Աղբալյանի մեթոդաբանական ընդհանրացումները ներառում են հեղինակի գնահատման, երկի վերլուծության եղանակները ևս: Այստեղ արդեն մեզ ծանոթ Աղբալյանն է՝ Հ. Տեհի տեսության հայտնի ելակետային դրույթով. գրականության պատմաբանին պետք է հետաքրքրի հեղինակը, նրա երկը, ապրած ու ստեղծագործական միջավայրը:

«Այս երեք նյութերից հիմնականը երկն է, մյուս երկուսն կարևոր են, որքան կարող են մեկնել երկի ծագումն ու բնույթը»¹:

Գլխավորը երկն է, մանրամասնում է քննադատը, բայց պետք է սկսել միջավայրից: Զգուշացնում էր, որ միջավայրի նկարագրությունը ինքնանպատակ չպետք է լինի, հատկապես պետք է խուսափել «սնափառությամբ ընդարձակ շրջանակ գծելու մոլորությունից»:

Հեղինակի կենսագրությունը «կարող է գրվել երկու նպատակով՝ մեկն ինքնին, իբրև տվյալ հեղինակի կենսագրություն «ընդհանրապես», մյուսը՝ հատուկ միտումով, այն առնչությունների հաշվառմամբ, որ այդ կյանքն» ունի երկի հետ և կարող է մեկնել այդ երկը»:

¹Նույն տեղում:

Մյուս կողմից հետազոտողից պահանջում էր երկի քննություն «ինքն իր մեջ»՝ «հեղինակի ներքին աշխարհը» հայտնաբերելու համար: Ստեղծագործողի ներքին աշխարհը «կարողությանց, հույզերի և գաղափարների աշխարհն է»:

Այս փոխադարձ կապից բացի կա նաև ստեղծագործության «ինքնուրույն կյանք, որ կարող է տևական կամ կարճատև լինել: Ամեն ինչ չափ ու կշռի ենթարկող Աղբալյանը երկի «ինքնուրույն կյանքի» տևողությունը գեղարվեստական զարգացման ընթացքի վրա թողած ազդեցությամբ էր չափում: Ավելի ընդարձակելով խնդիրը՝ գրականության պատմաբանի հետազոտության շրջանակի մեջ մտցնում էր պարզելը այն բանի, թե գրական երկը ինչ է ժառանգել նախորդներից և թե որքանով է արգասավորել հետագա զարգացումը: Գեղարվեստական արժեքների «գրական-պատմական տեսակետից» գնահատությունն էլ համարում էր գրականության պատմաբանի խնդիրներից մյուսը: Այսպես, ահա, գրական երկույթները «ժամանակի թելին շարելով՝ որոշել նրանց հաջորդական ձևառումները և գտնել նրանց հավանական պատճառները»:

Եվ, վերջապես, գրականության պատմության հիմք պետք է դարձնել հեղինակների «երկերի բովանդակությունը, նրանց հորինման եղանակները, նրանց մտածման ընթացքը, զգացումի երանգը, գրական երկերի դրդիչ պատճառները, հեղինակների ներքին մարդը, որ ցոլանում է իրենց ոճի մեջ»¹:

Գրականության գիտական պատմության ներկայացվող պահանջները անպայմանորեն ընկած են «Դասախոսություններ հայ մատենագրության մասին» ուսումնասիրության հիմքում, թեև, իհարկե, ոչ այն խորությամբ, ինչպես ինքն էր պատկերացնում:

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, Կ. 1, էջ 437:

Իր գրականության պատմությունն սկսում է «Հայոց ազգն ու աշխարհը» գլխով, և սա լիովին հասկանալի է. եթե գրողի երկը հասկանալու համար պետք է ծանոթ լինել նրա միջավայրին, որ սկսվում է կենսագրությունից, բնական է, որ ժողովրդի հոգևոր աշխարհի մի «երես» հանդիսացող գրականության պատմությունն էլ սկսվի ժողովրդի կենսագրությունից ու «միջավայրից»:

Սովորական իմաստով պատմություն չէ սա. զանազան աղբյուրների օգտագործմամբ փորձում է որսալ հայի բնավորության այն գծերը, որոնք մշակվել են անցած ճանապարհի ընթացքում, մինչև գրավոր գրականության ստեղծումը: Հավատարիմ իր սկզբունքին՝ զուշանում է «սնափառությամբ ընդարձակ շրջանակ գծելու մոլորությունից»: Գերազանցապես նկատի ունենալով մեր պատմության նախագրային շրջանը՝ հանգում է այսպիսի հետևության. հայ ժողովուրդը գալիս էր «շատ հին դարերից, ստեղծած էր մի քանի մշակույթ, կրած էր օտար ազդեցությունները, բայց պահած էր իր ինքնությունը»¹: Հակառակ «Ազգն ու աշխարհը» բաժնի՝ «Հայոց լեզուն» գլխում կարծես թե չի կարողացել հաղթահարել լայն շրջանակ գծելու «սնափառությունը»: Ելակետը որքան էլ ճիշտ՝ «Պետք է... ճանաչել այն լեզուն, որով մերոնք գրականություն ստեղծեցին Ե. դարում», այնուամենայնիվ լեզվական ու լեզվաբանական նրա լայնածավալ հետազոտությունը միշտ չէ, որ պատասխանում է առաջադրված խնդրին՝ մեր լեզուն ճանաչելով «մասամբ կճանաչենք նաև այն հնարավորությունները, որ ընձեռած է մեր լեզուն մեր դասական շրջանի հեղինակներին և թարգմանիչներին և այն ճիգերի անհրաժեշտությունն ու տարողությունը, որով ձգտած են

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. IV, էջ 126:

նրանք գրականության գործիքը՝ լեզուն՝ դարձնել նկուն ու հատու իրենց սուների մասն»¹:

Պատմության 3-րդ գլուխը «Գիրք և գրիչ» է վերնագրված: «Թեև այս նյութն ավելի պատշաճ կլիներ մեր մշակույթի, քան գրականության պատմության,- նկատում է քննադատը,- բայց մեր գրիչների և ձեռագրական գործին սատարողների հազարաձայն աղերսանքը՝ հիշատակել իրենց անունը երբ առիթ ունենանք իրենց գործը կարդալու, ընդօրինակելու կամ պարզապես տեսնելու՝ ստիպում է ինձ երախտագիտությամբ կանգ առնել նրանց հիշատակի առջև...»²: Եվ եթե հաշվի առնենք, որ այս ժամանակ հրատարակված հիշատակարաններ չկային, ապա սա մի ապացույց է, թե ինչ տքնաչան աշխատասիրությամբ է հավաքել նա այնքան հմտությամբ ու գործով ներկայացրած ահագին նյութը, բազմաբնույթ այն հիշատակարանները, որոնց հեղինակների «անուն Տեր գիտե»:

«Ներածության» հիմնական սկզբունքները և երկու գլուխների գլխավոր դրույթները, մատչելի շարադրանքով և առանց գիտական հիմնավորումների, կրկնվում են «Մատենագրության» ներածության մեջ. գիտական ներածությունը, ոճական միասնության նկատառումով, հարմարեցվել է պատմության շարադրանքին:

Այնուհետև անցնում է հայ գրականության պատմության շարադրանքին՝ պահպանելով իր գծած համակարգի սկզբունքը, սկսելով բանավոր ստեղծագործությունից և կարողանալով շարադրանքը հասցնել մինչև 7-րդ դար: Մեր խնդրից դուրս համարելով «Դասախոսությունների» ամբողջական գնահատությունը՝ ասենք միայն, որ Աղբալյանի շատ տեսակետներ, առանձին բնորոշումներ ու մոտեցումներ, ժամանակի

¹Նույն տեղում, էջ 128:

²Նույն տեղում, էջ 179:

հայագիտության մակարդակը ներկայացնելով հանդերձ, այսօր վիճելի են կամ մերժելի: Եվ, այնուամենայնիվ, բանասիրական սուր, երբեմն էլ զարմանք հարուցելու չափ նուրբ ու տարողունակ դիտարկումները, գրական-պատմական մթնոլորտի խոր զգացողությունը, բանահյուսության, մասնավորապես «գրական վաստակների» գեղարվեստական արժանիքների, գրականության պատմության ընդհանուր շղթայում նրանց գրաված տեղի բացահայտումները, գրողների ու գործիչների, պատմական ու գրական երևույթների դիպուկ բնութագրումները, շարադրանքի անկեղծ հայրենաշունչ ոգին ու հստակությունը և այլ արժանիքներ «Դասախոսությունները» արժեքավոր են դարձնում այսօրվա ընթերցողի համար ևս:

11

Գրականության պարբերացման մասին հստակ պատկերացում ունենալով, կոնկրետ չի զբաղվել հայ գրականության շրջափուլերի խնդրով: «Դասախոսությունները» հասցրեց մինչև 7-րդ դար՝ ամբողջ ժամանակաշրջանը բաժանելով երեք փուլի. I. Նախագրական շրջան՝ երկու ենթափուլով. 1. Բանավոր ստեղծագործություն, 2. Սրբախոսական գրականություն, III-IV դարի գրականություն. այստեղ զետեղում էր օտարալեզու հայ գրական մուշները, որոնք հետո թարգմանվել են հայերենի. 5-7-րդ դդ. գրականություն. սկիզբ առնելով գրերի գյուտից՝ ծաղկում և ինքնատիպ դիմագիծ է ստանում ինքնուրույն ու թարգմանական մի գրականություն, որ կրած ազդեցություններով հանդերձ՝ խորապես ազգային է և մեծ խթան է հանդիսացել հետագա գեղարվեստական զարգացման համար: «Հայ գրականության հիմքը կրթվի օտար լեզվով, բայց կմշակվի հայ ոգով: Ե. դարում այդ գրականությունը կհայանա նաև

լեզվով»¹: Դժվար չէ նկատել, շրջանաբաժանումը հենվում է ժամանակի բանասիրական ու գրականագիտական մտքի ընդունված սկզբունքներին:

Հավանական է ենթադրել, որ նա ուներ հին և միջնադարյան շրջանի ըմբռումը, թեև, չմոռանալով, գուսանական պոեզիան, իբրև բանավոր ստեղծագործության մի տեսակ, դուրս էր դնում գրավոր գրականության ընդհանուր շղթայից:

Օտտ ավելի իմաստավորված է գրականության նոր շրջանի ըմբռումը: «Հորիզոնի» և «Նոր հոսանքի» հողվածներում, գերազանցապես հայ դասականներին նվիրված խմբագրական առաջնորդներում, դիմանկարներում, երբեմն էլ գրախոսականներում հանդիպում են բնութագրումներ, գնահատականներ, համառոտ տեսական ընդհանրացումներ, որոնք հայտնաբերում են մի ճշմարիտ հայացք նոր գրականության անցած ուղու, զարգացման գլխավոր օրինաչափությունների, նրա իսկական մեծությունների գրաված տեղի ու նրանց վաստակի գնահատման վերաբերյալ:

«Մոտ հարյուր տարվա անցյալ ունի արդեն հայոց նոր գրականությունը», - դարասկզբին հայտարարում էր քննադատը՝ առանձին հողվածներում մեծացնելով ընդգրկման շրջանակները մինչև Մխիթարյաններ:

1914-ի սկզբներին Թիֆլիսում Հնյ գրական ընկերության երեկույթներից մեկում հանդես է գալիս «Հայ գրականության ապագան» թեմայով դասախոսությամբ, ուր մի շարք ուշագրավ դիտարկումներով, նոր գրականության զարգացումը բաժանում է երեք շրջանի՝ 1. «Անցյալի փառաբանության շրջան (Մխիթարյաններ)», բնորոշ է պատմական անցյալի բանաստեղծականացումը, 2. «Հայրենասիրական շրջան (Խ. Աբովյան, Բաֆֆի, Պատկանյան, Պողոջյան, Աղայան և մյուսները)», այժմ

¹Նույն տեղում, էջ 302:

գրողների հայացքը հառված է ոչ թե անցյալին, այլ՝ ներկային: «Այս շրջանը մի տեսակ խառնուրդ է եվրոպական և հայրենական ազդեցությունների, գրողները չեն կարողանում ճշտությամբ պատկերացնել հային»¹: 3. «Նոր սկսած շրջան» (Հովհ. Թումանյան), գրականությունն սկսում է «ազգայնանալ, ազատվել օտար ազդեցություններից և սնվել հայրենի մթնոլորտում»²: Նախորդ շարադրանքից հայտնի է, որ այս «նոր շրջանի» առանձնահատկությունը համարում էր ռեալիզմի և ժողովրդայնության հաղթանակը (Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան):

Նոր շրջանի գրականության ակունքներում արժեքավորում էր Մխիթարյանների գեղարվեստական գործունեությունը, մասնավորապես Ղ. Ալիշանի ստեղծագործությունը: Վերջինիս հայրենասիրական երգերը «մեծ ազդեցություն են ունեցել ողուսահայ գրականության վրա»: Ռ. Պատկանյանն ու Մ. Նալբանդյանը շարունակեցին Ալիշանի ավանդները՝ պայմանավորելով նոր շրջանի բանաստեղծության ինքնուրույն մի փուլ: Այն ավարտին է հասնում ողուսությունը պատերազմից հետո, երբ հայության ակնկալած հույսերը փլուզում են ապրում:

«Այն ազգային-քաղաքական իդեալները, որոնք ոգևորում էին Հ. Հովհաննիսյանի նախընթաց սերունդին... դադարել էին ոգեկան կյանքի զորեղ խթան լինելուց», նոր սերունդը, որին պատկանում էր Հովհաննիսյանը ևս, «ընդունում էր նրանց վեհությունը... բայց անգոր ու անպատրաստ էր համոզումով նրանց փարելու»³ ...Վեհ իդեալների փլուզումը պայմանավորեց հուսահատության ու տրտմության մի շրջան, որի արտահայտիչը

¹ «Հորիզոն», 1913, N 90:

² «Հորիզոն», 1914, N 64:

³ «Հորիզոն», 1913, N 90:

եղավ Հովհաննիսյանը: Բանաստեղծն ու հասարակությունը հայտնվում են «երկու ճանապարհի» ճամփաբաժնում՝ «առանց կորով ունենալու ընտրել այս կամ այն ուղին»: Անցման այս շրջանի տրամադրությունների արտահայտիչը Հովհաննիսյանն է:

Միայնակ չէր. Հովհաննիսյանը ունեցավ բազում հետևորդներ, որոնցից, բնականաբար, նկատում է առավել տաղանդավորներին: Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ալ. Ծատուրյանը, Լ. Մանվելյանը իրենց ուսուցչի հետ միասին պայմանավորեցին «հայ բանաստեղծության... մի նոր շրջան»:

Ինչո՞վ է բնութագրվում այս շրջանը: «Հ. Հովհաննիսյանը բերում էր իր հետ նոր տրամադրություն և նյութի մշակության ավելի կատարյալ ձևեր»¹: Նկատված է Հովհաննիսյանի բերած երկու կարևոր նորություն: Անտես չի առնվում նրա ստեղծագործության կապը Ծահագիզի «գրական դպրոցի» հետ, ինչպես նաև Գ. Քաթիպային հետևելով՝ ժողովրդական մոտիվներ հնչեցնելը, որ «հետո այնքան ցայտուն զարգացման պիտի» հասնեն Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի ստեղծագործություններում: Ահա հատկանիշներ, որ սերնդի այլ ներկայացուցիչների հետ բերած վիթխարի նորություններով անհրաժեշտ մթնոլորտ ու հող են ստեղծում 90-ական թվականներին գրելու համար «հայոց նորագույն պատմության փառավոր էջերից մեկը»: Մի ուրիշ առիթով խոստովանում է, որ Հ. Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը և Ավ. Իսահակյանը «բոլորովին տարբեր մարդիկ են» Գ. Քաթիպայից: Տարբերությունը առկա է ոչ միայն ընտրած նյութի, այլև նրա մշակման տեսանկյունից: Այսօր իբրև քրեստոմատիական ճշմարտություն հնչող միտքը 1890-1900-ականներին դժվարությամբ էր ճանապարհ հարթում իր համար: Ազգային-ազատագ-

¹ Նույն տեղում:
13-7

րական պայքարի երգերին վարժված քննադատությունը չէր ուզում ճանաչել նոր սերնդի նորարարությունը:

XX դ. սկզբներին հայոց բանաստեղծության մեջ նոր տեղաշարժեր են նկատվում. պոեզիայի աշխարհին գուճավորում է տալիս Վ. Տերյանը:

Մնացածներին տեղավորում էր այս շրջանների մեջ: Ալ. Ծատուրյանի համար, օրինակ, գրում էր. «տեղ ունի գրական այն շարքի մեջ, որ Ս. Ծահագիզից գալով և Հովհաննիսյանին մեջ առնելով՝ հասնում է Վ. Տերյանին... Ա. Ծատուրյանը կանգնած է Հ. Հովհաննիսյանի և Վ. Տերյանի արանքում»¹:

Գրականության և կյանքի կապը մշտապես աչքի առաջ ունեցող ուշադիր քննադատը նկատում է, որ Տերյանի հզոր ազդեցությունը տեղի է տալիս, նկատվում են նոր տեղաշարժեր. «նոր ուղիներ են որոնվում հին իդեալները իրականացնելու կամ ներկայիս հարմարեցնելու համար»²: Նոր ու կարևոր խնդիրներից մեկը հոգևոր ինքնուրույնության պահպանումն է. «Այդ խնդիրներից գլխավորը այն է, որ մենք չպետք է կորցնենք մեր ինքնուրույնությունը: Ժողովուրդը ձգտում է պահպանել ոչ միայն իր գոյությունը (հողային) շարժման միջոցով, այլև պահպանել իր կուլտուրան և հոգեբանական դեմքը մտավորական շարժման միջոցով: Դրանով արդեն մենք թևակոխում ենք մի նոր ստեղծագործական շրջան»:

Հետաքրքիր դիտարկումներ է անում հայ վեպի, նրա նշանավոր ներկայացուցիչների մասին: Նշելով, որ հայ վեպը սկսվում է Մ. Թադիսայանի «Վեպ Վարդգեսի Տեսոն Տուհաց» գործով՝ ավելացնում է՝ «հայ գրականության մեջ վեպի գաղափար կար»³: Վեպի ակունքները տեսնում է «Հայամավորքի», արևելյան գրույցներ

¹ «Հորիզոն», 1917, N 72:

² «Հորիզոն», 1914, N 119:

³ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 320:

«Պղնձե քաղաքի պատմության», «Ալեքսանդր Մակեդոնացու պատմության», ինչպես նաև Քյոռ օղյու տիպի «օտար գրույցների» մեջ, որոնք «հայ հոգիի դրոշմը առած» են:

Իսկական հայտնությունը Խ. Աբովյանն էր, «հայ հանճարի ծնունդ», որի «իրական բովանդակությամբ և ազգային ուղղությամբ» վեպը «հիմնական ուղին զծեց հայ գրականության»: Այնուհետև բացում է «իրապաշտ բովանդակության» իմաստը. իրական կյանքից առնված պատկերներ ու հերոսներ, ժողովրդական վարք ու բարք, հերոսները «ժողովրդին կխոսեին»:

Մեծ գրողը անպայման հետք է թողնում հետնորդների վրա: Աբովյանի թողած ազդեցության մասին խոսելիս բնականաբար առաջին հերթին հիշում է Պոռոչյանին և Աղայանին, որոնք «Վերքի» ընթերցումներից կպարտեն, իրենց հայտնությունը»: «Վերք Հայաստանի»-ի հետ աղերսներ ունի նաև Բաֆֆու «Սալբին». Աբովյանի մասն Բաֆֆին «կներկայացնե իր գավառը», նա էլ «ազգագրություն կընե», «իր հերոսը հասարակաց կետեր ունի Խ. Աբովյանի վեպի հերոսին հետ»¹:

Հայ վեպի մյուս նշանավոր դեմքը Բաֆֆին է, որի հանդեպ տևական պաշտամունք է ունեցել:

Մահվան 25-ամյակի առիթով գրած առաջնորդում ընդգծում է մեծ վիպասանի արդիականությունը: Դա տեսնում է այն խնդիրների, առաջին հերթին անցյալ 70-ական թվականներին հայ գրական-հասարակական միտքը հուզող կենտրոնական խնդրին՝ արևմտահայության դրության բարելավմանը նվիրված լինելու մեջ: «Տաղանդը փայլ էր տալիս այդ խնդրին և խնդիրը բարձրացնում տաղանդի արժեքը»²: Բաֆֆին «մտքերի

¹ Նույն տեղում, էջ 321:

² Հորիզոն, 1913, N 88:

երկրորդ հզոր իշխանն էր հայ գրականության ոլորտում» Արծրունուց հետո, բայց նրա կողքին:

Բաֆֆին առաջադրեց գաղափարներ, ծրագրեր, որոնք համակեցին ժողովրդին, ուղեցույց եղան երիտասարդության համար, վերջինիս մղեցին ազգանվեր գործունեության: Բաֆֆու պատկերած «հմայիչ հեռանկարը իր ժամանակին և նրանից հետո շատ ազնիվ հոգիներ վառեց ու զինեց պայքարի համար, որոնք անձնվիրության և հերոսության անսովոր օրինակներ տվին հայության և ի զարմանս ամբողջ աշխարհի, որ կարծում էր, թե հայությունը մեռած է հոգով»¹: Անշուշտ, անհամոզիչ է նրա կանխատեսությունը. Բաֆֆու «դերը կվերջանա այն օրը, երբ հայությունը կազատվի թուրքական լուծից»: Սա թերևս վերաբերի Բաֆֆի-հրապարակախոսին, գեղագետի համար անհամոզիչ գուշակություն է:

Մահվան 25-ամյակի առթիվ կազմակերպած երեկույթներին մասնակցեց: Դրանցից մեկում ընդգծեց վիպասանի վերաբերմունքը դեպի ժողովուրդը՝ «Բաֆֆիի ցայտուն մի հատկությունն էր նրա անպայման վստահությունը բուն ժողովրդին՝ հանդեպ մյուս դասերի»²:

Աղբայանի թղթերում պահպանվել է Բաֆֆու մասին մի գրություն, ուր սեղմ բնութագրումներ կան: Սա, հավանական է ենթադրել, ծավալում մի ուսումնասիրության կոնսպեկտ է: Բաֆֆու ստեղծագործական մեթոդի հակիրճ բնութագրումը բավականին ճշգրիտ է: «Բաֆֆին իրապաշտ մըն է իբրև նկարագրող իրականության», - այստեղ առարկություն լինել չի կարող, իսկական կյանքի ճանաչողությամբ քչերը կարող են մրցել նրա հետ: Ըստ Աղբայանի ընկալման՝ Բաֆֆին, սակայն, միայն իրականությունը չի նկարագրել, միևնույն ժամանակ նա «կատեղծե հերոսներ, որոնք գոյություն

¹Նույն տեղում:

²«Հորիզոն», 1913, N 90:

չունին»... Այս «գոյություն չունինը» նախատիպի իմաստով չպետք է հասկանալ, նրա կերտած հերոսներից շատերը, այո, չկային և չէին էլ կարող գոյություն ունենալ. նրանք զալիքի մասին և այդ զալիքը կերտելու համար գրողի երազանքների մարմնավորումն էին: Հետաքրքիր մի դիտարկում էլ մոռացության չպետք է տալ. նշելով, որ Բաֆֆին ստեղծում է հերոսներ, «որոնք գոյություն չունին», միաժամանակ շարունակում է. «բայց որոնք պետք է գոյություն ունենան»¹:

Այս վերջին միտքը ուրիշ անգամներ էլ ընդգծել է քննադատը: Բաֆֆին «զարմանալի ճշտությամբ գուշակեց մի քանի տասնյակ տարիներ հետո եկող ազգային կյանքի ընթացքը»²: Ժամանակակից կյանքի խոր իմացությունը, որ հնարավորություն էր տալիս նրան հանճարեղորեն կռահելու առաջիկա տասնամյակների մեր հասարակական կյանքի ընթացքը, իրապաշտական հզոր շունչ է հաղորդում նրա ողորմանտիզմին: Այս նկատի ունի քննադատը, երբ նրա գոյություն չունեցող հերոսների մասին վստահորեն գրում է՝ «բայց... պետք է գոյություն ունենան»: «Բաֆֆիի երևակայած սիրելի հերոսները ծնան և գործեցին», - վստահորեն եզրափակում է քննադատը:

Ելնելով գրողի գնահատման այն չափանիշից, թե նա ինչ է ավելացնում նախորդների ստեղծածին, բացահայտում է Բաֆֆու բերած նորությունները:

«Բաֆֆին ընդարձակեց հայ վեպի սահմանները»: Այս դեպքում նկատի ունենալ («Հայ վեպին մեջ մտցուց պարսկահայությունը... նյութ դարձուց պարսից ու քուրդերուն կյանքը»: Ներկայացրեց նաև «դրացի ժողովուրդներուն կյանքը»: Բացի այդ՝ «Կնկարագրե հայ ազգի զանազան դասակարգերը», և ժամրային նո-

¹Ն. Աղբայան, Ամբողջական երկեր, հ. I, էջ 321-322:

²«Հորիզոն», 1913, N 90:

րությունները: «Հիմքը դրավ վարքագրական գրականության», «Մշակած է ծրագրային վեպը», իրմով կսկսի պատմական վեպը»):

Բաֆֆու վարպետությունը ևս արժանանում է սեղմ, տարողունակ բնութագրումների. «Իր տաղանդին հիմնական հատկանիշը պայծառ և հզոր երևակայությունն է», «Բաֆֆի գործերուն մեջ կտիրե քնարական շունչը», «Բաֆֆին հետաքրքիր պատմող մըն է» «խոսակցականը, որով լեցուն են իր վեպերը, հաճելի է. մինչ նկարագրականը կդանդաղեցնե հետաքրքրությունը»:

Իր վեպերը լեցուն են ժողովրդական առածներով... «Առածաձև կգրե, այսինքն կարճ և ամփոփ», «ներքին կշռույթ մը կա իր նախադասությանց մեջ», «պայծառությունը իր սիրածն է: Ասով անհկա Տեսանող է»¹:

Բարձր է գնահատել Ծերենցի տաղանդը ևս: Բաֆֆու հետ միասին նա «հայ պատմական վեպի ականավոր ստեղծողն է մեզանում»: Ի՞նչն էր նրան մղում պատմական թեմային. ազգային արթնացած գիտակցությունը, հետամուտ ներկայի խնդիրներին, լուծման բանալիները որոնում էր նաև անցյալում: Ծերենցի «երևակայությունը հաճում էր բացառապես հայի պատմական անցյալում և ընտրում էր այնպիսի նյութեր, ուր երևում է հայի ինքնապաշտպանության կորովը և նոր կյանքի՝ հետամուտ լինելու անխորտակելի կամքն ու կարողությունը»²:

Դիպուկ բնութագրում է պատմավեպի յուրահատկությունը: Անցյալի իրադարձություններին դիմելով՝ վիպասանը փորձում էր «անցյալի դասերով» ներկային հուզող պատասխանները գտնել: Բայց քանի որ ավելի շուտ հետամուտ էր «հասարակական գաղափարներ

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, N I, էջ 323-324:
²«Հորիզոն», 1913, N 112:

արծարծելուն», առանձնակի ուշադրություն չի դարձնում «հոգեբանական կողմին»¹:

Հակառակ Արովյանի և Բաֆֆու, որոնք լեզվի ոլորտում ևս նոր աստիճան են ապահովում (Արովյանը «կարողացել է գրական լեզվի հասցնել իր ոճը»), Ծերենցի «լեզուն ծանր է և գրաբարախառն»:

Գ. Սունդուկյանի առումով դիտարկումներ է անում դրամատիկական ժանրի անցած ուղու վերաբերյալ:

Անկասկած է, որ Սունդուկյանը «մեր գրական փառքերից մեկն է և թատերագիր տաղանդներից ամենափայլունն ու գորեղը»: Նա ոչ միայն եվրոպական մակարդակի է բարձրացրել հայկական դրաման, այլև գորեղ ազդեցություն է թողել դրամատիկական ժանրերի զարգացման վրա: Ա. Վարդանյանի վոդևիլի մասին խոսելիս նշում է. «Տեղ-տեղ նկատելի է «Պեպոյի» ազդեցությունը. մի տեղ կարծես խոսքերն արտագրված են այնտեղից»²:

Սունդուկյանի ազդեցության մասին խոսելիս նույն հոդվածում հատուկ նշում էր մի հանգամանք. «Ամենքը փորձում են գրել Թիֆլիսի բարբառով: Սա մի սխալ ճանապարհ է, որ ժամանակն է թողնելու: Որքան բնական էր այդ բարբառին դիմելը 70-80-ական թվերին, երբ նա խոսվում էր կյանքում, այնքան անբնական և ուշացած է այժմ, երբ այդ բարբառը մեռած է համարյա»:

Ընդհանուր գծերով ներկայացվում է նախասունդուկյանական դրամատուրգիայի պատկերը: «Մեր պատմական դարավոր կյանքում չենք մշակած գրականության այդ ճյուղը»³: Առաջին փորձերը մեզանում «կրոնական բնույթ» ունեին, «հոգեբանորեն չպատճառաբանված վարմունքների մի հյուսվածք» էին, քան թա-

¹«Հորիզոն», 1913, N 114:
²Ջանգալ, 1908, N 23:
³«Հորիզոն», 1913, N 60:

տերական գործեր: Հետագա ընթացքը բնութագրվում է պատմական անցյալի հանդեպ հետաքրքրությամբ: Բայց «նրանց մեջ զուր է որոնել պատմական ճշմարտություն կամ մարդկային հոգու ճանաչողություն», դրանք էլ «ազատասիրական քարոզներ» են հիշեցնում և ուրիշ ոչինչ: Ուշագրավ զննողի հայացքից չեն վրիպում նաև «իրականության շունչ» պարունակող զավեշտները, որոնք գուշակում էին «նոր ուղղության» գալուստը: Եվ, այնուամենայնիվ, կրոնական ու պատմական թեմաներով գործերում «քարոզչական տարրը խեղդում էր արվեստի զգացումը», իսկ զավեշտները «շատ անբավարար թատերական գրականություն» էին:

Այս համապատկերում, ահա, բարձրանում է Սունդուկյանը՝ իբրև «ազգային թատերագրության ստեղծող», թատերագրություն, որ ոչ միայն ազգային է, այլև «գեղարվեստական միանգամայն»: Հետագոտողը բարձր է գնահատում Սունդուկյանի ունակումը ևս: Նրա ստեղծագործություններում արդեն բացակայում են քարոզն ու պատգամը, այստեղ «հայ կյանքը անդրադարձած» է «մեծ տաղանդի» ուժով: Չի վրիպում նաև նրա «հարուցած խնդիրների» կարևորությունը «մեր ազգի համար»:

Աղբայլանն առանձին հոդված նվիրեց մեծ դրամատուրգի «Կտակին»՝ բարձր գնահատելով նրա գեղարվեստական արժանիքները, այս առումով հավասար դասելով «Պեպոյին», «Կտակի» մեջ հայտնաբերելով մարդուն, ստեղծագործողին, մտավորականին: Այստեղ ավելի խորացրեց Սունդուկյանի ստեղծագործության ժողովրդայնության, դեմոկրատական հզոր տարերքի, նորարարական բնույթի մասին իր ըմբռնումները՝ քաղաքական համոզումների առումով կապելով նրան 60-ականների հետ...

Նոր գրականության ներկա փուլի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ նա սկզբնավորվել է «հեռավոր սահմաններում»՝ Վենետիկ, Պոլիս, Մոսկվա,

հետո սկսել է մոտենալ մեզ՝ Թիֆլիս, նրա բնականոն զարգացման համար անհրաժեշտ է հայրենի հողի վրա ստեղծել «ազգային ամբողջական մթնոլորտ»: Հանրապետության ստեղծումը հասկանալի կերպով դիտում էր ոչ միայն գրականության, այլև ընդհանրապես ազգային մշակույթի զարգացման կարևորագույն պայման: «Այժմ մենք գտնվում ենք գրականության զարգացման այն աստիճանի վրա, որ հայ գրականությունը ուզում է եզերական լինելուց դադարել, ստեղծել մի հաստատուն բնակավայր, որտեղ ամեն ինչ հայկական կլինի: Հայ գրականությունը գնում է դեպի հայրենացում և ազգայնացում, աշխատելով ազատվել օտար ազդեցություններից»¹: Ծատ ավելի ընդհանրական է այս տեսանկյունից «Դասախոսությունների» հետևյալ «ուրվագիծը». «Մեր գրականությունը սկսած է Հայոց միջնաշխարհին մեջ: ԺԱ դարուն անցած է Կիլիկիա, ԺԶ. դարուն՝ Պոլիս, Եվրոպա, ԺԸ դարուն՝ Մխիթարյան վանք: ԺԹ դարուն կեսն փորձեր եղած են կրկին վերադառնալու միջնաշխարհ (Խրիստյան Հայրիկի փորձը Վարագա մեջ): Ի. դարուն է վերջապես, որ մենք այսօր Հայաստանի մեջ ունինք Հայոց գրականության ամբիոն մը, ուր կրնանք մեր գրականությունը ուսումնասիրել մեր հողին վրա»²:

¹ «Հորիզոն», 1914, N 64:

² Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր, հ. IV, էջ 246:

ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ՈՍԸ

Աղբայլան հրապարակախոսը մեզանում ավելի քիչ է հայտնի, քան քննադատը: Պատճառներից մեկն այն է, որ նրա հրապարակախոսական հոդվածները սփռված են հիմնականում դաշնակցական մամուլի էջերում, որը մինչև վերջերս յոթ փակի տակ էր: Բացի այդ՝ հրապարակախոսությունը զուտ գաղափարախոսական ոլորտ է. մտածող անհատի քաղաքական դիրքորոշումն ու համոզմունքները առավել տեսանելի են, քան, ասենք, գրականագիտության ոլորտում, որը և պայմանավորում է այս ասպարեզում «իդեոլոգիական» ցերեքների առավել մեծ զգոնություն ու հսկողություն: Եթե ասվածին ավելացնենք, որ գործիչների հասարակական-քաղաքական հայացքները, գրական-գեղագիտականի համեմատությամբ, ավելի քիչ հետաքրքրության են արժանանում, պարզ կդառնա, թե ինչու Աղբայլան հրապարակախոսը մեզանում անհամեմատ քիչ է հայտնի:

Գործունյա խառնվածքով Աղբայլանը դեռևս երիտասարդական տարիներին մասնակցում էր հասարակական միջոցառումներին, հետաքրքրվում ընկերվարական ուսմունքներով, նախապատրաստվում եռանդուն գործունեության: Բնավորությամբ ու խառնվածքով քարոզիչ էր, կրքոտ հրապարակախոս, սիրում էր լինել իրադարձությունների ամենատաք տեղերում: Հիշենք, թե ինչ անմիջականությամբ Սևանի վանքում քարոզչական գործունեության է անցել նորընծաների շրջանում...

1890-ական թվականներին, տեղագրիկ ուսումնառության շրջանում, երբ ձեռքն ընկած ամեն գիրք ու հանդես կարդում էր, մշակում, վերաբերմունք դրսևորում համաձայնելով կամ վիճելով, լրացնելով կամ ժխտելով, «Մուրճի» 1893 թ. առաջին համարի նյութերից արտագ-

րում է հետևյալ միտքը. «Կարելի է եղել գտնել այն հայեցակետերը, որոնք որոշում են բռնելիք ուղղությունը մարդկային համայնքի, ազգի և անհատի մտավոր, քարոշական և նյութական գործերի մեջ»: Ահա, որոշակի հայեցակետով, «մարդկային համայնքի, ազգի և անհատի» գործունեության հոգևոր ու տնտեսական գործունեությունը որոշակի ժամանակահատվածում գնահատելու ձգտումը ծնունդ է տվել «գրականության մեջ հրապարակախոսություն կոչված նյութին»: Հետագայում պետք է լրացներ, որ «հրապարակախոսության հետազոտությունը պահանջում է լայն ծանոթություն ընկերային գիտությանց և քաղաքական մտքի զարգացման»¹: Նրա հրապարակախոսությունն, ահա, գերազանցապես 20-րդ դարի պատմական իրադարձությունների ու զարգացման քննության «հետազոտությունն» է, դրանց համակարգում հայ ժողովրդի հարատևության կովանների, զարգացման ուղիների հայտնաբերման ճիգը:

Առաջին հրապարակախոսական ելույթը, որքան հայտնի է, 1890-ական թվականների շարքերից մազապուրծ Թիֆլիսի հայ գաղթականների թշվառ վիճակը ներկայացնող հոդվածն է, որ թեև իր հետ միասին ստորագրել են նաև Վրթ. Փափազյանն ու Ա. Ղազարյանը, իր իսկ վկայությամբ, ինքն է գրել: Հայտնի է նաև, որ դեռ շատ երիտասարդ տարիքից սիրում էր շրջագայել հայկական գյուղերում, ծանոթանալ ժողովրդի կյանքին ու ընթացքին, հավաքել ազգագրական բազմաբնույթ նյութեր, ժողովրդական երգեր, այլ ստեղծագործություններ: 1898 թ. հուլիսի 17-ին Ջալալօղլիից մորը գրած նախնական հայտնում է. «Վաղը փոսնագների գյուղերն են գնալու երգեր հավաքեմ»²: Մի մեծ շրջագայությունն 1896-ի գարնանը կատարել է Ջանգեզուրում, արդյունքը

¹Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր, հ. IV, էջ 70:

²ՊԱԹ. Ն. Աղբայլանի ֆոնդ, գ. 3839:

«Նամակներ Զանգեզուրի գավառից» նոթերն եղան, որ լույս տեսան «Մուրճի» 1900 թ. երկու համարում (N 3, N 4):

Անվանի գործչի հրապարակախոսական տաղանդը բուռն զարգացում ունեցավ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ու ընթացքում: Իբրև դաշնակցության աչքի ընկնող գաղափարախոս ու գործիչ՝ բոլոր մեծ ու փոքր իրադարձությունների մասնակիցն էր, երբեմն էլ՝ կազմակերպիչը: Օժտված քննական-վերլուծական մտածողությամբ, նա ոչ միայն արձանագրել, այլև բնութագրել է ընթացիկ դարի առաջին կեսի գրեթե բոլոր նշանակալից իրադարձությունները: Անվերապահորեն իր ապրած ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքի տարեգիրներից ու խորհմաստ մեկնողներից է: Տարեգիր ոչ միայն իրադարձությունները արձանագրելու, այլև տարեգրի նման հակիրճ ու ընդգրկուն բնութագրելու իմաստով:

Տասական թվականների նրա հրապարակախոսության կենտրոնական խնդիրը հայոց դատն է, արևելյան հարցը:

Հասունացող ռուս-թուրքական հակամարտության մթնոլորտում ցարական կառավարությունը մեղմացնում է ճնշումը դաշնակցության և մյուս քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Այս պայմաններում հնարավոր եղավ մշտապես ուստիկանական հետապնդումների ենթակա Աղբալյանի վերադարձը Թիֆլիս և գլխավին նվիրումը գրական, հասարակական, ժուռնալիստական գործունեության:

Բալկանյան առաջին պատերազմը դեռ չէր սկսվել, բայց այն կար մթնոլորտում: Թուրքերի դեմ Բալկանյան ժողովուրդների ընդվզումը համարելով անխուսափելի՝ գուշակություններ է անում նրա հետագա ընթացքի մասին՝ կվերահի՞ այն համաշխարհային պատերազմի, թե՞ ոչ: Մեծ տերությունները հազիվ թե թույլ տան պատե-

րազմի հրդեհի ծավալման. խորն են, անշուշտ, նրանց հակասությունները, բայց կան նաև «զսպիչ» ուժեր: «Բոլոր մեծ պետությունները ոչ միայն ունեն արտաքին թշնամիներ, այլև ներքին հակամարտ ուժեր, որոնք չեն վարանի համատարած շփոթի մեջ փորձ անելու իրենց ձեռքը ձգել պետական կյանքի դեկը»¹:

Դժվար չէ նկատել, որ ընդհանրացվում է մասնավորապես Ռուսաստանի փորձը: Իշխող կառավարությունները, այսպիսով, հաշվի պետք է նստեն ոչ միայն իրենց պետությունների «միջազգային կացության», այլև «ընկերական կազմի» հնարավոր փոփոխությունների հետ: Հետագայում էլ նա միշտ աչքի առաջ ուներ ներքին ուժերի դիրքորոշումը. ծագած Բալկանյան պատերազմում Ավստրիայի գրաված հանդուրժող դիրքը բացատրում էր ապստամբած ժողովուրդների նկատմամբ իր 25 միլիոն սլավոն բնակչության համակրանքի թելադրանքով:

Այս պարագաներում մեծ պետությունները մի կողմից պետք է պահանջեն Թուրքիայից բարեփոխումներ կատարել Մակեդոնիայում, մյուս կողմից էլ պետք է հորդորեն փոքր պետություններին չափավորել իրենց «ռազմատենչ եռանդը»: Իրատես հրապարակախոսը մեծ պատրանքներ չունի այս խնդրում. նա լավ գիտի, որ մեծ պետությունների «քաղաքագետների դյուրաշարժ» լեզվին շատ էլ հավատ ընծայելու չէ, քանի որ նրանց հետաքրքրում են առաջին հերթին սեփական շահերը, որոնց վրա միշտ էլ հմտորեն խաղացել է թուրքական խորամանկ քաղաքականությունը: Թուրքիան երբեք չի հավատացել և չի էլ հավատա, թե Եվրոպան առանց շահի, սուկ մարդասիրական սկզբունքներից դրո՞ված «մարդ ու դրամ» կզոհի: Աղբալյանի կոահումը, թե մեծ պետությունների շահադիտական նկրտումների հակա-

¹ «Հորիզոն», 1912, N 209:

ստությունները կարող են լուրջ բարդություններ ստեղծել ոչ միայն Բալկաններում, այլև աշխարհի այլ մասերում, իրականացավ:

Կար մի վտանգավոր հեռանկար ևս. աշխարհի հզորները պայմանավորվել էին «թույլ չտալ ոչ մի նոր հողային գրավում»: Այս դեպքում գալիքը բավականին մոայլ է ներկայանում հրապարակախոսին. «...անհավանական է, որ արյուն հոսե առուններով, կովող կողմերը տնտեսապես քայքայվին ու թուլանան, բայց քրիստոնյա ազգաբնակչության վիճակը մնա անփոփոխ»¹: Գիտակցումն այն բանի, որ Բալկանյան թերակղզու վրա սպասվելիք և կատարվող իրադարձությունների թիկունքում գործում են մեծ պետությունների դիվանագիտական խարդավանքները, տխուր խորհրդածություններ են ծնում ավարը բաժանելու վերաբերյալ. «Երբ երկու կողմից հազարավոր զոհեր ննջեն հավիտենական քնով արյունաներկ դաշտերի վրա, մեծ պետությունները հանդես կգան իբրև կովող կողմերի բախտի տնօրեն և կձևեն ու կչափեն ամեն մեկին հասանելիք բաժինը, հարկավ իրենք ևս այս կամ այն կերպ անմասն չմնալով:

Միշտ են ասել, թե վայ թույլերին այս աշխարհում»²:

Աշխարհը ղեկավարում են հզորները, և Աղբալյանը իր ժողովրդի փրկության ուղիները որոնում է նրանց բախվող շահախնդրությունների, երբեմն էլ ներդաշնակության գործողությունների խաչուղիներում:

Սկսվեց Բալկանյան պատերազմը:

«Հորիզոնի» էջերում նրա ընթացքը լուսաբանում էր հիմնականում Աղբալյանը: «Բալկանյան պատերազմը» խորագրով գրեթե ամենօրյա տեղեկատվությունը հիմնականում երկու մասից էր բաղկացած՝ «պատերազմի

¹ «Հորիզոն», 1912, N 209:

² «Հորիզոն», 1912, N 219.

դաշտում» տեսությունը, որ անստորագիր էր և Աղբալյանի գրչին էր պատկանում (կնոջ՝ տիկին Հրաբփիի վկայությամբ), և զանազան գործակալությունների հաղորդումներ: Երբ տեսություն չէր լինում (հազվադեպ), ամբողջ բաժինը զբաղեցնում էին հեռագրերը: Անտեսելով առանձին մանրամասներ՝ Աղբալյանը ձգտում էր տեսություններում ընթերցողին տեղյակ պահել պատերազմի դաշտում «ոսպնական ուժերի փոխադարձ» դրությանը և «հնարավոր չափով նախորոշել կովի ընթացքը»: Ոչ քիչ դեպքերում նա գուշակեց և «կովի ընթացքը», և առանձին պետությունների գրավելիք դիրքորոշումը: «Երկու օր առաջ գրել էինք, որ կիսանկախ Սամոսն անջուշտ չի դադարի կամովին միանալ Հունաստանին. այսօրվան հեռագիրը հաստատում է մեր ենթադրությունը: Կղզու ազգային ժողովը որոշել է կամովին միանալ Հունաստանին...»: Մի այլ օրինակ՝ «Մենք գրել էինք, որ Մոնաստիրի գրավումից հետո սերբ զորքերը հավանորեն կշարժվեն դեպի Ադրիատիքի ափը՝ դեպի Դուրացո: Օխրիդայի գրավումը հաստատեց մեր ենթադրությունը...»¹: Այս կոսմոս - գուշակումները հետաքրքրություն էին հաղորդում պատերազմական իրադարձությունների ամփոփագիր հիշեցնող աղբալյանական տեսություններին:

Առաջին օրերին մտահոգությունը մեկն էր՝ սկսված պատերազմը կսահմանափակվի միայն Մակեդոնիայի ժողովուրդների խնդրով, թե՞ կվերաճի Արևելյան հարցի: Լինելով այն համոզման, որ հայության ճակատագիրը մեծ կոչվող տերությունների ձեռքին է, ակնկալում էր Բալկանյան ճգնաժամի վերաճման Արևելյան հարցի՝ հայերին վերապահելով ոչ թե պասիվ սպասողի, այլ դեպքերի ընթացքին հնարավորին չափ միջամտելու, սեփական ուժերը նախապատրաստելու և համախմբելու

¹ Հորիզոն, 1912, N 256:

դեր: Պատմությունն ինքն էր հարկադրում այդպես մտածել. «Հազարավոր բանակներ ունեցող մանր ազգերը (Բալկանների. - Գ. Ա.) թվում են նույնքան անզոր մեծերի առաջ, ինչպես փոքր ու անզեն ազգերը մեծ պետությանց մեջ...»¹:

Աղբայրանն ակնկալում էր «նշանավոր դեպքերի», որոնք կարող էին «մեծ դեր խաղալ» թուրքահպատակ քրիստոնյաների ճակատագրում: Անվանի հրապարակախոսը չէր կասկածում Բալկան փոքր ժողովուրդների հաղթանակին. նրանց միավորում է դարավոր ատելությունը ամեն ինչ ամայացնող թուրքական տիրապետության հանդեպ: Թուրքիայի դեմ պատերազմը չերնոգորցիների, բուլղարների, սերբերի, հույների համար «ազատարար պատերազմի բնույթ» ունի: «Տաճիկները նպատակ ունին բնաջինջ անելու բոլոր մանր ազգերին, որ միայն իրանք մնան Թյուրքիայում»²: Այս պանթուրքիստական քաղաքականությունը համախմբում է բոլորին մի դրոշի տակ: Վերջիններիս հաղթանակին նպաստելու է այն, որ թուրքերը ստիպված կլինեն կոպելու կանոնավոր բանակների դեմ՝ «ճամփա բանալով ժողովրդական ապստամբության հրդեհի միջով»: Հետագայում առանձնակի հետևողականությամբ պետք է հիշատակեր այս բանը հաստատող փաստերը:

Արժանին մատուցելով սլավոն ժողովուրդների քաջությանն ու ազատասիրական ձգտումներին՝ կոստումներ է անում այն մասին, որ նրանց թիկունքում, հավանաբար, կանգնած են հզոր պետությունները: Ընդհանրապես նրա համար գաղտնիք չէ, որ իրադարձությունների դեկը գտնվում է «չեզոք» մեծ տերությունների ձեռքին: Նա կոստում է, որ չերնոգորցիների «համարձակությունն» ու «անվեհերությունը» «որոշ հենարան ունի

¹ «Հորիզոն», 1913, N 50:
² «Հորիզոն», 1912, N 220:

մեծ պետությանց մի քանիսի քաղաքականության մեջ»: «Ավստրիան ու Գերմանիան ըստ երևույթին գաղտնի օժանդակություն են անում Թյուրքիային»¹: Մոռացության չի տրվում մնան օժանդակության վտանգավորությունը. մանր, օգնության կարոտ երկրներին գաղտնի կամ բացահայտ ցույց տրվող օժանդակությունը այդ երկրներին կարող է կանգնեցնել «Եվրոպայի տնտեսական գերիշխանության վտանգի դիմաց...»:

Ոչ ուշադիր ընթերցողն անգամ կնկատի Բալկանյան պատերազմի շուրջ հրապարակախոսի խորհրդածությունների միտումը՝ նախապատրաստել հայ հասարակական միտքը, մեզանում համաման խնդիրների արծարծում խթանել:

Այսպես, օրինակ՝ իր հաշվետվություններում հատուկ ուշադրություն էր դարձնում այն հաղորդումներին, որոնք վերաբերում էին Թուրքիայից ազատագրված վայրերում տեղական ինքնավարության մարմինների ստեղծմանը: «Բոլոր գրաված վայրերում համերաշխ պետությունները հաստատել են քաղաքացիական նոր վարչություն: Այսպես՝ Սանջակը դարձել է մի նոր շրջան իր նոր վարչությամբ. նույնը կատարվում է բոլոր սահմաններին մոտ՝ հյուսիսային Մակեդոնիայում, նույն վիճակն ունին և նոր տիրած վայրերը հունական սահմանի վրա»²: «Իրենց գրաված վայրերից սերբերն արդեն կազմել են 11 վարչական շրջան և ամեն տեղ մտցրել են սերբական կարգեր»³: «Նոր գրաված քաղաքում անմիջապես հաստատված է բոլորական վարչություն և ոչ մի անկարգություն չի պատահած»⁴:

¹ «Հորիզոն», 1913, N 72:
² «Հորիզոն», 1913, N 256:
³ «Հորիզոն», 1912, N 256:
⁴ «Հորիզոն», 1913, N 61:
14-7

Ոգևորությամբ նշելով ռուսական հասարակայնության համակրանքի ցույցերը սլավոնական ժողովուրդների ազատագրական պայքարի հանդեպ, Ադրալյանը գրում է. «Անկասկած Ռուսաստանը իր հեղինակավոր ձայնով թույլ չի տա, որ Բալկանի քրիստոնյա ազգաբնակության այս հերոսական ճիգերն անցնեն ապարդյուն և շատ հավանական է, որ եվրոպական Տաճկաստանում ստեղծվեն կարգեր, որոնք պատմության սեփականություն դարձնեն Թյուրքիայի անիրավ վարչաձևը, անգութ սուրը և համառ հետամնացություն:

Նպատակային պետք է համարել նաև այն հետևողականությունը, որով տեղեկություններ էր հաղորդում բալկանյան երկրներում կամավորական շարժման, հանգանակվող զույմարների, հոգևորականության գրաված դիրքի, ժողովրդի վերաբերմունքի մասին. «Դարավոր բռնությունից ազատվող ժողովուրդը ամեն տեղ ցնծությամբ ընդունում է ազատարար զորքերին և նրանց կարիքը հոգում սիրով և առանց փոխարինության»¹:

Բալկանյան առաջին պատերազմի իրադարձությունների մեկնաբանություններն անգամ բացահայտում են Ադրալյանի ակնհայտ ռուսական կողմնորոշումը: «Մանր պետությունների զորքերը» հաղթական մոտենում են Պոլսին: Նրանց համերաշխությունը պարտության է մատնում «ամեն մեկի համար առանձին առած... շատ սոսկալի և հզոր» ոսոխին և հարկադրում մեծ պետություններին ակնածանքով և ըմբռնումով վերաբերվելու միասնությամբ շատ հզորացած մանրերի արդարացի պահանջներին: Այսպիսով Եվրոպայում ձևավորվում է նոր ուժ՝ բալկան մանր տերությունների «դաշնակցական պետությունը», որի հետ հաշվի չնստել հնարավոր չէ: Բալկանյան պատերազմից իր ժողովրդի համար նոր հույսեր ակնկալող Ադրալյանը ցանկանում է

առավել հզոր տեսնել «դաշնակցական պետությունը», որի միջոցը համարում է Ռուսաստանի հետ համագործակցությունը: Երազելով սլավոնական ժողովուրդների համերաշխություն, Ադրալյանը գուշակում է, թե մանր տերությանց հաջողություններն ու Ռուսաստանի հետ համագործակցությունը կարող են արթնացնել նաև Բոսնիայի և Հերցեգովինիայի ժողովուրդներին, «որ նոր միայն ավստրիական մահաճգներ դարձան»: «Ռուսաց ազատարար պատերազմները», ռուսական դիվանագիտության հովանավորությունը, անշուշտ, խրախուսել են Բալկանի սլավ ժողովուրդներին և սրանք հավանաբար կպահպանեն «մշտական հակումը... դեպի մեր լայնածավալ կայսրությունը». «Դրանով նա ավելի պատկառելի կդառնա, իր հերթին նոր ույժ ու հմայք հաղորդելով Ռուսաստանի միջազգային կացության և դերին թե համաեվրոպական խնդիրներում և թե մանավանդ Մերձավոր Արևելքում»¹: Դեպքերի հետագա այսպիսի ընթացքը կարող է ծնունդ տալ «նոր ու հզոր դաշնակցության» և ավետել «մի հին ու բռնակալ պետության անկում ու քայքայում»:

Պատերազմի սկզբում մեծ պետությունները վկայում էին «վայրամիտի պահել պատերազմը» և թույլ չտալ սահմանային նոր փոփոխություններ: Սակայն սլավոն ժողովուրդների իրար հաջորդող հաղթանակներին զուգընթաց նման բնույթի խոսակցությունները աստիճանաբար նվազում են՝ տեղի տալու համար հաղթողների իրավունքների ճանաչմանը: «Զինված ուժը թափ է ներշնչում փոքրերին և ակնածանքի հրավիրում մեծերին»²:

Թուրքիայի տիրապետության ներքո ինքնավար Հայաստանի ակնկալություն ունեցող Ադրալյանը զգու-

¹Հորիզոն, 1912, N 224:

¹«Հորիզոն», 1912, N 231:

²Նույն տեղում:

շացնում էր, որ քրիստոնյաների տարրական իրավունքների ոտնահարումը ճակատագրական կարող է լինել Թուրքիայի համար:

«...Քրիստոնյա կառավարիչ, հատուկ զորք ու ժանդարմերիա, ազատ կրթություն, կենտրոնական և ընտրովի մարմին՝ օրենսդրական իրավունքներով»¹: Սրան են հանգում Բալկանյան մանր տերությունների պահանջները, որոնք Թուրքիան մերժեց անամոթաբար՝ ձգտելով «հավերժացնել կարգեր... որոնք խորապես անմարդասեր են և հետադիմական»։ Սլավոն ժողովուրդների համերաշխ բանակների հարվածներից մինչև Պոլիսի դարպասները նահանջած Թուրքիայի մասին Ադրբայջանը գրում է. այն, ինչ «Թյուրքիան չուզեց անել կամովին, այսօր զենքի ուժով նրան ստիպում են անել ակամա»²:

Մի հանգամանքի վրա հատուկ ուշադրություն էր դարձնում. թուրքը ամեն դեպքում մնում է թուրք: «...Փախուստի ժամանակ իսկ նրանք չեն դանդաղում մի անգամ ևս թափելու գյավուրի արյունը. թուրքերը կոտորել են 400 անգն ու անպաշտպան բոլգար գյուղացի և հրդեհել են մի գյուղ... Անցած ճանապարհը սրի և հրի ճարակ դարձնելով՝ թյուրքերը նահանջում են նաև սերբերի առաջ»³: Սա էլ նախազգուշացում էր, ահա թե ինչու երազում էր. «Հուսանք, որ Թյուրքիան վերջին անգամն է խմում քրիստոնյա խաղաղ ազգաբնակչության արյունը, որից նա չհագեցավ դարերով»⁴:

Հավագույն հողվածներից մեկը կրում է «Եվրոպան և հաշտությունը» խորագիրը: Պատերազմը դեռ շարունակվում էր, «համերաշխ զորքերը» հասնում էին Պոլիս, մոտ էր հաղթանակը, և Ադրբայջանը գուշակություններ էր

¹ Հորիզոն, 1912, N 216:

² «Հորիզոն», 1912, N 212:

³ «Հորիզոն», 1912 N 224:

⁴ «Հորիզոն», 1912 N 228:

անում իրադարձությունների հետագա ընթացքի մասին:

Մեծ պետությունները առայժմ անպատասխան են թողնում Թուրքիայի դիմումը՝ հաշտության միջնորդ հանդես գալու վերաբերյալ. նրանք գաղտնի ու բացահայտ հուշում են, որ հաշտության առաջարկով պետք է դիմել հաղթողներին և ոչ իրենց, և «անհավանական չէ, որ Թուրքիան վերջիվերջո ստիպված լինի այդ քայլն անելու»։ Մեծ տերություններին դիմելով՝ Թուրքիան նպատակ ուներ ոչ միայն նրանց օգնությամբ քիչ կորուստներ ունենալ, այլև շարունակում էր «մնալ մեծամիտ»՝ իբրև ոչ միայն հաղթողների, այլև իբրև հավասարների չընդունելով իր երբեմնի վասալներին:

Մեծ տերությունները այլևս կասկած չուներ, որ Բալկանների քարտեզը պետք է փոխվի, նախկին վիճակը փոխելու անհրաժեշտությունը գիտակցում են բոլորը, բայց «ու՞մ օգտին»։ Ահա «ճանրակշիռ հարցը», որ պատակտում է մտցրել մեծ տերությունների շարքերում: Արդեն նկատվում է երկու խմբավորում, որը և սպառնալից է դարձնում քաղաքական մթնոլորտը: Եռյակ համաձայնությունը՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, կողմնակից են Բալկանյան մանր պետությունների անկախ ու ինքնավար գոյությանը, իսկ եռյակ զինակցությունը՝ Գերմանիա, Իտալիա, Ավստրիա, դեմ է. սրանք հետամուտ են այլ նպատակների: Մինչ իրականում փոքր ժողովուրդները արյուն են թափում սեփական ազատության համար, մեծ պետությունները պատրաստվում են իրենց շահերը պարտադրել և՛ հաղթողներին, և՛ պարտվողին: Եվ կրկին տենդագին աշխատում է քաղաքականության կարուսելը. «Տեսնելով, որ դժվար պիտի լինի Եռյակ Համաձայնության հետ բախվելը, Եռյակ զինակցությունը աշխատում է գոնե մի կովան ստեղծել

ապագայի համար»¹: Այսպես է ծնվում Ալբանիային ինքնավարություն տալու գաղափարը՝ սուլթանի գերիշխանության գերը:

Ի՞նչ էր նշանակում սա կողմերի համար:

Ինքնավար Ալբանիայի սահմանները գծում են այնպես, որ Սերբիան դժվարություններ ունենա Ադրիատիկ ծով դուրս գալու. երկուսի միջև մշտական բախումների առիթը պահպանվում է: Բացի այդ՝ սուլթանի գերիշխանության տակ մնալը Թուրքիայի և Եռյակ Ջինակցության ձեռքին «կդառնա մի գործիք Բալկանի մանր տերությանց խաղաղ զարգացումը վրդովելու», նրանց համերաշխությունը խաթարելու համար: Ալբանիայի ճակատագիրը շատ է մտահոգել նրան: Դրա պատճառը ոչ միայն այն է, որ այս խնդրի լուծումից շատ բան է կախված սլավոն ժողովուրդների հաղթանակի և երկրամասում կայուն իրավիճակ հաստատելու գործում: «Եվրոպան մեծ ու փոքր տերությանց շահերի մրցման թատերաբեմ է դարձել այդ երկիրը»²: Ալբանիայի ճակատագիրը նրան մտահոգում էր իր ժողովրդի ակնկալիքների տեսանկյունից ևս: Պատահական չէ, որ հանդես եկավ «Ալբանիան և Հայաստանը» ընդարձակ հոդվածով, որի մասին խոսք կլինի դեռևս:

Ալբանիայում և նրա շուրջ ծավալվող իրադարձությունները պայմանավորված են Եվրոպայում արդեն ձևավորված երկու մեծ ուժերի՝ եռյակ համաձայնության և եռյակ զինակցության գաղտնի գործողություններով: Եռյակ զինակցության անդամ երկրներից մասնավորապես Ավստրիան խիստ շահագրգռված էր այնպես տնօրինելու Ալբանիայի ճակատագիրը, որպեսզի նա հակադրվի բալկանյան մյուս ժողովուրդներին: Սլավ ժողովուրդների արթնացումը, ինքնուրույն պետությունների կազմավորումը

¹ «Հորիզոն», 1912, «N 237:

² «Հորիզոն», 1913, N 96:

րումը վտանգավոր էր Ավստրիայի համար, քանի որ իր բնակչության կեսը ևս սլավոններ էին՝ համերաշխ բալկանյան ժողովուրդների հետ: «Ավստրիան ընդհամարում է այդ անմխիթար ապագան սլավ թնդանոթների ծովափերի միջից»¹: Բացի այդ՝ ինքնուրույն և ինքնիշխան բալկանյան պետությունները, բաժանեն Ալբանիան իրար մեջ, թե այդ երկիրը ունենան իրենց հետ, իբրև համախոհ երկրի, կփակեն իր ճանապարհը դեպի ծով ... Ահա թե ինչու նա գաղտնի բանակցություններ էր վարում Ալբանիայի հետ՝ մանր տերությունների դեմ դավադիր գործողություններ ծավալելու հեռանկարով:

Մեկնաբանելով Ալբանիայում կատարվող որոշ իրադարձություններ, որոնք դժվարացնում են Ավստրիայի նպատակների իրականացումը, գրում է. «Մեզ թվում է, որ մի ճարպիկ ձեռք դժվարություններ է ստեղծում իրար ետևից Ավստրիային քաղաքական դասեր տալու համար»²:

Լավագույն տարբերակը, հրապարակախոսի կարծիքով, մանր տերությունների կողմից Ալբանիայի ինքնավարության ճանաչումն է՝ «ազատ որևէ եվրոպական պետության շահախնդիր հովանուց»: Բնական է, որ Ալբանիան նախապատվությունը կտա վերջինին: Հետագայում ցավով պիտի արձանագրեր ազատարար բանակին «անվայել» որոշումը՝ Ալբանիան բաժանել Սերբիայի, Չեռնիգորիայի և Հունաստանի միջև: Գուշակում է նաև նման միտումի «աղետավոր» հետևանքները: Դա կարող է բարդություններ ստեղծել իրենց գործի հաջողության ճանապարհին: Նման անխոհեմ քաղաքականությունը, իսկապես, իր դերը ունեցավ նրանում, որ վերսկսված բանակցություններում մեծ պետությունները Ալբանիան զատում են դաշնակիցների գրաված հողե-

¹ «Հորիզոն», 1913, N 96:

² Հորիզոն, 1913, N 82:

րից՝ իրենց վերապահելով նրա սահմանների ռիոշումը. մեծերը իրենց շահերը նկատի ունեին: Նույն տրամաբանությամբ նրանք իրենց տնօրինության տակ են դնում էգեյան ծովի կղզիների հսկողությունը: Հունաստանի նվաճած այս կղզիները Դարդանելի դարպասներն են, և մեծ տերությունները մման մի կարևոր տարածքի վրա իշխանությունը իրենց պետք է վերապահեին: Թուրքիայի մի քանի նավահանգիստներ միջազգային առևտրի համար «բաց հայտարարելու» առաջարկությունը, մի շարք երկաթուղիներ միջազգային ճանաչելը կրկին նպատակ ունեն «կնճռոտել հարաբերությունները այդ նոր նվաճած երկրում, դրանով թուլացնել հաղթողներին և օգտվել այդ թուլացումից»¹: Աղբալյանը բացառում էր չորս փոքր պետությունների պառակտումը հետագայում, որովհետև «ամեն բան բաժանված է նախքան պատերազմը՝ փոխադարձ համաձայնությամբ»: Այս հույսը, սակայն, չիրականացավ: Ջինադադարի նախօրյակին Հունաստանը ձեռնարկեց քայլեր, որոնք խախտում էին դաշնակցության դաշնությունը: Աղբալյանի աչքից չվրիպեց դա, և նա գուշակեց տխուր հետևանքներ... Նախնական պայմանավորվածությունը, զենքի հաջողությանը զուգընթաց, կարծես թե վերանում է: Դաշնակից պետությունների համերաշխության վերաբերյալ լավատեսությունը աստիճանաբար տեղը զիջում է ներքին երկպառակությունների ի հայտ գալուն. «Դաշնակից մանր տերությունները դժվար կարողանան համաձայնել տիրած երկրները իրենց մեջ բաժանելու ժամանակ: Հունաստանն այս գործում ևս աններդաշնակություն կմտցնի... մանր տերությունները պիտի սկսեն իրար հետ զժտվել»²: Տարբեր պետությունների սադրիչ գործողությունները նպաստելու են սրան, այստեղ աչքի կընկ-

¹ «Հորիզոն», 1912, N 237:

² «Հորիզոն», 1912, N 263:

նեն Գերմանիան և Ավստրիան: «Ալբանիայի կնճռոտ խնդիրը, Ռումինիայի հավակնությունները» կլրացնեն պակասը: Մանր տերությունների վարիչները մեծ խոհեմություն պետք է դրսևորեն «հաղթության պտուղները» չվատնելու և համերաշխությունը չխախտելու համար:

Դաշնակից զորքերը հասնում են Պոլսի դարպասներին, և պատմական զուգահեռը դառնում է անխուսափելի: Հինգ հարյուր տարի առաջ Պոլիսը կրկին պաշարված էր, սակայն, «Այն ժամանակ կիսավայրենի հորդաներն էին սպառնում քաղաքակրթության, այսօր քաղաքակրթությունն է արշավում ասիական անշարժության վրա»¹: Վճռվում է ոչ միայն Թուրքիայի ճակատագիրը. խաղաքարտի վրա առաջադիմության և բարբարոսության պայքարի խնդիրն է, որի լուծումը միայն դաշնակից պետությունների կամքից չի կախված: Վերջիններս Թուրքիայի ճակատագիրը վճռում են ուսմի դաշտում, նույն խնդիրը մտահոգում է նաև մեծ պետություններին՝ դիվանագիտության ոլորտում: Բացի այդ, ինչպես տեսանք, Աղբալյանին հուզում է մի խնդիր ևս. «Արդյոք հաջողելու՞ են դաշնակից պետությունները նույն բախտով հաղթել Թուրքիային դիվանագիտության ասպարեզում»...²: Ակնկալվող վեհաժողովին Թուրքիան ձգտում էր ներկայանալ «պատնեշի վրա», ոչ իբրև պարտված կողմ, Բալկանյան պետությունները ուզում էին վեհաժողովին ներկայանալ իբրև հաղթողներ՝ իրենց կամքը թելադրելու համար: Դեպքերի ընթացքը, սակայն, վերահսկում էին «չեզոք» մեծերը: Համեմայն դեպս դաշնակից պետությունների զորքը չգրավեց Պոլիսը, քանի որ այստեղ բախվում էին բոլոր մեծ պետությունների շահերը: «Մոգական գավազանով» զինադարար հայտարարվեց: Պատճառը բոլորովին էլ մեծ տերություններ-

¹ «Հորիզոն», 1912, N 250:

² «Հորիզոն», 1912, N 248:

րի թուրքասիրությունը չէր: Կար մի կետ, որտեղ նրանց շահերը համընկնում էին: «Եվրոպան,- գրում է Աղբալյանը,- որ մեծամեծ պահանջներ ունի Թյուրքիայից, չէր կարող թույլ տալ, որ իր դիմացը իբրև պարտապան կանգնե՞ր պատերազմից ու հոռի վարչությունից քայքայված մի երկիր»¹:

Ինչևէ, բոլոր հարցերի պատասխանը պետք է տար Լոնդոնում հրավիրվող վեհաժողովը: Աղբալյանը գիտեր, որ այստեղ հավաքվելու են մարդասիրության մասին շաղակրատող, հաղթանակի ... գիշատիչներ: «Այսպիսով Բալկանի թատերաբեմում վերջացել է բալկանյան արյունոտ դրամայի մեկ գործողությունը և զինադադարի վարագույրն իջել է հազարավոր դիակների, տասնյակ հազարավոր վիրավորների, մեծահոգության ու փոքրոգության, հաղթանակի և պարտության վրա:

Թե հանդիսական և թե դերակատար այժմ աչքերը դարձնում են դեպի Լոնդոն, որտեղից Եվրոպական Թյուրքիայի տառապած բնակիչները սպասում են կամ ազատ կարգերի հաստատում, կամ անիրավ բռնության վերադարձ»²: Սան-Ստեֆանոյի պայմանագրի պատմությանը լավատեղյակ Աղբալյանը շատ էլ հավատ չի ընծայում մեծ պետությունների շիտակությանը, լավ գիտի, որ գերյալների թափած արյան գինը հաճախ ուրիշներն են վայելում:

Մեծ պետությունների հարաբերությունները ավելի են հստակվում: Պարզվում է, օրինակ, որ Գերմանիան «հակված է ավելի Թյուրքիայի շահերը պաշտպանելու, քան Բալկանի մանր տերությանց»: Ռումինիան հակվում է դեպի «եռապետյան դաշնակցությունը»: Օստ ավելի ուշագրավ է «Բալկանյան պատերազմի մոտավոր հետևանքները» առաջնորդողը: Բալկանի մանր տերություն-

¹ «Հորիզոն», 1913, N 56:

² «Հորիզոն», 1912, N 261:

ների պահանջներն ընդունելու դեպքում Թուրքիան դառնում է ասիական երկիր: Հնարավոր է, որ նա իր ձեռքում պահի Բոսֆորն ու Դարդանելը, բայց դրանք չեն կարող, իրենց ունեցած աշխարհագրական ու քաղաքական կարևորությամբ, Թուրքիային տալ այն միջազգային նշանակությունը, ինչ որ նա ունի Բալկանների տերը լինելու դեպքում:

Թուրքիայի հարևանները կլինեն Ռուսաստանն ու Բուլղարիան, երկուսն ավստի պետություններ, որոնք մոր կշիռ պետք է հաղորդեն քրիստոնյա ժողովուրդների պայքարին: Եթե, իհարկե, մանր տերությունները խոհեմություն ունենան ամուր պահելու իրենց դաշինքը:

Բալկաններում ապրող թուրքերի մի մասը կանցնի փոքր Ասիա՝ «հավատակից պետության դրոշի տակ» ապրելու և որոշակի հետք կթողնի երկրամասի ազգաբնակչության «տոկոսական հարաբերության» վրա: Սա էլ, իր հերթին, կնպաստի համիսլամության գաղափարի մոր ծաղկման:

Իրադրությունը ցույց տվեց, որ «չպետք է չափազանցնել նրա (Թուրքիայի. - Գ. Ա.) ներկան, բայց չպետք է գերազնահատել նրա թուլությունը»:

Ռուսաստանի հարավում, այսպիսով, կկազմավորվի մի քաղաքական ուժ, որը «եվրոպական պետությունների ուրիշ խմբումների ժամանակ» կարող է նրա համար սպառնալից ուժ դառնալ: Գուշակում է վաղվա օրը. այդ սպառնալիքը շատ կմեծանա, եթե «Թյուրքիայի հետ դաշինք կապեն Ավստրիան և Գերմանիան ընդդեմ Ռուսաստանի»:

Մինչ Աղբալյանն ու հայ հասարակական միտքը գուշակություններով էին զբաղված, պատերազմի սպառնալիքը կրկին կախվեց օդում: «Երիտասարդ թուրքերի առաջ բերած վերջին քաղաքական հեղաշրջումը», - հատուկ ընդգծում է «Հորիզոնը» իր առաջնորդողում, թելադրում է, որ պատերազմը անխուսափելի է: Թուրքա-

կան կողմը զինադադարն օգտագործեց իր ֆինանսական ու ռազմական դրությունը շտկելու համար. սա էր Թուրքիայի և իր թաքուն ու բացահայտ համակիրների կողմից բանակցությունները ձգձգելու պատճառը: Բանակցություններից դժգոհ էին և՛ հաղթողները, և՛ պարտվողը: Մեծ պետությունները, նկատում է Ադրբայջանը, «դաշնակիցներին զիջում են պակաս, քան պահանջում էին նրանք, և ավել, քան տրամադիր էր Թուրքիան նրանց թողնելու¹: Այս ընթացքում Թուրքիայում տեղի են ունենում վճռորոշ իրադարձություններ. պարտության հեռանկարից դժգոհ կառավարությունն ու խուժանը փորձում են պատճառը տեսնել երիտթուրքերի պառակտիչ գործունեության մեջ, և ահա մեկ գիշերում ձերբակալվում են նրանց «ամենից ականավոր անդամները»: Դժգոհության մյուս ալիքը փշրվում է կառավարության վրա: Հենվելով այդ ալիքին՝ երիտթուրքերը 1913-ի հունվարի 10-ին հեղաշրջում կատարեցին և կրկին հասան իշխանության՝ մերժելով Լոնդոնի վեհաժողովի բոլոր պայմանները: Երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելը Ադրբայջանը գնահատեց իբրև պատերազմը վերսկսելու նախապայման: Վերսկսված պատերազմում հաջողությունը կրկին ուղեկցում է Բալկանյան պետություններին: Ադրբայջանի գուշակությամբ հեռու չէ այն օրը, երբ ազատագրվող ժողովուրդների հուժկու հարվածներից կընկնեն Ադրիանապոլիսն ու Սկյուտարիսն՝ ստիպելով «երիտասարդ» թուրքերին խոսել բանակցությանց մասին, ինչպես խոսեցին «հին» համարված թուրքերը²: Այդպես էլ եղավ: Թուրքիան երկրորդ անգամ պարտվեց և հարկադրված եղավ հաշտվել Բալկանի ժողովուրդների ազատագրության հետ: Իրականացավ Ադրբայջանի գուշակությունը այն մասին, թե Եվրոպայում կձևավորվի

¹ «Հորիզոն», 1913, N 56:

² «Հորիզոն», 1913, N 22:

քաղաքական նոր ուժ՝ ի դեմս Թուրքիայից ազատագրված բալկանյան սլավոն ժողովուրդների պետությունների: Մյուս «քաղաքական նոր մարմինը» կլինի Ալբանիան: Թուրքիան պատերազմից դուրս կգա «թուլացած ու անդամահատված», նրա «հեղինակությունը ընկնելով արևմուտքում՝ կերթա նվազելու նաև արևելքում...»:

Բալկանյան պատերազմն ավարտվեց Թուրքիայի պարտությամբ: Վերջապես հաղթանակեց պատմական արդարությունը: Սլավոն ժողովուրդների ազատագրական պայքարի պակը ինքնուրույն պետությունների ծնունդը եղավ: Քաղաքակրթությունը մի հաղթանակ ևս տարավ բարբարոսության նկատմամբ:

Բալկանյան պատերազմի և նրա հետ կապված խնդիրների բնությունը հենվում էր Թուրքիայի անցյալի ու ներկայի քաղաքականության հստակ ըմբռնմանը:

Ասիական տիպի բռնակալական մի երկիր է սա, որ ոչինչ չի տվել քաղաքակրթությանը, գիտակցելով իր եկվոր լինելը՝ ոչնչացրել է նախորդների մշակույթի արժեքները կամ «ազգայնացրել»: Բուն Անատոլիայում այս քաղաքականությունը վայրագ մի դրսևորում էլ է ստանում. ամեն միջոցներով ոչնչացնել բնիկներին, դառնալ միատարր մահմեդական երկիր: Սա է Թուրքիայում ապրող ժողովուրդների նկատմամբ տարվող քաղաքականության հիմքը: Նոր կոչվող թուրքերը միայն իրենց արտաքինն են փոխել, էությամբ նրանք սուլթանների արժանավոր ժառանգորդներն են:

Ելնելով մասնավորապես մեծ տերությունների փոխհարաբերություններից, որոնց հիմքում միշտ էլ ընկած է սեփական շահը, փորձում է գուշակել դեպքերի հետագա ընթացքը, ազգին սպառնացող վտանգը դիմագրավելու միջոցներ է առաջարկում, գլխովին նվիրվում է ազատագրական պայքարի գործին:

Ըստ հրապարակախոսի՝ Թուրքիան կանգնած է սոցիալական ու քաղաքական լուրջ խնդիրների լուծման

առջև, որոնք վճռական նշանակություն կունենան ինչպես թուրք, այնպես էլ քրիստոնյա ժողովուրդների համար:

Դարասկզբին քաղաքական միտքը արծարծում էր վայրենի բռնապետության՝ Թուրքիայի մասնատման, իբրև պետական միավորի վերացման խնդիրը: Հայ հասարակական միտքը հաճախ է սնվել այս հեռանկարով. Աղբալյանի հրապարակախոսությունը՝ սրա վկան: Նա հաճախ էր ոգևորվում, թե մի օր այն էլ շուտով, աշխարհի քարտեզը կկազմվի առանց Թուրքիայի: Եթե թուրքերը ողջամտություն չունենան համագործակցելու նույն հողակտորի վրա ապրող «ցեղագրական միությունների» հետ, ապա կարող են վտանգել իրենց իսկ գոյությունը և այդ դեպքում պատմության առջև միայն իրենք պատասխանատու կլինեն, թե ինչու քարտեզներից վերացավ «Թյուրքիայի անունը»: Սա անհող ոռոմանտիզմ չէր. հայտնի չէ, թե ինչպես կլուծվեր Թուրքիայի ճակատագիրը, եթե մի փոքր ուշանար նրա փրկարարի՝ Լենինի գլխավորած հեղափոխությունը...:

Ի՞նչ սահմաններում էր ընկալում «ցեղագրական միությունների» հետ համագործակցությունը: «Հայերի պահանջը տարրական բան է. կյանքի, գույքի և պատվի ապահովություն և կուլտուրական զարգացման հնարավորություն: Թե ինչ քաղաքական ձև կստանա այս պահանջների իրագործումը, այդ մեզանից կախված չէ»¹:

Այս տարրական պահանջը պետք է կատարել, այլապես առայժմ համերաշխ մեծ պետությունները կարող են միջամտել՝ Թուրքիայի համար անցանկալի հետևանքներով:

«Նոր թուրքերը սակայն՝ վերահաստատելով սահմանադրությունը և քաղաքացիության իրավունքներ տալով իրենց երբեմնի հպատակներին- չեն ցանկանում

¹ «Հորիզոն», 1912, N 260:

նրանց հետ միասին տիրել իրենց ժառանգությունն հասած գեղեցիկ ու բարեբեր երկրին և ձգտում են՝ համառորեն ու ապարդյուն՝ ազգային պետություն ստեղծել մի երկրում, ուր դրա համար չկան ոչ պատմական, ոչ տնտեսական և ոչ իրավական հիմունքներ»¹: Այս անմիտ քաղաքականությունը կարող է հանգեցնել նրան, որ «չուզենալով հավասար լինել իրենց հպատակներին իբրև տիրող, կդառնան հավասար իբրև հպատակ՝ ավելի արդարամիտ ու խելացի պետությանց դրոշակների տակ»²:

Երիտթուրքերի քաղաքական նպատակների հստակ գիտակցումը և մեծ պետությունների միջամտության գերազնահատումը նրան հայտնաբերում են իր կուսակցության որոշ քայլեր մերժողի դերում: Դժգոհության տեղիք է տալիս հատկապես երիտթուրքերի հետ դաշինքի մեջ մտնելու քաղաքականությունը: Երբ «Մշակը» «Հորիզոնին» մեղադրեց Իթթիհատի նկատմամբ համակրական ցույցեր անելու մեջ, Աղբալյանը հանդես եկավ առաջնորդող հողվածով՝ հիմնովին հերքելով «Մշակի» մեղադրանքը. «Նոր են մարդիկ, գրում է «Վտանգը» առաջնորդողում, բայց նրանց վարչական միտքը և քաղաքական իմաստությունը հաճում են հին ու բազմիցս ապարդյուն ճանաչված ճանապարհներին»³: Իհարկե, երիտթուրքերը «կարողացան մասամբ ախտահանել երկրի նեխած մթնոլորտը, ինչ-ինչ դյուրություններ տրվեցին այստեղ ու այնտեղ», բայց իրավիճակը հիմնականում չփոխվեց: Նրանք հավատարիմ մնացին իրենց նախորդ արյունոտ սուլթանների քաղաքականությանը: Նա չէր կարող հաշվի չառնել այն, որ «երիտասարդ թուրքերը սնունդ են տալիս համիլա-

¹ «Հորիզոն», 1912, N 203:

² Նույն տեղում:

³ «Հորիզոն», 1912, N 213:

մության»։ Սա կարող է տխուր հետևանքներ ունենալ։ «Կրոնական մոլեռանդությունը ընդհարումներին կտա մի չտեսնված ջարդի բնավորություն», - արյունոտ գալիքը գուշակում էր հրապարակախոսը։

Պատերազմը Թուրքիայի համար աննպաստ պայմաններում է ընթանում։ Նրան «ի նպաստ» «ոչ մի համակրական ձայն չի լսվում», թուրքական զորքը հարկադրված պետք է լինի կովելու ոչ միայն քրիստոնյաների կանոնավոր բանակների, այլև ապստամբած քրիստոնյա ժողովուրդների «հրոսակախմբերի» հետ։ Մեծ պետությունների «ազատ քաղաքացիները» համակրանքի ցույցեր են կազմակերպում քրիստոնյաների օգտին, «դրամ են ժողվում», կարմիր խաչի կազմակերպությունները օգնության են շտապում...

«Բոլոր նշանները ցույց են տալիս, որ Եվրոպան լքել է Թյուրքիային և սուլթանների երկիրը ստիպված է օրհասական կոիվ մղելու Բալկանյան մանր պետությանց դեմ, որոնց միացնում է մի դարավոր ատելություն դեպի թյուրքը...¹։

Ազգաբնակչության համակրանքը շահելու համար Սերբիայի թագավորը հրովարտակով դիմում է թուրքերին՝ հավաստիացնելով, որ նրանց դեմ ոչինչ չունի, որ իրենք զենք են բարձրացրել իրենց ազատության համար։ Իր հերթին սուլթանը հրամայում է զորքերին, որ քրիստոնյա ժողովուրդների հետ լավ վարվեն։ «Կասկած չկա, - գրում է Ադրալյանը, - որ թուրքերը շատ ավելի հիմք ունեն հավատալու սերբ թագավորի հավաստիացումներին, քան քրիստոնյաները սուլթանի կարգադրության»²։

Արևմտահայության ազատագրության խնդիրների արծարծումը հենվում էր Բալկանյան պատերազմի շար-

¹ «Հորիզոն», 1912, N 213:

² «Հորիզոն», 1912, N 220:

ժիչ ուժերի խոր ճանաչողությանը, Թուրքիայի անցյալի ու ներկայի մասին ճիշտ պատկերացումներին։ Հոկտեմբերի կեսերից հանդես է գալիս «Թյուրքիան և հայերը» հոդվածաշարով, ուր համակողմանիորեն քննում է սկսված պատերազմի հետևանքները արևմտահայության կյանքի վրա, հայերի ու քրդերի նկատմամբ թուրքական կառավարության դիրքորոշումը, առաջիկայում թուրքերից ակնկալվող քաղաքականությունը և այլ հարցեր։

Բալկաններում ծավալվող պատերազմական գործողությունները հույներին, սերբերին, բուլղարացիներին խոստանում են ազատության արշալույս՝ խանգարելով «կարգը հայկական բարձրավանդակի վրա»։ «Թյուրքիայի հայերը գիշերն անկողին են մտնում նոր ջարդերի սարսափով և առավոտյան արթնանում են տագնապալից օրվան համար»¹։ Հայերի և քրդերի վերաբերմունքը միանշանակ չէ թուրքական սահմանադրության վերաբերմամբ. առաջինները որքան շահագրգռված են նրա իրականացմամբ, երկրորդները նույնքան դեմ են, որովհետև օրենքի ու օրինականության հաստատումը հայերին խոստանում է մարդավայել գոյության հնարավորություն՝ կաշկանդելով ավարառության սովոր քրդերի ալան-թալանի գործողությունները։ Չընդառաջել հայերին, նշանակում է հնարավորություն տալ եվրոպական պետություններին ցանկացած ժամանակ միջամտելու թուրքական գործերին, վտանգը մեծ էր մասնավորապես Ռուսաստանից, նեղացնել քրդերին ու նրանց «ազդեցիկ ցեղապետներին», նշանակում է Թուրքիայի համար աննպաստ այս պայմաններում թիկունքում նպաստել զինված ապստամբության։ Եվ քանի որ Թուրքիան որդեգրել է համիդյան Թուրքիայի քաղաքականությունը՝ Հայաստան առանց հայերի, փոխելով միայն գործունեության եղանակները, ուստի հայերի նկատմամբ ցու-

¹ «Հորիզոն», 1912, N 226: 15-7

ցաքերում է դեռևս ներողամիտ քաղաքականություն, մյուս կողմից էլ վճռական միջոցներ չի ձեռնարկում սպանություններին ու անկարգություններին վերջ տալու համար: Որքա՞ն կարող է հարատևել այս «տարտամ քաղաքականությունը»: Աղբալյանի համար գաղտնիք չէ, որ Թուրքիան ի վերջո վճռականապես կհակվի քրդերի կողմը, որովհետև «չի վստահում հայերին և վախենում է, որ հայերն այդ գեները իր դեմ դարձնեն, մինչդեռ լիովին հավատում է քյուրդերին, որ նրանք ոռու-տանկական պատերազմի դեպքում այդ գեները գործ կածեն ոռուսի դեմ, իսկ հայերի ապստամբության դեպքում նրանց բնաջինջ անելու համար»¹:

Հայ-քրդական հարաբերությունները միշտ էլ զբաղեցրել են նրան: «Թուրքական կառավարության աչքում հայը և մյուս քրիստոնյաները անվստահելի են, քուրդը ավելի գերադասելի է, քան հայությունը, որովհետև առաջինը դավանակից է, խնդիր չունի, իսկ երկրորդը այնուամենայնիվ այլադավան է և կարող է միշտ խնդիրներ հարուցանել, լինի դա միջազգային մի դաշինքի հիման վրա, ինչպես Բեռլինին է իր ճ-րդ հողվածով, թե իբր մշակութապես բարձր ու զարգացման ընդունակ և տենչացող մի տարր»²:

Քոչվոր ու եկվոր թուրքերի «հին» ու «նոր» առաջնորդները քաղաքական մի վերջնական նպատակ ունեն՝ ստեղծել հայրենիք գրավված լայնածավալ տարածությունների վրա: Բալկանյան ժողովուրդները նրանց դուրս են մղում Եվրոպայից մեծ տերությունների թաքուն ու բացահայտ հովանավորությամբ: Թուրքերին կմնա միայն Անատոլիան, որտեղ և կաշխատեն իրագործել իրենց պլանը՝ Թուրքիան տեսնել «ոչ միայն իբրև քաղաքական միություն, այլ մանավանդ իբր տեղագրական

¹ «Հորիզոն», 1912, N 226:

² «Հորիզոն», 1912, N 228:

ամբողջություն... միապաղաղ թյուրք ազգաբնակչությամբ»¹, եթե եվրոպական պետությունները, առաջին հերթին Ռուսաստանը և Թուրքիայի լծի տակ հեծող քրիստոնյաները թույլ տան դա:

Հետաքրքիր է, որ Աղբալյանը չի գուշակում հայերից հետո քրդերին սպառնացող վտանգը. հավանաբար հավատակից լինելու հանգամանքն է թյուրիմացության մեջ ձգում նրան:

Լրջորեն քննել է սահմանադրության խնդիրը: Հին եղանակով Թուրքիան պահել այլևս հնարավոր չէր: «Եվրոպական գրոհը» դիմագրավելու համար հարկավոր է մի քիչ եվրոպական կերպարանք առնել: Բայց սահմանադրությունը «գորավոր թշնամիներ» ունի ինչպես երկրի ներսում, ի դեմս «թյուրք հոծ խուժանների... որոնք շարունակում են մնալ անկիրթ ու անհաղորդ եվրոպական լուսավորության և քաղաքացիական զարգացման», այնպես էլ դրսում. Թուրքիայի սահմանադրությանը անհանգստությամբ են նայում Սերբիան, Բուլղարիան, Հունաստանը, Չեռնոգորիան, որովհետև «սահմանադրությամբ Թուրքիան կարող էր վերականգնել իր վաղեմի առողջությունը»՝ գրաված երկրների վրա տևական դարձնելով իր գերիշխանությունը: «Արթնացող Թյուրքիան,- մի երրորդ ուժ էլ նկատում է Աղբալյանը,- մի սպառնալիք էր ուրիշ հարևան ու հեռավոր պետությանց համար»²:

Միակ տարրը, որ «անկեղծորեն փարած է սահմանադրության», հայությունն է: Ահա այն հիմքը, որ պայմանավորում է հայ մտավորականության ու քաղաքական որոշ կուսակցությունների մերձեցումը երիտասարդ «լուսամիտ» թուրքերին:

¹ «Հորիզոն», 1912, N 229:

² Նույն տեղում:

Թուրքերը գնահատում են այս ծառայությունները «աննշան գոհացումներով»: Աղբայլանը չի խաբվում սուտ խոստումներին, մանր զիջումներին: Նրա սթափ հայացքը տեսնում է թուրքերի վերջնական նպատակը և փորձում առաջադրել միջոցներ: «Նոր Թյուրքիան հետապնդում է հին Թյուրքիայի վաղեմի նպատակներին, վճռականորեն հայտարարում է նա, - բայց այն ձևով, որ ոչ հայերը վնասակար գործողությունների հիմքեր ունենան, ոչ Եվրոպան միջամտելու առիթ»¹:

Հայերի նկատմամբ նոր թուրքերի «երկդիմի քաղաքականությունը» լավ է հասկանում: Բալկանյան թերակղզում ծավալվող իրադարձությունների հանդեպ բուն հետաքրքրությունը միտում ուներ նախապատրաստել հայ հասարակական միտքը, կոահել դեպքերի հետագա ընթացքը՝ սեփական ժողովրդի փրկության ուղիները հայտնաբերելու ակնկալությամբ: «Քաղաքական պայմանների ներկա դասավորության մեջ ի՞նչ պիտի անեն տաճկահայերը», - հարցը ուղղված էր արևելահայերին, գաղթօջախներում ապրողներին ևս և, բնականաբար, հուզում էր ոչ միայն Աղբայլանին, այլև քաղաքական կուսակցություններին, հասարակական խմբավորումներին, ողջ հայությանը:

Միջազգային ստեղծված իրադրությունը հրամայաբար պահանջում էր գործունեության հստակ եղանակների մշակում: Ելակետ ունենալով Արևմտյան Հայաստանում Թուրքիայի հովանավորության ներքո ինքնավարության հաստատումը մեծ տերությունների միջամտությամբ՝ պահանջում է դիմել այնպիսի գործողությունների, որոնք հարուցեն այդ միջամտությունը: Սկզբնապես կարծելով, թե Մակեդոնիայի «խնդիրը մասնակի բնավորություն ունի», չի վերաբերի հայկական նահանգներին, քանի որ առանց այդ էլ կնճոտ հարցը սե-

փական նախաձեռնությամբ մեծ տերությունները «ավելի բարդ և դժվարալույծ» չեն դարձնի՝ ներառելով հայկական խնդիրը ևս, բազմանշանակ հանձնարարում էր իր հայրենակիցներին «իրերին այնպիսի ընթացք տալ, որ հայաբնակ նահանգների բարեկարգման հարցը համարժեք դառնա մակեդոնական խնդրին և նրա լուծումը հրամայական՝ մեծ պետությանց համար»¹: Ակնարկը շատ թափանցիկ է և բացատրության անկարոտ: Սակայն դեպքերի հետագա ընթացքը թելադրում է, որ վճռական ժամանակներ են գալիս հայության համար ևս, և փոխվում է հրահարակախոսի տոնը:

Աղբայլանն առաջադրում էր գործողությունների ամբողջական մի ծրագիր, որի առաջին պահանջը միասնությունն էր: Պետք է մոռանալ ոխ ու քեն, դառնալ «մի ոգի մի կամք» և միասնական ջանքերով պաշտպանել արևմտահայության վտանգված լինելիությունը: Բայց իրար չհանդուրժող կուսակցություններով ու խմբավորումներով մասնատված հասարակությունն ու հասարակական-քաղաքական միտքը անգոր եղան անապու ժամանակի հրամայականը: Յուրաքանչյուրը հանդես էր գալիս իր ծրագրով, հաճախ իրար հակադիր: Եղան նաև դեպքեր, երբ ողջ ժողովրդի ճակատագիրը ենթարկվում էր փորձության՝ հանուն նրա որևէ հատվածի բարօրության: Ստեղծված ցավալի իրողության գիտակցումը հրապարակախոսին հասցնում էր մի մտքի. գալիք օրերի բախտորոշ իրադարձությունների մեջ ժողովրդի լինելության նավի դեկը պետք է հանձնել Ամենայն Հայոց Հայրապետին: Միայն նա է ի վիճակի և նա իրավունք ունի հանդես գալու ամբողջ ժողովրդի անունից: Դրա համար նա հարուստ և ուսանելի փորձ ունի: Բացի այդ՝ միակ մարդն է մեզանում, որին ընտրում է ժողովուրդը: «Ազգը, որ ընտրող է, իր գործերի բարձր ղեկավա-

¹ «Հորիզոն», 1912, N 230:

¹ Հորիզոն, 1912, N 210:

րության իրավունքը իր քվեով փոխանցում է իր Ընտր-
յալին ցմահ»¹, ուրեմն՝ այնպիսի մի կարևոր հարցում,
որպիսին հայոց դատն է, միայն Ընտրյալը իրավունք
ունի հանդես գալու ժողովրդի անունից:

Միասնական ղեկավարության բացակայությունը,
առանձին-առանձին գործելը դիպուկ բնութագրմամբ
որակվում է իբրև «քաղաքական տհասություն»:

Նրա քաղաքական ծրագիրը հենվում էր ոչ թե ան-
հող երևակայության, այլ պետությունների շահերը ճա-
նաչելու, նրանց շահադիտական նկատառումները կոա-
հելու և դրանցից օգտվելու վրա: Աղբալյանի համոզմամբ
ավելորդ գունազարդումը, զգացմունքները, սնապար-
ծությունը վատ օգնականներ են քաղաքական լուրջ
հարցերի քննության ժամանակ: Պետք է սթափ հայաց-
քով նայել կյանքին: «Քաղաքական խնդիրները վճռելու
համար հաստատուն կովաններ են պետք և ոչ զգացում-
ներ», - սա էր ընկած հայկական հարցի լուսաբանման
հիմքում: Նման մոտեցումը հնարավորություն տվեց
ավելի խորն ընկալելու եվրոպական պետությունների
օգնության խնդիրը: «Հայկական բարձրավանդակի վրա
խաչաձևում են քաղաքական մեծ շահեր, որոնց հաշ-
տեցնելու մեջն է դժվարությունը»²: Նրան բնորոշ է եր-
ևույթներն իրենց անուններով կոչելը. որքան էլ դժվար
լինի իրողությունը, պետք է ասել ճշմարտությունը և «ի-
րական հիմունքներ» որոնել նպատակին հասնելու հա-
մար. «... Օատերը կհիասթափվեն մեր ամփոփումները
կարդայով, բայց արհուրությունը պահանջում է իրակա-
նության երեսին ուղիղ նայել և ոչ մի դժվարին կա-
ցության մեջ չերերալ, այլ եղածը ընդունելով՝ իրական
հիմունքներ գտնել իդեալների համար»³:

¹ «Հորիզոն», 1912, N 275:

² Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 173:

³ «Հորիզոն», 1912, N 265:

Աղբալյանի քաղաքական մտածողությունը երևան է
գալիս հատկապես մեծ պետությունների դիվանագիտա-
կան հարաբերությունների, նրանց վարած քաղաքակա-
նության զնահատման ժամանակ: Հավատ չընծայելով
նրանց ներկայացուցիչների ու ղեկավարների մարդասի-
րական ելույթներին՝ աշխատում է ամեն դեպքում հայտ-
նաբերել այն շահը, որը առաջնորդում է նշված երկրնե-
րին իրենց քաղաքականությունը որոշելիս: «Բարոյական
տեսակետները, - խորին համոզմունքով գրում է նա,-
կարող են իբր մի տարր մտնել պաշտոնական ճառերի
մեջ, վարագուրելու համար շահախնդրության այլանդակ
կերպարանքը»¹: Բալկանյան պատերազմին նվիրված
նրա տեսությունները բացահայտում են Ռուսաստանի,
Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի,
Ավստրիայի, Թուրքիայի քաղաքական-տնտեսական
շահերի, նրանց փոխհարաբերությունների, մարդասի-
րական ճառերի հետևում նրանց «շահախնդրության այ-
լանդակ կերպարանքը» տեսնելու զարմանալի մի կարո-
ղություն: «... Եվրոպական մեծ ու փոքր պետությանց
շահերի մրցման թատերաբեմ է դարձել այդ երկիրը»
(Բալկանները. - Գ. Ա.): Հենց այդ շահերն էլ թելադրելու
են եվրոպական մեծ պետություններին անդրադառնալ
հայկական հարցին ևս: Բալկանյան սլավոն ժողովուրդ-
ների ազատագրությունը ոգևորում է նրան. «...Բալ-
կանյան հաշտություն՝ նշանակում է հայոց հարցի հա-
րուցում և ո՞վ գիտե՝ զուցե նաև լուծում այնպիսի ձևով,
որ հայությունը» նույնպես ազատվեր թուրքական լծից:
Թուրքական բռնությանը «միմիայն օտարները կարող են
վերջ դնել», այն օտարները, որոնց «հարկավոր է սպա-
նողական կարողություն ունեցող շուկա և պարտքերն ու
տոկոսները վճարող կառավարություն»²: Կոահվում է

¹ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 139:

² Նույն տեղում, էջ 122:

հայկական հարցի հանդեպ ցուցաբերվող հետաքրքրության տնտեսական շարժառիթը, որի մասին քիչ հետո ավելի որոշակի պետք է խոսեր: Նույն սթափությանը քննում է խնդրի քաղաքական և ռազմական կողմերը և: Ի տարբերություն նախորդ շրջանների, երբ Եվրոպայի վրա ցանկանում էին ազդել բարոյական միջոցներով (հայտնի է՝ Խրիմյան Հայրիկը պատրաստվում էր Բեռլինի վեհաժողովում խոսել այնպիսի միջազգային լեզվով, ինչպիսին էր... լացը) կամ հայերին վերապահված քաղաքակրթական դերի թմբկահարմամբ, Ադրալյանը շեշտում է հարցի քաղաքական և տնտեսական կողմը: Համոզված, որ «քաղաքականություն և բարոյականություն մեր օրերում («և ամեն ժամանակ») իրար ջնջում են», հավատարիմ քաղաքական խնդիրներում «հաստատուն կովաններ» ունենալու իր սկզբունքին, բոլոր գործիչներից պահանջում է քաղաքական մտածողություն, որի «հաստատուն կովանը» ձևակերպում է ինքը. «Չպետք է մոռանալ, որ հայոց հարցը լուծել կարող է ոչ թե այն Եվրոպան, որ բարի սիրտ ունի և գութ դեպի որբերն ու անպաշտպանները, այլ այն Եվրոպան, որ ունի զրահանավ, զորք ու թնդանոթ: Առաջինի վրա կարելի է ազդել բարոյական կարգի կշռադատումներով, բայց երկրորդը ոչ ժամանակ և ոչ էլ ախորժակ ունի բարոյական հիշեցումներ լսելու: Դեսպանները ոչ թե առաջին, այլ երկրորդ Եվրոպայի գործակալներն են և նրանց հետ պետք է խոսել այնպիսի լեզվով, որ նրանք հասկանան»¹:

Անվերապահ համատությանը մերժում էր հայկական հարցի լուծումը թուրքական դեմոկրատական ուժերի հետ կապող մտայնությունը՝ համարելով այն դասային շահագրգռության և քաղաքականության մեջ անհետատեսության նրսևորում: «Այսօր Թուրքիային դեռ հավա-

¹Նույն տեղում, էջ 139:

տում են թրքահայ պաշտոնեությունը և ռուսահայ խափարամիտ պահպանողականությունը: Այն ամենը, ինչ կենդանի է հայության մեջ, այլևս հավատ չունի թուրք կառավարության վրա»¹: Հայոց խնդիրը վաղուց դադարել է «Թուրքիայի ներքին խնդիր» լինելուց, հայերի և մյուս քրիստոնյաների ճակատագիրը կարող է լուծվել միայն եվրոպական պետությունների, մասնավորապես Ռուսաստանի միջամտությամբ, այն երկրի, որի տնտեսական շահերը ավելի շատ են համընկնում հայության ազգային տենչերին:

Եվ, այնուամենայնիվ, Ադրալյանը լավ գիտի եվրոպական միջամտության գինը. հայերի համար դեռևս ապահովության երաշխիք չէ: Ավելին՝ այդ միջամտության հնարավորությունը, բարեփոխումների պահանջները, վերջին տասնամյակներում գեթ, «չարադետ» հետևանքներ են ունեցել. «Հայությունը տեսել է երկու չարադետ վիժում, ոչ մեկ ապահովություն կա, որ չի լինի նաև երրորդը»²: Մեծ տերությունների միջամտությունն ու թուրքական խոստումները լավագույն դեպքում կարող են «ապահովել մեր վաղը», մինչդեռ ամեն ճիգ պետք է թափել ապահովելու համար «թուրքահայության այս օրը»: Միակ միջոցը ինքնապաշտպանությունն է: Հայ մամուլը տասնամյակներ շարունակ գրել է ինքնապաշտպանության նշանակության մասին: Բայց ժողովուրդն ու նրա առաջնորդները անհրաժեշտ հետևություններ չեն արել: «Դեռ պետք է նրա կարևորությունն ապացուցել, նրա անհրաժեշտությունը բացատրել, նրա անխուսափելիությունը փաստաբանել», - ցավով ու դառնությամբ արձանագրում է հրապարակախոսը: Բազմաթիվ հողվածներում անդրադառնում է այս հարցին, առաջադրում եղանակներ, հուշում միջոցներ՝

¹«Հորիզոն», 1913, N 16:
²«Հորիզոն», 1913, N 126:

դրամական հանգանակություններով զենք ձեռք բերելուց և երկիր առաքելուց մինչև «մարմնակրթության»-ը զարկ տալը, որը «կորովի և առույգ» կդարձնի ժողովրդի բոլոր խավերի «անդամներին»:

Քրդերի մշտական վտանգին պատերազմի տարի-ներին ավելանում է «մի նոր վտանգ»։ Բալկաններից վտարված, բալկաններում վտանգված թուրքական տար-րը ապաստան է որոնում կրոնակիցների մոտ Թուրքիա-յում: Պատերազմի ավարտին նրանք արդեն մի հոծ ու շատ վտանգավոր զանգված էին կազմում, որ հեղեղել էին Պոլիսն ու այլ քաղաքներ: Անկարող ապաստան ու սնունդ տալու, նաև հետամուտ որոշակի նպատակների, կառավարությունը նրանց քշում է նահանգներ, մասնա-վորապես հայաբնակ նահանգներ: «Վաչկատուն քյուր-դին գալիս է ավելանալու ընչազուրկ թյուրքը, և թրքա-հայի դրությունը հայաբնակ նահանգներում կրկնապես դառնալու է վատթար»¹: Կառավարությունը սրանով լու-ծում է մի քանի հարց՝ հայկական նահանգներում թուր-քական տարրը ստվարանում է՝ սպառնալով փոխել բնակչության ազգային կազմը, ռուսական հնարավոր հարձակման դեմ ստեղծվում է մահմեդական պատնեշ, ամեն կողմից նեղվող հայության շրջանում խթանվում է գաղթականությունը...

Դրությունը փրկելու միակ միջոցը զինված ինքնա-պաշտպանությունն է, իսկ այդ մասին մտածող չկա... «Մենք միմիայն հավատում ենք զենքին, զենք հայի ձեռքին՝ ինքնապաշտպանության համար... Ժամանակ չէ՞ հասկանալու վերջապես, որ ճի-րդ հողվածը հայ հրացանի փողին է»²:

Կրկին «արյուն է հոսում» և չկա մի ուժ, դաշնակ-ցությունից բացի, որ կարողանա արյունահեղության

¹ «Հորիզոն», 1913, N 43:

² Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 133-134:

առաջն առնել: Դա զգում է նաև «ապիկար կառավա-րությունը» և, ահա, ձգտում է չեզոքացնել այս ուժը: «Դաշնակցության դեմ գործել-նշանակում է հարվածել թյուրքահայերին. այդ վտանգավոր ուղին է, ահա, որ բռնել է թյուրք կառավարությունը»¹:

Այս իրադրության մեջ առանձին արժեք են ստա-նում դաշնակցության ջանքերը, որոնք չեն վրիպում կա-ռավարության աչքից: Ուրանալով այն օգնությունը, որ դաշնակցությունը ցույց է տվել երիտթուրքերին իշխա-նության հասնելու ճանապարհին, մոռանալով երկիրը դեմոկրատական զարգացման հունով տանելու, այսինքն՝ բոլոր ժողովուրդների իրավահավասարությունը ճանա-չելու վերաբերյալ խոստումները, երիտթուրքերը հալա-ծանք են կազմակերպում դաշնակցականների դեմ՝ հա-յության ինքնապաշտպանության գործին վնասելու նպա-տակով:

Դեռևս պատերազմի սկզբում կոստան էր, որ պար-տության զայրույթը կարող է թափվել հպատակ մյուս քրիստոնյաների գլխին: Դրությունը նույնիսկ Պոլսում այնքան տազնապալից էր, որ քրիստոնյա երկրների դի-վանագետները հատուկ դիմում են իրենց կառավա-րություններին՝ ապահովության վճռական միջոցներ ձեռ-նարկելու: «Եթե այսպես են օտարահպատակները, տազնապով արձանագրում է հրապարակախուսը,- կա-րելի է երևակայել, թե ի՞նչ տազնապի մեջ են թյուրքա-հպատակ քրիստոնյաները՝ հույները, հայերը, բուլգարնե-րը... Ի՞նչը կարող է փրկել նրանց հաղթված գորքի զայ-րույթից և ընչաքաղց խուժանի վայրագությունից»²: Եվ-րոպական պետությունները ռազմաճակատ են մոտեցնում Պոլիս՝ երաշխավորելու համար իրենց հյուպատոսների ու մյուս աշխատակիցների անվտանգությունը, նրանց

¹ «Հորիզոն», 1913, N 90:

² «Հորիզոն», 1912, N 232:

թերևս հաջողվի «ապահովել մայրաքաղաքի անդորրությունը», բայց ի՞նչ է լինելու գավառների բնակչության վիճակը:

Տագնապը մեծանում է նրանով, որ պատերազմի անհաջող ընթացքը օգտագործելով՝ երիտթուրքերը խոսվություն են բարձրացնում գորքի մեջ ընդդեմ կառավարության: Թուրքիայում կատարյալ անիշխանություն է տիրում. «Կենտրոնական կառավարությունը կարծես մոտ է քայքայման - դրա հետևանքները աղետավոր կլինեն ամբողջ Թյուրքիայի համար և իսկապես արդեն լուրեր են գալիս Սիրիայից և Հայաստանից, որ կոտորածներն սկսվել են այն տեղերում»¹:

Կարելի էր հուսալ, շարունակում է իր վերլուծությունը, որ կենտրոնական կառավարությունը, հաշվի առնելով «միջազգային փափուկ դրությունը», թույլ չէր տա հայերի ջարդեր կազմակերպելու «գեթ մոտավոր ապագայում»: Բայց, ահա, երիտթուրքերը գլուխ են բարձրացրել, կրկին արթնացել են «կուսակցական պայքարն ու իշխանասիրական ինտրիգները»՝ երկիրը կանգնեցնելով իսկական անիշխանության վտանգի առջև: Իսկ հայտնի է, որ «Կառավարական անարխիան թե՛ Տաճկաստանում և թե՛ Պարսկաստանում միշտ առաջ է բերել քրիստոնյաների ջարդ»: Այժմ, երբ Թուրքիան նման մի «անարխիայի» նախադրում է, ի՞նչ պիտի անեն հայերը՝ կանխելու համար «մի նոր քստմանի ջարդի» հնարավորությունը:

Հայ հասարակական միտքը անտարբեր չէր ստեղծված պայմաններում հայերի գործունեության հանդեպ: Ռուսահայ իրականության մեջ էլ կային հոսանքներ, որոնք ելքը տեսնում էին Թուրքիայի «սահմանադրական կարգերի մեջ», մի ուրիշ հոսանք, որը հավատ չի ընծայում սահմանադրության, խնդրի լուծումը կապում

¹ Հորիզոն, 1912, N 249:

է «մի օտար քրիստոնյա պետության» հետ, որը պետք է գրավի Անատոլիան և այնտեղ մարդավայել կարգեր հաստատի, մի երրորդ տեսակետ էլ ամեն ինչ կապում է 61-րդ հոդվածում նախատեսվող բարեփոխումների հետ: Աղբալյանը, որ այս վերջին տեսակետը պաշտպանողներից էր, հասունացող դեպքերին ընդառաջ գնալով, մի քայլ առաջ է անցնում: Վտանգը որոշակի էր, որոշակի պետք է լինեին պատասխանն ու ձեռնարկված միջոցները ևս: Այստեղ է, ահա, որ նա մի կողմ է դնում դիվանագիտական միջոցները՝ բնավ չժխտելով նրանց անհրաժեշտությունը և միանշանակ պատասխանում՝ պետք է կազմակերպել ինքնապաշտպանություն: «Ինքնապաշտպանություն կազմակերպել - նշանակում է դրամ հայթայթել, զենք հասցնել Տաճկահայաստան, այնտեղ համապատասխան կազմակերպություններ առաջ բերել, ի հարկին նաև կուրծք տալ վայրենի խուժանի գրոհին...»¹: «Տաճկական անիշխանության հնարավորությունը և հայ ժողովուրդը» հոդվածաշարը Աղբալյանի հրապարակախոսության լավագույն էջերից է՝ սուր, կրքոտ, համարձակ և իրատես հարցադրումներով ու եզրահանգումներով:

Իրական վտանգը արթնացնում է ինքնապաշտպանության առողջ բնագործ: Մերժելով «խոհեմության» կոչերը, ստրկության ու համակերպության քարոզները համարելով «այլասերված երևույթներ», որոնք կանհետանան «ազգային կյանքի առողջացման հետ», մեծ տերությունների ձգձգվող, միշտ սեփական շահին հետամուտ օգնությունը համարելով հեռավոր հույս՝ զենքի է կոչում ժողովրդին՝ վտանգված գոյությունը պաշտպանելու համար:

Իսկ ժողովուրդը հապաղում է: Նրա «ղեկավար շրջաններն» ու «բարձր ինտելիգենցիան» զոհողության

¹ «Հորիզոն», 1912, N 249:

ընդունակ չեն, ինքնապաշտպանության գործը ժողովուրդն ինքը պիտի կազմակերպի. «Մենք հավատացած ենք, որ հայ ժողովրդի միջից դուրս կգան մարդիկ, որոնք իրենց առողջ բնագոյների շնորհիվ... դիպլոմատիական խաղերի ու քայլերի սովերի տակից դուրս կհանեն ինքնապաշտպանության գործը և անձնվիրաբար առաջ կտանեն այն»¹:

«Միակ միջոցը ցեղերի, դասերի և վայրի ախորժակների այդ խառնարանում (նկատի ունի արևմտահայերի վիճակը քրդական ու թուրքական շրջապատում. Գ. Ա.) գեներն է առայժմ: Միայն գեներով նա կարող է պատշաճ հետավորության վրա պահել վարանոտ խուժանին և դիմադրել ավելի վճռական հորձանքներից»²: Սա ապստամբության կոչ չէր, սա ինքնապաշտպանության պահանջ էր՝ ի հակակշիռ կառավարության հայաջիւղ քաղաքականության: Զենքով հայը պետք է պահի իր գլուխը՝ սպասելով «լավագույն ապագայի»:

Առավել ծանր է արևմտահայության վիճակը: «...Թյուրքահայը անշարժ է ինչպես դիակ», «պատրիարքարանի դիմումները մնում են անհետևանք», «արտաքին միջամտությունը կաշկանդված է միջազգային հարաբերությանց բարդ ցանցի մեջ», կան անձնվեր կտրիճներ, բայց նրանց թիվը շատ աննշան է ցավով ու ահաբեկ ժողովրդին ոգի ներշնչելու և պաշտպանելու համար». ստեղծվել է «անել կացություն», որի նմանը «հազիվ թե որևէ ժողովուրդ ապրած լինի»...

Մամուլում լուրեր են պնդում, թե Անգլիան ու Ֆրանսիան համաձայնել են Թյուրքիայի հայաբնակ նահանգներից ինքնավարություն տալ՝ Ռուսաստանի հովանավորության տակ»³: Սա հենց այն էր, ինչին ձգտում էր:

¹Նույն տեղում:

²«Հորիզոն», 1912, N 261:

³«Հորիզոն» 1912, N 273:

Բայց լուրը սպասված ուրախությունը չի պարգևում, և պատճառը այն չէ, որ ոչ պաշտոնական լուր է, այլ այն, որ «հայությունն ընդհանրապես առայժմ վարդազույն երազներով տարվելու ոչ մի տեղիք չունի»¹: Հետևում է խոր ու համոզիչ վերլուծությունը, որը նպատակ ունի սթափության կոչելու ժողովրդին՝ չլինի թե հանկարծ հավատան և աչքաթող անեն զենքով պաշտպանվելու խնդիրը:

Աղբալյանի ծրագրում որոշակի դեր է հատկացվում մամուլին: Գիտակցելով հանդերձ, որ քաղաքական խնդիրների լուծման «բանալին գտնվում է ոչ թե մամուլի, այլ պետությանց և նրանց դիվանագետների ձեռքին», այնուամենայնիվ պահանջում է չթերագնահատել մամուլի դերը, քանի որ վերջինս «պատրաստում է մի բարյացակամ մթնոլորտ հայ դատի լուծման համար»: Ժիշտ է՝ դրանից այն կողմ «չի անցնում ոչ նրա դերը, ոչ պարտականությունը և ոչ իրավասությունը»², բայց այդքանն էլ քիչ չէ: Ժողովուրդը «աշխարհը տեսնում է իր կարողացած լրագրի աչքերով», կառավարությունները երբեմն հարկադրված են լինում հաշվի նստել հասարակական կարծիքի հետ, ուստի Մոսկվայի և Պետերբուրգի հայ ուսանողության պարտքն է համարում «նյութեր մատակարարել ռուս հրապարակագիրներին, շարունակ տեղեկություններ հաղորդել ռուս ազդեցիկ լրագիրներին և ընդհանրապես վառ պահել հետաքրքրությունը դեպի հայոց հարցը»³:

Աղբալյանին մտահոգող խնդիրներից մեկը պատմական Հայաստանի տարածքում հայ և մահմեդական բնակչության թվի հարաբերակցությունն էր: Թուրքերը փորձում էին համոզել միջազգային հասարակական

¹Նույն տեղում:

²«Հորիզոն», 1913, N 32:

³«Հորիզոն», 1913, N 6:

միտքն ու դիվանագիտությունը, թե Հայաստանում հայերը, մյուս ազգերի համեմատությամբ, փոքր թիվ են կազմում, և բոլորովին էլ չարժե քննությանն նյութ դարձնել նրանց ինքնավարություն տալու խնդիրը: Նկատի ունենալով թուրքահայերի թվի «քաղաքական» նշանակությունը, «Հորիզոնի» մի շարք համարներում կատարում է Ա. Դոյի գրքի տվյալների մանրամասն վերլուծություն, հորդորում է տաճկահայ եղբայրներին ժամանակավորապես մի կողմ թողնել գրականությունը և զբաղվել ազգային բնույթի հետազոտություններով՝ պարզելու համար հայերի ու մյուս ազգերի թվական հարաբերությունը: Զանազան ուսումնասիրություններից նյութեր քաղելով, «խոսեցնելով» չոր թվերը, փաստերով համոզելով, որ իրենց բնակավայրերում հայերը մահմեդականներից ավելի են, հավասար են նրանց կամ շատ քիչ են զիջում, հանգում է շատ կարևոր հետևության. «ոչ ներկան է հուսահատորեն վատ և ոչ ապագան անհուտորեն մոռալ»: Թուրք կառավարության տվյալները կեղծված են, հայ և օտարազգի աղբյուրները՝ հնացած: Անհրաժեշտ են նոր հետազոտություններ, և կպարզվի, որ այսօրվա վիճակը «մեծապես տարբերվում է» մինչ այժմ ներկայացվածից՝ հօգուտ հայերի: Եվ ինքը կատարում է «-ընթերցողի համբերությունը... հատացնող» բազմաթիվ հաշվարկներ, որոնք, ճշգրիտ լինելու ձգտումի հետ միասին, շատ են հիշեցնում նրա առաջին ուսուցիչներից մեկի՝ Ավ. Արասխանյանի՝ աշխատանքային ոճը: Պատահական չէ, որ մի տեղ հիշում է, թե այսօր այն նույն աշխատանքն է հարկավոր, ինչ անում էր Արասխանյանը «Մուրճում»: Ցավով արձանագրելով, որ արևմտահայ եղբայրները նման աշխատանք անել չեն սիրում, քննադատաբար հիշում է «ակամավոր գրական դեմք» Ա. Չոպանյանի կարծիքը «Մուրճում» լույս տեսած տնտեսագիտական ու վիճակագրական հետազոտությունների մասին. վերջիններս նա որակել էր «դեզ մը ծանրա-

տաղտուկ ուսումնասիրություններու»: Հայերի և ոչ հայերի քանակական գրեթե հավասարակշիռ վիճակը հիմք տալիս էր կազմելու համար «մի շատ համեստ և միանգամայն ընդունելի բարեկարգությանց ծրագիր, որ երաշխավորեր կյանքի, գույքի և պատվի ապահովություն և կուլտուրական զարգացման հնարավորություն»¹:

Աղբայլանի այս շրջանի հրապարակախոսության մեջ կա մի կետ, որ արժանի է առանձնահատուկ ուշադրության. խոսքը կովող կողմերի բանակներում հայերի ծառայությանն է վերաբերում: Պատերազմական իրադարձությունների լուսաբանմանը նվիրված առաջին հոդվածներից մեկում հպարտությամբ է նշվում այն հանգամանքը, որ թուրքերի դեմ կամավոր ջոկատ կազմած 800 մակեդոնացիների հետ կան նաև «փոքրաթիվ ոռու կամավորներ և մի քանի հայ հրոսակախմբեր»: «Ծատերին կարող է անխոհեմ թվալ հայերի այդ քայլը, բայց դա սրբազան մի պարտականություն է հայերի կողմից դեպի Բուզարիան... Բուզարական սահմանում հայերը գտել են այն տենչալի անդորրությունը, որ նրանք իզուր մինչև այժմ որոնում են Թյուրքիայում. գաղթականության ժամանակ բոլգարները հյուրընկալեցին հայերին մի հազվագյուտ մարդասիրությամբ... Հետին երախտամոռը կլիներ Բուզարիայի հայությունը, եթե այսօր զենք չառներ բոլգարներին օգնելու»²:

Բուլղարահայերի քաղաքացիական պարտականությունն է այդ: Նույն շիտակությամբ պետք է գնահատեր թուրքական բանակում կովող հայերի հավատարմությունը. «Լուրերին նայելով հայ նորակոչ զինվորներն ու սպաները անձնվիրությամբ կովում են Թյուրք զորքի շարքում և դասալիքների մեջ հայեր չեն պատահում»³:

¹Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 95:

²«Հորիզոն», 1912, N 236:

³«Հորիզոն», 1912, N 255:

«Քաղաքացիության պարտականությունը» առաջնորդողում բերելով տարբեր երկրների օրինակներ, երկրներ (Թուրքիա, Պարսկաստան, Ռուսաստան, Բուլղարիա), որտեղ բնակվող հայերը իրենց պարտքն են համարել այդ երկրների ժողովուրդների հետ միասին կռվել նրանց թշնամիների դեմ, համարելով դա քաղաքացիական պարտականություն, հրաշալի ձևակերպում է տալիս. «Կռիվ պետության ներսը արդարության համար և դուրսը իր պատկանած պետության հաջողության համար այս է եղել հայերի ավանդական քաղաքականությունը, ուրիշ ամեն մի վերաբերում կլինե՞ր դավաճանություն իր պատկանած պետության և իր ազգային շահերին և արժանապատվության»¹:

Ոչինչ, որ մյուս պետությունները պետք է հիշեին հերոսներին, իսկ Թյուրքիան երախտամոռ պիտի գտնվի «պատնեշի վրա» մեռնողների հիշատակի և նրանց հարազատների հանդեպ...

Գալիք իրադարձություններին նախապատրաստվելը պարտադրում էր հետադարձ հայացքով վերազնահատել հայկական հարցի անցած ուղին, անհրաժեշտ հետևություններ անել անցյալի դասերից: Խոր ծանոթությունը «ընկերական գիտություններին» հնարավորություն է տալիս ճիշտ պատկերացում կազմել ազգային ու հասարակական մեծ շարժումների ծագման, շարժիչ ուժերի ու բնույթի մասին: Կուսակցությունները, խմբավորումները, անհատները, որքան էլ ազդեցություն ունենան զանգվածների վրա, չեն կարող մեծ շարժումներ առաջացնել, նրանք իրենք հենց համամասն շարժումների ծնունդ են ու հետևանք և ոչ երբեք պատճառ: Ի տարբերություն ամեն ինչ ժխտողների՝ նա որոշ առաջադիմություն տեսնում է անցած ճանապարհի մեջ: Սան Ստեֆանոյի և Բեռլինի որոշումներով «հայոց հարցը ստանում էր մի-

ջազգային բնավորություն»: Սուլթանները հարկադրված էին ընդունել, որ կա հայկական հարց, հետևաբար՝ նաև այն լուծելու անհրաժեշտություն: Հայկական հարցի երկրորդ շրջանը սկսվում է 1895 թ. արյունոտ դեպքերից, որոնց արդյունքը եղավ այսպես կոչված մայիսյան ծրագրի ընդունումը: Նախկին որոշման «հայաբնակ վայրեր» անորոշ ձևակերպումը որոշակի իմաստ է ստանում՝ հայկական վեց վիլայեթներ, իսկ «բարենորոգումներ» ոչինչ չասող բառի փոխարեն կազմվեց մի ծրագիր կոնկրետ կետերով: Հստակություն է մտնում նաև «եվրոպական հսկողություն ձևակերպման մեջ. «պիտի կազմվեր մի հատուկ հանձնաժողով, որ պիտի հսկեր նոր մշակած ծրագրի ճշտիվ իրագործման վրա»: Դիվանագիտական այս հաջողությունները ոչնչով չբարելավեցին հայերի վիճակը, ընդհակառակը՝ ավելի ծանրացրին: Աղբալյանը գիտի սա և շարունակում է հավատալ նրանց միջամտության դեմին: «Բալկանյան պատերազմի հետևանքով հայոց հարցը մտնում է իր զարգացման երրորդ փուլի մեջ, որ հուսանք, վերջին շրջանը պիտի կազմի»: Ավաղ, բուլղարիայից հեղափոխությունը նոր շունչ տվեց հոգեվարք ապրող Թուրքիային և հայոց հարցի երրորդ շրջանը վերջինը չեղավ... Ի՞նչ է ակնկալում հրապարակախոսը՝ «վարչական ապակենտրոնացում, քրիստոնյա կառավարիչ և մի պետության հսկողություն»:

Հակադրվելով այն մտայնության, որը անցած ճանապարհին ոչ մի բան չէր տեսնում, հատուկ ընդգծում է ձեռքբերումները. «Ազգային գիտակցության զարգացումն ու ծավալումը, հայության հատվածների մտավոր ու բարոյական կապերի ընդլայնումն ու ամրացումը, հայ ռազմական կորովի արթնացումը, հայության բարոյական կերպարանքի նկատելի փոփոխությունը դեպի լավը, հայ մտածողության քաղաքական բնույթ ստանալը և գրականության համազգային իդեալներով տոգորվիլը և

¹Նույն տեղում:

ուրիշ երևույթներ - հայկական խնդրի դրական հետ-
 կանքներ են»¹: Չնայած տնտեսական ու քաղաքական
 ծանր վիճակին՝ ապրում է ժողովրդի կենսունակությունը,
 մաքառման ոգին, և հայ հրապարակախոսության չհա-
 տուցած պարտքն է այդ կենսունակության ու ոգու բա-
 ցահայտումը, դրանով ոգևորվելը: Որոշ շրջաններում
 տիրող «անհետացող Հայաստանի» գաղափարին հա-
 կադրելով «ավերակների և մոխիրների տակից... վե-
 րածնվող Հայաստանի» գաղափարը՝ ցավով արձանագ-
 րում է, որ հայ ընթերցողը ամեն օր տեղեկանում է
 բռնության դեպքերին, բայց «գրող չկա այն ճիգերի մա-
 սին, որ ծավալում է հայկական բովանդակ բարձրա-
 վանդակի վրա հայ ժողովուրդը, որ դեռ շարունակում է
 ամուր կառչած մնալ իր հայրենի հողին, թեև անգեմ,
 անպաշտպան և անօգնական»²: Սրանով պետք է բա-
 ցատրել Բաֆֆու հրապարակախոսության և ծրագրերի
 հանդեպ նրա սևեռում հետաքրքրությունը: Բաֆֆին Ադ-
 բալյանի կուռքերից էր, բարձր է գնահատել նրա ոչ
 միայն գրական վաստակը, այլև հրապարակախոսությու-
 նը: Վիպասանի մահվան 25-ամյակի կապակցությամբ
 հրատարակում է ազատագրական պայքարի առաջին
 նահատակներից մեկի՝ Ալեքսանդր Գոլոշյանի նամակ-
 ները, որոնցում Բաֆֆու ժամանակակիցը, նրա ստեղ-
 ծագործությամբ դաստիարակված ու ժողովրդի ազա-
 տագրության սրբազան գործին նվիրված գործիչը գնա-
 հատում է իր գաղափարական ուսուցչին. «Չկա այն
 մարդը, որի... լուսավոր գաղափարները մեզ՝ երիտա-
 սարդությանս, տարան ճշմարիտ ճանապարհի վրա, որի
 զորավոր և կյանքով լի խոսքը իր թովիչ ուժով զարթեց-
 րեց և ապագան ձեռք բերելու ցանկություն ներշնչեց»³:

¹ Ն. Ադբալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 118-119:

² Նույն տեղում, էջ 152-153:

³ «Հորիզոն», 1913, N 101:

Նամակները բացահայտում էին Բաֆֆու դերը
 սերնդի դաստիարակության գործում՝ անափ ոգևո-
 րությամբ ու անձնուրաց նվիրաբերումով նոր սխրանք-
 ների մղելով ժամանակակիցներին: «Որքան կրթիչ են
 այս նամակները մեր վհատ օրերին, երբ կարծես սպա-
 ռել է գաղափարական գործի ավյունը մարդկանց մեջ»:

Հայտնի է, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պա-
 տերազմի ավարտից և Բեռլինի վեհաժողովից հետո
 Բաֆֆին առաջադրեց գալիք իրադարձություններին նա-
 խապատրաստվելու մի ամբողջ ծրագիր: Բալկանյան
 պատերազմի շնորհիվ հայոց հարցի հնարավոր «վե-
 րարծարծմամբ» մտահոգված Ադբալյանը առաջին հեր-
 թին ընդօգնում է հենց այս կողմը՝ սպասվելիք իրադար-
 ձությունները դիմավորել գործողությունների որոշակի
 ծրագրով՝ դասեր քաղելով անցյալից: Այս մտահո-
 գությունը պայմանավորելու էր նրա եռանդուն գործու-
 նությունը ազգային բյուրոյում և կամավորական խմբե-
 րի կազմավորման վարչությունում: Բաֆֆու պահանջնե-
 րի մանրամասն շարադրումը հետևանք էր ոչ միայն և ոչ
 այնքան նրա, որ «այսօր էլ հայ պատանին նրա երկերը
 կարդում է հափշտակությամբ և լայնացնում իր տե-
 սության հորիզոնները՝ հայ ու հայությունն նկատելով
 սահմանի մյուս երեսին», այլև այն բանի, որ մեծ վիպա-
 սանի ծրագրային պահանջները խիստ արդիական էին,
 հնչում էին իբրև այսօրվա պահանջներ: Առաջին հերթին
 պետք է ճանաչել այն ժողովուրդը, որին պետք է օգնել,
 և այն երկիրը, ուր նա ապրում է: Բաֆֆու ծրագրային
 վեպերը այս խնդրի լուծմանն էին կոչված: Բալկանյան
 պատերազմի սկսվելուց հետո Ադբալյանի ուշադրությու-
 նը կենտրոնանում է այնպիսի գրքերի վրա, որոնք այս
 կամ այն կերպ առնչվում էին խնդրին: Հարկավոր է
 արթնացնել քաղաքական ու սոցիալական կրկնակի,
 եռակի ճնշման տակ ազգային դիմագիծը կորցնող ժո-
 ղովրդին, լուսավորել նրան, արթնացնել ազգային ինք-

նասիրությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձնում այլադավանության խնդրին: Ելնելով այն ըմբռնումից, որ ազգը ընդհանուր գաղափար է, եկեղեցին՝ մասնավոր (հետագայում Սփյուռքը մասնատող այլադավանության խնդրին պետք է անդրադառնար բաֆֆիական ելակետով), նկատում է, թե «ընդհանուր եկեղեցու տեղը պետք է բռնե ազգայնության գաղափարը Ադրայանին մասնավորապես ոգևորում է Բաֆֆու այն միտքը, թե հայկական հարցի լուծմանը ժողովրդին մասնակից անելու համար հարկավոր է «կազմել մի ընկերություն»:

Մի փոքր անց նա կրկին զայրույթով արձանագրում է Բաֆֆու առաջարկը իրականացնելու անհրաժեշտությունը. «Նորից կրկնում ենք, պետք է ուսումնասիրել Հայաստանը ոչ թե պատմական, ազգագրական, հնագիտական և նման տեսակետներից, որոնց կարևորությունը մերժողներից չենք, այլ տնտեսական-ընկերային տեսակետից: Ժամանակները շատ նպաստավոր են, պետք է կազմել մի համեստ ընկերություն, ընդհանուր գործի շուրջը համախմբել ձեռնահաս և պատրաստի ուժեր, հոգալ նրանց նյութականը և որոշ ծրագրով հետազոտել Հայաստանը և նրա ժողովուրդների փոխհարաբերությունները և նրանց դերն ու նշանակությունը այդ երկրի ապագա զարգացման գործում»¹: Նորաստեղծ ազգային բյուրոն համանման մի նպատակ էր հետապնդում: Ազգային բյուրոյի գործունեության առանցքը և «Հայաստանի քաղաքական ապագայի գաղափարն» էր, որի իրագործման համար «պահանջ է զգացվում ազգային միության», «եկեղեցու միալար ուժի» ժխտման, դպրոցի «աշխարհականացման» և «ազգայնության գաղափարի արծարծման»: «Բաֆֆիական այս ծրագրի համար, որի իրականացումը Արևմտ-

¹Նույն տեղում, էջ 153:

յան Հայաստանի ազատագրության համար անհրաժեշտ պայմաններ պետք է ստեղծեր, հարկավոր է իր նպատակը նույնքան հստակ գիտակցող, նույնքան եռանդ ու նվիրում ունեցող մի սերունդ, որի «հավատքը» նույնպես լինի «անասան», «զգացումը՝ զորեղ, միտքը՝ կտրուկ ու գործնական, ոճը՝ պարզ ու պայծառ»...

Մանրամասն շարադրելով Բաֆֆու հայացքները անվերջանալի թվացող Արևելյան խնդրի նկատմամբ, հրապարակախոսը մի անգամ ևս ընդգծում է իր ջանադիր հետաքրքրության պատճառը. «Այս ազատ ուրվագծից երևում է, որ Բաֆֆին, իբրև թրքահայության տառապանքի պատճառները վերլուծող և նրա ցավերի դեմ դարման առաջարկող, դեռ կարող է ժամանակակից գրող համարվել»¹: Երկու կարևոր պատճառ է նշում հետազոտողը, որոնք վիպասանին շարունակում են ժամանակակից պահել. «Թյուրքիայի ավանդական դանդաղաշարժությունը» և, սա առաջին հերթին պետք է նշել, «-Բաֆֆու մտքի սրությունը», որով կարողացել է «զատել անցողականն ու տևականը»:

Պատմական անցյալը գնահատելիս Ադրայանը միշտ էլ ներկան նկատի ուներ, նրա ուշադրությունը կենտրոնանում էր մասնավորապես այնպիսի գրքերի վրա, որոնք հնարավորություն էին տալիս իմաստավորել ներկան, պատասխանել այսօրվա խնդիրներին: Անդրադառնալով Սարուխանի գրքի այն հատվածներին, ուր խոսվում է հայոց ծանր վիճակի վերաբերյալ Բ. դուռ ներկայացվող գանգատների մասին, հրապարակախոսը եզրակացնում է. «Ուշադիր նայելով այն ժամանակվա և այսօրվա գանգատներին, ինչպես նաև այն ժամանակ և այժմ առաջարկվող միջոցներին, մարդ զարմանում է, թե որքան անշարժ են Թյուրքիայի ներքին պայմանները և

¹Նույն տեղում, էջ 70:

որքան անփոփոխ հայոց իրավագուրկ վիճակը»¹: Մի ուրիշ առիթով նշում է, կրկին զարմանքով, թե գավառների հայության տրամադրությունը և Թիֆլիսի հայոց դիմումը զարմանալի կերպով հիշեցնում են մեր օրերը: Այս մոտեցումը շատ ավելի ակնհայտ է Րաֆֆու «Տաճկահայքին» նվիրված գրախոսականում:

* *

Բալկանյան պատերազմի նախօրյակին ու ընթացքում վերլուծության է ենթարկում մեծ տերությունների միջպետական հարաբերությունները, փոքր ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքի դրդապատճառները՝ այս համապատկերում փորձելով կոահել հայկական հարցի հետագա ընթացքը: «Բարեկամությունը հավիտենական չէ, մանավանդ քաղաքական աշխարհում», - հրապարակախոսի էլակետային սկզբունքներից է սա: Այսօրվա դաշնակիցները վաղը կարող են հայտնվել բարիկադի հակառակ կողմերում: Հրապարակախոսի խնդիրը ոչ միայն հարաբերությունների առկա վիճակի գնահատումն է, այլև հետագա ընթացքի կոահումը: Ելակետային մյուս սկզբունքը այն գիտակցությունն է, թե «Հայկական բարձրավանդակի վրա խաչաձևում են քաղաքական մեծ շահեր, որոնց հաշտեցնելու մեջն է դժվարությունը»²: Առավել մանրամասնությամբ ու հետևողականությամբ քննել է Ռուսաստանի, Անգլիայի և Թուրքիայի քաղաքականությունը. սրանցից էր կախված հայկական հարցի ընթացքը: Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Ավստրիան ուշադրության են արժանանում վերոհիշյալ երկրների հետ ունեցած հարաբերությունների առնչությամբ:

¹Նույն տեղում, էջ 30:

²Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, Կ. III, էջ 173:

Թերևս ավելորդ չլինի նշելը, որ Անգլիայի նկատմամբ հետաքրքրությունը նրա մոտ ծագել է դեռևս պատանեկության տարիներին: Պահպանված սևագրերում ու մշակումներում հաճախ է հիշվում այս երկրի անունը, նրա պատմությանը և ներկային նվիրված հոդվածներն ու գրքերը մշակվում են մանրամասնորեն: Դրա պատճառը ոչ միայն այն էր, որ Անգլիան դասական կապիտալիզմի «ազատ» երկիր էր, այլև, ու թերևս առաջին հերթին այն, որ այս երկիրը վերջին տասնամյակներում ամենից վճռական միջամտությունն է ունեցել հայկական հարցում՝ միշտ շահարկելով մեր ճակատագիրը իր շահերի տեսանկյունից: Սա է պատճառը, որ առանձնակի խստությամբ է արտահայտվում նրա քաղաքականության մասին: «Անգլիայի դիվանագետները» նշանավոր շախմատ խաղացողներ են. աշխարհն ամբողջ նրանց համար շախմատի տախտակ է, իսկ պետությունները՝ քարեր. ամեն շարժում, որ նկատվում է այս կամ այն «քարի» կողմից՝ անմիջապես առնվում և դեմը միջոցներ են ձեռնարկվում»¹: Այս «նշանավոր շախմատ խաղացողները» երբեք թույլ չեն տալու, որ «մեր պետությունը» (Աղբալյանը այսպես է արտահայտվում Ռուսաստանի մասին. - Գ. Ա.) տիրանա Հայկական բարձրավանդակին, որովհետև դրան «տիրացողը կիշխե Միջագետքին և Միջերկրականի արևելյան-հյուսիսային ասիերին»: Սա ռուս-անգլիական հակամարտությունների անկյունաքարն է, որ առաջիկայում դեռևս երկար իրեն զգացնել կտա: Այս հակամարտության վրա էր կառուցում այն հետևությունը, թե ինչու այդ երկիրը պետք է ճնշում գործադրի Թուրքիայի վրա՝ հայկական նահանգներում բարեփոխություններ կատարելու համար: Հայերին օգնելու պատրվակով դեպի հարավ-արևելք ռուսների առաջխաղացումը կանխելու նպատակով է, որ Անգ-

¹Ն. Աղբալյան, նշվ. աշխ. էջ 203:

լիան պետք է ճնշում գործադրի Թուրքիայի վրա վերջապես տանելի պայմաններ ստեղծելու քրիստոնյա և ոչ միայն քրիստոնյա ճնշվող զանգվածների համար: «Այսպես, ուրեմն,- գրում է հրապարակախոսը,- վտանգն այն զինված միջամտության, որ կարող է անել Ռուսաստանը, ստիպում է Եվրոպային բարենորոգումներ պահանջելու հայերի համար: Հայերի վիճակը պետք է բարվոքել ոչ թե նրանց արդար պահանջին գոհացում տալու համար, այլ Թուրքիայի ամբողջությունն ապահովելու համար»¹:

Հայկական բարձրավանդակում ազդեցության շրջաններ ձեռք բերելու հարցում Անգլիայի և Ռուսաստանի մշտական հակասությունները վերջին տարիներին, ավելի ստույգ՝ Իրանում իրենց ազդեցությունը հավասարակշռելուց հետո, զգալիորեն մեղմացել են: Այս հողի վրա ձևավորվել է համերաշխություն նաև հայկական հարցում: Անգլիային ու Ռուսաստանին միացել է Ֆրանսիան: Բայց մի մեծ հարցական դեռևս կա՝ ի հակակշիռ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի եռյակ դաշնակցության ձևավորվում է Գերմանիայի, Իտալիայի և Ավստրիայի «եռյակ միզակակցությունը», և դեռևս հայտնի չէ՝ արևելյան հարցում նրանք ընդհանուր լեզու կգտնե՞ն, թե՞ հակամարտությունը կշարունակվի այստեղ ևս: «Բացի եռյակ զինակցությունից,- շարունակում է հրապարակախոսը,- դեռ կա ինքը՝ Թուրքիան, որի ներքին գործերին միջամտելով է, որ կարող է գլուխ գալ եռյակ համաձայնության որոշում»²: Իսկ մեկ անգամ չէ, որ Թուրքիային հաջողվել է օգտագործել մեծ տերությունների տարաձայնությունները, նույնիսկ առաջացնել այդպիսիք և ջրից ջր դուրս գալ: Այդպես պատահեց Բեռլինի վեհաժողովի ժամանակ. կիպրոսը զիջելով Անգլիային՝

¹Նույն տեղում, էջ 175:
²«Հորիզոն», 1912, N 273:

Թուրքիան ապահովեց Հայաստանում հայերի նկատմամբ իր վայրենի քաղաքականությունը անփոփոխ պահելու իրավունքը: «Կիպրոսի դաշնագիրը,- ամփոփում է Ադրալյանը,- արդեն նախորոշել էր հայոց հարցի լուծումը, դարձնելով այն թյուրք-անգլիական համաձայնության մի ներքին խնդիր»¹:

Ադրալյանը հայ հասարակական մտքի այն թևի ներկայացուցիչն է, որը ռուսական կողմնորոշում ուներ: Այդ կողմնորոշումը հենվում էր ռուսական զենքի հաջողությանը, մյուս տիրողների համեմատությամբ ռուսական քաղաքակրթության առավելություններին: «Ռուս զենքից հետո դանդաղ, բայց համատորեն մեր երկիրը մտավ և ռուսաց քաղաքակրթությունը՝ Կովկասի ժողովուրդներին հպատակ դարձնելով ոչ միայն «վասն ահի», այլև «վասն մտացն խղճի», կովկասցին պարզ աչքով տեսավ ոչ միայն ռուս զենքի հաջողությունն ու առավելությունը, այլև ռուս քաղաքակրթության բարիքները»²: Ռուսական «քաղաքակրթության բարիքները» տեսանելի էին դառնում մյուս հարևանների հետ համեմատության մեջ. կովկասցու «կողքին առաջավոր Ասիայի մի կողմն Իրանն էր, իր հանգած քաղաքակրթությամբ, մյուս կողմը Թուրքիան, իր բարբարոս կարգերով. երկուսն էլ վատուժ, անկազմակերպ և այլամերժ»: Բայց միայն սա չէ Ռուսաստանի նկատմամբ հայերի բարյացակամ վերաբերմունքի պատճառը: Առավել կարևոր է այն, որ իր պատմական հայրենիքում հայերի հարատևելու ձգտումը համընկնում է «Ռուսաստանի քաղաքական շահերին», որոնք «ընթանում են ձեռք-ձեռքի՝ հավասարաչափ նպաստելով երկու կողմերին»: Հենց այս պատճառով էլ հայկական գավառներում նախաստեպող բարենորոգումների հաջողությունը,

¹Ն. Ադրալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 59:
²Նույն տեղում:

մյուս պետությունների համաձայնությամբ, արժե վստահել Ռուսաստանին:

Հայերի ճակատագրում Ռուսաստանի դերի ըմբռնումը զուգակցվում էր նրա ազգային, կրոնական հալածանքների և «պետական կազմակերպության» արատների բացահայտմանը: Վերհիշելով այն հալածանքները, որոնց վերջին քսան տարում ենթարկվել է հայությունը, արտահայտելով իր շուրջը համախմբվածների ու համախոհների կարծիքը՝ «Հորիզոն», պատվիրում էր չմոռանալ կարևորը՝ ռուսական կառավարությունը կարող է դեմ լինել հայության, բայց Ռուսաստանի պետական շահերը համընկնում են հայոց ազգային շահերին: «Մեր քաղաքացիական պարտականությունն է,- հանձնարարում է թերթը,- պայքարել ամեն մի կառավարության դեմ», չմոռանալով, որ «հայ ժողովրդի շահերը ըստ ինքյան վերցրած հակամարտության մեջ (չեն) գտնվում ռուսաց պետական շահերի հետ»¹: Խոր համակրանք տածելով Ռուսաստանի, նույնքան խոր հակակրանք Անգլիայի հանդեպ, Ադրալյանը այնուամենայնիվ հարկադրված է խոստովանել, որ Անգլիայում «երկրի շահերն են դեկավարում դիվանագետներին», Ռուսաստանում՝ «դիվանագետներն են դեկավարում երկրի շահերը»²: «Պետական կազմակերպության» այս առավելությունն էլ Անգլիայի քաղաքականության հաջողությունների գլխավոր գրավականն է:

«Ռուսաստանը միակ պետությունն է, որ կարող է իր զորքերով անմիջապես ներս խուժել հայաբնակ նահանգները»³, բայց սա որքան գերադասելի, նույնքան էլ անհնար տարբերակ է, որովհետև աշխարհակալական այս քաղաքականությունը չի կարող արժանանալ նրա

¹ «Հորիզոն», 1912, N 252:

² Ն. Ադրալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 205-206:

³ «Հորիզոն», 19123, N 15:

նույնիսկ այսօրվա համախոհներ Անգլիայի ու Ֆրանսիայի հավանությանը. «Թյուրքիայում այնքան եվրոպական շահեր են իրար բախվում»՝ վերին աստիճանի կնճռոտ դարձնելով կացությունը: Կա նաև «ներքին վտանգը»: Պատերազմը կարող է նոր խմորումների տեղիք տալ, «գուցե նոր հեղափոխության առիթ դառնա», - մարգարեանում է հրապարակախոսը: Այս ամենը անհնար է դարձնում ռուսական գեների օգնությունը հայերին: Մնում է միայն մեկ ելք՝ եվրոպական կամ ռուսական վերահսկողության ներքո «ինքնավար միության» ստեղծումը, թեկուզ «կիսանկախ»: Ռուս-անգլիական համերաշխությունը նման օրինակներ տվել է...

Ռուսաստանի քաղաքականության նկատմամբ համոզվումքը մի փոքր երերաց պատերազմի շրջանում՝ կամավորական շարժման առիթով: Այս առումով շատ բնորոշ է 1915-ին Փ. Վարդազարյանին գրած նամակը: «Զարմանում ես. հայերը տալիս են ամեն ապացույց, որ հարած են ռուս պետության շահերին, անձնվիրությամբ ծառայում են նրա զինական հաջողության, զոհաբերում են մարդ ու դրամ, աշխատանք և տեսնում են չարյացական վերաբերում: Իմ կարծիքով վարերն ուրիշ վերաբերում ունեն, վերերն՝ ուրիշ...»: Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, 1989, N 2, «Նիկոլ Ադրալյանի նամակները Ֆիլիպ Վարդազարյանին» հրապարակումը:

Դեպքերը, սակայն, այլ ընթացք ստացան: Հանգամանքների բերումով ծնունդ առավ Հայաստանի Հանրապետությունը: Ադրալյանի խոստովանությամբ սա անակնկալ էր, ճիշտ է՝ երջանիկ անակնկալ: Հայերի պահանջը միշտ ավելի համեստ է եղել՝ Թյուրքիայի ու Ռուսաստանի հովանավորությամբ Հայաստանի երկու հատվածներում այնպիսի մի ինքնավարություն, որը

¹ Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, 1989, N 2, «Նիկոլ Ադրալյանի նամակները Ֆիլիպ Վարդազարյանին» հրապարակումը:

մարդավայել ապրելու պայմաններ ապահովեր: Հակա-
ռակ իրենց կամքի՝ «ինքնավար, բայց դաշնակցորեն
Ռուսաստանին կապված հայաբնակ գավառների կուսա-
կիցները դարձան Միացյալ և Անկախ Հայաստանի
պաշտպանները» (Ն. Աղբալյան): Նոր իրադրությունը
պայմանավորում է նոր վերաբերմունք Ռուսաստանի,
այս դեպքում՝ հեղափոխական Ռուսաստանի նկատ-
մամբ: Բացի այն, որ ինքնավար Հայաստանի գոյությու-
նը ենթադրում էր իրավահավասարների հարաբե-
րություն, հայ մտածող մարդկանց չէր կարող ան-
հանգստություն չպատճառել խորհրդա-թուրքական
«սրտառուչ միությունը»: Հեղափոխական ծխածածկույթը
չէր կարող մոլորեցնել Թուրքիայի պատմության լավա-
տեղյակ ու թուրքերի հոգեբանությունը ճանաչող Աղբալ-
յաններին: Նրանք կանխազգում էին, որ այդ միությունը
տագնապալի սպառնալիք է Հայաստանի ինքնավար
գոյության:

Այսօր հայտնի են այդ միության հետևանքները.
քառատվեց Հայաստանը: Պատմական Հայաստանի
բացարձակ մեծամասնությունը, առանց նրա բնակ-
չության կամքն ու ցանկությունը հարցնելու, ինչպես և
Բեռլինի վեհաժողովում՝ առանց հայերին մասնակից
անելու, հեղափոխության առաջնորդները «շոայլորեն»
նվիրեցին Թուրքիային, ներառյալ այն տարածություննե-
րը, որոնք մտնում էին Ռուսաստանի կազմի մեջ. հանուն
Արևելքում հեղափոխության ծավալման: Կաշառք՝ հա-
նուն հեղափոխության: Ահա թե գործնականում ուր էր
գլորվել... մարքսիզմը: Նախիջևանն ու Արցախը, Զա-
վախքը նույնպես, պոկեցին Հայաստանից...

Մի ամբողջ ժողովուրդ ու երկիր խաչ էր հանվում
իբրև թե հանուն այլ երկրների ու ժողովուրդների սո-
ցիալական ազատագրության: Մարքսիզմը սկզբնավոր-
ողներին ծանոթ էր նմանօրինակ հեղափոխության
հնարավորությունը:

Հայ ժողովրդի ճակատագիրը դիտարկվում էր
ազատ-դեմոկրատական Ռուսաստանի հետ բարեկա-
մական հարաբերությունների համակարգում: Սոցիալ--
դեմոկրատական համոզումները պայմանավորեցին ինք-
նակալության անկման ողջունումը: «Ռուսական հեղա-
փոխությունը... ուժանակի պես ցնցեց մարդկային թմրած
ուղեղները»¹ հրավեր կարդալով «բովանդակ աշխարհի
աշխատավորությանը ոտքի էլնել» և բոլոր երկրներում
պայքարել աշխատավորության թշնամի իմպերիալիզմի
դեմ: Մեծ հույսեր էր կապում փետրվարյան հեղափո-
խության հաղթանակի հետ: Կծաղկի ժողովրդավա-
րությունը, որ նշանակում է, թե ժողովրդի կամքի դրսևո-
րումը կպայմանավորի իշխանությունների գործու-
նեությունը: Բայց դա ինքն իրեն չի ստացվի: Ժողո-
վուրդն ինքը «անձամբ» պետք է հետամտի իր իրա-
վունքների պաշտպանությանը, և այդուհետև «ոչ մի
պաշտոնյա, որ չի վայելում համայնքի, գավառի, նա-
հանգի և երկրի վստահությունը՝ տանուտերից մինչև մի-
նիստը՝ չի կարող մնալ պաշտոնի գլխին»²: Բնականաբար
պաշտպանում էր ժամանակավոր կառավարությունը:
Նրա դեմ հանդես եկող ուժերի, մասնավորապես ռուս մե-
ծամասնականների արածը հավասարազոր է դավաճա-
նության: Վերջիններիս շարքերում միավորված են «գեր-
մանական գաղտնի գործակալը իր արքանյակներով, հին
կարգի կողմնակիցներն ու նոր կարգից հիասթափված-
ները, շփոթից անձնական ու անցողիկ շահ ակնկալող-
ները և զանազան զառանցողներ ու նյարդասպառ մար-
դիկ, որ մեծ թվով հանդես են գալիս հեղաշոջումների
ժամանակ, իբրև արդյունք գաղափարական շփոթի և
անիշխանության»³: Հեղափոխություններին հաջորդող

¹ «Հորիզոն», 1917, N 112:

² «Հորիզոն», 1917, N 143:

³ «Հորիզոն», 1917, N 141:

այս շրջանը դժվար հաղթահարելի է, և հրապարակախոսը ցավով է արձանագրում ժամանակավոր կառավարության անկարողությունը՝ տիրել իրադրությանը ինչպես երկրի ներսում, այնպես էլ ռազմաճակատում: Նրան պատճառն էլ հայտնի է. Ռուսաստանը մշտապես դեկավարել են բյուրոկրատները, որոնց դեմ մշտապես հանդես են եկել «լուսամիտ ու բարեսիրտ մտավորականները»: Մի կողմը ծնել էր Ստոլիպին, մյուսը՝ Տոլստոյ: Մի կողմը որքան խստացել է դաժանությամբ, մյուսը՝ «թուլամորթացել» «բարեսրտությամբ» հորդորներ կարդալու մեջ: Հեղափոխությունը փոխել է սրանց տեղերը, և իշխանության եկած մտավորականը ապարդյուն փորձեր է անում «Տոլստոյի մտավիճակով Ստոլիպինի գործ կատարել»:

Ուժեղ իշխանության բացակայությունը լուրջ սպառնալիք է առաջին հերթին Ռուսաստանի ապագային: Այնուհետև՝ Ռուսաստանի մեջ մտնող ժողովուրդների, առաջին հերթին՝ հայության համար: Թշնամական ուժերը, սրանց մեջ առջևում են մեծամասնականները՝ «անձնական պատվի զգացումից զուրկ մարդիկ, փախուստի դիմելով ճակատից և զրաբանելով թիկունքում՝ անարժեք են դարձնում այն դերը, որ կարող է խաղալ մեծ և ազատ Ռուսաստանը իրավունքի և խաղաղության համար մղվող այս տիտանական պայքարում»¹: Համաման իրողություններ մեզանում էլ պետք է դրսևորվեին՝ ճակատագրական նշանակություն ունենալով անկախություն ստացած Հայաստանի Հանրապետության գոյության համար:

Ռուսաստանի «ներքին խլրտում»-ներից ու «արտաքին անհաջողություններից» հետամուտ հրապարակախոսը մեծ տագնապով ընդունեց հոկտեմբերյան հեղափոխության լուրը: Ռուսական երկու բուրժուադե-

¹ Հորիզոն, 1917, N 150:

մոկրատական հեղափոխությունները ողջունած, ընկերային գաղափարներով դաստիարակված Աղբալյանը չընդունեց սոցիալիզմ կառուցելու խոստումով հանդես եկող մեծամասնականների գործողությունները:

Ողջունելով մայիամեկյան տոնը՝ իբրև աշխատավորության «չքնաղ համերաշխության» և «հանուն գիտակցության» արտահայտություն, զուգահեռ է անցկացնում սոցիալիզմի ու քրիստոնեության միջև. երկու ուսմունքներն էլ ձգտում են մարդկությանը համախմբել և «դարձնել մի դաշնավոր եղբայրություն»: Հակառակ քրիստոնեության, որը դիմում է «մարդու բարի և այլասեր մղումներին», որի պատճառով էլ հաջողության չհասավ, ընկերվարությունը «հենվում է աշխատանքին և նրա շահերի պայծառ գիտակցության՝ ներդաշնակությունը որոնելով ոչ թե երկնքում, այլ իրական երկրի վրա, ուստի և պիտի հաջողի»: Խորապես հավատում էր սոցիալական, կրոնական ու սեռային հակասություններից զերծ, աշխատանքի ու բարոյականության սկզբունքներից հենված հասարակության ստեղծման հնարավորությանը. «Աշխարհը տուն ամենքին, աշխատանոց և հանգստավայր, ուր չկա զրկում ու կեղեքում, գոեհիկ անկումներ և մտքի ու նյարդի հանցավոր նրբացումներ, այլ հանրօգուտ միտք, առողջ զգացում և խաղաղություն տիեզերական»¹:

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի խնդրի ևս: Ծատ թե քիչ նշանակալից որևէ իրադրություն, որևէ գաղափար Աղբալյանը ընդունում էր իր ժողովրդի ճակատագրի տեսանկյունից՝ երբեմն էլ իր համարձակ միջամտությամբ շտկումներ մտցնելով: Սոցիալիզմը այնպես, ինչպես պատկերանում էր իրեն, միանգամայն ընդունելի էր: Բայց, ահա, այդ ուսմունքը ժխտում էր հայրենիքի գաղափարը: «Ընդ-

¹ «Հորիզոն», 1917, N 78: 17-7

հանրական արդարության» ստեղծմանը խանգարում են հայրենիքները՝ ջլատելով «համաշխարհային աշխատավորության ուժերը»: «Հայրենիքներ պետք չէին լինի», եթե ազգային և պետական ուժերը կարողանային «արդարություն և խաղաղություն ապահովել աշխարհում»¹, իսկ քանի դեռ տիրում է անարդարությունը, պետական մեծ «միավորները» ձգտում են ոչնչացնել կամ իրենց ենթարկել փոքրերին, վերջիններս պետք է պայքարեն արևի տակ իրենց տեղն ունենալու համար, իրենց հայրենիքը փրկելու համար:

Հեղափոխություն, թե հայրենիք հարցադրման կապակցությամբ գրում է. «Ոմանք պահանջում են նախ հեղափոխություն, ապա՝ հայրենիք, ուրիշներն ասում են՝ նախ հայրենիք, ապա՝ հեղափոխություն: Մենք պնդում ենք՝ և հայրենիք և հեղափոխություն»²:

1917-ի սեպտեմբերին հանդես եկավ բոլոր կուսակցություններին ուղղված մի կոչով՝ համախմբվել և պաշտպանել «ռուսական հեղափոխությունը, որովհետև» հեղափոխության վերջնական հաղթանակով միայն լուծում կստանան ոչ միայն հանրապետական այրող հարցերը, այլև Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդների ազգային տենչանքները»: Սրանով է բացատրվում կոչը՝ ուղղված բոլոր կուսակցություններին: Չէ՞ որ անցյալում էլ եղել են «բացառիկ կարևորություն ներկայացնող պատմական մոմենտներ», որոնք քաղաքական կուսակցություններին մոռացնել են տվել տարաձայնություններն ու հակամարտությունները՝ հարկադրելով հանդես գալ «բոլորի համար նվիրական դրոշակի տակ»³:

Նման վերաբերմունքը պայմանավորում է հասարակական-քաղաքական մյուս խնդիրների մեկնաբանու-

¹ «Հորիզոն», 1917, N 50:

² «Հորիզոն», 1917, N 156:

³ «Հորիզոն», 1917 N 196:

մը, կառավարությանը համակիր ու հակակիր կուսակցությունների գործունեության գնահատումը:

Միանգամայն ուրվագծվում է ժխտական վերաբերմունքը «ռուսական մարքսիզմի» հանդեպ: «Մարքսիզմը, որ հավակնություն ուներ Ռուսաստանի տիրող կուսակցությունը լինելու, արագորեն թողնում է իր դիրքերը՝ անույժ դիմադրելու հեղափոխական սոցիալիզմի գրոհին: Նրան հայտնի է այն պատճառը ևս. «Անսպառ պոռոտախոսության և նեղմիտ դոգմատիզմով վարակված ռուսական մարքսիզմը չէր կարող համակրանքը վայելել աշխատավորական լայն զանգվածների, որոնք բարձրաթոիչք խոսքերից ավելի գնահատում են կենդանի և շիտակ գործը»¹: Հակակրանքի պատճառներից էին նաև պատերազմում կառավարության պարտության քարոզները, թուրքերի հետ «սեպարատ» հաշտության պահանջը...

«Սոցիալիստ ռուս մեծամասնականները» գործում են «հօգուտ գերման զենքի հաջողության»՝ «Լեհինի և ընկ. ղեկավարությամբ», «աշխատում են» մեծ Ռուսաստանի կազմալուծման վրա»²: Ռամկավարական իշխանություններ ունեցող դաշնակից պետությունների հետ միասին Գերմանիայի և Թուրքիայի դեմ ռամկավարացած Ռուսաստանի պատերազմը ընկալում էր իբրև երկու քաղաքակրթությունների անգիջում պայքար. այն պետք է շարունակել մինչև ռամկավարությունը իշխի աշխարհում, այլապես կհաղթանակեն «գերմանական կարգերը և թուրքական մարդասպանությունը»: Չի կարելի թույլ տալ, որ «ազգերը ստրկանան գերմանական բռունցքին և չքանան թուրքի սրից»: Մյուս կողմի հաղթանակի դեպքում բոլորի համար կստեղծվի «համերաշխ ու խաղաղ հառաջադիմության հնարավորություն»: Բոլոր-

¹ «Հորիզոն», 1917, N 164:

² «Հորիզոն», 1917, N 144:

րի մեջ տեսնելով նաև հայերի փրկության հեռանկարը՝ խստորեն մերժում էր ոռու մեծամասնականների տեսակետներն ու գործունեությունը, որոնց արդյունքում «սուլթանների երկիրը համադասվում է Վաշինգտոնների երկրին և երկուսի պատերազմը հայտարարվում է «բուրժուական», «իմպերիալիստական», առանց հաշվի առնելու, թե մեկի «իմպերիալիզմը» ջնջում է ազգեր և քաղաքակրթություններ, մյուսինը պաշտպանում ազգերի իրավունքները»¹: «Վաշինգտոնների երկիրը» նրա համար «ազատ և աննախապաշար մեծ աշխարհ» էր:

Դեռևս Հոկտեմբերի նախօրյակին քննելով պատերազմի ու հեղափոխության խնդիրները՝ շատ որոշակիությամբ է դրսևորում իր տեսակետը. «Եթե Ռուսաստանը խառնվի՝ շատ ծանր կլինի մեր վիճակը թե Կովասում և թե Թյուրքիայում. դրա համար պետք է պատրաստ լինենք,- 1915-ի հունիսին է գրում,- մեր ապահովությունը Կովկասում պարտական ենք ոռու բանակին և ոռու պետության, եթե ներքին խռովությանց հետևանքով պետության <հմայքն> այստեղ նվազի, ինչպես 1905 թ., այն ժամանակ մեր հարևանները կբարձրանան մեզ վրա ամեն կողմից՝ Միջագետքից մինչև Կովկասյան շղթան և Բաթումից մինչև Ուրմիա: Անշուշտ Ռուսաստանը վերջը կզգմե ամենքին իր զարշապարի տակ, բայց շատ ենք վախենում, որ մենք այդ շփոթից դուրս գանք բոլորովին ուժասպառ և քաղաքականապես անարժեք»²: Իրատես հրապարակախոսի գուշակությունը, դժբախտաբար, իրականացավ: Կյանքի խոր ճանաչողությունը, ընկերային ուսմունքներին լավատեղյակությունը հնարավոր դարձրին պատմական մի ուրիշ իրողության կոահումը ևս: «Եթե, տերը մի արասցե, հեղափոխություն պայթի մեր երկրում,- նույն նամակում գրում է Ադրալյանը,-

սկզբում կնեղվի գերմանացիներից, բայց քիչ հետո այնպիսի թռիչք կառնի, որ կողողե Եվրոպան և փոքր Ասիան. ճիշտ Ֆրանսիական հեղափոխությունը, որի զավակն էր Նապոլեոնը, թագերի և թագավորությանց խորտակողն ու բաշխողը: Նույն թափը կունենա և ոռուսաց ընդվզումը, որովհետև մի ժողովուրդ, ինչպես Ռուսներն են, երբ ցանկացավ և վճեց հաղթել կհաղթե անպատճառ՝ ինչ գնով էլ լինի»: Ժողովրդի այս անընկճելի կամքը այն լավատեսության հիմքն էր, որով նա նայում էր հայոց դատի վաղվա օրվան: Ադրալյանի կանխագուշակումները իրականացան: Ռուսաստանի «վարիչները իմաստություն» չունեցան «ժողովրդի հետ գնալու», և նրան մղեցին... հեղափոխության: Անվերապահ վերաբերմունքը չէր խանգարում տեսնելու նրա «պետական կազմակերպության» արատները: Մի առիթով բողոքել է, թե «դիսցիպլինայի պակասը», որ այնպես նկատվում է, խանգարում է «վերևի» որոշումները մինչև «ներքև» հասցնել: «... Մեզանում կարծում են,- մի այլ տեղ գրում է նա,- թե պաշտոններությունն ավելի լավ գիտե, թե ինչ է պետք երկրին, ուստի ազգաբնակչության ձայնը խեղդված է և նկատի չի առնվում»¹: Խորապես ըմբռնելով այն տարբերությունը, որ կա միապետական Ռուսաստանի և պառլամենտական Անգլիայի միջև (վերջինիս հաջողությունները միջազգային կյանքում նույնպես նրա պետական կառուցվածքով էր բացատրում), այնուամենայնիվ համակրանքը Ռուսաստանի նկատմամբ միշտ ուղեկցվել է Անգլիայի հանդեպ տաժած հակակրանքով: Գաղտնիքը պարզ է. վերջին տասնամյակներում Անգլիան միշտ խոչընդոտել էր Ռուսաստանի ազդեցության տարածմանը հարավ-արևելքում:

Ռուսաստանում իշխանության փոփոխությունը արմատապես փոխեց իրադրությունը Անդրկովկասում. ոռու-

¹ «Հորիզոն», 1917, N 150:

² Բանբեր Հայաստանի արխիվների, 1989, N 2, էջ 90:

¹ Ն. Ադրալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 206:

սական բանակը թողեց երկրամասը: Ռուսաստանի հովանու տակ ինքնավար Հայաստանի տեսակետը սպանեց իրեն: Նոր իրադրությունը պայմանավորում է մոր վերաբերմունք Ռուսաստանի, թեկուզ և հեղափոխական Ռուսաստանի նկատմամբ: Դեռևս բալկանյան պատերազմի առիթով գրել էր. «Եվ քաշվում է Թյուրքերի իշխանությունն այդ երկրից (Բալկաններից.- Գ. Ա.) առանց որևէ հետք թողնելու, որ խոսեր մարդկային հանճարի, հնարամտության, արվեստի, իրավունքի, բարության և իմաստության մասին: Թյուրքիայի իշխանությունը հիմնված էր միմիայն գեների բիրտ ուժի վրա. նա չունեւ ոչ մի բարոյական հեղինակություն և չէր կարող ունենալ, որովհետև դարեր շարունակ նա սարսափը համարեց միայն շաղախը պետականությանն»¹: «Ջեների բիրտ ուժի վրա» հենվող այս անբարոյական կառավարությունը իր ոչ հոգևոր գոյությունը ավելի վատթար կերպով դրսևորում էր Արևմտյան Հայաստանում: Ուրեմն՝ Ադրբայջանն ինչու պիտի բաժաներ գրքային հեղափոխականների ոգևորությունն այն բանի վերաբերյալ, իբրև թե այս կառավարությունը միջնորդ ու հենարան պիտի դառնար արևելյան ժողովուրդների՝ մինչև այդ չտեսնված հոգևոր մի գարթոնքի համար: «Ընկերային գրականություններին» լավատեղյակ, ազգերի ինքնորոշման իրավունքը իբրև գործելակերպ ընդունած հրապարակախոսը ինքնուրույն մի հանրապետության դեմ թեկուզև հեղափոխական պետության միջամտությունը ի՞նչպես պետք է ընդուներ... Իրավունք չունե՞ր ասելու. «Հարգում եմ Ռուսաստանը, եթե չի անցնում Կովկասը»:

Իրականացավ հեռատես հրապարակախոսի մի կանխազգացում ևս. մեծամասնականների գործունեությունը «սպառնում է երկրի մոտիկ ապագան թաղել

¹Նույն տեղում, էջ 168:

ազգամիջյան և քաղաքացիական ընդհանրումների շեղակույտի տակ»¹:

Ռուսաստանում ռամկավարության հաղթանակը մոր հեռանկարներ է բացում ոչ միայն Կովկասի, այլև ամբողջ աշխարհի համար (ակամա հիշում ես Թումանյանի հայտնի ձևակերպումը՝ Ռուսաստանը որքան ազատ, այնքան լավ թե՛ մեզ համար, թե՛ աշխարհի): Ռուսական բանակը, որ «չափել է Եվրոպայի երեսը» իբրև «ազատության դահիճ», այժմ կարող է հանդես գալ իբրև «փրկիչ»: Պատերազմը, որի մի կողմում հետամնացության ու բռնությունների մեծ վարպետ Թուրքիան էր, Ադրբայջանին ներկայանում էր իբրև ազատության «արշավանք»: Ահա թե ինչու անհանգստությամբ էր ընդունում «անջատ» հաշտության շուրջ խոսակցությունները: Դա անընդունելի է հենց Ռուսաստանի շահերի տեսանկյունից. այս դեպքում Ռուսաստանին սպառնում է Գերմանիայի գաղութը կամ այսօրվա դաշնակիցների թշնամին դառնալու վտանգը: Նրան ամենից շատ մտահոգում էր, իհարկե, իր ժողովրդի հեռանկարը: Անիմաստ խոսակցություն է համարում «անջատ» համաձայնագիրը, «մանր ազգերի» ինքնորոշման հեռանկարի մասին դատողությունները, որովհետև իրականում դա կլինի «նրանց ազատության և իրավանց ամենագոեհիկ ոտնահարում»²: Պատերազմը, ճիշտ է, ողբերգություն է, բայց այն պետք է շարունակել, այլապես զորքերի մեջ պատերազմի դեմ քարոզը շարունակելու դեպքում գերմանացիները կվերցնեն Պետրոգրադը, «թյուրք և քյուրդ հյուր կգան Թիֆլիս մեր այստեղի ռազմատյացներին»....

Կարմիր Ռուսաստանի նկատմամբ Ադրբայջանի վերաբերմունքը խտացնում էր առաջին հանրապետության քաղաքականությունը: Այսօր, իհարկե, դժվար է մեղադ-

¹«Հորիզոն», 1917, N 141:

²«Հորիզոն», 1917, N 128:

րել պետական այրերին, ովքեր չէին ուզում հավատալ խորհրդային իշխանության տևականության, չէ՞ որ ժամանակին շատերը չէին հավատում դրան: Այնուամենայնիվ դասը ուսանելի է. ձգտել Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների՝ անկախ նրա գույնից...

Հանգամանքների բերումով արտասահման տեղափոխված հրապարակախոսը ուշի-ուշով հետևում էր Հայաստանում կատարվող իրադարձություններին, ուրախանում տնտեսական ու մշակութային հաջողություններով, տազնապում քաղաքական հավաճանքների, չդադարող բռնությունների, կոպիտ կամայականությունների համար: «Ամեն լավ բան, որ կատարվում է ինքնավար Հայաստանի մեջ, խանդավառում էր նրան. ոչ թե իրավակարգի, այլ Հայաստանի վերելքն էր տեսնում այդ ամենի մեջ»,- զինակիցներից մեկի մասին գրած այս տողերը ինքնաբերորեն են նաև: «Ոչ թե իրավակարգի...» իրավակարգը, «ստալինյան սոցիալիզմը» չէր տեղավորվում իր ուսումնասիրած սոցիալ-դեմոկրատական ուսմունքի շրջանակներում: Այս իմաստով շատ բնորոշ է «Պատգամ» հոդվածը, որ, իսկապես, պատգամախոսի կոահում է:

Ընդօրինակելի մի քաջությամբ դեմ գնալով նրանց, ովքեր սոցիալիզմը չարիք էին համարում հայ ժողովրդի համար, գրում է. «Ոչ ոք կարող է առաջուց ասել, թե համայնավար գաղափարների և կենսաձևի յուրացումը ինքնին մահացում ու չարիք է հայ կյանքի համար: Հավանորեն այդպես էին մտածում հեթանոս հայերը, երբ Տրդատը բռնությամբ մխրճում էր հազարներ Եփրատի ջրերի մեջ մկրտելու: Բայց գիտենք, թե նոր կյանքի յուրացումով նոր ազգայնության հիմքերը դրվեցան, որ մեզ պահեցին անկորուստ մինչև այսօր»¹: Համայնավար

գաղափարների ու կենսաձևի այսպիսի ըմբռնումը, մասն գնահատականը, պատմական խիզախ զուգահեռը բացահայտում են հրապարակախոսի մտքի թոփչքն ու մտածողության լայնությունը: Հայ ժողովուրդը միշտ էլ ընդառաջ է գնացել դարի առաջադիմական ոգուն, հաճախ առաջինն է նետվել փրկության հորիզոն խոստացող փոթորիկների մեջ: Հոգ չէ, որ հաճախ էլ առաջինն է կոտրել իր թևերը փոթորիկներում. չէ՞ որ դա փրկարար է եղել ուրիշների, երբեմն էլ՝ իր համար: Մեր կենսունակության ու հարատևության գաղտնիքներից է սա, և Աղբալյանը սթափ մտքով հիշեցնում է հազարամյա դասը: «Նոր հորիզոններ բացվում են մարդկության առջև: Պետք է, որ հայը անմաս չմնա այս անչափելի հորիզոնների առթած թոփչքներից, և հնադարյան հոգին մակարդե նոր ժամանակների շիճուկով»: Նոր ժամանակների թոփչքներից մեկը, թերևս մեծագույնը, «համայնավար գաղափարն» էր: Այս կրթված, Եվրոպայի հետ անընդհատ շփումների մեջ գտնվող մարդը չէր կարող չիմանալ, որ առաջադեմ մարդկությունը ծերացող աշխարհի վերածնունդը կապում էր, ճիշտ է՝ թաքուն ու չթաքցված ներքին տազնապներով, սոցիալիզմի հաղթանակի հետ: Նա չէր կարող չիմանալ նաև, որ դարակազմի հայ մտավորականության մեծ թվով ներկայացուցիչներ իրենց ժողովրդի փրկության հեռանկարը դիտարկում էին համայնավարական գաղափարների լույսի ներքո: Ինքը խորապես համոզված էր, որ հայերը «ընկերավար գաղափարները» նույնպես կդարձնեն գոյության ու հարատևության պայման, ինչպես արել են քրիստոնեության հետ: Բայց ցավով տեսնում էր, որ մեր երկրում կատարվողը հեռու է սոցիալիզմից, որ համայնավար գաղափարների շահատակությունը յուրատեսակ ծխածածկույթ է բռնապետական իրավակարգը քողարկելու համար: Ուստի տազնապով արձանագրում էր. «Հայոց ազգը կմարսի և կազգայնացնե նաև նոր ժամա-

¹ «Նաիրի», Բեյրութ, 1963:

ճակի ոգին ու գաղափարները, ինչպես երբեմնի քրիստոնեությունը, կմարսի՝ եթե կենդանի մնա: Կտրված գլուխները չեն ստեղծագործում. Դեր-Ջորն օրինակ...»:

1937-ին է գրել այս հոդվածը: Հայտնի է՝ հետագա տարիները չփոխեցին իրավիճակը: Սպիտակ ու կարմիր ջարդերը գիրկընդխառն ուղեկցում են մեր ժողովրդին՝ դժբախտաբար հաստատելով նրա մի ուրիշ տարանկույսը. «Ասում են հայը շատ բախտավոր է ռուսի թևի տակ... Ուրիշներ ասում են, թե հայերը մեծ բախտի տիրացան քաշվելով արտասահման, ուր ազատ են ջարդի վտանգից...»¹: «Ռուսի թևը», փոքրիկ ճշտում մտցնենք՝ ստալինյան սոցիալիզմի թևը ոչ միայն չփրկեց նոր ջարդերից, այլև հովանավորեց 20-րդ դարավերջի մեծագույն ամոթը՝ սումգայիթն ու բաքուն: Ուրեմն՝ ի՞նչ, իսկապե՞ս բախտավորություն է «արտասահման քաշվելը»: Հզոր Սփյուռքը այսօր նույնքան անհրաժեշտ է մեզ, որքան և ազատ ու հզոր Հայրենիքը մեզ ու Սփյուռքին: Աղբայլանն ինքը այն համոզմանն էր, որ ամուր կառչած պետք է մնալ Հայրենիքին, աննահանջ մաքառել նրա անկախության համար, որ Սփյուռքի գոյության հենարանը Հայրենիքն է, ուր, ի վերջո, պետք է համախմբվի աշխարհով մեկ սփռված հայությունը:

Ահա թե ինչու նրա հոդվածներից, էլույթներից, ճաներից անբաժան է բռնապետական կապանքներում տառապող Հայրենիքի ու ժողովրդի ցավը: Մինչդեռ որքան բան կարող էր տալ «ազատ, խաղաղ և ապահով Հայաստանը»: 1925 թվի էլույթներից մեկում, ավելի ստույգ՝ նոր տարվա առիթով ունեցած էլույթում, ուր առաջ է քաշում արտասահմանի հայությունը հայ պահելու նպատակով «կրթական գործ», «վարժապետաց» և «հրատարակչություն» կազմակերպելու ծրագիր, խոսքն ամփոփում է այսպես. «Մենք մեկ ցանկությամբ

ալ կրավականանայինք - ազատ, խաղաղ և ապահով Հայաստանով մը, այն ատեն ամեն ինչ կիրագործվեր»¹:

Բայց, ավաղ, հեռավոր հույս անգամ չկար մնան մի Հայաստանի գոյության համար, որն այնպես սատար կարող էր լինել օգնության կարոտ սփյուռքահայությանը:

Աղբայլանի սթափ միտքը հեռավոր հույս անգամ չէր կապում հայերի վիճակի բարելավման ուղղությամբ թուրքական կառավարության ձեռնարկումների հետ: Հայոց պատմության դասերը շատ էին... «Թյուրքիայի նորագույն պատմությունը պարզ ցույց է տալիս, որ ամեն անգամ, երբ երկիրը վտանգի մեջ է եղել՝ օտար միջամտությունը կանխելու համար հրատարակել է որևէ թուղթ, բարենորոգմանց ծրագիր, ընտրել է քննիչ հանձնաժողովներ և դրանով հանգստացրել մասամբ լուսավոր մարդկության զայրույթը: Այդպես է և այժմ»²: Եվրոպական պետությունների միջամտությունը կանխելու համար Թուրքիան հայերի վիճակը լավացնելու խոստումներ է տալիս՝ իրականում վարելով մի քաղաքականություն, որի նպատակը Հայաստանը հայերից ազատելն է: «Արդեն ապացուցված և հայտնի ճշմարտություն է, որ հայկական ջարդերի և հալածանքի կազմակերպողն ու վերին ղեկավարը թուրք կառավարությունն է»³: Անշուշտ, իրավացի էր հրապարակախոսը. 1878 թ. Սան - Ստեֆանոյի դաշնագրում հայկական հարցի արձանագրումը, թեկուզ և 16-րդի փոխարեն «դեմքը շրջած» 61-րդ հոդվածի ձևով, մի քայլ առաջ էր մղում խնդիրը՝ հանելով այն միջազգային ասպարեզ, որոշակի պարտականություններ դնելով քաղաքակիրթ մեծ պետությունների վրա: Թուրքիան 61-րդ հոդվածից ազատվելու երկու ճա-

¹Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 360:

²Նույն տեղում, էջ 29:

³Նույն տեղում, էջ 120:

¹Ն. Աղբայլան, Ամբողջական երկեր հ. III, էջ 413:

նապարհ ունե՛ր՝ կա՛մ «լի ու լի» բավարարել նրա պահանջները, դրանով իսկ մեծ տերություններին գրկելով իր գործերին միջամտելու հնարավորությունից, կա՛մ ազատվել քրիստոնյա ժողովուրդներից: «Թուրքիան ընտրեց երկրորդ ճանապարհը և Սուլթան-Համիդ 2-ի երկարատև թագավորության ընթացքում ամեն կերպ հետամուտ եղավ քրիստոնյա տարրի բնաջնջման... Մակեդոնիայում և Հայաստանում»¹: Նոր թուրքերը թեև նախկին «շնական» ձևով բացահայտ հակահայկական քաղաքականություն չեն վարում, բայց ևս այնչափ չեն էլ մտահոգվում «հայ տարրի բարեկեցությամբ»...

1915 թվականի մասին քիչ է գրել, զարմանալիորեն քիչ: Զբաղված էր կամավորական գործի կազմակերպմամբ, թե կատարվածի անսպասելիությունը իր ծանր հետևանքներով հուսահատության էր հասցրել: Ե՛վ մեկը, և՛ մյուսը:

Բայց թույլ չտվեց, որ հուսահատությունը նվաճի իրեն, լավ էր հասկանում հասարակության համար դրա հետևանքները, և այն մի քանի ելույթները, որ ունեցավ, ուղղված էին հենց համանման ընկճող տրամադրությունների դեմ: «Սրտապնդում անցյալից»,- այսպես է վերնագրված հոդվածներից մեկը, ուր պատմական զուգահեռները կոչված են ժամանակակիցներին համոզելու, որ պատմական խաչմերուկներում մեզ ուղեկցող համանման աղետները միշտ հաղթահարած ժողովուրդը չի ընկճվի նաև այժմ: Աղբայլան հրապարակախոսը աշխատում է հիմնավորել իր լավատեսությունը. աշխարհը ազատվելու է «վերջապես զարհուրելի մղձավանջից», մոտենում է Թուրքիայի վերջը, հարկավոր է միայն, որ «հոշոտված և արյունլվա» ժողովուրդը չկորցնի դարերից ժառանգած «անսահման փորձառությունը, համբերատար տոկունությունը և պայծառ հնարավորությունները»¹:

րը»¹: «Թուրք ու թաթար ցեղերի նահանջի» շրջանում վհատվելը «ամոթ կլինեք»...

Խորհրդահայ պատմագրությունը ժխտական վերաբերմունք է դրսևորել եվրոպական պետությունների հետ հույսեր կապելու միտումի հանդեպ՝ հարցի լուծման միակ ուղին տեսնելով բանվորական շարժման հաղթանակի մեջ: Այսօր հայտնի են այդ ուղու աղետաբեր հետևանքները... Ո՞րն էր քրիստոնյա մեծ տերություններին դիմելու անհրաժեշտությունը:

Պատմության տրամաբանությունը բերում է այն համոզման, որ թուրքական կառավարությունը կամովին ոչ մի բարենորոգում չի կատարի: «Ցեղագրական ամբողջությամբ», «միապաղաղ թյուրք ազգաբնակչությամբ» Թուրքիա ունենալու հեռանկարից բացի մի ուրիշ հանգամանք ևս, որը անհնարին է դարձնելու քրիստոնյա բնակչության համար մարդավայել կյանքի պայմանների ստեղծումը: Տնտեսական կյանքում, լուսավորության ու մշակույթի ոլորտում հայերը գերազանցում են թուրքերին: Թուրքական կառավարությունը լուսավորության գործի համար հայերից հարկ է գանձում՝ ծախսելով այն թուրքական դպրոցների համար: Հայերը հարկադրված են իրենց միջոցներով պահել ազգային դպրոցները: Ավելացրեք սրան նաև այն արգելքները, որ կառավարությունը անընդհատ հարուցում է հայոց դպրոցական գործի առաջ: Եվ, այնուամենայնիվ, հայերը երեք անգամ ավելի դպրոց ունեն, քան թուրքերը: «...Թուրք հայրենասերը նկատում է,- ընդհանրացնում է Աղբայլանը,- որ անհավատ «գյավոր» հայերը ամեն տեղ գերազանցում են թուրքին: Տնտեսության մեջ նա գերակշռում էր իր հարստությամբ ու ձեռնարկներով, ուսման մեջ նա գերակշռում է իր դպրոցներով և ընդ-

¹ «Հորիզոն», 1912, N 228:

¹ «Հորիզոն», 1917, N 39:

2. Թուրքիայի վրա հաստատվում է միջազգային հսկողություն. հնարավոր է ենթադրել, որ հայկական մահաճգնեռում բարենորոգումների հսկողությունը կհանձնարարվի Ռուսաստանին:

3. Հայերին տրվում է «ինքնօրինություն», կրկին Ռուսաստանի հովանավորության ներքո:

Պատերազմի ընթացքը հաստատում էր, որ, իսկապես, Թուրքիայի «Ժամը հնչել է արդեն»: Ոչ առանց մեծ տերությունների գաղտնի խրախույսի ու օժանդակության Բայկանի ժողովուրդները մեկը մյուսին հաջորդող հաղթանակներ են տանում թուրքերի դեմ: Աղբալյանի համար սա նաև քաղաքակրթության հաղթանակն է, որը հույսի դուռ է բացում հայերի համար ևս:

Այս իրավիճակն ու հնարավոր ընթացքն էլ թելադրում են որոշակի գործելակերպ: Հարկավոր է «ազգային դիմում ուղղել Ռուսաց պետության»՝ սպասվելիք խորհրդակցություններում հայոց խնդիրը արծարծելու խնդրանքով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նման մի խնդրանքով արդեն դիմել էր ռուսաց կայսեր: Համազգային դիմումը կհամոզի ռուսաց կառավարությանը, շարունակում է Աղբալյանը, որ «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիմումը ոչ միայն հայրապետական զգացումի հետևանք է, այլև արտահայտում է ռուսահայ բովանդակ ժողովրդի սրտագին ցանկությունը»¹: Ծրագրում չէր անտեսվում «Բեռլինի դաշնագիրը ստորագրող մյուս մեծ պետությունների» դերը. հաշվի առնելով հնարավոր հակամարտությունները՝ մի դիմում էլ նրանց պետք է հղել («թույլտվություն առնելով մեր կառավարությունից») Ռուսաստանին աջակցելու խնդրանքով:

Աղբալյանին թվում էր, թե այս ունայ սպառնալիքը կհարկադրի թուրքական կառավարությանը ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կանխեն եվրոպական միջամ-

¹ «Հորիզոն», 1912, N 260:

տությունը նրա ներքին գործերին ասիական հատվածում: Դրա համար հարկավոր կլինի վերակառուցել «անկարգ ու անիրավ» վարչակարգը, «ախտավոր» մի վարչակարգ, որ ծանրանում է ոչ միայն քրիստոնյաների, այլև մյուս ժողովուրդների վրա ևս: Այս ժողովուրդների հետամնացության վրա է բարձրանում Թուրքիայի ամբողջականությունը: Երբ նրանք ինքնագիտակցության գան, Թուրքիան իր դեմ կունենա «դժգոհների մի նոր բանակ», «ըմբոստների», «հեղափոխականների», «ապստամբների» նոր բազմություններ»: Այս տեսանկյունից էլ քննում է արաբների շարժումը Սիրիայում և հաջողություն գուշակում. չէ՞ որ նրանց հարևանությամբ քուրդ հրոսակներ չեն ապրում, Բեյրութի դեմ կանգնած են ֆրանսիական նավերը, որոնց «ուղարկող կառավարությունը վաղեմի պաշտպանն ու հովանավորն է այդ վայրերում ապրող ժողովուրդների»: Ուշագրավ է նաև քրդերի նկատմամբ վերաբերմունքը: Միանգամայն հասկանալի է այն սևեռուն հետաքրքրությունը, որ դրսևորել է այս հարևան ժողովրդի նկատմամբ: Ծարունակելով իր նախորդների ավանդույթը՝ բազմաթիվ հողավածներում բացահայտել է քրդերի ձեռքով կառավարության հայահալած քաղաքականությունը: «Անընդունակ լինելով ամեն ինչ նորից սկսելու՝ նա (քուրդը. - Գ. Ա.) նստում է հայերի մշակած հողերի վրա, մտնում է նրա պատրաստի տունը, խլում է նրա դրամն ու կենդանիները»...¹: Տագնապով արձանագրում է, որ պատմական Հայաստանը աստիճանաբար դառնում է Քյուրդստան: Համոզված լինելով, որ կառավարության կողմից հրահրվող ու հովանավորվող թշնամանքը տևական լինել չի կարող և որ «բարեկարգ վարչության տակ քուրդ ու հայ դրությամբ կարող են համերաշխ ապրել»²,

¹ «Հորիզոն», 1912, N 261:

² «Հորիզոն», 1913, N 118: 18-7

ուշադրությամբ արձագանքում է քրդերի շրջանում տեղի ունեցող իրադարձություններին: «Քրդերն ու հայերը» առաջնորդողում հենվելով ուս լրագրողի փաստերին՝ մանրակրկիտ քննության է ենթարկում Բալկանյան պատերազմի հետևանքով ծնունդ առած քրդական խմորումները, շարժիչ ուժերը, հայ-քրդական, քուրդ-թրքական հարաբերությունները: Հայերի այս վաղեմի հարևան ախոյանները ևս առաջադրում են ինքնավարության պահանջ: Թուրքական կառավարության լծի տակ հեծող բոլոր ժողովուրդների համար, անկախ կրոնական ու ազգային պատկանելությունից, ինքնավարություն պահանջող Ադրբայջանը զգուշանում է. ի՞նչ ուղղվածություն ունի քրդական շարժումը, հայկական պահանջներին համընթաց է, թե՞ դեմընթաց: Եթե քրդերը նպատակ ունեն օրինականության ուժ հաղորդել գրաված հայկական հողերում իրենց ավատապետական նկրտումներին, ապա հայերը նրանց հետ համագործակցել չեն կարող: Ադրբայջանը իր համար այնքան մերժելի կառավարությանը խորհուրդ է տալիս չհարգել քրդերի ինքնավարության պահանջը բավականին հետաքրքիր մի հիմնավորմամբ. երկարատև կռիվներով հաջողվել է ստեղծել «կենտրոնացած կառավարություն», թեկուզ և «շատ անկատար և հոռի», որը այդ վիճակով անգամ գերադասելի է ցանկացած ավատականությունից: Ցանկացած երկրում, Թուրքիայում առավել ևս, անիշխանությունը պայմաններ է ստեղծում անօրինականությունների համար: Կենտրոնական իշխանության թուլությունը միշտ էլ ուղեկցվել է հայկական ջարդերով: Սա է պատճառը, որ հրապարակախոսը հարկադրված էր լինում ընտրելու չարիքների փոքրագույնը:

Բայց հնարավոր է, որ հայերի նման քրդերն էլ ինքնավարություն պահանջում են բոլոր ճնշված ժողովուրդների համար: Այս դեպքում երկու դրկից ժողովուրդների ձգտումների միջև հակասություն չկա, և հրա-

պարակախոսը ողջունում է նրանց հետ համագործակցությունը: Այս առիթով նա մի անգամ էլ է սթափության կոչում կառավարությանը՝ հրաժարվելու հպատակներից և իրար հակադրելու վտանգավոր քաղաքականությունից, քանի դեռ իր դեմ չի հանել նույն այդ հպատակների համերաշխ ըմբոստությունը:

Ուշադրության արժանի մի խնդիր ևս. Ադրբայջանը զգոնության կոչ է ուղղում հայերին՝ թուրքական կառավարության ձեռքին գեռք չդառնալ քրդերի դեմ: Հատուկ նշելով, որ քրդական երեք նշանավոր ցեղեր, թուրքական կառավարության դեմ ատելության ընդհանրություն ունենալով հանդերձ, թշնամաբար են վերաբերում իրար, իր հայրենակիցներին պատվիրում է չօգնել «քրդական ցեղերի այս կամ այն խմբակցության իրար դեմ»: Խորապես հավատալով, որ «Հայության ապագան քուրդ-հայկական համերաշխության մեջ է», իրականության սթափ գնահատությունը նրան հիմքեր չի տալիս ոգևորվելու այդ հեռանկարով. քրդերի մեջ դեռևս ուժեղ է «ցեղային զգացումը», որն այնպես հմտորեն օգտագործում է ինտրիգների սովոր կառավարությունը: Քրդական հզոր ցեղերի ընդհարումները, որ շատ ավելի հավանական են, քան նրանց համերաշխ պայքարը կառավարության դեմ հանուն իրենց ինքնօրինության, կարող են հայերի համար նոր աղետներ ծնել. «քրդական մանր ցեղերը ժամանակը հասած կհամարեն հայերին թալանելու»: Ահա թե ինչու «միշտ բարեկամ մնալով քրդերին՝ պետք է պատրաստ լինել դիմագրավելու փորձության»¹:

Հարցի լուծումը ենթադրում էր, որ հայկական տարրը ամուր կառչած պետք է մնա իր ավանդական հողակտորին, որքան էլ որ ծանր լինեն մնալու պայմանները: Միևնույն դարասկզբին նույն թափով շարունակվում էր հայ հրապարակախոսությանն այնքան հուզած գաղ-

¹ «Հորիզոն», 1913, N 119:

թականության չարիքը, մասնավորապես մեծ էր Ամերիկայի գայթակղությունը: «Արտագաղթը դեպի Ամերիկա» առաջնորդողում նա բացահայտում է այդ երևույթի տնտեսական, սոցիալ-քաղաքական դրդապատճառները: Առաջին լուրջ պատճառը սակավահողությունն է, գյուղատնտեսությունն վարելու ցածր կուլտուրան: Մյուս դրդապատճառը, ինչպես ինքը կասեր, «հողի» վարչությունն է: «Տգետ պաշտոնյաների կամայականություններն ու կոպտությունները մի կողմից, զանազան բեկերի ոտնձգությունները երկրորդ կողմից և գյուղական կուլակների դավերը երրորդ կողմից» հարկադրում են հայ գյուղացուն լքել ծննդավայրը և երջանկություն որոնել օտար Ամերիկաներում: Սթափ և իրատես, տնտեսական գործոնների վիթխարի մշանակությունն իմացող Ադրալյանը առաջադրում է երևույթի առաջն առնելու մի ծրագիր, ուր տեղ չունեն անիմաստ հորդորները: Հարկավոր է վերացնել ծնող պատճառները, այսինքն՝ «ընդլայնել գյուղացու հողը, ինտենսիվ դարձնել նրա տնտեսությունը, ինքնօգնության ընկերությունների միջոցով ազատել վաշխառուների ... ճիրաններից... զարգացնել նրա իրավազգացողությունը»...¹:

Այնուհետև բացում է ամերիկյան արդյունաբերության այն պակասությունները, որոնք կործանարար հետևանք կունենան հայ գյուղացու համար: Ութժամյա լարված աշխատանքը, որ անսովոր գյուղացուն մի քանի տարում կհանի շարքից՝ անդամալուծ դարձնելով (օտար աշխատավորներին սովորաբար աշխատանք են առաջադրում կյանքի համար շատ վտանգավոր վայրերում՝ մահվան դեպքում նրա ընտանիքին «գիշումներ» չանելու նպատակով) լեզվի չիմացությունը, անսովոր կենցաղը, անձանոթ միջավայրը, կյանքի թանկությունը կլանում են բարձր թվացող աշխատավարձի մի մասը:

¹ «Հորիզոն» 1913, N 71:

Ահա պակասություններ, որոնք, Ադրալյանի կարծիքով, պետք է լուսավորեն գյուղական երիտասարդության խավար միտքը՝ «տնաքանդ գաղթականությունից» հետ պահելու համար: Կյանքում գործող օբյեկտիվ օրենքների դերն իմացող Ադրալյանը, այնուամենայնիվ, չի բացառում քարոզչության դերը և կոչ է անում գյուղական մտավորականությանը գործի էությունը բացատրել գյուղացիներին՝ դասախոսությունների, մասնավոր զրույցների, ընթերցանության և այլ միջոցներով:

Անցյալ դարի վերջին թուրքական կառավարությունը ձեռնարկումներ է անում բարեկարգելու իր վարչությունը: Դրանց նպատակը ոչ այնքան «մահմեդական տարրը» քրիստոնյաների մշակութային մակարդակին մոտեցնելու ճիգն էր, որքան Եվրոպային «մի կերպ գոհացում» տալը, որպեսզի «դուրս չմղվի նրանց շրջանից»: Սրանով է բացատրվում «Թանգիմաթի» լույս աշխարհ գալը, այն հրովարտակի, որով սուլթանը իր երկրի բոլոր հպատակներին, անկախ ազգությունից ու կրոնական պատկանելությունից, գույքի և պատվի ապահովություն էր խոստանում: Եվրոպական շրջանից դուրս չմղվելու խնդիրը միշտ էլ ծառայած է Թուրքիայի առաջ՝ միշտ օրակարգի մեջ պահելով քաղաքակիրթ քայլերի դիմելու անհրաժեշտությունը: Հրապարակախոսը, որ համոզված էր, թե «անմտություն է թյուրք կառավարությունից որևէ արդարություն հուսալը», հոգու խորքում կարծես գաղտնի մի հույս է փայփայում, թե, ահա, ծանր կացությունը թերևս հարկադրի երկիրը կառավարողներին բարենորոգչական որոշ քայլեր կատարելու: Այն տպավորությունն էս ստանում, թե նա հուսահատ մի փորձ է անում հուշել կառավարությանը, առանց արյուն թափելու, ձեռնարկել այդ քայլերը, այլապես «ասիական անշարժության և անիրավության մեջ համառող Թյուրքիայի» համար վրա կհասնի հատուցման արդար ժամը...

Բացահայտելով թուրքական կառավարության հա-
յաքինը քաղաքականությունը, բացելով այդ քաղաքակա-
նության ներքին հանգույցները, գծելով շարդերի սարա-
փելի պատկերներ՝ Աղբալյանը երբեք ազգային թշնա-
մության և ատելության տուրք չտվեց: «Ընկերային գրա-
կանություններին» լավատեղյակությունը նրան հետո էր
պահում ինչպես ազգային նեղմիտ սնապարծությունից,
այնպես էլ ազգային խտրականության ամոթալի գաղա-
փարից: Նա համոզված էր՝ թուրք ու քուրդ խուժանի կա-
տարած բարբարոսությունները հետևանք են «ախտա-
վոր» վարչական այն պայմանների, որի մեջ ապրում են
նրանք: Հարկավոր է ստեղծել «արդար» ու «լուսավոր
վարչաձևեր», և նրանք, որ «այսօր ոսոխ են», «վաղը
պիտի դառնան բարի հարևան»: Նա որոշակի սահմա-
նագիծ է անցկացնում երկրագործ թուրք ու քուրդ բնակ-
չության և նույն ազգերի «վաչկատուն» ներկայացուցիչ-
ների միջև: Երկրագործ թուրքն ու քուրդը հայի համեմա-
տությամբ կառավարության աչքում ունեն «որոշ առա-
վելություններ», բայց թալանն ու կողոպուտը օրենքի
աստիճանի են բարձրացված մի երկրում, որտեղ առա-
ջիններն էլ հաճախ հայերի ճակատագրին են արժանա-
նում: «Կառավարությունը, հարկահանները և քուրդ
վաչկատուն և ավազակ տարրերը նրանց հարստահա-
րում են (թուրք և քուրդ երկրագործներին. - Գ. Ա.) շատ
ավելի իբր անպաշտպան գյուղացու, քան իբր այս կամ
այն ցեղին պատկանող մարդկանց: Հասկանալի է, որ
հայերը կրում են համեմատաբար ծանր ճնշումներ, բայց
թշվառության կողմից նրանց դասակից են և երկրագործ
թուրք ու քուրդը»¹: Հայ և մահմեդական տարրի փոխ-
հարաբերությունների հարցը քննելիս հատուկ ընդգծում
է, որ խառը բնակչություն ունեցող գյուղերում կողք-կող-
քի ապրելը, նույն երկրագործությամբ զբաղվելը, կյանքի

¹Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. III, էջ 101:

«նույն վիճակը և նույն պարապմունքը» ստեղծում են
համաման բարքեր: Ահա թե ինչու «երկրագործ թուրքն
ու քուրդը շատ ավելի տանելի են և շատ ավելի հան-
դարտաբարո, քան վաչկատուն և ավազակ քուրդերը»:
Առարկություն չի վերցնում Աղբալյանի մի ուրիշ եզրա-
կացություն ևս. «Թյուրք նստակյաց ժողովուրդը խաղաղ
տարր է և միշտ էլ խաղաղ հարևան կմնա, եթե նրան
վերևից չգրգռեն»: Նույնիսկ «ընչաքաղցության ու ար-
յան ծարավի» տարրերը «տեղները հանգիստ կնստեն,
եթե վերևից հարկ եղած ազդեցություններ լինին»¹: Հե-
տագա բոլոր իրադարձությունները, ներառյալ այսօրվա-
նը, հաստատում են Աղբալյանի եզրակացությունները:
«Թյուրքիան չուզեց հասկանալ,- ցավով ընդգծում է Աղ-
բալյանը,- որ պետությունը հպատակների անդոր-
րության համար է և հպատակների հետ հաշտ մնալու
մեջն է քաղաքական իմաստությունը»²: Այսպիսի մի
պետության դրոշի ներքո բոլորը կարող են ապրել հաշտ
ու համերաշխ: Անվանի հրապարակախոսի քաղաքա-
կան հայացքներում այս կետը շատ կարևոր տեղ է
բռնում. «արդար» և «լուսավոր» վարչաձևերի պայման-
ներում նա հայերի և մահմեդականների համար մախա-
տեսում էր բոլոր ասպարեզներում միանգամայն իրա-
վահավասար իրավունքներ: Բնորոշ է այս առումով,
«Քաղաքական տհասություն» հողվածը, ուր ոչնչացնող
քննադատության է ենթարկում Կիլիկիայի ինքնավա-
րության պահանջով հանդես եկող մի կոմիտեի «հուշա-
գիրը»: Մանրամասն վերլուծելով կոմիտեի առաջարկած
այն «հիմունքները», որոնցով պետք է լուծվի Կիլիկիայի
հարցը, Աղբալյանը մտան «ինքնօրինության ծրագրով»
կազմված երկիրը հեզմանքով անվանում է «հայացրած
Թյուրքիա»: «Ծրագիրը կազմողները գործադրել են շատ

¹Նույն տեղում, էջ 120:

²Նույն տեղում, էջ 101:

պարզ մի մեթոդ. հայերին են տվել այն բոլոր առավելությունները, ինչ-որ այսօր ունեն թյուրքերը և ծրագրել են մի կառավարություն, որ թյուրքականի ընդօրինակությունն է, որով և նույնքան քաղաքական հասունություն են հանդես բերում, որքան թյուրքերի վարիչները»¹: Չբավարարվելով այս ընդհանուր դիտողությամբ, ավելի է մանրամասնում անհայտ կոմիտեի ծրագիրը՝ բացելով նման մոտեցման թերությունները: Այս հողվածի ամբողջ ներքին պատճառը, բացահայտ գայրույթը ուղղված է այլալեզու և այլակրոն ժողովուրդների «նույնիրավության» սկզբունքը խախտելու դեմ: Ահա թե ինչու Բալկանյան պատերազմի ժամանակ թուրքերից ազատագրված մի վայրում նոր վարչություն ստեղծելու մասին գրելիս հատուկ շեշտում է՝ «կատարվում են վարիչ մարմինների ընտրություններ առանց ցեղերի խտրության»²:

Դեռևս պատերազմի թեժ տարիներին գրում էր, թե այսօր իրար չհանդուրժող թշնամիները վաղը դառնալու են համագործակցող հարևաններ:

Միանգամայն հասկանալի է, թե ինչու նրան այդքան շատ են հուզել կովկասյան ժողովուրդների փոխհարաբերությունները: Կովկասը այնտեղ բնակվող բոլոր ժողովուրդների տունն է հավասարապես, այդ գաղափարի իրականացումը կապում է ուսման վարչության հաղթանակի հետ: Ահա այս դիրքերից էլ հետևողական քննադատության է ենթարկում վրաց սոցիալ-դեմոկրատներին, որոնք քողարկվելով «միջազգային լոզունգներով»՝ միշտ հետապնդել են սոսկ ազգային նպատակներ, այդ ճանապարհին դաշինք կնքելով «ամեն կարգի ուժերի հետ, առանց նայելու նրանց որակին՝ ընկերվարական տեսակետով»: Նպատակը մեկն է եղել՝ նման

միջոցներով տարածքի «քաղաքական կյանքի ղեկավարությունը կենտրոնացնել իրենց ձեռքում»: Վրացիներն առիթներ շատ էին տվել նման եզրակացության համար: Հիշենք հայկական կամավորական շարժման նկատմամբ նրանց վերաբերմունքը: Մյուսը գյուղացիական համագումարում նրանց բռնած դիրքն էր: Սոցիալ-դեմոկրատ Աղբալյանը հույս ուներ, թե երեք ժողովուրդների ամենամեծ խավերի այդ հավաքը կանցնի «գերազանցապես դասակարգային» սկզբունքի դրոշի տակ, որը հնարավորություն կտար Անդրկովկասի «այլացեղ և այլաբարբառ հողագործ դասի» կարիքներն ու տենչերը մղել առաջին պլան: Սա էլ, իր հերթին, կարևոր պայման կլիներ դժվար ժամանակներում այս ժողովուրդների այնքան անհրաժեշտ համերաշխության, սակայն վաղուց վրաց ուսման վարձերի ջանքերի շնորհիվ այն «ընթացավ ազգային դրոշի տակ»: Միացած «թուրք ազդեցիկ հողատեր և փողատեր»-ներին՝ վրաց սոցիալ-դեմոկրատները փաստորեն վիժեցրին հնարավոր համերաշխությունը: Աղբալյանը պահանջում էր սթափ հայացքով նայել իրադրությանը և այլևս պատրանքներ չունենալ վրացական, առավել ևս թուրքական սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ:

Գյուղացիական համագումարում բռնած դիրքով նրանք «շատ շատերի աչքերը բացին Կովկասի իրադարձությանց վրա»:

Սա, իհարկե, չէր նշանակում հրաժարում ուսման վարչությունից: Հակառակը: Հավատ ընծայելով «աշխատավոր դասերի առողջ բնագոյին և միջազգային համերաշխության վառ ապագային»՝ հայ ուսման վարչության գերագույն խնդիրն է համարում «ավելի եռանդով ու համառ», քան այդ արվում է նույնիսկ «հայ շրջանակներում», հետապնդել «թուրք աշխատավոր խավերի դասակարգային գիտակցության զարգացմանն ու պայծա-

¹Նույն տեղում, էջ 145:

²«Հորիզոն», 1912, N 229:

ուսմանը»¹: Վերակազմել Անդրկովկասի «քաղաքական ու տնտեսական կյանքը ազատ և արդար հիմքերի վրա»՝ հենվելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքին, ահա այն ճանապարհը, որը երկրամասում խաղաղ ու համերաշխ գոյության հնարավորություն կստեղծի «այլացեղ և այլաբարբառ» ժողովուրդների համար:

Դեպքերը Ռուսաստանում ու Անդրկովկասում այլ ընթացք ստացան: Ռուսաստանում իշխանության եկան հրապարակախոսի համար այնքան անցանկալի մեծամասնականները, Անդրկովկասում ստեղծվեցին անկախ հանրապետություններ: Հետաքրքիր է, որ Աղբալյանը շատ էլ ոգևորված չէր այս անկախությամբ: Հեռատես հրապարակախոսը լուրջ տագնապներ ուներ վրաց-թաթարական գաղտնի համաձայնությունից, որը սուր ծայրով ուղղված էր հայության դեմ: Ռուսական հեղափոխությունը կարող էր կովկասյան ճակատում «իմպերիալիստ» հայերին միայնակ թողնել մի օրում բուլշևիկացած թուրքերի դեմ: Նման մի հեռանկար, իսկապես, չէր կարող ոգևորել մտածող անհատին: Ի տարբերություն հայ մեծամասնականների՝ Աղբալյանը հավատ չէր ընծայում թաթարական ռամկավարության՝ ճիշտ գնահատելով ռեալ իրականությունը:

Նա խորապես հավատում էր այն լուսավոր ժամանակների գալստյանը, երբ ժողովուրդները կարթնանան, կդառնան իրենց բախտի տերերը, և կհասնի նրանց ճակատագրի հետ խաղացող կառավարությունների պատասխան տալու հերթը: Կգա այդ օրը, որովհետև «կործանվում են պետությունները, որոնք հիմնված չեն արդարության տարրական պահանջների վրա»: Բայց և ցավով արձանագրում է, որ այդ օրը դեռևս հեռու է:

¹ «Հորիզոն», 1917, N 139:

ԽՄԲԱԳԻՐԸ

19-րդ դարի 90-ական թվականներին գերազանցապես գրադատականներով հանդես եկող սկսնակը ընթացիկ դարի սկզբին արդեն ճանաչված անուն էր, խմբագիրներից փնտրված անձնավորություն:

Թումանյանի անթվակիր մամակից հայտնի է, որ Գ. Մելիք-Ղարազյոզյանը բանաստեղծի միջոցով, որպես Աղբալյանի «ընկերի», նրան հրավիրել է իր թերթին աշխատակցելու, իբրև «քարտուղար... խմբ. օգնական»:

Սիրելի Նիկոլ.

Դու հո ճանաչում ես Գ. Մելիք Ղարազյոզյանին: Էն էլ գիտես, որ նա <աշունքից> հրատարակում է հասարակական, գրական, քաղաքական եւ, մինչեւ անգամ, առեսրական մի թերթ՝ անունը կովկասի բանբեր: Հիմի էդ կովկասի բանբերի համար մի լավ մարդ է հարկավոր, որ քարտուղար լինի - իմա՝ խմբ. օգնական:

Նա քեզ լավ մարդ է համարում եւ <հանձնարարել> է ինձ, որպես ընկերի-քո միտքն իմանամ: Չգիտես միտքն իմանալու դայդեն էսպես է թե չէ-միայն դու եթե հիրավի լավ մարդ ես, իսկույն եւեթ մի պատասխան տուր կուզես այդ պաշտոնը թե չէ: Եթե չէ-հեռագրով պատասխանիր, իսկ թե հա-ոնց որ կուզես հեռագրով, կուզես մամակով: Գուցե ավելորդ չի լինի այն էլ հիշել, որ կստանաս ամսական 75-100 ռուբլի: Դեռ վերջնապես չի որոշված: Ես անքնությունից, հոգնածությունից ու շոգից մեռնում եմ: Դերենիկը գնում է Եվրոպա, իսկ Լեւոնը իր տղի հետ խաղ է անում:

Համբույրներով քո Օհանես¹:

¹ ԳԱԹ, Թումանյանի ֆոնդ, N11:

Նամակն անթվակիր է, մշակողը ենթադրում է 1905, VII:

Ամիսը չգիտեմ, թիվը ճիշտ է որոշված: «Դերենիկը գնում է Եվրոպա», - հայտնի է, որ Դենիորձյանը Օվեյցարիա մեկնել է 1905-ին:

Հնարավոր է՝ Թումանյանը սխալվում է թերթի վերնագրի հարցում (մանավանդ՝ նամակը գրելիս վերնագիրը չի հիշել, տեղը բաց է թողել, հետո լրացրել, հավանաբար որեւէ մեկի հարցնելով): Բիրլիոգրաֆները նման վերնագրով թերթ չեն հիշում: 1905-1906 թթ. Թիֆլիսում Մելիք Ղարաօյրզյանը հրատարակել է «Արշալույս» վերնագրով թերթ (նույնանուն «պատկերազարդ հավելված»-ով, կիսամյա, լույս է տեսել 5 համար) գրական, հասարակական, քաղաքական, տնտեսագիտական (հավանաբար սա է Թումանյանի հիշած «տնտեսականը»):

Համագործակցությունը չի կայացել: Աղբալյանը մեկնում է Եգիպտոս՝ կուսակցական հանձնարարությամբ:

1907-ին Փարիզում հայտնված գործչին առաջարկում են «Հայրենիք»-ի խմբագրի պաշտոնը: «Հայրենիքի խմբագիր հրավիրեցին Ամերիկա, եկան որ տանեն, չհամաձայնեցի», - գրում է Թումանյանին Փարիզից¹:

Խոսքը Նյու-Յորքից Բոստոն տեղափոխված օրաթերթի մասին է: «Խմբագրական գործը պետք է որ դժվար լինի, հը,- շարունակում է նույն նամակում, ամեն օր թերթ հասցնելը մի անասելի բան է, մարդ գլուխը կկորցնի»: Հրաժարվելու պատճառը, իհարկե, «գլուխը կորցնելու» երկյուղը չէր, այլ ուսումը շարունակելու եւ «մարդ դառնալու» բաղձանքը: Բարձրագույն կրթություն ստանալու տեսական ցանկությունը այդպես էլ չկարողացավ իրականացնել...

Մի քանի տարի հետո, սակայն, 1912-ին Պարսկաստանից վերադառնալուց անմիջապես հետո Թումանյանի երաշխավորությամբ, համաձայնեց «Հորիզոնի» խմբագրապետներից մեկը լինել:

Բեղմնավոր եղավ աշխատակցությունը «Հորիզոնին». փաստորեն սկսվում է Աղբալյան հրապարակախոսի գործունեությունը: Մինչ այդ մամուլում պատահական ելույթները նվիրված են եղել օրախնդիր հարցերի, այն էլ՝ հպանցիկ: Այժմ լայնածավալ գործունեությամբ լուսաբանում է սկզբում բալկանյան, այնուհետեւ համաշխարհային պատերազմի ընթացքը, երեւույթները միշտ դիտարկելով հայության ակնկալիքների, ժողովրդին գալիք իրադարձություններին նախապատրաստելու տեսանկյունից:

Ինչպես կարելի է կռահել տպագրված նյութերից, Աղբալյան-խմբագրի պատասխանատվությունը տարածվել է հենց պատերազմի, նրան հարակից խնդիրների եւ գրականության ու մշակույթի հարցերի լուսաբանման վրա:

Թոուցիկ համեմատությունն անգամ նախորդ տարիների հետ որոշակի պատկերացում տալիս է նոր խմբագրի ձեռագրի մասին:

Հրապարակախոսությունն այլևս պատեհ առիթներով գրվող հոդվածների շարան չէ, այլ որոշակի խնդիրների պարբերական լուսաբանում: Հստակ է գրական քաղաքականությունը եւս: Լույս տեսած հայերեն գրքերի մասին ընթերցողներին հաշվետվություն տալը դառնում է պարբերական. այդ գործը պետք է «սիստեմատիկ լինի, որ արժեքավոր դառնա», - Աղբալյանի համոզմունքն է: Գրական-մշակութային կյանքի լուսաբանումը, գեղարվեստական մեծ արժեքների եւ նշանավոր գործիչների գնահատությունը նույնպես դառնում է «սիստեմատիկ»:

¹ԳԱԹ, Թումանյանի ֆոնդ, N 236-15:

Հավատարիմ ընթացիկ գրականությանը ակնդետ հետեւելու արասխանյանական ավանդույթին՝ տասնյակ մեծ ու փոքր գրախոսականներ գրեց, հանդես եկավ տարվա գրական հունձքի տեսություններով, լուսաբանեց նորաստեղծ կովկասի հայ գրողների ընկերության ստեղծման աշխատանքներն ու գործունեությունը, կատարեց գեղարվեստական թարգմանություններ... Առաջին պահ զարմանք է հարուցում, թե բարձր չափանիշներով առաջնորդվող նրբաճաշակ քննադատը ինչու՞ է անդրադառնում գրական միջակությանն ու խոտանին նույնիսկ: «Մուրճի» խմբագրությունում թրծված Աղբալյանի համոզմամբ՝ թերթն ու ամսագիրը պարտավոր են ընթերցողին կողմնորոշել լույս տեսած հայերեն գրքերի վերաբերմամբ:

Այս սկզբունքը հետետղականորեն պետք է կիրառել նաև «Նոր հոսանքը» խմբագրելիս:

1900-ական թթ. գրչի ու գաղափարի ընկերներին գրած նամակներում հաճախ է արժարժում ամսագիր հրատարակելու անհրաժեշտությունը: Մասնավորաբար «Մուրճի» դադարից հետո ավելի է զգացվում բացը: Ամսագիրն է, որ պետք է մշակի հասարակական միտքը, զարկ տա գեղարվեստական մտածողությանը: Մի «հանրային ամսագիր», որ «մասնագիտական աշխատանքների» վերաբերյալ «մեթոդական ցուցումներ» տար ընթերցողին և նպաստեր նրա «ընդհանուր զարգացմանը և մտավոր հորիզոնի լայնացմանը», նրա չիրականացած երազանքը եղավ¹: Եղած հատուկնս հրատարակությունները հեռու էին պահանջվող մակարդակից: «Ընդհանուր առմամբ խղճուկ տպավորություն է անում («Արոր» ամսագիրը. - Գ. Ա.) իր բովանդակության որակով ու քանակով եւ ավելի եւս շեշտում մի

¹ «Գործ», 1917, N 2, էջ 115:

լուրջ ամսագրի անհրաժեշտությունը մեզանում»¹: Հակառակ սրան՝ «Գեղարվեստի» անվիճելի արժանիքներից մեկը պետք է համարել ինքնուրույն աշխատանքի գերադասությունը թարգմանականի համեմատությամբ... Սա նշանակում է խթանել ազգային ստեղծագործությունը եւ նպաստել նրա զարգացմանը»²:

«Լուրջ ամսագիրը» պետք է լիներ «Նոր հոսանքը», որի առաջին համարը լույս տեսավ 1913-ի փետրվարին:

Այստեղ էլ խմբագիրներից մեկն էր, հավանաբար պատասխանատուն դարձյալ հրապարակախոսության եւ գրականության բաժինների, որոնք էլ, ըստ էության, բնութագրում են ամսագրի դեմքը: Իզուր չէ, որ ինքնակրթության տարիներին մշակումների տեսրերից մեկում արտագրել էր Արասխանյանի հայտնի միտքը. «Մի ամսագրի մեջ կարելու էր գույնը եւ էականը նրա հրապարակախոսությունն է»:

Երազում էր նաև, որպեսզի հրատարակվի մի «տեղեկագիր հայագիտության», որը «հարցասերի» բոլոր հետաքրքրությունները բավարարեր: Կամ թե լիներ մի պարբերական, որի «պաշտոնը լիներ հետեւիլ օտար գիտական գրականությանը եւ վեր առնել ինչ որ մեր լեզվի, պատմության ու գրականության մասին գրվում է, մանր բաները թարգմանելով, իսկ ընդարձակ գործերը լայնորեն վեր լուծելով»:

«Նոր հոսանք»-ը խմբագրականում Աղբալյանը ամբողջացնում է իր ըմբռնումները ամսագրի վերաբերյալ:

Խմբագրականի դատողությունները շատ են նման Արասխանյան խմբագրի տեսակետներին: Իր այլ հոդվածներում էլ կրկնել է այն մտքերը, որոնք համխմբված

¹ «Հորիզոն», 1912, N 242:

² «Հորիզոն», 1912, N 212:

տեսնում ենք խմբագրականում: Ասենք, որ «Նոր հոսանքը» իր կառուցվածքով էլ հիշեցնում է Մուրճը... Սա թերեւս առաջին դեպքն է, երբ խմբագիրը գիտակցված վերաբերմունք է դրսեւորում նախորդի ավանդույթների նկատմամբ:

Բայց հետեւել ավանդույթներին բոլորովին չի նշանակում կրկնել նախորդին՝ գրկելով իրեն ինքնուրունությունից: Տարիներ հետո Ս. Վրացյանին գրած նամակում նրա հիմնած «Վեմ»-ի արժանիքը հենց դա է համարում. «Քո հասկացած իմաստով Վեմը ունի տեղ մեր գրականության մեջ. քանի որ վեպ-բանաստեղծություն պիտի չունենաս եւ ավելի պատմական ու մշակութային նյութեր պիտի լույս ընծայես-ավելի աշխարհիկ կլինես, քան Սիոն եւ Բազմավեպ, ավելի ծանրորեն, քան Հանդես Ամսօրյա, ավելի տեսական, քան Հայրենիք»:

Ասել է թե մամուլի յուրաքանչյուր օրգան իր ուղղությունն ու նպատակը պետք է ունենա: Այդպիսի մի օրաթերթ խմբագրեց 1917-ին՝ «Ազատամարտը»: Թերթը հաջորդ տարին էլ լույս տեսավ, իբրեւ խմբագիր միշտ հիշվում է Աղբալյանը, բայց հասարակական կյանքի առաջադրած նոր խնդիրների շրջապտույտը ներքաշված գործիչը իրականում այլեւ չէր մասնակցում թերթի աշխատանքներին, նույնիսկ չէր թղթակցում¹: Սուս հեղինակության հանգամանքը չի գործել, նոր խմբագիրը անփոփոխ հետեւում էր թերթի սկզբունքներին, որոնց մասին հայտարարվել էր արդեն N 1-ի առաջնորդողում (սեպտեմբերի 24):

Խմբագրականում, որ Աղբալյանի գրչին է պատկանում, ներկայացվում են թերթի նպատակները: Ռուսական հեղափոխությունը իր վրա հրավիրեց հասարակա-

¹ Իբրեւս բացառություն է «Վերջապես» առաջնորդողը, դարձյալ անստորագիր, բայց Աղբալյանի ոճական հնարանները նկատվում են: Քանի որ անդրադարձել ենք միայն 1917-ի նյութերին, մեջքերում ենք ի վերջում փակագծերի մեջ նշվում են թերթի համարները:

կան-քաղաքական մտքի ուշադրությունը, Անդրկովկասում ստեղծված նոր իրավիճակի քննությունն ու գործնական խնդիրների լուծումը, որ երկրորդ պլան մղեց թուրքահայ կյանքն ու հայոց հարցը: Նկատվող այս բացը լրացնելու էր նորաստեղծ թերթը, որը պարբերաբար պետք է լուսաբաներ հայոց հարցը եւ «փախստական թյուրքահայության կարիքներն ու պահանջները», սրանց հարակից խնդիրները:

«Մեր թերթի նպատակն է.

1) Հայոց հարցի պաշտպանությունը եւ հարակից խնդիրների լուսաբանությունը:

2) Հայաստանի վերաշինության խնդիրների քննությունը, լուծումն ու պաշտպանությունը:

3) Հայ փախստականների կարիքների պարզաբանությունն ու պաշտպանությունը:

4) Քաղաքական, ազգային-հասարակական եւ կուսակցական կյանքի արձանագրությունը:

5) Թյուրքահայ ժողովրդի տեղահանության, կոտորածների եւ ինքնապաշտպանության վերաբերեալ վավերագրերի հրատարակությունը»:

Թերթի շուրջ համախմբված մտավորականները փայփայում էին Կ. Պոլսի «Ազատամարտի» ավանդույթների շարունակությունը լինելու երազանքը: Վահ. Փափազյանը «խոր հուզմունքով» ներկայացնում է հիշյալ թերթի աշխատանքային մթնոլորտը, ուղղվածությունը, վերակենդանացնելով խմբագրի եւ գլխավոր աշխատակիցների կերպարները, որոնք ուղեցույց պետք է լինեն նոր «Ազատամարտի» համար: «Իմ սիրելի ընկերներ, չգիտեմ մեռած եք, թե կենդանի (հիշում է Վոսմյանին, Ռ. Զարդարյանին, Ծեհրիկին, Գեղամ Բարսեղյանին, Վարդգեսին, Սարգսին, այլ համարներում հիշվում են նաեւ Զոհրապը, Վարուժանը, Սիամանթոն), բայց հավատում եմ, որ այժմ կենդանի եք ձեր թողած սերուն-

դի մեջ. ահա, այս բուպեիս նա դարբնում է նոր Ազատամարտ...» (N 1):

Առաջադրած բոլոր խնդիրները անհրաժեշտ մակարդակով իրականացնել չհաջողվեց, ասենք՝ ժամանակ էլ չեղավ, 1917-ի սեպտեմբերի 24-ին սկիզբ առած «Ազատամարտը» (այդ տարում լույս տեսավ 59 համար) հաջորդ տարվա մարտի 1-ից դադարեց (36 համար):

Մեծ արագությամբ վրա հասնող, երբեմն անկուսակների, անցանկալի նաեւ, իրադարձությունները, որ թերթը բնութագրում է իբրեւ «անբնականոն» պայմաններ, ներառելով նյութական եւ բարոյական աջակցության պակասը, հարկադրեցին դադարեցնել հրատարակությունը: Խմբագրությունը փայփայում էր լավ օրերի գալուն պես «որեւէ վայր, որ հարմար կնկատվի» վերահրատարակելու հույսը, որ շատ ուշ իրականացավ՝ Երեւանում, բավականին փոխված ծրագրով: Թղթակիցներին խորհուրդ էր տրվում նյութերն ուղարկել «Հորիզոնի»-ին:

Խմբագիրը ակտիվորեն մասնակցում էր թերթի ուղղության իրականացմանը: Թույլ չպետք է տալ, որ հասած ծանր աղետները հուսալքեն փրկված բեկորներին: «Ավերից հետո» հողվածում Ադրբայյանը, հավատարիմ հրապարակախոսի իր կոչումին, հենց հույսի ու հավատի խոսք է ուղղում ընթերցողներին:

Գերմանիայի աջակցությամբ Թուրքիան ծանր հարված հասցրեց հայ դատի տիրոջը, բայց «չկարողացավ մեռցնել հայոց դատը»: Հայ ժողովուրդն ապրում է գաղութներում, հայրենի հողի վրա, ահա երաշխիքը ժողովրդի հարատևումի եւ հայ դատի լուծման հեռանկարի:

Հրապարակախոսը լուծման երաշխիքներից է համարում նաեւ դաշնակիցների «կատարեալ հաղթութիւնը», որ կբերի հայերին «ազատութիւն թյուրքական անիրավ իշխանությունից»:

Այս հավատը ներշնչելուն է կոչված «Ազատամարտը»:

Հայ դատի հաղթանակը կապում էր նորագույն սերնդի հետ: Ահա թե ինչու նրա էջերում լայնորեն տեղ են տրվում երիտասարդության խնդիրներին: «Ազատամարտ»-ը բերան պիտի ըլլա այդ երիտասարդության եւ մղիչ ազդակ՝ անոր կենսագործ աշխատանքներուն» (N 1):

Փոքր ուժերով էր հրատարակվում թերթը: Ժամանակները դժվար էին, խառնակ, քաղաքական իրավիճակը՝ հեղհեղուկ: Կուսակցական նեղ պայքարը վանում էր մտավորականությանը: 1918-ի N 1-ում գնահատելով անցած ամիսների գործունեությունը՝ խմբագրությունը հարկադրված էր խոստովանել, որ թերթը «չէ կարողացած» իր ստանձնած «պարտականությունը լիովին կատարել», որովհետև հասարակության, մասնավորապես մտավորականության կողմից չի արժանանում ոչ նյութական, ոչ էլ բարոյական ու գրական աջակցության:

Եվ, իսկապես, Ադրբայյանը աշխատակցելու էր հրավիրել մեծ թվով, հայ իրականությանը առավել կամ պակաս չափով հայտնի, մտավորականների (նրանց բավականին ընդարձակ ցուցակը միշտ գետեղվեց առաջին էջում): Ահա բոլորովին էլ ոչ ամբողջական ցանկը՝ Ահարոնյան Ա., Ադո, Աբեղյան Արտ., Եսայան տ. Զապել, Թումանյան Հովհ., Թորգոմյան, Իսահակյան Ավ., Իփեկյան Գ., Լեո-Կամսար, Կապուտիկյան Բ., Ծանթ Լ., Զամալյան Ա., Ռուբեն, Ռոստոմ, Սասունի Կ., Վրացյան Ս., Տեր Մինասյան Ռ., Փափազյան Վ., Փափազյան Դ., Քաջազնունի Հովհ. եւ ուրիշներ:

Հրավիրվածներից քչերը մասնակցություն բերին (Դ. Փափազյան, Վեսպեր, Կ. Սասունի, Մ. Թորգոմյան), այն էլ՝ ոչ տեւական:

Ադրբայյանը երագում էր սեփական թղթակիցներ ունենալ «Հայաստանի ամեն մեկ անկյուն. Անդրկովկասում բոլոր վայրեր, ուր տեղավորված է փախստականություն, ինչպես նաեւ Ռուսաստանի և արտասահմանի

բոլոր կարևոր կենտրոններ» (N 1): Հավանաբար նյութական սուղ պայմանները, թերևս կարող ուժերի բացակայությունը ևս, անհնար դարձրին այս ցանկության իրագործումը, թեև առանձին համարներում հայտնվեցին «սեփական հեռագիրներ», «սեփական թղթակցություններ» (Ամերիկայից, Միջագետքից, Աշտարակից):

Այնուամենայնիվ թերթը համախմբեց աշխատակիցների ու թղթակիցների համեստ մի խումբ, որի ջանքերով էլ այն լույս էր տեսնում (Ամատունի, Օճնիկ, Միհրան, Սուրեն, Տարագիր, Արեգ, Հովհ. Մխիթարյան, Մարյուս եւ ուրիշներ): Առանձնապես ակտիվ էր Ամատունին, որն էլ, ըստ երեւոյթին, փոխարինեց Աղբալյանին՝ անպաշտոն կերպով: Առաջնորդողների մեծ մասն ինքն էր ստորագրում (Աղբալյանի առաջնորդները անստորագիր էին), կարելի է ենթադրել, որ քաղաքական տեսությունների մի մասի Ա. ստորագրությունն էլ իրենն է (Աղբալյանը Հանգույց էր ստորագրում):

Առաջադրված խնդիրներին համապատասխան բաժիններ ուներ թերթը՝ «Նամակներ երկրեն», «Արտասահմանի հայությունը», «Քաղաքական տեսություն», «Միջազգային լուրեր», «Ոճրապատում», «Վրաց կյանք», «Մամուլ», «Հայրենիքի պաշտպանության համար» եւ այլն: «Նյութեր հայոց նորագույն պատմության» խորագիրը ուշագրավներից է: Սա արդեն N 2-ում կա, որ դարձյալ նշանակում է, թե նախքան թերթի տպագրությունն է հղացվել գաղափարը: Իսկ գաղափարը հետեւյալն է.

«Թերթի կեսը նվիրված կլինի այդ նյութերին, որոնք լույս կտեսնեն՝ հետագայում գրքույկ դառնալու հարմարությամբ», - հայտարարում է խմբագիր Աղբալյանը: Այդ նյութերը, որ կազմում էին «16 փոքրադիր էջեր», «ընթերցողը հավաքելով, ծալելով ու պահելով, մի քանի համարից հետո կունենա մի գրքույկ»: Նյութի ավարտից հետո խմբագրությունը ուղարկում էր նաև գրքի շապիկը:

Ըստ Աղբալյանի հիշյալ բացատրականի՝ առաջին գրքույկը՝ «Մի թուրք սպայի հիշատակարանը», թարգմանել է Դ. Փափազյանը: Այդ գրքույկից երևում է, թե ինչ դեր է կատարել թուրք կառավարությունը հայերի տեղահանության գործում՝ դա «կազմակերպված կոտորած էր»:

Հաջորդ երկուսը լինելու էին՝ մի թուրք պաշտոնյայի ստացած գրությունները գավառապետից, որ դարձյալ հետաքրքիր նյութեր է պարունակում թուրք կառավարության դավերի, հայերի տեղահանության, դիմադրության փորձերի և այլնի մասին, մյուսը՝ «Վոնայանի հիշատակարանը» և նրա պաշտոնական գրությունները Վանի նահանգապետին և կառավարությանը:

* * *

1910-ական թվականները Ռուսաստանի կյանքում վճռական տասնամյակի տարիներ էին: Իր խմբագրած երեք պարբերականներում էլ մեծ երկրի քաղաքական կյանքի մակընթացություններին ու տեղատվություններին հետևում էր ինքը՝ խմբագիրը: Այդ հետաքրքրությունը հետևանք էր այն գիտակցության, թե «Հայաստանի քաղաքական բախտի տնօրեններից մեկն է... Ռուսաստանը» (N 4):

«Ազատամարտի» հրատարակությունը համընկավ 1917 թ. ռուսական բուրժուադեմոկրատական հեղափոխության ճգնաժամին, որը հոկտեմբերյանի նախօրյակն էր: Խմբագիրը ուշադիր հետևում էր իրադարձություններին, լուրջ և բանիմաց խորհրդածություններով կողմնորոշում ընթերցողներին, հավատարիմ իրեն՝ կատարում գուշակություններ:

Աղբալյանը գիտակցում էր պատմական զարգացումների օբյեկտիվ ընթացքը և աշխատում էր ռեալության մեջ որոնել մեր ժողովրդին հուզող հարցերի պատասխանները: Անհատները ի վիճակի չեն փոխել

պատմական ընթացքները, բայց նրանց զարգացման միտումների կոահումները կարող են նպաստել արդյունավետ գործունեության: «Պատմությունն ստեղծում է ողբերգական վիճակներ, որ զոհեր են պահանջում: Անհատի կարողություններից վեր է ներդաշնակել մտքերն ու շահերը այնպես, որ ընդհարում եւ արյուն չլինի» (N :27):

Ի՞նչ էր ակնկալում Աղբալյանը Հայաստանի համար:

Անգլիական կառավարության մի հայտարարությունը, թե Պաղեստինն ազատագրելուց հետո այն պետք է հանձնել հրեաներին՝ վերագտնելու համար իրենց հայրենիքը, այնպես է ոգևորում հրապարակախոսին, որ հանդես է գալիս «Ազատ Հայաստան» հոդվածով՝ փառաբանելով հրեական հանճարն ու տոկունությունը. «Ոչ միայն հրեության, այլ մանավանդ Արդարութեան մեծ տոնն է այսօր» (N 37): Թերթն իր համակրանքն է հայտնում ինքնորոշված Ֆինլանդիային N (1):

Ռուսաստանում ուսկավարության հաղթանակը որոշակի հույսեր էր արթնացնում: Միապետության մերժումով վերանորոգված Ռուսաստանը պետք է իր «կապերը խզի» հին Ռուսաստանից և երաշխավոր լինի արևմտահայության, ընդհանրապես հայության ինքնորոշման իրավունքին: Իրեն հատուկ կրքոտությամբ քննում է ժամանակավոր կառավարության պարտադրված «խաղաղություն առանց հողատման և ուզմատուգանքի՝ ազգերի ինքնորոշման հիման վրա» քաղաքականությունը: «Մթին բանաձեւ» առաջնորդողում տարակուսանք է հայտնում «առանց հողատման» և «ինքնորոշում» սկզբունքները կողք-կողքի դնելու կապակցությամբ, երկու սկզբունք, որ հակասում են իրար: Կամ կայսրությունները մնում են անփոփոխ («հողատում» չի կարելի), կամ ազգերին տրվում է ինքնորոշման իրավունք՝ «մայր պետությունից» անջատվելու հնարավոր

ությունը: Ուրիշ խնդիր, եթե ինքնորոշված ժողովուրդը կցանկանա մնալ «մայր պետության» կազմում, իբրև ինքնուրույն պետություն կամ անջատվելու և ապրել անկախ:

Դժվար է գուշակել, թե որ սկզբունքն է ռուսական արտաքին քաղաքականության համար կարևոր, մինչդեռ «փոքր ազգերի համար կենսական նշանակություն ունի, թե ինչպես է հասկանում Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունն այդ բանաձևը՝ իր առաջին, թե երկրորդ իմաստով» (4): Նույնքան անորոշ էր նաև արևմտահայության խնդրի վերաբերյալ ռուսական բանաձևը, որ հայերին վերապահելով «ինքնորույն» իրավունք՝ նրա հնարավորությունը պայմանավորում է «միջազգային երաշխիքով»: Աղբալյանը հատուկ անդրադառնում է այդ հարցին ևս: Քանի որ ռուսական բանաձևը միայն ընդհանուր հարցադրում է անում, առանց կոնկրետացնելու «երաշխիքների» իր ըմբռնումը, ինքը ենթադրում է, թե ինքնօրինակված Հայաստանը պետք է աշխատի ստեղծել անկախությանը սատար եղող միջազգային ուժը:

Աղբալյանը շատ էլ ոգևորված չէր այս բանաձևերով, նրանց վերագրում էր ընդամենը հայոց դատի շուրջ «համակիր մթնոլորտ» ստեղծելու դեր և ոչ ավելին:

Աղբալյանի կուսակցությունը ամբողջական ծրագիր մշակեց ուսկավար Ռուսաստանի եւ Հայաստանի փոխհարաբերությունների վերաբերյալ, որը սիրով հյուրընկալվեց թերթի էջերում: Ակնկալվածը «կուլտուրական ավտոնոմիայի» հեռանկարն էր:

Ռուսաստանը դառնալու է Ֆեդերատիվ ուսկավար հանրապետություն՝ Սահմանադիր ժողովով: Անդրկովկասի «երեք կենտրոնները» մտնում են այս դաշնակցային հանրապետության մեջ: Համառուսական ֆեդերատիվ հանրապետությունը վճռում է արտաքին քաղաքականության, պաշտպանության, դրամական և մաքսային համակարգերի հարցերը: Սահմանադիր ժողովը լուծում

է հողային հարցը, պաշտպանում է մարդու և քաղաքացու իրավունքները, ապահովում է ազգային փոքրամասնությունների անվտանգությունը:

Անդրկովկասյան ֆեդերացիա ստեղծելու դեպքում այն լուծում է միայն անդրկովկասյան բնույթ ունեցող խնդիրներ:

Կանտոնները օրենսդիր են, ինքնուրույն «բոլոր մնացած խնդիրներում»: Գավառները և համայնքները «վայելում են լայն հեղ. ինքնավարություն»:

Կանտոնների ու գավառակների սահմանները որոշելիս «պետք է ի նկատի ունենալ ազգագրական, տնտեսական և տեղագրական գործոնները, ըստ կարելույն միաձայն համախմբումներ ստեղծելու համար»:

Հայկական կանտոնը պետք է ընդգրկի հայկական բարձրավանդակը. ա) Երևանի նահանգը, բ) Գանձակի նահանգի լեռնային հայկական մասը, գ) Թիֆլիսի նահանգից Ախալքալակի գավառը, Բորչալուի գավառի հայկական մասը, դ) Կարսի շրջանից Կարսի և Կաղզվանի գավառները»:

Հայկական և վրացական կանտոնների «մեջ տեղը ընկած» տարածքների բնակչությունը «ինքն է որոշում իրենց քաղաքական վիճակը» (N 20):

Այս լույսի տակ էր տեսնում հայկական հարցի լուծումը:

Բայց ռամկավար Ռուսաստանի գլխին կախվել էր մեծամասնական վտանգը: Նման իրադրության մեջ ծագում է էական մի հարց՝ Ռուսաստանում ապաստան գտած թուրքահայությունը «կողմերից ո՞ր մեկին պետք է հարե»: Հարցը ռուսահայերին ևս վերաբերում էր, քանի որ թուրքահայաստանի խնդիրը ողջ հայության խնդիրն է: Աղբալյանի տրամաբանությունը հենվում է հայկական դատի հաջող լուծման հեռանկարին՝ «Բովանդակ հայության, հայոց դատի հաջողության և Ռուսաստանի հզորության շահերը զուգադիպում են իրար և հայության

ամբողջ, բայց մանավանդ Թյուրքիայի հայությունը կարող է և պետք է հարե Ռուսաստանի այն տարրերին, որոնք ձգտում են ստեղծել ազատ և հզոր Ռուսաստան, հավատարիմ՝ դաշնակիցներին, հաղթող՝ ճակատների վրա և օրինապահ՝ ներքուստ» (N 19):

Ծագում է հաջորդ խնդիրը՝ կողմնորոշումը կողմնորոշում, բայց ինչ է ցանկանում հայությունը, մանավանդ՝ թուրքահայությունը: «Ազատագրում», «ազատություն» շատ «գեղեցիկ, բայց անորոշ տեմչն ու ձգտումը» պետք է ստանան որոշակի կերպարանք: Նման որոշակիությունը ենթադրում է «հրահանգներ ու որոշ մարտաձև»՝ առաջիկա գործունեության համար:

Անհրաժեշտ է գումարել «պանդուխտ և վերապրող հայության» մի համագումար, որը կձևակերպի նրանց «քաղաքական պահանջները», կորոշի «բռնելիք ընթացքը» (N 20):

Շահագրգռված ռամկավար հզոր Ռուսաստանի ստեղծումով՝ ցավով նկատում է, որ երկիրը հեռու է այդ վիճակից: Ռուսական ռամկավարությունը «աղանդամուլ» է, «հատվածասեր» և «կարճատես», հատկանիշներ, որոնք և ծնում են պառակտումներ: Իշխանությունները առաջնորդվում են «վերացական» ըմբռումներով, զուրկ են գործնական հատկանիշներից, չեն գործում «իբրև հեղափոխական և իբրև ռամկավար»՝ ազատ արձակելով անիշխանության թևերը: Կա մի ուրիշ դժվարություն ևս, դարավոր բռնության ու շահագործման դեմ ըմբոստացած, բայց և «անկազմակերպ և անիդեալ» ռամիկի վրեժը վտանգավոր ուղղություն է ստացել: «Այն ամենը, որ հարուստ են ստացածով, դրամով կամ կրթութեամբ», թշնամի են և ենթարկվում են վրիժառության, քանի որ երկրում իշխանություն չկա կամ թույլ է: Այսպիսի իրադրության մեջ կարող է գահին բազմել «մի նոր բռնակալություն» (N 22):

Ակնարկը բոլշևիկներին է վերաբերում:

Ստեղծված մոր կացությունը կերենակին «իր հմայքով կոծկել» դեռևս կարողանում է, բայց դա երկար տևել չի կարող: «Քաղաքական այս կնճոռտ վիճակը կարող է լուծել միմիայն քաղաքացիական պատերազմը, որ արդեն անխուսափելի է որ արդեն անխուսափելի է դառնում: Նա ծայր կտա, երբ կերենակին հեռանա գրաված դիրքից, որ եւ հավանորեն նա կանի ծայրահեղ ձախակողմի ճնշման տակ» (N 1):

Բննադատության թիրախ է դառնում ժամանակավոր կառավարության անվճռականությունը: «կերենակին փախչում է արյունից... բայց նա լինի, թե մի ուրիշը՝ ստիպված է արյուն թափելու» (N 15): Տարբեր հողվածներում անընդհատ արծարծում է այս խնդիրը, թեև շատ լավ հասկանում էր անվճռականության պատճառը. «ներքուստ պատակոված երկիրը անկարող է զորեղ և վճռական կառավարություն ունենալ» (N 19):

Քաղաքացիական պատերազմի անխուսափելիության գուշակությունն իրականացավ, բայց մի բաղձանք այդպես էլ բաղձանք մնաց. «Բոլշևիկվը կշախչախվի և կհաղթանակեն այն տարրերը, որոնք ժամանակավոր կառավարության հետ կլինեն» (թիվ. 21):

Ամատունին փորձում է հիմնավորել խմբագրի կուսիումը. նույնիսկ հեղափոխական պայքարի պատմության և «դաստիարակության փորձառություն» ունեցող, այժմ ռամկավար պետությունները ((նկատի ունի Ամերիկան, Անգլիան ու Ֆրանսիան)) դեռևս պատրաստ չեն սոցիալիստական հեղափոխության, ուր մնաց Ռուսաստանը, որ երեկ է միայն ազատվել «բռնակալական լուծեն», ժողովրդի 80 տոկոսը անգրագետ է, արդյունաբերությունը զարգացման «առաջին և տարտամ» քայլերն է անում, սոցիալիստական կուսակցությունները ժառանգել են քայքայված երկիր... «Խելագարություն պիտի ըլլա, - համոզված գրում է նա, - մտածել սոցիալիստական հեղափոխության մասին» (N 37):

Դեպքերը, սակայն, անցանկալի ընթացք ստացան, «խելագարություն» եղավ, և Ռուսաստանում հաղթանակեց սոցիալիստական հեղափոխությունը՝ մոր հուն մղելով երկրի արտաքին ու ներքին քաղաքականությունը, կայսրության մաս կազմող ժողովուրդների ճակատագրի լուծումները...

Մեծ երկրի խնդիրներին սրտացավ արձագանքելը թելադրված էր Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի հնարավոր ոչ ցանկալի փոփոխությունների միտումներով: Ադրբայջանը չէր կարող դրական վերաբերմունք ունենալ «մեծամասնական աղմկարարների» նկատմամբ: Հոկտեմբերի 27-ի համարում թերթը լուր է տպագրում «Պետրոգրադի մոր հեղափոխության» մասին: «Մեր գուշակությունը կատարվում է, - շտապում է հայտնել Ադրբայջանը, - Ռուսաստանն ապրում է քաղաքացիական կռիվի նախօրյակին»: Դեռևս չի հավատում մեծամասնականների վերջնական հաղթանակին. երկրում համակրանք չեն վայելում, Պետրոգրադի մի բուռ բանվորներն ու զինվորները ի վիճակի չեն լինի իրենց հետևից տանել ամբողջ վիթխարի Ռուսաստանը: Նրան չի շփոթեցնում այն պարագան, որ փետրվարյան հեղափոխությունն էլ փոքր ուժերով կատարվեց, քանի որ այդ ուժերը համակրանք էին վայելում. «միապետական կազմը... ատելի էր ամբողջ Ռուսաստանին» (N 23): «Աջի բռնակալությունը խորտակող երկիրը չի կարող տանել ձախի բռնակալությունը» (ն.տ): Եզրակացությունը արդեն ծանոթ է. ռամկավար կուսակցությունները պետք է լինեն այնքան վճռական, որքան հանդուգն է անհիշխանությունը: Միայն այս կերպ կարելի է «կերտել առօրյան»...

Բուրժուական հեղափոխությունը, սակայն, «չստեղծեց պետական մարդիկ», նա հրապարակ հանեց «շտապագնիվ հոգիներ», «մեծահոգի ճարտասաններ», «նեղմիտ տեսաբաններ», «մոլեռանդ գաղափարականներ»,

մինչդեռ երկրին այդ պահին անհրաժեշտ էին իրականությունը ճանաչող, «անհրաժեշտի վճռականությամբ» օժտված այրեր, որ չկային, ուստի և «երկիրը մատնվեց անիշխանության, հանդուգն ու վճռական մարդիկ իրենց կամքին ու շահին համեմատ ձևեցին օրենք և ազատություն»... (31): Օտտ խիստ է արտահայտվում իշխանության եկած բոլշևիկների հասցեին՝ «գառանցողների և ստահակների թատերախաղ» (N 25): Բայց երբ վերջիններս ամրացրին իրենց դիրքերը, մի կողմ ձգեց վիրավորական էպիտետները և սթափություն ունեցող խոստովանելու, որ «նրանց հետ հաշվի» պետք է մտնել (N 40), փորձում է նույնիսկ հասկանալ նրանց հաղթանակի պատճառները. «Այնքան պարզ, այնքան գրավիչ և ցանկալի հեռանկար պարզեցին մեծամասնականները հոգնած գործի և ժողովրդի աչքին և այնպես վճռական ու անվերադարձ դիմեցին այդ հեռանկարին ընդառաջ, որ բովանդակ Ռուսաստանը քրթմնջումով և անգործօգոհանքով, բայց համակերպվում է նրանց գործունեության: Նրանք հավատ ունեն իրենց գործին, կամք՝ իրենց գաղափարներն իրագործելու և ազատ են թուլամորթ խղճահարությունից» (N 40):

Աղբայանին լրջորեն անհանգստացնում էր դեռևս ռամկավարական Ռուսաստանի և դաշնակիցների միջև ստեղծված «հակադրությունը», որ, նրա կարծիքով, ուներ լուրջ պատճառներ: Առաջինն այն է, որ դաշնակից պետություններում «վարիչ դասակարգը» մնում է դրամատիրականը, իսկ Ռուսաստանում վարիչներ են դարձել ռամկավարները: Երկրորդ պատճառը Ռուսաստանի «անօրինակ կազմալուծումն» է: Սրանից բխող երրորդ պատճառը թերևս ամենավտանգավորն է. ծայր են առել տրամադրություններ, որ «շատ ձեռնտու են միմիայն այդ երկրի թշնամիներին» (N 6): Հրապարակախոսը դեռևս հեռու է դրանց ղեկավարներին գերմանական լրտեսներ անվանելուց, դա հետո էր լինելու,

առայժմ գտնում է, որ հիշյալ «տրամադրությունները արդյունք են երկրի ներքին քայքայման և ոչ թե թշնամուն նպաստելու ձգտումի» (N 6):

Այս հակասությունները կարող են խորանալ՝ Ռուսաստանին մղելով Գերմանիայի հետ առանձին հաշտության, որ հղի է հայության ճակատագրի համար սպառնալիքներով...

Մեծամասնականների իշխանության գալով սպառնալիքը դառնում է ռեալ հնարավորություն: Դեպքերը ծավալվեցին մեզ համար անցանկալի ուղղությամբ: Գերմանիայի հետ հաշտությունը, հողն ու գործարանները ժողովրդին հանձնելու կարգախոսները, կենտրոնական իշխանության թուլացումը տխուր հետևանքներ ունեցան բանակի վրա: Քայքայվում էր ռուսական բանակը, հեռանում Անդրկովկասից, որ նշանակում էր «մերկացնել» ճակատը թուրքերի, թիկունքը՝ քրդերի առաջ: Մի ուրիշ վտանգ էլ էր գույացել. ճակատից դարձող զորամասերը, քաղցած և բարոյալքված, կողոպտում էին հայկական գյուղերը, սպառնում դիմագրավողներին: «... Ու՛ր և ի՞նչ է մնացել այն բարի և հեզ ռուս մուծիկից», - հարցնում է թղթակիցը: Մեծամասնական պրոպագանդան և պարենի պակասությունը քայքայում են բանակը, դիմազրկում զինվորին:

Ոչ մեկի համար գաղտնիք չէր, որ մերկացած անդրկովկասյան ճակատում հայերը մեռակ կմնան թուրքերի դեմ-հանդիման: Ծանր գուշակությունները աստիճանաբար իրականանում են:

Ռուսաստանում կատարվող իրադարձությունները արձագանք են գտնում Կովկասում: «Լենին և ընկ. առժամական հաջողությունները» Բաքվում և Թիֆլիսում որոշակի աշխուժացում են հաղորդում տեղի մեծամասնականների գործունեությանը: Եթե սրանք հաջողության հասնեն, Կովկասում ևս կթևածի անիշխանությունը՝ ցավալի հետևանքներով: «Մեծամասնական գառանցողներ»

րի քաղաքական արկածախնդրությունը» Կովկասը կմատնի տնտեսական քայքայման, սովը կդառնա միակ տիրող ուժը, որի ավերածություններին կհաջորդի թշնամու ներխուժումը՝ «կործանելու սովի խարխլածը» (N 32),- գուշակում է հրապարակախոսը: «Անհնարին չէ, որ Կովկասը առժամապես մնա ինքն իր հուսով և ստիպված լինի պաշտպանել իրան թե՛ արտաքին թշնամուց և թե՛ ներքին շարդարարից»,- նշելով Ռուսաստանը ճարակող քաղաքացիական խառնաշփոթը՝ եզրակացնում է Ադրալյանը:

Երբ Կովկասյան կառավարությունը հաշտություն առաջարկեց Թուրքիային, պարզ դարձավ, որ Հայաստանը մեռակ է մնում այս ճակատում: Ադրալյանը մեկն էր նրանցից, ովքեր խորությամբ ընկալում էին, որ մեծ տերությունները հետամուտ են սեփական շահերին միայն. «Ոչ մեկ հույս, ոչ մեկ ակնկալություն ոչ եվրոպական իմպերիալիզմից, ոչ Կովկասի դեմոկրատիզմից, ոչ էլ ռուսաց սոցիալիզմից» (N 43):

Ո՞րն է ելքը:

Միակ ելքը ազգովին համախմբվելն ու թշնամուն դիմագրավելն էր:

«Մեզ համահավասար դավեցին և միապետական Ռուսաստանը, և հեղափոխական Ռուսաստանը: Միայն մենք կարող ենք անդավաճան և հավատարիմ մնալ դեպի մեզ և դեպի մեր դատը» (N 46): Օրհասական պահին Ադրալյանը կոչ է անում ժողովրդին՝ տեր կանգնել իր ճակատագրին:

Դեկտեմբերի 17-ի համարում (N 49) տպվեցին Ա. Ահարոնյանի «Ահագանգը»՝ ուղղված հայ ժողովրդին ու հայոց աշխարհին, Ա. Զամալյանի կոչը՝ «Կովկասյան ճակատի հայ ռազմիկներուն»: Ժողովուրդը շարժվեց, բոլոր խավերը արթնացան: Թերթը պարբերաբար ինֆորմացիա է տպագրում տարբեր վայրերում կայացող ժողովների ու հավաքների մասին: «Միաձայն որոշեցին

Հայոց Ազգային Խորհրդի տրամադրության տակ դնել իրենց կյանքը, գույքը ու մտավոր ուժերը հայրենիքի պաշտպանության համար, համազգային զորակոչի ենթարկել բոլոր տղամարդկանց՝ մինչև 45 տարեկան հասակը... (N 54):»:

Բոլոր հավաքների ոգին այս էր:

Իր «բարձրաբերձ լեռնաստանում» իր «չարագուշակ ճակատագրի հանդեպ» մեռակ մնացած «հին, տուրկուն ժողովուրդը» մի ելք ունի՝ «հավաքել ցրիվ ուժերը, կազմավորել ու տոկալ» (N 43):

* * *

Ադրալյան հրապարակախոսը մերժում էր ազգային ու կրոնական խտրականությունը, Ադրալյան խմբագիրը թերթի առաջնահերթ խնդիրներից էր համարում հարևան ժողովուրդների կյանքի լուսաբանումը: Այս հետաքրքրությունը մի ուրիշ միտում էլ ուներ. հայոց ճակատագրի լուծումը առանց հարևանների հետ դրացիական հարաբերությունների, նրանց շահերի ու շահագրգռությունների հաշվառման՝ անհնար է պատկերացնել: Թերթի աշխատակիցները, բնականաբար, հետևում էին այս սկզբունքին: Օճնիկը, որ մշտական աշխատակիցներից էր, խստորեն դատապարտում է Երևանի «Աշխատանք» թերթում «Հայաստանը և իր պատմական թշնամիները» վերնագրով հոդվածի հեղինակին, որը «պանիսլամիզմին», «պանգերմանիզմին», «պանսլավոնիզմին» հակադրում է «պանարմենիզմը» (համահայկականություն)՝ նման գաղափարները բնութագրելով «անհող, վտանգավոր ու մուր» (N 18):

Մի ուրիշ աշխատակից՝ Դ. Փափազյանը իրավացիորեն մեղադրում է հարևանների մտավորականությանն ու մամուլին միմյանց քաղաքական ու մշակութային կյանքը մոռացության տալու համար, որը նպաստում է զանազան վերապահ կարծիքների և ազգամիջ-

յան անվստահության ու թշնամանքի տարածմանը: Կա-
ռավարությունները գալիս-գնում են, ժողովուրդները շա-
րունակում են ապրել կողք-կողքի, ուրեմն պետք է լավ
ճանաչել իրար, շփվել ազգային արժեքներին, որոնք
կնպաստեն հաշտ հարևանության: Հետաքրքիր է, որ
ծրագրային այս հարցադրումը կատարվում է հենց
առաջին համարում:

Այս առումով Ռուսաստանից հետո երկրորդ տեղում
Թուրքիան է: Թերթը խնդիր էր դրել իր ընթերցողներին
ծանոթացնել թուրքերի կյանքին (ներառյալ կովկասյան
թուրքերը):

Վերոհիշյալ Դ. Փափազյանը մույն N 1-ում առաջին
քայլն է կատարում իր իսկ բարձրացրած հարցը լուծելու
ուղղությամբ, հանգամանք, որ հուշում է, թե խմբագիրը
թերթը հրատարակելուց առաջ նախապատրաստական
որոշակի աշխատանք էր ծավալել: Այն պարագան, որ
Դ. Փափազյանը հետագայում էլ հրատարակեց նյութեր
Թուրքիայի անցյալից ու ժամանակակից կյանքից, իրա-
վունք է տալիս ենթադրելու, թե դա խմբագրի հատուկ
հանձնարարությունն էր: Թուրք բանաստեղծ Թևֆիկ
Ֆիքրեթի մահվան առիթով գրված ընդարձակ հոդվա-
ծում գնահատվում է նրա ստեղծագործությունը: Արձա-
նագրելով հայ մտավորականության հետ ունեցած բա-
նաստեղծի կապերը, Կ. Պոլսի «Ազատամարտում» նրա
«գողտրիկ բանաստեղծությունների» տպագրության
փաստը, հոդվածագիրը խիստ արժեքավորում է այն
հույսի ակնկալիքով, թե վերջին երեք տարիների ընթաց-
քում «նա իր գրիչը չէ թաթախել մարդկային արյան
մեջ»:

Նույն հեղինակը հետևում էր Թուրքիայում կատար-
վող իրադարձություններին, պատկերը ամբողջացնում
էին զանազան թղթակցությունները, երբեմն էլ նման
բնույթի հոդվածներ թարգմանաբար տպում էին այլ
թերթերից («ժեռն-թուրքերի նացիոնալիզմը», «Թյուր-

քիայի կացությունը», «Համաթուրքական կազմակեր-
պությունը Թյուրքիոյ մեջ», «Գերմանական մեթոդ,
թրքական աշխատանք», «Քրդական նոր հարձակումը»,
«Քրդական հարձակումներ և հերոսական դիմադ-
րություն»), «Նամակներ երկրեն» բաժնում նյութեր են
գետնեղվում, որոնք պատմում են երկրում մնացած հայ
բնակչության անասելի ծանր վիճակի մասին:

Թուրքիայի ներքին կացության ոչ վաղ անցյալի կա-
րևոր իրադարձությունների իմացությունն ու վերագնա-
հատությունը նոր հանգամանքների լույսի ներքո ան-
հրաժեշտ պայմաններ են նրա նկատմամբ «իրատես»
քաղաքականություն մշակելու համար: Մինչդեռ հա-
յության ցրված բեկորները փորձում էին լուծել ֆիզիկա-
կան գոյության հարցերը, ուղիներ էին փնտրում 1915-ի
ցեղասպանության մեղավորներին մերկացնելու ու
պատժելու, որը պիտի նպաստեր հայրենի հողի վրա
կրկին համախմբվելու հեռանկարին, թուրքերը լայն քա-
րոզչություն են ծավալում կատարվածի համար հայերին
մեղադրելու համար: «Ազատամարտի» թղթակիցը
«Թուրքական նոր դավեր» հոդվածում ներկայացնում է
Ծվեյցարիայում «տաք անկյուն գտած» թուրքերի փոր-
ձերը՝ մեղքը հայերի ուսերին կամ մի 10-11 թուրքի վրա
բարդելու ուղղությամբ: Արձանագրելով իրողությունը՝
թղթակիցը հարց է բարձրացնում ստեղծել «օրգան մը»,
ընդհանրապես «ամեն կարգի միջոցներով» պայքար
ծավալել արտասահմանում նման վտանգավոր խեղա-
դաթյուրումները հերքելու, ճշմարտությունը աշխարհին
ներկայացնելու համար (N 23):

Բալկաններում անգլիացիների հաջողությունները
թուրքերի դեմ հույս էր ներշնչում, թե դրանք կարող են
բարերար ազդեցություն թողնել կովկասյան ճակատի
վրա: Նույնիսկ Ադրբայջանը, որ միշտ սթափ հայացք է
ունեցել հայկական հարցում Անգլիայի քաղաքակա-
նության նկատմամբ, մի պահ ոգևորվեց՝ հիշյալ հաջո-
20-7

դությունները գնահատելով իբրև «մոտեցող դաշնակցի» հաջողություններ (N 25):

Իշխող մտայնությունն այն էր, թե դաշնակիցների հարվածների ներքո Թուրքիան պետք է պարտվի, նրա լծի տակ հեծող ժողովուրդները պետք է ազատություն ստանան, ուստի անհրաժեշտ է, որ վերջիներս հաշվի առնեն պատմական այս զարգացման հնարավոր հետևանքները...

Համեմատաբար քիչ են Պարսկաստանին վերաբերող նյութերը («Պարսկաստանի դիրքը ներկա միջազգային պատերազմին մեջ», «Միջազգային պատերազմը և պարսկահայութիւնը»): Դա բացատրվում է թերևս նրանով, որ այս երկիրը կրավորական վերաբերմունք ուներ տարածաշրջանի խնդիրների հանդեպ կամ, համեմայն դեպս, այդպես էր ցույց տալիս:

Ուշագրավ էր վերաբերմունքը վրացիների հանդեպ: Բաղաքական գործիչները միշտ էլ Վրաստանը դիտել են դաշնակից երկիր, թեև միշտ չէ, որ դիտարկումը արդարացել է: «Վրաց կյանք» խորագրով տպագրվեցին հետաքրքիր նյութեր:

Ազատագրված Հայաստանի մասին խոսելիս «Ազատամարտը» գրել էր, թե հայերը կլինեն երկրի տերերը, ազգային փոքրամասնությունները՝ երկրի «քաղաքացիներ», պաշտպանված օրենքներով: Փարատեղով վրացիների երկյուղը «պատմական սահմաններով Հայաստանի» պահանջի հնարավորության վերաբերյալ՝ թերթը գրում է. «Վրաստանն էլ պետք է վերականգնի որպես մի պետական նմբողջական միություն» (21), որտեղ վրացիները երկրի տերը պետք է լինեն, այլազգիները՝ «քաղաքացիներ»՝ պաշտպանված «պատշաճ օրենքներով»: Այս խնդրին անդրադառնում է Աղբալյանը և՛ հաստատելով նույն միտքը: «Վստահացում» հոդվածում գրում է. Վրաստանի բախտի տնօրինությունը «վրաց ժողովրդի անկապտելի իրավունքն է». սա նպա-

տակ ուներ կանխել հայ-վրացական հակասությունները: «Վեճի և տարածայնության առիթ» այս կապակցությամբ հայերի ու վրացիների միջև չկա (N 23): Սա էլ իր պնդումն է:

Աղբալյանը ողջունեց «Վրաց ազգային համագումարը». դա վրաց ռամկավարների համագումարն էր: Ռամկավարները ակտիվ մասնակցություն են ունեցել «համառուսական հեղափոխության մեջ», նրանց դերը մեծ է «Վրաստանի քաղաքական տենչանքների ձևակերպության» մեջ ևս, իսկ դա կորոշի նաև նրա նշանակությունը կովկասի հարցում կովկասի համար:

Մի անգամ էլ հավաստում է հայերից սպառնալիքների բացակայությունը «ոչ պատմական, ոչ այժմեական» առումով, նույնիսկ աջարները սպառնալիք չեն, «մանավանդ եթե համբերատար ու նրբանկատ լինեն վրացիք դեպի նրանց կրոնն ու ավանդությունները» (N 40):

Մյուս մանր ցեղերը, գտնվելով վրացական մշակութի ազդեցության տակ, նույնպես վտանգ չեն ներկայացնում: «Բարեկարգ եւ ազատ Վրաստանը մի բարիք է համայն կովկասի, նաև Հայաստանի համար», (N 40):

**

«Ազատամարտը», բնականաբար, մեծ ուշադրություն պետք է դարձներ սիյուոքահայ, այդ ժամանակ դեռևս գաղութահայ կյանքին:

Երկու կարևոր հանգամանքով էր թելադրված դա. բարբարոս ձեռքով հայրենի երկրից պոկված վերապրող հայերը սիռվել էին գաղթօջախներով մեկ՝ պարտադրելով ուշադիր հետաքրքրություն իրենց կյանքի պայմանների ու ճակատագրի հանդեպ: Մանավանդ՝ թերթը գտնում էր, թե գաղթօջախները ոչ միայն իրենց մոտ գաղթածներին պետք է օգնեն, այլև մասնակցություն բե-

րեւ հայրենիքի, հայության ընդհանուր հոգւերին ու խնդիրներին:

Մյուս հանգամանքն էլ կարևոր էր. Հայ դատի հաշտությունը ենթադրելով պարտադրում էր հայերի նկատմամբ խոշոր պետությունների վերաբերմունքի լավատեղյակություն:

Օգնիկը, որ թերեւս «Նամակներ Ամերիկայեն»-ի հեղինակ Արմենակ Պերպերյանն է, մանրամասն տեղեկություններ է հաղորդում ամերիկյան հայ գաղութի կյանքի մասին, որ տպագրվում է իբրև «սեպհական թղթակցություն»: Երբեմնի երկպառակության հետքն անգամ չկա, «հայ մեր աղետի դարմանումը» միավորել է բոլորին, ստեղծվել է «Հայ ազգային միությունը», որ կարճ ժամանակում «ավելի քան հարյուր» մասնաճյուղ է ստեղծել և գործունեություն ծավալել: Սա ծրագրային հողված է, որ ամերիկահայ կյանքի օրինակով եռանդուն գործի է կոչում բոլոր գաղթօջախներին, չմոռանալով կովկասի հայությանը, «որու առջև լուծելու դրված են շատ ավելի կենսական, պատասխանատու ու համագային արժեք ունեցող անհետաձգելի կնճիհներ» (N 4):

Բոլորը պետք է համախմբվեն «ազգային ընդհանուր դատի» շուրջ՝ «անոր պաշտպանութեան համար»:

Ծառերը չեն օգնի, համընդհանուր կենդանի աշխատանք է պետք: «Ազգային տուրքի սխտեմը, որ առաջին անգամն կկիրառվի ամերիկահայ գաղութի մեջ», պետք է պարտադիր դարձնել բոլոր գաղթօջախների համար: «Հայ մեծ աղետի դարմանումը պետք է պարտադրիչ նպատակ դառնա այն ամենի համար, որոնք հեռու և ազատ՝ հայաստանցիի դժբախտութենեն՝ ընդունակ են իրենց տուրքը բերել հայ ժողովրդի վերապրումին և հայ երկրի վերաշինման ի խնդիր» (N 4):

Հայ ազգային միության «որդեգրված նպատակներն են՝ «հայ ժողովրդի ազատագրություն, երկրի վերաշինություն, փախստականների վերապրումն և այլն»:

Միության կարևոր խնդիրներից պետք է լինի «հայկական հարցի շուրջ պրոպագանդը»:

Այս օրինակը պետք է որ «վարակիչ դառնա ամեն տեղ, ուր հայ համայնքը կապի»:

Ահա թե ինչու մեծ թիվ են կազմում տարբեր երկրներում ապաստանած հայերի կյանքը լուսաբանող հողվածներն ու թղթակցությունները՝ «Արտասահմանի հայությունը» խորագրով («Կիպրահայ գաղութը», «Փարիզն ու Հայաստանը», «Լոզանի հայ կարմիր խաչը», «Հայերը Ամերիկայի մեջ», «Արտասահմանյան օգնություն», «Ամերիկա և թուրքահայերը», «Եվրոպան և հայերը», «Հայ դատը Ֆրանսիայի հանրային կարծիքին առաջ»):

Լայնորեն արձագանքում էր զանազան երկրներում հայոց դատի մասին արտահայտված կարծիքներին, քննարկում, վիճում, գայրանում, գնահատականներ տալիս, անում առաջարկություններ...

Տարբեր էին հայրենիքին օգտակար լինելու եղանակները, և թերթը հավասար չափով խրախուսում էր դրսևորման ամեն կերպ: Աշխատակիցներից մեկը սիրով գրախոսում է պատերազմում ֆրանսիական բանակի հայ կամավորների սխրանքներին նվիրված մի գիրք՝ հանգելով շատ բնորոշ եզրակացության. «Անոնք չկրցան գալ կովել իրենց հայրենիքին մեջ: Հայաստանը հեռու էր, բայց թշնամին, ընդհանուր թշնամին, կար ամեն տեղ ալ, ան կսպառնար Հայաստանի հովանավոր Ֆրանսիային, և հայերը պաշտպանեցին զայն՝ իրենց մայրը վտանգի մեջ տեսնող զավակի մը համառությամբ:

Ֆրանսիան չափտի մոռանա այդ ծառայութիւնը» (N 12):

Կիլիկյան դեպքերը ցույց տվեցին, թե Ֆրանսիան ինչպես է հիշում «այդ ծառայությունները»:

«Ազատամարտը» սկիզբ դրեց իրար կորցրած հարազատների փնտրտուքին: «Կփնտրվին» խորագրով տպագրվում էին վերապրողների կանչերը:

«Էրզրումցի Օուշանիկ Քելեշյան. կփնտրե իր եղբայր Օնիկը»:

«Արսենիկ Գասպարյան. կփնտրե իր հորեղբոր որդիներ Հարություն և Երվանդ» (N 38):

Թերթը հրավեր էր կարդում բոլորին վերադառնալ հայրենիք և լծվել նրա վերաշինության գործին. «Այժմ ամերիկահայը պետք է գա արդեն ոչ իբրև կամավոր, այլ իբրև պատասխանատու տեր իր ավերակ երկրի» (N 26):

Սրա հետ սերտորեն առնչվում է Անդրկովկաս եկած փախստականների խնդիրը, որը մշտապես մնաց Ադրբայջանի ուշադրության կենտրոնում (մի քանի առաջնորդող նվիրեց): Մարդասիրականի հետ նաև քաղաքական խնդիր էր սա նրա համար: Այս հայությունն է, որ իր հայրենիքի պահանջատիրությամբ լուծում պետք է տա հայոց դատին. «Հայաստանի տարագիր եւ հալածական տերն է սա, որ պիտի ապրի՝ իր դատը շահել կարենալու համար» (N 3): Սրանով էլ փախստական հայերի պաշտպանության խնդիրը դառնում է «մի համազգային խնդիր»: Այս տեսանկյունից էր նայում նաև որբերի կրթության ու դաստիարակության հարցին: Նրանց սնելն ու հագցնելը ընդունելով իբրև ինքնին հասկանալի մի բան, շեշտում է այնպիսի հմտություններ ու ոգի փոխանցելը, որ վաղը վերադառնան հայրենիք և պետքական լինեն նրան: «Մենք հույս ունենք վերադարձի», - հայտարարում էր վստահությամբ, իսկ որբերի կրթությունը ունի «քաղաքային հմտություններ» տալու ուղղություն, որով արհեստականորեն խզում ենք հողի հետ կապերը, որոնք կարող էին որբերին «հայրենիք քաշել...»:

Նման մի միտք հետագայում Սփյուռքի սերնդի համար պետք է զարգացներ. մեր առջև փակ են հայրենիքի դռները, բայց դրանք մի օր կբացվեն, և մենք պատաս-

խանատու ենք հայեցի կրթությամբ ու մտածողությամբ սերունդ հայրենիք փոխադրելու գործում...

Ահա թե ինչու փախստականների հետ կապված մեծ ու փոքր հարցերը հուզում էին նրան: Դրանց լուծման համար անհրաժեշտ էր համախմբել Կովկասի հայաշատ շրջանների «բոլոր քաղաքական» և ոչ քաղաքական շրջանակների ուժերը...

Հարցի լուծումը Ադրբայջանը չէր որոնում բարեգործության մեջ: Ավելի՛ն՝ «հարեգործությունը ստեղծում է մուրացկաններ, աշխատանքն է միայն, որ ապահովում է պատվազգացում» (N 34), ուստի և փախստականներով զբաղվող մարմիններին գործունեության հստակ ծրագիր է առաջադրում՝ «անմիջական օգնություն նորեկ փախստականին և աշխատանքի մատակարարում հնեկ փախստականին, - այս է միակ ուղին, ճամփան, որով պետք է վարել օգնության գործը այս ծանր օրերին» (N 33): Դա հնարավոր է, և եթե չեն անում՝ կամ «օժանդակող մարմինն է ապիկար» կամ «ձգտում է կարոտ բազմության աչքը շարունակ գամած պահել ձեռքին» (N 34):

Կովկասյան ճակատում ռուսական բանակի ու հայ կամավորների առաջին շրջանում ունեցած հաջողություններին հետևում էր հայության վերադարձը ազատագրված վայրեր: Կյանքը կազմակերպելու համար ստեղծվում էին տեղական կառավարման մարմիններ: Ահա բնորոշ մի օրինակ՝ 1917-ի ապրիլի 23-ին Կարինի հայ հասարակության ընդհանուր ժողովը ընտրում է հայկական կոմիտե այսպիսի կազմով. երեք հոգի կարնեցի, մեկական այնթափցի, սվազցի, խարբերդցի, երզնկացի, չմշկաձագցի, կյուրիճացի (N 31): Իրենց բնօրրանից պոկված մարդիկ փորձում են կյանքը բնականոն հունի մեջ դնել Կարինում...

Վերջնական նպատակի իրականացման համեստ մի փորձ...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կյանքը և գործունեությունը.....	8
Քննադատը	89
Հրապարակախոսը.....	202
Խմբագիրը.....	283

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՑԱՆ
ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ԵՎ
ԳՐԱԿԱՆ-ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հրատ. խմբագիր Ղ. Վ. Պետրոսյան
Համակարգչային շարվածքը Դ. Ոսկերչյան
Համակարգչային ձևավորումը Տ. Ապիկյան